

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ռումիկ Հարությունյան, Սերգեյ Գրիգորյան

ՀԱՅ ՔԻՄԻԿՈՍՆԵՐ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2021

ՀՏԴ 929:54(03)

ԳՄԴ 24դ

Հ 240

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը:*

Խմբագրական խորհուրդ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ՝ Ա. Հ. Մանթաշյան, Լ. Ա. Թավադյան,
Ա. Ս. Սադյան

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ՝ Գ. Հ. Դանագուլյան,
Վ. Օ. Թովուզյան

քիմ. գիտ. դոկտորներ՝ Տ. Վ. Ղուչիկյան, Ա. Խ. Գյուլնազարյան,
Գ. Հ. Թորոսյան

տեխ. գիտ. դոկտոր Ն. Բ. Կնազյան

կենս. գիտ. դոկտոր Վ. Ս. Հարությունյան

կենս. գիտ. թեկնածու Հ. Լ. Հայրապետյան

Հարությունյան Ռ., Գրիգորյան Ս.

Հ 240 Հայ քիմիկոսներ: Կենսագրական հանրագիտարան/Ռ. Հարությունյան,
Ս. Գրիգորյան. -Եր.: ԵՊՀ հրատ., 2021, 302 էջ:

Գրքում համառոտ ներկայացվում են Հայաստանում քիմիայի տարբեր ճյուղերի զարգացման ընթացքը և ձեռքբերումները: Առաջին անգամ ի մի են բերված քիմիայի տարբեր ոլորտների հայ մասնագետների (հիմնականում գիտությունների դոկտորների) կենսագրությունները:

Գիրքը կարող է հետաքրքրել և օգտակար լինել ոչ միայն քիմիկոսներին, այլ նաև ընթերցող լայն հանրությանը:

ՀՏԴ 929:54(03)

ԳՄԴ 24դ

ISBN 978-5-8084-2499-9

© ԵՊՀ հրատ., 2021

© Հարությունյան Ռ., Գրիգորյան Ս., 2021

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Նախաբանում գիտապատմական ակնարկի ձևով տրված են Հայաստանում քիմիայի ուսումնագիտաարտադրական տարբեր ոլորտների զարգացման ընթացքը և ձեռք բերված հաջողությունները: Կենսագրական բաժնում ներկայացված են հայ քիմիկոսները, ընդ որում՝ ընտրությունը կատարվել է հետևյալ սկզբունքով՝ քիմիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունեցողները, թեկնածուներից՝ գիտության վաստակավոր գործիչները կամ պատկան մարմնից պրոֆեսորի գիտական կոչում ունեցողները, ինչպես նաև քիմիական արդյունաբերության կազմակերպմանը և զարգացմանը մեծ ներդրում ունեցողները: Գրքում ընդգրկվել են օրգանիկ, անօրգանիկ, ֆիզքիմիկ, անալիտիկ և տեխնոլոգ քիմիկոսներ, կենսաքիմիկոսներ, ագրոքիմիկոսներ և երկրաքիմիկոսներ:

Հայցում ենք ընթերցողների ներողամտությունը, եթե գրքում կնկատվեն կենսագրական բացթողումներ:

Շնորհակալություն ենք հայտնում խմբագրական խորհրդին և բոլոր նրանց, ովքեր նպաստել են գրքի հրատարակմանը:

*Քիմ. գիտ. դոկ., պրոֆեսոր Ռոմիկ Հարությունյան
Քիմ. գիտ. դոկ., պրոֆեսոր Սերգեյ Գրիգորյան*

ՆԱԽԱԲԱՆ

1. Հայաստանում քիմիայի զարգացման հակիրճ գիտապատմական ակնարկ

Քիմիայի՝ որպես գիտության և դրա կիրառական բնույթի վերաբերյալ տեղեկությունները Հայաստանում հայտնի են շատ հնուց՝ դեռևս մ.թ.ա. IV հազարամյակում: Հայկական տարբեր տարածքների, մասնավորապես Մեծամորի պեղումներից պարզվել է, որ Հայաստանի տարածքում գոյություն է ունեցել մետաղագործություն, իսկ Արմավիրի, Արտաշատի, Կարմիր բլուրի և այլ տեղերի պեղումների ժամանակ գտնվել են մետաղական, ջնարակված խեցեղեն, գունավոր, անգույն և սադափափայլ ապակու բարձրարվեստ ու բարձրորակ իրեր: Ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի և համաշխարհային պատմության տվյալների՝ մեր թվարկությունից շատ առաջ մարդու կողմից քիմիական երևույթների և նյութերի գիտակցված կիրառումը կատարվել է Հայաստանում, Եգիպտոսում, Չինաստանում և Միջագետքում: Ինչպես հաստատում է անգլիացի հետազոտող Լ. Ատչիսոնը (Leslie Aitcheson, A History of metals, Vol. I,II, 1960), աշխարհում ոսկու, երկաթի, պղնձի և բրոնզի առաջին արտադրություններն իրականացվել են Հայաստանում: Այդ հին ժամանակներում հայերին հայտնի էին առ այսօր իրենց նշանակությունը չկորցրած քիմիական շատ գործընթացներ՝ խաղողանյութի սպիրտային և կաթնաթթվային խմորումները, քացախի ստացումը, գարեջրի և գինու պատրաստումը: Վաղմիջնադարյան Հայաստանից տարբեր երկրներ արտահանել են ոսկի, պղինձ, «Հայկավ» (արաբերեն՝ Ստին Արմանի), մալաքիտ, անուշադր, որդան կարմիր, դաբաղանյութեր, եթերային յուղեր, պաղլեղ (որոշ տեսակներ ունեին «Հայկական աղ»՝ Sal Armenium և «Հայքար»՝ Pierre d' Armenie անվանումներ) և այլն:

Հին ձեռագրերը վկայում են, որ հայ ալքիմիկոսները միջնադարում զբաղվել են զուտ կիրառական խնդիրներով՝ աղերի, ներկերի, թանաքների, ջնարակների, սոսինձների, օծանելիքների և դեղանյութերի ստացում, մոմանյութի սպիտակեցում, ամալգամաների և հայելիների պատրաստում և այլն, որոնք այլալեզու և հայերեն աղբյուրներում հիշատակվել են «Հայաստան»- «Armenium» անվանումով, քանի որ այն ժամանակ դրանք Հայաստանից տարվում էին արտերկրներ: Դրանք բոլորը նշված են Երևանի Մատենադա-

րանի ձեռագրերում (№551, №6924): Քիմիական գիտելիքները առաջին անգամ Հայաստանից են անցել Ռուսաստան, ինչի մասին նշել է ռուս գիտնական Ն. Ֆիզուրովսկին (Большая Советская Энциклопедия, 1970, II изд., том 2, стр. 159): Միջնադարում գործել են շատ նշանավոր հայ ալքիմիկոսներ, որոնցից հայտնի են Ստեփանոս Իմաստասերը, Դանիել Աբեղան, Օհան Թոխաթցին, Ղազար Եպիսկոպոսը, Տեր-Հարություն Էրզրումցին, Տեր-Սահակ Էջմիածնեցին, Տեր-Դավիթը, Ավագը, Թողորը, որոնց ձեռագրերը պահվում են Մատենադարանում:

ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Տիրան Ղազանջանը, ուսումնասիրելով Մատենադարանի հին հայկական ձեռագրերը, հանգել է այն եզրակացության (Т. Казанчян, «Очерки по истории химии в Армении», 1946 г.), որ գործնական ալքիմիան հին Հայաստանում հենվում էր դասական բնափիլիսոփայության տեսական պատկերացումների վրա, որոնց հիմքում ընկած էր հույն փիլիսոփա Արիստոտելի ուսմունքի չորս տարրերի՝ կրակի, օդի, ջրի, հողի միասնականությունը (Հայաստանում անվանվել է «Հայկական ձու»՝ կեղև, թաղանթ, սպիտակուց, դեղնուց): Այդ մասին քննարկվել է հայ միջնադարյան գիտնականների գործերում (Եզնիկ Կողբացի, Դավիթ Անհաղթ, Հովհաննես Երզնկացի, Գրիգոր Տաթևացի, Հովհաննես Որոտնեցի և ուրիշներ): Հետագայում՝ սկսած XVII-XVIII դարերից, հայ բնագետ-քիմիկոսները իրենց տեսաբանական պատկերացումները ներկայացրել են ատոմիստական տեսանկյունից, որն արտահայտվել է Մ. Աբկարյանի «Գրքուկ որ կոչի Սկզբունք բնական գիտութեանց» (1796 թ.) գրքում, փաստորեն ավելի շուտ, քան Դալտոնի ատոմիստական ուսմունքի ստեղծումը (1808 թ.): Քիմիական գիտության և նյութերի քիմիական հատկությունների մասին արժեքավոր դատողություններ են արել XIX դարի բազմաթիվ հայ գիտնականներ իրենց հրատարակած գրքերում (Մ. Բժշկյան՝ «Ճեմարան գիտելեանց» (1818 թ.), Սերովբե Կարնեցի՝ «Ծաղիկ գիտութեանց» (1819 թ.), Մ. Աղաչրաղյան՝ «Համառոտ արուեստաբանութիւն և նորանոր հնարք» (1830 թ.), Մ. Սաղաթեյյան՝ «Համառոտ բնական գիտություն» (1842 թ.), Մ. Գարագաշյան՝ «Նկարագիր ուսմանց» (1845 թ.), Բ. Նուրիճանյան՝ «Փորձագիտական բնագիտություն կամ ֆիզիկա» (1856 թ.): Նշված աշխատություններում քիմիան ներկայացված է որպես նյութերի բաղադրությունը զննելու, ճանաչելու և բաղադրելու գիտություն: Հայերենով

լույս տեսած գրականության մեջ «քիմիա» եզրույթի փոխարեն, որը, ըստ Հ. Աճառյանի, «քիմիա» ձևով առաջինը գործածել է Սամուել Անեցին XII դարում, գործածվել են դրա հայերեն համարժեքները՝ տարրաբանություն, տարրագիտություն, տարրախուզություն և բնալուծություն, բայց XX դարի սկզբից ավելի գործածական է դարձել «քիմիա» եզրույթը: Պետք է առանձնապես նշել, որ 1815-1830 թթ. կիրառական քիմիայի հարցերով հետաքրքիր ուսումնասիրություններ է կատարել Էջմիածնի միաբանության անդամ Սահակ Տեր-Գրիգորյանը, որը հայտնի էր Ծաղկարար անունով: Նա առաջինն է զբաղվել Արարատյան դաշտի որդան կարմիրից ներկանյութ ստանալու խնդրով, նրա ձեռագրերում կան ներկանյութը կորզելու բազմաթիվ դեղատոմսեր, որոնցով կարելի է ստանալ նաև տարբեր երանգի ներկեր:

Զուտ քիմիային նվիրված առաջին հայերեն գիրքը Ս. Վահանյանի «Սկզբունք քիմիական գիտութեան» (1853 թ.) ձեռնարկն է, որտեղ շարադրված են անօրգանական քիմիայի հիմնական հարցերը, նկարագրված են քիմիական գործիքները, անվանակարգման սկզբունքները: 1852-1853 թթ. «Բազմավեպ» ամսագրում տպագրվել է Օ. Գուրգենյանի «Սկզբունք բնալուծության» խորագրով գիտական հոդվածաշարը, որտեղ ներկայացված է անօրգանական քիմիան իր ժամանակի մակարդակով: 1870 թ. լույս է տեսել Ս. Քաջունու եռահատոր գիրքը՝ «Տարրաբանություն տեսական և արուեստական», որի I և II հատորները նվիրված են անօրգանական քիմիային, իսկ III հատորը՝ օրգանական քիմիային, սակայն մեծ գործածություն չի ունեցել գրաբարով գրված լինելու պատճառով: 1891 թ. տպագրվել է Պ. Գաֆթանի երկհատոր «Նոր տարրաբանություն» գիրքը, որի I հատորը նվիրված էր մետաղներին և մետաղանման նյութերին, իսկ II հատորը՝ օրգանական քիմիային և, մասնավորապես, կենցաղում (տանը) օգտագործվող քիմիական նյութերին: XIX դարում կատարվել է եվրոպական ճանաչված պրոֆեսորներ Ռոսկոյի «Քիմիա» (1892 թ.) և Բերնշտեյնի «Բնալուծություն» (1885 թ.) կարևոր գրքերի թարգմանությունը: Պետք է առանձնահատուկ նշել, որ XIX դարի վերջի և XX դարի սկզբի եվրոպական և համաշխարհային քիմիայի զարգացման բնագավառում իր ծանրակշիռ ավանդն ունի աշխարհում լուսաքիմիայի (ֆոտոքիմիայի) հիմնադիր, պիրոլի քիմիայի սկզբնավորող հայ տաղանդաշատ գիտնական, պրոֆեսոր Լ. Չամչյանը (Բոլոնիա, Իտալիա): Լ. Չամչյանի անունով է կոչում Բոլոնիայի քիմիայի գիտահետա-

զոտական ինստիտուտը, որտեղ աշխատել է աշխարհահռչակ հայ գիտնականը: Նշված ժամանակներում եվրոպական է ստացել նաև վերլուծական (անալիտիկ) քիմիայի նշանավոր գիտնական Հարություն Աբելյանը (Յյուրիս, Շվեյցարիա) և Անդրեաս Արծրունին (Հայդելբերգ, Բեռլին)՝ որպես երկրաքիմիայի և բյուրեղաքիմիայի լավագույն մասնագետ: Քիմիայի զարգացման սկզբնական շրջանի աշխատանքներից հիշարժան է Վ. Դեմիրչոյանի «Ատոմի կառուցվածքը և արժեքականությունը» մենագրությունը (1926թ.), որում հեղինակը աշխարհում առաջինն է տեսականորեն կռահել ջրածնի իզոտոպի՝ դեյտերիումի, գոյությունը, որը նա անվանել է «Արմենիում», սակայն եվրոպան և աշխարհը այդ մասին լռել են ընդմիջտ:

Հարկ է նշել, որ Հայաստանում միջնադարյան բարձրագույն կրթօջախների փակման հետևանքով հայ երիտասարդները իրենց մասնագիտական կրթությունը ստացել են օտար երկրներում՝ հիմնականում եվրոպական՝ դառնալով նշանավոր մասնագետներ նաև քիմիայի գծով: 1919-1920 թթ. ոմանք կամավոր և հրավերով վերադարձել են նորաստեղծ ՀՀ և լծվել ուսման ու գիտության սուրբ գործին: Քիմիայի ասպարեզում նրանք մեծ և հերոսական գործ կատարեցին. քիմիան զարգացնելով՝ հասցրին համաշխարհային մակարդակի, որը, որոշ դժվարություններով հանդերձ, ներկայումս՝ XXI դարասկզբին, ՀՀ-ում դեռևս պահպանվում է: Այսպիսով, քիմիան հայաստանյան և հայաբնակ տարածքներում հազարամյակների ընթացքում՝ մինչև մեր ժամանակները, օգտագործվել և զարգացվել է հայ մարդու կողմից: Ստացվել են բյուրավոր բազմատեսակ օգտակար և պիտանի նյութեր, պարզաբանվել են բազում բնական և արհեստական քիմիական երևույթներ ու գործընթացներ, և հետագայում նաև մեր ժամանակներում գործարկվել են քիմիական ու արդյունաբերական արտադրական բազմաթիվ հիմնարկ-ծեռնարկություններ և գործարաններ՝ այդ բոլորը հասցնելով ընդհուպ միջազգային մակարդակի:

2. Հայաստանում քիմիայի զարգացման համառոտ գործընթացը խորհրդային (1920-1991 թթ.) և հետխորհրդային ժամանակաշրջանում

Կրթության, գիտության և արդյունաբերության բնագավառներում քիմիան ավելի մեծ զարգացման հասավ հատկապես խորհրդային Հայաստանում 1920-1991թթ.: Պետք է նշել, որ Հայաստանում քիմիայի զարգացումը

բոլոր ուղղություններով իրականացվել է հիմնականում Երևանի պետական համալսարանում արտերկրներից հրավիրված և կամավոր հայրենիք վերադարձած, մեծատաղանդ և հայրենասեր, արտասահմանում բարձրագույն կրթություն ստացած խոշոր գիտնականների ջանքերով ու տվայտանքով: ՀՀ-ում քիմիայի հիմնադիրը կրթության, գիտության և արդյունաբերության բնագավառներում, մեծ քիմիկոս, բազմակողմանի զարգացած գիտնական, պրոֆեսոր Ստեփան Պողոսի Ղամբարյանն է, որի ուսումնագիտական շքախմբում էին ականավոր քիմիկոսներ Լևոն Ռոտինյանը, Հովհաննես Ակունյանը, Ղազար Տեր-Ղազարյանը, Պապա Քալանթարյանը, Հակոբ Հովհաննիսյանը, Ալեքսանդր Հակոբյանը և շատ ուրիշներ: Նրանք 1919-1920-ական թթ. սկսեցին մանկավարժագիտական քիմիկոս կադրերի պատրաստման հիմնարար գործընթացը նորաբաց համալսարանում՝ բնագիտական ֆակուլտետներում, որոնք երեքն էին՝ Գյուղատնտեսական, Բժշկական և Տեխնիկական: Նշված ֆակուլտետներում դասավանդում էին այդ ժամանակի գիտական բարձր մակարդակին համապատասխանող քիմիայի դասընթացներ, կատարվեցին առաջին գիտական ուսումնասիրությունները, որոնք շարունակվեցին նաև հետագայում: Այդ գործընթացը շարունակվեց նաև 1930-ական թթ. Երևանի համալսարանի հիմքի վրա ստեղծված Պոլիտեխնիկական, Բժշկական և Մանկավարժական ինստիտուտներում, որին մեծ չափով նպաստեց համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը:

Լայն ծավալ ստացան ժողտնտեսության համար կարևոր խնդիրներին վերաբերող գիտահետազոտական աշխատանքները, որոնց ուսումնասիրության օբյեկտներ դարձան Արարատյան դաշտի կրաքարերը, կավահողերը, մերձարաքսյան և Արարատյան դաշտի ճահիճներն ու ճահճահողերը, բազալտները, տուֆերը և այլն:

Համալսարանում և դրա հիմքի վրա ստեղծված ինստիտուտներում կադրերի պակասության պատճառով մինչև 1940-ական թվականները ուսումնական և գիտական աշխատանքները կազմակերպում և ղեկավարում էին համալսարանական փորձառու դասախոսները, որոնցից ամենամեծ ծանրաբեռնվածություն և զբաղվածություն ունեցել է, իսկապես հանճարեղ գիտնական, պրոֆեսոր Ստեփան Ղամբարյանը, որը, փաստորեն, համարվում է ՀՀ քիմիական գիտության հիմնադիրը, քիմիական արդյունաբերության ստեղծողը, կիրառական քիմիայի հայրը: Նրա ջանքերով 1935 թ.

ստեղծվեց ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (Արմֆանի) քիմիական լաբորատորիան, որն ունեցավ անօրգանական, օրգանական, ֆիզիկական և կենսաբանական քիմիաների բաժանմունքներ: Քիմիական գիտության զարգացումը լայն թափ ստացավ հատկապես ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի (ԳԱ) ստեղծումից հետո (1943 թ.):

Ուսումնագիտական և արդյունաբերական-արտադրական զարգացումները ՀՀ-ում շարունակվեցին կատարվել մասնագիտական բոլոր հնարավոր ուղղություններով: Մինչև 1940-ական թթ. և 1945 թ.-ից հետո, ինչպես նշվել է վերը, Երևանի համալսարանի հիմքի վրա բացվել էին նոր ինստիտուտներ (Բժշկական, Գյուղատնտեսական, Պոլիտեխնիկական, Մանկավարժական, Անասնաբուժական-անասնաբուժական, Տնտեսագիտական (Ժողտնտեսության)), որոնցում կային քիմիայի ֆակուլտետներ կամ ամբիոններ: Բացվեցին նաև ուսումնարաններ, տեխնիկումներ, քոլեջներ (մանկավարժական, բժշկական, քիմիական և այլն), որոնցում էական նշանակություն ու տեղ ունեն «Քիմիա» առարկայի դասավանդումը: Քիմիայի զարգացումը նշված բուհերում և միջնակարգ մասնագիտական ուսուցման օջախներում լայն թափ և վերելք էր ստացել, պատրաստվում էին բարձր մակարդակի մեծ թվով քիմիկոս կադրեր՝ քիմիական տարբեր ուղղվածություններով: Քիմիական բարձրակարգ ուսուցում իրականացվում էր նաև Բաքվի հայկական մանկավարժական ինստիտուտում (ԱՊՈ), որն ուներ Քիմիակենսաբանական ֆակուլտետ, որտեղ սովորում և դասախոսում էին հայերենով: Մինչ Հայրենական պատերազմի ավարտի տարիները Կիրովաբադում (Գանձակում) նույնպես գործում էին ռուսալեզու մանկավարժական և գյուղատնտեսական ինստիտուտներ, որոնց ուսանողությունը և դասախոսական կազմը հիմնականում տեղաբնակ և Ղարաբաղի հայերն էին: Իսկ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կենտրոնում՝ Ստեփանակերտում, գործում էին մանկավարժական ու բժշկական ուսումնարաններ և երկամյա Մանկավարժական ինստիտուտ: Հետագայում Բաքվի իշխանավորները (Միր Բաշիր Բագիրովի, ապա՝ Հեյդար Ալիևի գլխավորությամբ) ԱՊՈ-ն տեղափոխեցին Ստեփանակերտ՝ ադրբեջանական բաժին ավելացնելով և փակելով Մանկավարժական ուսումնարանն ու երկամյա ինստիտուտը: Ղարաբաղյան շարժման պատճառով Ստեփանակերտից Մանկավարժական ինստիտուտը ժամանակավորապես տեղափոխվեց Վանաձոր: Արցախի Հանրապետու-

թյան ինքնորոշումից հետո Մանկավարժական ինստիտուտը վերադարձավ Ստեփանակերտ, դարձավ Արցախի պետական համալսարան և ԵՊՀ հոգացությամբ շարունակեց աշխատել: Ներկայումս այն ունի նաև քիմիայի և կենսաբանության ֆակուլտետ, քիմիայի ամբիոն, որոնց պրոֆեսորադասախոսական կազմը հիմնականում ԵՊՀ շրջանավարտներ են:

Քիմիայի ուսուցման կարևոր կենտրոններ են նաև Գյումրիի մանկավարժական ինստիտուտը, Երևանի պոլիտեխնիկական և տնտեսագիտական համալսարանների մասնաճյուղերը, Վանաձորի բուհերը, Գավառի և Գորիսի համալսարանները, ինչպես նաև նշված և այլ քաղաքների ուսումնարաններն ու քոլեջները, որոնցում քիմիան էական և անհրաժեշտ մասնագիտություն է: Հարկ է նորից նշել, որ ՀՀ-ում քիմիայի բուհական ուսուցման հիմնադիրը և կազմակերպիչը պրոֆ. Ս. Ղամբարյանն էր՝ իր համախոհներով, որը, սկսած 1920-ական թվականներից մինչև 1937 թվականը, ստեղծել և միաժամանակ ղեկավարել է 1930-ական թթ. նորաստեղծ բուհերի և համալսարանի օրգանական և քիմիայի այլ ամբիոններ: Մեծ գիտնական Ս. Ղամբարյանը եղել է ոչ միայն բուհական կրթության, այլ նաև ՀՀ-ում գիտահետազոտական լաբորատորիաների և ինստիտուտների ստեղծման նախաձեռնողը: Նրա և տաղանդաշատ գործընկերների ու սաների ջանքերի շնորհիվ մինչև 40-ական թթ. սկսեցին գործել նորաստեղծ գիտահետազոտական ինստիտուտներ՝ անօրգանական և օրգանական քիմիայի ուղղությամբ: 1945 թ.-ից հետո Երևանում ինքնուրույն գիտահետազոտական կենտրոններ էին՝ Ընդհանուր և անօրգանական քիմիայի, Օրգանական քիմիայի, Քիմիական ֆիզիկայի, Նուրբ օրգանական քիմիայի, կենսաքիմիայի և ագրոքիմիայի գիտահետազոտական ինստիտուտները, Պոլիվինիլացետատը, Պլաստպոլիմերը, Պոլիմերների ՀԳՀԻ «Նաիրիտ» ԳԱՄ-ի կազմում, «Քար և սիլիկատներ» ԳԱՄ-ը, Վանաձորում ՊՍՊԻ-ը և այլն: Հիշենք, որ ԵՊՀ և մյուս բնագիտական ուղղվածության բուհերը, ուսումնական բարձրագույն հաստատություններ լինելուց բացի, մշտապես եղել ու մնում են որպես գիտահետազոտական կենտրոններ (նաև քիմիայի գծով): Բարձրորակ քիմիկոս կադրերի պատրաստումը, բազմավաստակ գիտնականների ձևավորումը նշված բոլոր ուսումնական և գիտահետազոտական հաստատություններում և հիմնարկներում արդեն հետպատերազմյան ժամանակներում հասավ իր բարձրագույն մակարդակին ՀԽՍՀ-ում և ԽՍՀՄ-ում:

Ուսումնական և գիտահետազոտական բարձր մակարդակն ու զարգացվածությունը քիմիայի բնագավառում և միջազգային չափանիշներով գիտական կադրերի պատրաստումը ՀՀ-ում հնարավորություն ընձեռեց քիմիական բարձրորակ արտադրություն կազմակերպելու տարբեր ուղղվածությամբ: Կիրառական քիմիան թեև ՀՀ-ում: Մինչ 1940-ական թթ. փաստորեն ՀՀ-ում սկսվեց գիտաարտադրական մեծ հեղաշրջում «Կաուչուկ» գործարանի ստեղծման շնորհիվ, որի իրականացման միտքը և զարգացման հնարավորությունը նորաստեղծ ՀՀ-ում կատարեց մեծ հայրենասեր ու հանճարեղ գիտնական պրոֆ. Ղամբարյանը: Գործարանի կառուցումը տևեց 1930 թ.-ից մինչև 1940 թ., որի բացումը տեղի ունեցավ 1940 թ. մարտի 19-ին: Դա Խորհրդային Միության ամենահզոր և կարևորագույն ռազմատեխնիկական օբյեկտ էր, որի արտադրանքի շնորհիվ ՀՀ-ում ստեղծվեցին քլորոպրենային կաուչուկի արտադրության հետ կապված տարատեսակ գործարաններ: Դրանցից ամենակարևորը Ավտոդողերի գործարանն էր, որը ամբողջ Խորհրդային Միությանը ապահովվում էր տրանսպորտային և ռազմատեխնիկական բնույթի ավտոդողերով, որոնք պատրաստվում էին կաուչուկի հիմքով: Այսպիսով, ՀՀ-ն դարձավ քիմիական երկիր, և մեկը մյուսի հետևից կառուցվեցին նորանոր քիմիական արտադրության ձեռնարկություններ: «Կաուչուկ» գործարանը դարձավ հզոր «Նաիրիտ» ԳԱԱ հսկա միավորում, որը Խորհրդային Միության մեջ առաջինն էր քլորոպրենային կաուչուկի և լատեքսների արտադրության որակի, քանակի ու ծավալի տեսանկյունից (տարեկան՝ մոտ 70.000 տոննա), ինչպես նաև իր ռազմատեխնիկական նշանակությամբ: Համամիութենական, նաև միջազգային մակարդակի էին նաև ՀՀ մյուս արդյունաբերական ձեռնարկությունները և գործարանները՝ Երևանի այլումինի գործարանը («Կանազը»), որը տալիս էր ԽՍՀՄ ամենաորակյալ ավիացիոն այլումինումի արտադրանքը, Ալավերդու պղնձամոլիբդենային կոմբինատը, Կիրովականի (Վանաձորի) քիմիական կոմբինատը, Երևանի պոլիվինիլացետատ գործարանը, Ջողի ոսկու հանքամշակման և Արարատում մաքուր ոսկու ստացման արտադրամասերը, «Քար և սիլիկատներ» ԳԱԱ-ն իր քարային և սիլիկատային բազմազան արտադրությամբ, Չանգեզուրի պղնձամոլիբդենային ֆաբրիկան՝ բարձրորակ պղնձի և մոլիբդենի արտադրությամբ և այլն: ՀՀ-ում նշված և այլ արտադրությունները իրականացնում էին հայ մասնագետները, որոնք միջազգային մակարդակով տիրապետում էին գիտական, ճարտատեխնիկական և տեխ-

նյութիական բոլոր հնարքներին: Այդ առումով պետք է նշել, որ համաշխարհային մակարդակի ճարտարագետ-քիմիկոս էր Էդգար Տեր-Ղազարյանը (1912-1961 թթ.)՝ պրոֆ. Ղազար Տեր-Ղազարյանի որդին: Նա 1944-1946 թթ. աշխատել է Դյուպոն ֆիրմայի ձեռնարկություններում, ուսումնասիրել այնտեղ ստացվող սինթետիկ կաուչուկի արտադրության օրինաչափությունները և գաղտնիքները, ցուցաբերելով շատ բարձր գիտելիքներ այդ բնագավառում, ինչը բազմիցս նշվել է ԱՄՆ թերթերում ու ամսագրերում: Նա բազմաթիվ նախագծերի հեղինակ էր ամբողջ ԽՍՀՄ-ում, աշխարհում ճանաչված ճարտարագետ-քիմիկոս: Է. Տեր-Ղազարյանի ղեկավարությամբ հետպատերազմյա ժամանակաշրջանում Կիրովաբադում կառուցվեց և շահագործման հանձնվեց այլումինի գործարանը, Բաքվից ոչ հեռու կառուցվեցին Սումգայիթ քաղաքը և կաուչուկի գործարանը, որտեղ հիմնականում աշխատել են տեղաբնակ հայերը:

Այսպիսով, քիմիան մեծ ծաղկման հասավ Խորհրդային Հայաստանում: Քիմիական արդյունաբերության շնորհիվ ՀՀ ֆինանսատնտեսական մակարդակը շատ բարձրացավ, և ստեղծվեցին նոր գյուղեր, քաղաքներ, ասֆալտապատվեցին ճանապարհները, շինարարությունը ունեցավ մեծ վերելք, ստեղծվեցին գիտական, առողջապահական, մշակութային և սպորտային նոր կենտրոններ ու օջախներ: ՀՀ-ն համարվում էր միջազգային մեծ ճանաչում ունեցող գիտատեխնիկական կենտրոն՝ նաև իր համաշխարհային մակարդակի քիմիկոս գիտնականներով և ճարտարագետ մասնագետներով հանդերձ: Սակայն ԽՍՀՄ փլուզումից հետո վիճակը աղետալիորեն փոխվեց:

3. Քիմիայի հիմնական մասնագիտական կենտրոնների (բաժինների) և կադրային կազմի ստեղծումն ու գործունեությունը ՀՀ-ում 1920-2020 թթ.

Խորհրդային Հայաստանում քիմիայի հիմնադրման և զարգացման կենտրոնը Երևանի համալսարանն էր, և ՀՀ-ում քիմիայի հիմնական մասնագիտությունների ձևավորումն ու զարգացումը իրականացվել են նորաստեղծ համալսարանում ու դրան կից ստեղծված ուսումնագիտական ինստիտուտներում և լաբորատորիաներում վերը նշված մեծանուն քիմիկոսների ղեկավարությամբ:

Ստորև համառոտ ներկայացված են քիմիայի՝ ուսումնական, գիտական, արդյունաբերական զարգացման արդյունքներն ու տվյալները, նոր կադրերի պատրաստման շարունակական գործընթացը Խորհրդային Հայաստանում և հետագայում՝ ըստ քիմիայի հիմնական մասնագիտական բնագավառների՝ անօրգանական, օրգանական, նուրբ օրգանական ու դեղագիտական, ֆիզիկական քիմիաների, քիմիական ֆիզիկայի, անալիտիկ (վերլուծական) քիմիայի, պոլիմերների քիմիայի, քիմիական տեխնոլոգիայի, կենսաքիմիայի, ագրոքիմիայի և երկրաքիմիայի: Վերջինների հիմնադրման և զարգացման մեջ մեծ ներդրում են ունեցել և ունեն ԵՊՀ-ն ու այնուհետև ՀՀ-ում ստեղծված մյուս քիմիական մասնագիտական կենտրոններն իրենց կադրերով հանդերձ:

Անօրգանական քիմիա: Այս ուղղությամբ քիմիայի զարգացումը Խորհրդային Հայաստանում գլխավորապես կապված է հանրապետության տարածքում առկա հանքային ու ոչ հանքային մեծածավալ ու առատ հումքի հետազոտությունների և կիրառման հետ: Առաջինը ԵՊՀ պրոֆեսոր Լևոն Ալեքսանդրի Ռոտինյանն է կատարել այդ ուղղությամբ ուսումնագիտական աշխատանքներ, որոնք վերաբերել են բազալտի հալման և բյուրեղացման օրինաչափություններին՝ նպատակ ունենալով կազմակերպել քարեծուլածո իրերի արտադրություն: Այդ աշխատանքների շնորհիվ ՀՀ-ում ստեղծվեց բազալտի փորձնական, իսկ հետագայում՝ Մուլիտի գործարան:

ՀՀ-ում անօրգանական քիմիայի բնագավառում ԳՀ աշխատանքների բուռն զարգացումը սկսում է 1950-ական թթ., երբ ՀՀ ԺՏԽ կազմում ԳԱ անօրգանական քիմիայի բաժնի հիման վրա ստեղծվեց Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտը (ԸԱՔԻ): Հետագայում նորաստեղծ ինստիտուտը տեղափոխվեց ԽՍՀՄ գունավոր մետալուրգիայի, իսկ այնուհետև՝ քիմիական արդյունաբերության նախարարության ենթակայության տակ՝ որպես Երևանի քիմիայի ԳՀ ինստիտուտ: 1970 թ.-ից ինստիտուտը ՀՀ ԳԱԱ համակարգում է և կրում է ակադեմիկոս Մ. Մանվելյանի անունը:

ԸԱՔԻ-ի գիտնականները մեծ ներդրում ունեն հանրապետության քիմիական արդյունաբերության ստեղծման և զարգացման գործում: Ինստիտուտը միակն է հանրապետությանում, որը զբաղվում է հանքային նյութերի համալիր մշակմամբ, ցրված և հազվագյուտ տարրերի կորզման արդյունավետ տեխնոլոգիաների մշակմամբ, ինչպես նաև վտանգավոր և արտադրական թափոնների վնասագերծման ու վերամշակման եղանակների ստեղծման ուղղությամբ:

Այլումասիլիկատային ապարների քիմիական վերամշակման բնագավառում կատարված հետազոտությունների հիմնարար և տեխնոլոգիական հետազոտությունները հնարավորություն տվեցին առաջարկելու նեֆելինային սիենիտների համալիր վերամշակման նոր եղանակ, որը թույլ է տալիս ստանալ արզնահող, սողա, պոտաշ, մետասիլիկատներ և հիդրոսիլիկատներ: Նատրիումի մետասիլիկատի ջրային լուծույթի ածխաթթվային մշակմամբ սինթեզվել են բազմաբաղադրիչ բովախառնուրդներ՝ «Երևանիտներ», ապակիների եփման համար (ակադ. Մ. Մանվելյան): Ներկայումս ինստիտուտում զարգանում է այլումասիլիկատային ապարների հիմնաթթվային համալիր մշակման նոր շահավետ եղանակ, որը հնարավորություն կընձեռի վերամշակելու նաև պեռլիտները, գունավոր մետաղներ պարունակող հանքերը և այլն (տ.գ.թ. Սերգեյ Սահարունյան):

Հիմնաջրաջերմային եղնակով լեռնային ապարների վերամշակման արդյունքում ստացված հիմնասիլի կատային բազմաբաղադրիչ համակարգերի ֆիզիկաքիմիական հետազոտությամբ բացահատվել են նոր սիլիկատային միացություններ (ք.գ.դ. Հ. Բաբայան): Այս բնագավառում հիմնադրվել է սիլիկատային նյութերի սինթեզի նոր ուղղություն և իրականացվել է նատրիումի մետասիլիկատի արտադրությունը:

Մեծ է ակադեմիկոս Կոստան Արտավազի Կոստանյանի դերը ՀՀ-ում ապակու քիմիայի և տեխնոլոգիայի ստեղծման և զարգացման գործում: Ապակու արդյունաբերության զարգացման համար ուսումնասիրվել են հանրապետության քվարցիտները, պեռլիտները, լեյցիտային ապարները և այլն: Զգալի աշխատանքներ են կատարվել էլեկտրաեփման վառարանների, հալույթների էլեկտրահաղորդականության ուսումնասիրությունների, բորոսիլիկատային ապակիների էլեկտրաեփման ներդրման ուղղությամբ: Այդ հետազոտությունները հիմք են հանդիսացել էլեկտրավակուումային և տարային ապակիների արտադրության ստեղծմանը ՀՀ-ում և էլեկտրաեփման վառարանների ներդրմանը Խորհրդային Միությունում:

Ապակու և ապակեբյուրեղային նյութերի քիմիայի և տեխնոլոգիայի ուղղությամբ աշխատանքները ինստիտուտում հաջողությամբ շարունակվում են տ.գ.դ. Նիկոլայ Կնյազյանի ղեկավարությամբ (տնօրեն՝ 2006-2019 թթ.): Ինստիտուտի գործունեության հիմնական ուղղություններից են օքսիֆտորիդային համակարգերի (սիլիկատային, բորատային և այլն) վիճակի տրամա-

գիրների (դիագրամների) ուսումնասիրությունը, բարձրջերմաստիճանային սինթեզի եղանակով օպտիկական և էլեկտրատեխնիկական նշանակության ապակեկերպ, ապակեբյուրեղային, նանոկոմպոզիտային նոր նյութերի և տեխնոլոգիաների մշակումը: ՀՀ լեռնային ապառներից նպատակային նյութերի ստացման համար ներդրվել են հեռանկարային ոչ ստանդարտ եղանակներ (տ.գ.թ. Վ. Բաղրամյան, ք.գ.թ. Ա. Սարգսյան):

Ջուլ-ժել տեխնոլոգիայի և բարձրջերմաստիճանային եռակալման գործընթացների կիրառմամբ կատարվում են ուսումնասիրություններ այլումասիլիկատային համակարգերի հիմքով ցածր գծային ընդարձակման գործակցով կառուցվածքային և էլեկտրատեխնիկական նշանակության կերամիկայի ստացման ուղղությամբ (տ.գ.թ. Ա. Կոստանյան):

Կարևոր արդյունքներ են ստացվել սիլիկատային և այլումինատային լուծույթներից հատուկ մաքրության SiO_2 -ի, Al_2O_3 -ի անջատման ուղղությամբ (տ.գ.թ. Ա. Վարուժանյան, տ.գ.թ. Կ. Աբաջյան, ք.գ.թ. Ա. Խանամիրովա): Այս աշխատանքները հիմք դրեցին մեր հանրապետությունում որոշ գերմաքուր նյութերի ստացմանը, ինչն այսօր հաջողությամբ զարգացվում է ինստիտուտում:

Ապարների ջրաջերմային (հիդրոթերմալ) մշակման և հարստացման եղանակը հաջողությամբ կիրառվել է իոնափոխանակման գործընթացների միջոցով նոր հատկություններով նյութերի, պարարտանյութերի, արտադրական թափոնների մշակման, ամորֆ և բյուրեղային նյութերի ստացման ուղղությամբ: Լուրջ աշխատանքներ են իրականացվել նեֆելինային սիենիտներից բելիտային ցեմենտի, արդյունաբերական կեղտաջրերի մաքրման, արտադրական թափոններից թանկարժեք մետաղների կորզման և շինանյութերի ստացման ուղղությամբ: Հիմնավորվել է ֆոսֆորական թթվի և բորաթթվի արտադրություններում առաջացած գիպսի կիրառման հնարավորությունը որպես կապակցող: Ֆոսֆոգիպսի տեխնոլոգիան ներդրվել է Բելառուսում: Լուրջ աշխատանքներ են տարվում օդում կավագիպսի ամրությունը մեծացնելու ուղղությամբ՝ կիրառելով բարձր ջերմաստիճաններում թրծված հավելանյութեր (տ.գ.թ. Գ. Գրիգորյան, տ.գ.դ. Ս. Կարախանյան (տնօրեն 1975-2003 թթ.), տ.գ.թ. Կ. Գրիգորյան):

Ինստիտուտում մշակվել է ուլտրահիմնային սերպենտինացված ապարների համալիր ջերմաքիմիական մշակման նոր տեխնոլոգիա՝ MgCl_2 -ի լու-

ծույթի 78-80% ելքով: Մշակված եղանակով ապարներից անջատվում է նաև մանրադիսպերս $\text{Fe}(\text{OH})_3$ և մեծ ակտիվություն ունեցող SiO_2 ՝ կիրառելի բարձր մաքրության սիլիկատների սինթեզի համար: Ապարների մշակումից առաջացած 35-40%-անոց երկրորդային հումքից, որը պարունակում է մոտ 15% քրոմշպինել, առաջարկվել է Cr_2O_3 կորզման համար նոր եղանակ (ք.գ.դ. Ն. Ջուլումյան):

Ինստիտուտում կատարված հետազոտություններով հիմնավորել է պղնձի և մոլիբդենի օքսիդացած հանքանյութերի մակերևույթին որոշակի հաստության սուլֆիդային թաղանթի և միջավայրի որոշակի pH-ի ապահովմամբ հանքանյութի կլանիչ ունակության աճը: Հետազոտվել են օքսիդացած հանքանյութի մակերևութային սուլֆիդացման կինետիկան տարբեր սուլֆիդների և ծծումբի համատեղ աղացման գործընթացներում: Մշակվել են պղնձի և մոլիբդենի սուլֆիդացված հանքանյութի ֆլոտացման բարձր ելքով տեխնոլոգիաներ: Կատարվել են տեսական և փորձարարական ծավալուն հետազոտություններ մոլիբդենային խտանյութերից նանոչափսերի (50-80նմ) MoO_3 ստացման ուղղությամբ՝ զուլ-ժել և վակուումում գազային ֆազից նստեցման եղանակներով (տ.գ.դ. Ա. Հովսեփյան):

1960 թթ. էական աշխատանքները են կատարվել «Նյութաբանություն» ԳՀ ինստիտուտում, որտեղ սինթեզվել են հատուկ նշանակության բյուրեղային և մետաղ պարունակող ապակիներ և բարձր ընդարձակման գործակցով սիտալներ (ակադ. Կ. Կոստանյան, տ.գ.դ. Ս. Զավուկյան):

Բարձր մակարդակի գիտահետազոտական աշխատանքներ են կատարվել և հնարավորինս կատարվում են ՀՀ բուհերում, հատկապես ԵՊՀ-ում և ԵՊԻ-ում:

ԵՊԻ-ում հետազոտվել են տարասեռ (հետերոգեն) կատալիտիկ ակտիվություն ունեցող նյութեր (Ա. Ալշուջյան, Ա. Գյուլզադյան), երկար տարիներ հետազոտվել են երկաթային, պղնձամոլիբդենային և այլ հանքանյութեր, մշակվել են դրանց հարստացման և ռենիում, վոլֆրամ ու հազվագյուտ տարրեր կորզելու եղանակներ, ցեմենտի ու կատալիտիկ ակտիվություն ցուցաբերող տարասեռ անօրգանական նյութերի ստացման եղանակներ (Լ. Զախարով, Ա. Գյուլզադյան, Ա. Ալշուջյան և ուրիշներ): Մեծ է եղել տաղանդավոր քիմիկոս, ՀՀ ԳԱ թղթակից անդամ Արծրուն Գասպարյանի դերը ՀՀ-ում անօրգանական քիմիայի զարգացման գործում: Աշխարհում առաջինն է մշակել

առանց սառեցման աղաթթվի ստացման տեխնոլոգիան (1946 թ. արժանացել է Ստալինյան մրցանակի), որն անվանվել է «Գասպարյանի եղանակ»:

ԵՊՀ-ում կատարվել են տեղական դոլոմիտներից և մագնեզիտներից մագնեզիումի ու դրա միացությունների անջատման եղանակների մշակումներ, որն իրագործել է պրոֆ. Մ. Դարբինյանը: ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1950-1962 թթ.), պրոֆ. Տ. Ղազանչյանի ղեկավարությամբ ՀՀ-ում առաջինը կիրառվեց ֆիզիկաքիմիական անալիզի եղանակը (1950-ական թթ.), որը հետագայում ամբիոնում էլ ավելի զարգացրեց և կիրառեց պրոֆ. Հ. Բաբայանը: ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնում Դ. Մարուխյանի կողմից հիմնադրվել է «Կոմպլեքս միացությունների քիմիա» ուղղությունը: Նա ՀՀ-ում առաջինն է ուսումնասիրել անցման շարքի մետաղների կոմպլեքսագոյացումը պիրիդինային շարքի ամինամիացությունների հետ: 1960-ական թթ. կոմպլեքսների քիմիայի ուղղվածությունը շարունակել է զարգացնել պրոֆ. Դ. Մարուխյանի սաներից Ս. Ավագյանը՝ ուսումնասիրելով տեսական և գործնական նշանակության π և խելատային կոմպլեքսներ: Ամբիոնում 1970-ական թթ. ծավալվել են սիլիկատային և հալոգենիդային բազմաբաղադրիչ տարասեռ համակարգերի հետազոտություններ ֆիզիկաքիմիական անալիզի եղանակներով (պրոֆ. Հ. Բաբայան): Ստեղծվել են հազվագյուտ ու ցրված տարրերի քիմիայի և տեխնոլոգիայի ճյուղային համամիութենական գիտահետազոտական լաբորատորիա (1971 թ.), որտեղ իրականացվել են բազմամետաղական հանքանյութերի և արտադրական թափոնների վերամշակման ԳՀ աշխատանքներ՝ ոսկու կորզման նոր եղանակ, Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատի թափոնների վերամշակման տեխնոլոգիա և այլն: Անօրգանական քիմիայի ամբիոնում 1989-2007 թթ. շարունակվել է ԳՀ աշխատանքների առաջընթացը պրոֆ. Ս. Գրիգորյանի ղեկավարությամբ՝ երեք հիմնարար ուղղություններով՝ պինդ բնույթի անօրգանական նյութերի սինթեզ, հետազոտություն և ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրում, անցման շարքի մետաղիոնների հետ տարանուն լիգանդներով կոմպլեքս միացությունների սինթեզ և ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրում, հանքային և արդյունաբերական թափոնների մշակում ու անօրգանական նյութերի սինթեզ: Ամբիոնում կազմակերպվեց (2005 թ.) բազային ԳՀ լաբորատորիա՝ «Անօրգանական սինթեզ, հետազոտություն և կիրառություն» պրոֆ. Ս. Գրիգորյանի ղեկավարությամբ:

2007-2018 թթ. ԵՊՀ անօրգանական քիմիայի (2013 թ.-ից անօրգանական և անալիտիկ քիմիայի) ամբիոնը ղեկավարել է պրոֆ. Ռ. Հարությունյանը: Այդ տարիներին ամբիոնում աշխատանքները տարվել են մի քանի ուղղություններով՝ ՄԱՆ-ի ներկայությամբ հեղուկ միջավայրում ընթացող գործընթացների կինետիկայի և մեխանիզմի պարզաբանում (պրոֆ. Ռ. Հարությունյան, ք.գ.թ.-ներ Ռ. Մխիթարյան, Գ. Պետրոսյան, Լ. Հարությունյան), կոմպլեքսների կազմավորման և կիրառման հարցեր (պրոֆ. Ռ. Հարությունյան, պրոֆ. Ս. Գրիգորյան, ք.գ.թ.-ներ Գ. Զեյթադյան, Լ. Հարությունյան, Լ. Ներսիսյան), ցեղիտների վերափոխում և կիրառում (պրոֆ. Ռ. Հարությունյան, ք.գ.թ. Լ. Հարությունյան), ինքնատարածվող բարձրաջերմաստիճանային անօրգանական նյութերի սինթեզ (պրոֆ. Ս. Խառատյան, ք.գ.թ.-ներ Հ. Խաչատրյան, Խ. Մանուկյան), քիմիական տեղափոխման ռեակցիաների կինետիկա և մեխանիզմ (պրոֆ. Գ. Գրիգորյան, ք.գ.թ. Հ. Բեգլարյան), բազմաբաղադրիչ համակարգերի ֆիզիկաքիմիական և վերլուծական հետազոտություններ (պրոֆ. Հ. Խաչատրյան, ք.գ.թ. Հ. Դարբինյան), ՀՀ ջրային համակարգերի և ավազանների էկոլոգիաքիմիական ուսումնասիրություններ (պրոֆ. Գ. Փիրումյան, ք.գ.դ. Ս. Հայրապետյան, ք.գ.թ. Գ. Սիմոնյան): Պետք է նշել, որ այս հզոր և բազմաճյուղ կոլեկտիվի 10 տարիների ԳՀ աշխատանքները ամփոփվել են 16 թեկնածուական և 1 դոկտորականատենախոսություններում:

Երևանի քիմիական ռեակտիվների և հատուկ մաքրության նյութերի գիտահետազոտական ինստիտուտում (մինչև 1991 թ. համամիութենական մասնաճյուղ՝ ԻՌԵԱ) պրոֆ. Ս. Բաբայանի ղեկավարությամբ մշակվել և արտադրության մեջ ներդրվել են կարևոր անօրգանական նյութերի ստացման եղանակներ:

Օրգանական քիմիա: Ժամանակակից, այդ թվում նաև օրգանական քիմիայի, հիմնադիրը և զարգացնողը Խորհրդային Հայաստանում եղել է պրոֆ. Ս. Ղամբարյանը: Նա 1920-1937 թթ. աշխատել է նորաստեղծ Երևանի համալսարանում մինչև իր անհրաժեշտ աքսորը Սիբիր՝ Սեմիպալատինսկ (1937-1944 թթ.): Համալսարանում և բարձրագույն կրթության այլ օջախներում քիմիայի ուսուցման գործընթացին զուգընթաց կազմակերպել և իրականացրել են նաև գիտահետազոտական աշխատանքներ: Համալսարանում նա շարունակել է դեռևս Գերմանիայում իր կողմից սկսված գիտական

ուսումնասիրությունները՝ իրականացնելով ացիլպերօքսիդների և ամինների փոխազդեցության ռեակցիաների նոր հետազոտություններ (1928 թ.): Այդ գիտական աշխատանքները հետագայում մեծ առաջընթաց գրանցեցին իր աշակերտներից պրոֆ. Հ. Չալթիկյանի հետազոտություններում (ԵՊՀ ֆիզիկական քիմիայի ամբիոն): Պրոֆ. Ս. Ղամբարյանը պրոֆ. Լ. Ռոտինյանի հետ առաջինը կազմակերպեց կալցիումի կարբիդի արտադրությունը Երևանում ու Վանաձորում և կարբիդից ստացվող ացետիլենի հենքի վրա նաև քլորոպրենային կաուչուկի առաջին արտադրությունը Խորհրդային Միությունում: Նա իր աշակերտների հետ բազմակողմանի հետազոտական աշխատանքներ ծավալեց ացետիլենի քիմիայի բնագավառում, որը շարունակաբար դարձավ քիմիական գիտության կարևորագույն ուղղություններից մեկը Խորհրդային Հայաստանում: Հետագայում Ս. Ղամբարյանի աշակերտներ Լևոն Ղազարյանի և Արաքսի Բաբայանի կողմից ացետիլենի հետազոտման ուղղությամբ կատարվեցին յուրատեսակ և ծանրակշիռ գիտական աշխատանքներ օրգանական քիմիայի բնագավառում: Պրոֆ. Լ. Ղազարյանը կալցիումի կարբիդից և կետոններից իրականացրել է երկմեթիլկարբինոլի և ացետիլենային գլիկոլների ստացումները: Իսկ ացետիլենից ացետիլենային գլիկոլների սինթեզը առաջինը իրականացրել է ակադ. Ա. Բաբայանը: Նա մշակել է նաև ապահիդրոքլորմամբ քլորոպրենի և վինիլացետիլենի ստացման եղանակները:

Այդ ժամանակաշրջանում Արմֆանում և համալսարանում բուրավետ նյութերի քիմիայի և օժանելիքի արտադրությանը միտված բարձրակարգ գիտահետազոտական աշխատանքներ էր իրականացնում պրոֆ. Վ. Իսագուլյանը: Ակադեմիկոս Վ. Իսագուլյանը եղել է Խորհրդային Միությունում օժանելիքների և հոտավետ նյութերի քիմիայի հիմնադիրը:

1960-ական թթ. *Գյուղատնտեսական ինստիտուտում* պրոֆ. Վոսմ Դովլաթյանի ղեկավարությամբ մշակվել են նոր հերբիցիդ կրոտիլինի և գյուղատնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող և խիստ անհրաժեշտ մի շարք այլ նյութերի ստացմանու արտադրության եղանակներ:

Բժշկական օրգանական քիմիայի խոշոր մասնագետ ակադ. Արմենակ Մնջոյանի անմիջական ղեկավարությամբ և տաղանդավոր մի շարք քիմիկոսների մասնակցությամբ (Հ. Հարոյան, Օ. Մնջոյան, Ս. Վարդանյան, Լ. Գյուլբուդաղյան, Ս. Մացոյան և ուրիշներ) ԵՊՀ-ում և Քիմիայի ինստիտու-

տում 1950-ական թթ. սինթեզվեցին տարացիկային (հետերոցիկլային) բազմաթիվ միացություններ, որոնցից շատերը կենսաբանորեն ակտիվ նյութեր էին, իսկ մի մասը դարձան դեղապատրաստուկներ: 1955 թ. ԽՍՀՄ առողջապահության նախարարության երևանյան ԳՀ քիմիադեղագործական լաբորատորիայի հիմքի վրա ստեղծվեց Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը (ՆՕՔԻ): 1957 թ. ՀԽՍՀ ԳԱ քիմիայի ինստիտուտի հիման վրա ստեղծվեցին երկու ինքնուրույն՝ Օրգանական քիմիայի (ՕՔԻ) և Ընդհանուր ու անօրգանական քիմիայի (ԸԱՔԻ) ինստիտուտներ:

Օրգանական քիմիայի ինստիտուտում (ՕՔԻ) հետազոտություններ ծավալվեցին օրգանական քիմիայի տարբեր բնագավառներում: Այդտեղ Արաքսի Բաբայանի գլխավորությամբ խթանվեց ամինների և ամոնիումային միացությունների քիմիայի զարգացումը ՀՀ-ում, սինթեզվեցին լեպիդինը և դրա ածանցյալները, բացահայտվեցին չորրորդային ամոնիումային աղերի կատալիտիկ հատկությունները և վերախմբավորման-ճեղքման ու ցիկլման-ճեղքման ռեակցիաները, մշակվեցին խառը երրորդային ամինների ստացման եղանակներ (Մ. Ինճիկյան, Կ. Թահմազյան, Է. Չուխաջյան, Ս. Քոչարյան, Ա. Գյուլնազարյան և ուրիշներ):

Ակադեմիկոս Սարգիս Վարդանյանի ղեկավարությամբ իրականացվել են ացետիլենային և վինիլացետիլենային միացությունների բազմակողմանի հետազոտություններ (Շ. Բադանյան, Գ. Չուխաջյան, Ա. Գևորգյան, Ռ. Կուռոյան, Ա. Նորավյան և ուրիշներ): Չհագեցած ածխաջրածինների բնագավառում յուրատեսակ հետազոտություններ են կատարվել ՕՔԻ-ում ակադեմիկոս Ստեփան Մացոյանի ղեկավարությամբ: Իրականացվել են վինիլացետիլենային սպիրտների, դրանց եթերների, էսթերների ռեակցիաները, կատարվել է չհագեցած եթերների և էսթերների ցիկլումը, մշակվել են հետերոցիկլիկ միացությունների ստացման եղանակներ (Է. Դարբինյան, Լ. Հակոբյան, Գ. Պողոսյան և ուրիշներ): Նույն ինստիտուտում ակադ. Մ. Ինճիկյանի ղեկավարությամբ ծավալվեցին չհագեցած երրորդային ֆոսֆինների ու ֆոսֆոնիումային աղերի և էսթերների սինթեզին ու հետազոտությանը ուղղված աշխատանքներ: Այդ աշխատանքները հետագայում շարունակեցին ք.գ.դ.-ներ Մ. Հովակիմյանը և Ռ. Իսախատրյանը:

ՕՔԻ-ում սինթեզվել են կիրառական նշանակության բնական և սինթետիկ բուրավետ նյութեր և ֆերոմոններ (Վ. Իսազուլյանց, Ա. Գևորգյան,

Շ. Բաղանյան), ինդոլային և տարացիկլային կետոթթուներ (Ս. Աղբալյան), մշակվել են ածխաջրածինների հալոգենացման և ապահալոգենացման ոչ կատալիտիկ եղանակներ (Գ. Մկրյան, Ա. Հակոբյան): Ստեղծվել են մարդու և շրջակա միջավայրի համար էկոլոգիապես անվնաս գյուղատնտեսական կուլտուրաների և բույսերի պաշտպանության միջոցներ՝ ֆերոմոններ (Շ. Բաղանյան, Գ. Մելիքյան, Ժ. Չոբանյան): Ստացվել են մակերևութային ակտիվ նյութեր, սննդային բուրավետ նյութեր, ոսկու և այլ փոխանցիկ մետաղների լուսաքիմիական որոշման ռեագենտներ (Ս. Քոչարյան, Է. Չուխաջյան, Ա. Գյուլնազարյան): Մետաղների բարձր ընտրողական լուծահանիչների ստացման նպատակով մշակվել են N-վինիլպիրազոլների և դրանց ածանցյալների սինթեզի արդյունավետ եղանակներ (Գ. Հասրաթյան, Հ. Աթաբաբյան): Մշակվել է հայտնի դեղանյութ ֆոսֆակոլի (գլաուկոմայի բուժման համար) և N-մեթիլմորֆոլինօքսիդի ստացման եղանակ (Մ. Ինճիկյան, Գ. Հասրաթյան): Պիրիմիդինների շարքում հայտնաբերվել են «վերամինացմամբ» ընթացող ենամինային վերախմբավորումը, մի շարք այլ նոր տեսակի նուկլեոֆիլ ռեցիկլացումներ, այդ թվում՝ հիդրազիդների և տեղակալված հիդրազիդների ազդեցությամբ ընթացող վերախմբավորումները (Գ. Դանագուլյան): Արոմատիկ ալդեհիդների ներկայությամբ ացետիլացետոնի և ացետոքացախաթթվի էսթերի ու առաջնային ամինների փոխազդեցության դեպքում հայտնաբերվել է ոչ սովորական կարբոցիկլացման երևույթը (ք.գ.դ. Մ. Սարգսյան): Պոլիմերային դիսպերսիաների հետազոտման ուղղությամբ ՕՔԻ-ում հետաքրքիր արդյունքներ են արձանագրել պրոֆ. Ա. Հովհաննիսյանի լաբորատորիայում:

ՆՕՔԻ-ի լաբորատորիայի վարիչ պրոֆ. Գուրգեն Թադևոսյանի ղեկավարությամբ հետազոտությունները տարվել են բազմօղակ հիդրոարոմատիկ կետոնների, կենսաբանորեն ակտիվ նյութերի, ինդոլի շարքի ածխաջրածինների սինթեզի ուղղությամբ, ինչպես նաև տարբեր այլ կենսաօրգանական միացությունների շարքին պատկանող նյութերի հետազոտման բնագավառում:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում օրգանական միացությունների և պոլիմերների էլեկտրաքիմիական սինթեզի և ռեակցիաների մեխանիզմի ուսումնասիրման ուղղությամբ տարված աշխատանքները (Պոլիտեխնիկի բնապահպանության և կենսագործունեության ամբիոնի վարիչ պրոֆ. Ս. Սարգսյան):

2007 թ. ՀՀ ԳԱԱ նախագահության որոշմամբ միավորվեցին ՀՀ ԳԱԱ երեք հիմնարկություններ՝ Օրգանական քիմիայի ինստիտուտը, Ա. Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտն ու Մոլեկուլի կառուցի ուսումնասիրման կենտրոնը, և ստեղծվեց ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնը (ՀՀ ԳԱԱ ՕԴՔ ԳՏԿ), որի տնօրենը 2007-2018 թթ. եղել է տաղանդավոր քիմիկոս և կազմակերպիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Վիգեն Թոփուզյանը: Վ. Թոփուզյանի հիմնական գիտական հետազոտությունները վերաբերում են բնական և չհագեցած ամինաթթուների ու պեպտիդների կենսաբանորեն ակտիվ միացությունների սինթեզին, դրանց քիմիական և կենսաբանական հատկությունների ուսումնասիրություններին:

Մինչև 1950-ական թթ. սկիզբը ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում պրոֆ. Ա. Մնջոյանի կողմից մշակվել են եռազինների, երկհիմնաթթուների ամիդների ու նիտրիդների սինթեզի եղանակներ (Մ. Դանդյան, Հ. Հարոյան, Լ. Գյուլբուդադյան): 1950-ական թթ. հետո ԳՀ աշխատանքները Օրգանական քիմիայի ամբիոնում տարվել են պրոֆ. Մամիկոն Դանդյանի ղեկավարությամբ: Նոր գիտահետազոտական աշխատանքները հիմնականում ծավալվել են Կլակտոնների քիմիայի ուղղությամբ (Ա. Դուրգարյան, Մ. Ջալիլյան, Ս. Առաքելյան, Գ. Շահնազարյան, Է. Մեսրոպյան, Ա. Հախնազարյան և այլք): Ավելի ուշ՝ սկսած 1970-ական թթ., Օրգանական քիմիայի ամբիոնում տարվել են նոր ԳՀ աշխատանքներ ակադ. Աիդա Ավետիսյանի ղեկավարությամբ: Դրանք վերաբերում են չհագեցած լակտոնների՝ ֆուրանոնների և պիրանոնների, սինթեզին ու հետազոտություններին: Այդ ժամանակ, նաև հետազայում, ամբիոնում կատարվեցին գիտական և կիրառական բնույթի էական աշխատանքներ՝ նշված և այլ ուղղություններով (Ա. Ավետիսյան, Լ. Գյուլբուդադյան, Վ. Դուրգարյան, Ա. Դուրգարյան, Է. Մեսրոպյան, Վ. Հարությունյան, Գ. Մելիքյան, Տ. Ղոչիկյան, Ն. Դուրգարյան, Գ. Թոքմաջյան և ուրիշներ):

Հետաքրքիր և գործնական բնույթի ծավալուն գիտահետազոտական աշխատանքներ կատարվել են «Նաիրիտ» ԳԱՄ կազմում *Երևանի պոլիմերային նյութերի համամիութենական ԳՀԻ-ում* (Պոլիմերների ՀԳՀԻ - ВНИИПолимер): Ացետիլենի և դրա ածանցյալների պոլիմերման գործընթացի հետազոտություններին զուգահեռ ԳՀ աշխատանքներ են տարվել մեծ

թվով քլորի ատոմներ պարունակող մոնոմերների սինթեզի ուղղությամբ (Գ. Մկրյան, Է. Ոսկանյան): Սինթեզվել են Cl, N և այլ տեղակալիչներ պարունակող չհագեցած մոնոմերներ, հետազոտվել են ակիլման և համասեռ կատալիտիկ ռեակցիաներ (Գ. Մարտիրոսյան, Ա. Մալխասյան): Մետաղակոմպլեքսային և միջֆազային կատալիզի եղանակների օգտագործմամբ իրականացվել են ացետիլենային և այլ չհագեցած ածխաջրածինների սինթեզը ջրային միջավայրում և վինիլացետիլենի ստացման եղանակը, որը ներդրվել է արտադրության մեջ (Գ. Չուխաջյան):

Քիմիական ռեակտիվների և հատուկ մաքրության նյութերի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի (Մոսկվա) *Երևանյան մասնաճյուղում* (ԻՌԵԱ) 1986 թ.-ից աշխատանքներ են տարվել՝ օրգանական ռեակտիվների սինթեզի, շրջապատի անալիտիկ վերահսկողության և անհրաժեշտ հատկություններով նյութերի ստացման ուղղություններով (Ռ. Մաթևոսյան, Ն. Մոռյան, Գ. Շահնազարյան, Հ. Մատնիշյան, Ս. Գաբրիելյան և ուրիշներ):

Օրգանական քիմիայի ուղղությամբ գիտահետազոտական աշխատանքներ են տարվել (և տարվում են) նաև մյուս ուսումնական հաստատություններում: *Երևանի պոլիտեխնիկ ինստիտուտում* սինթեզվել ու հետազոտվել են մետաղների բարձր ջերմաստիճանային և թթվային կոռոզիան կանխող օրգանական արգելակիչներ (Կ. Թահմազյան, Գ. Թորոսյան): *Երևանի քիմիական ինստիտուտում* հետազոտվել է թթվային կատալիզի պայմաններում օլեֆինների հիդրոկարբոքսիլացման ռեակցիաների մեխանիզմը, սինթեզվել են հակաուռուցքային և մանրէասպան միացություններ (Մ. Օրդյան):

Արժվանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում (համալսարանում) մշակվել է արոմատիկ կետոնների սինթեզի եղանակ (պրոֆ. Վ. Բաբայան), հետազոտություններ են իրականացվել չորրորդային ամոնիումային աղերի սինթեզի և հատկությունների ուսումնասիրման ուղղությամբ (ք.դ.թ. Ա. Բաբախանյան, ք.գ.թ. Ս. Հովակիմյան): Այդտեղ վերջին տասնամյակներում մեծ ծավալի և հետաքրքիր գիտահետազոտական աշխատանքներ են տարվում ցիանուրիլային մետաղիոնային և այլ կոմպլեքս միացությունների, մոնոմերների սինթեզի և պոլիմերման, սոսինձների ստացման ու հետազոտման ուղղություններով պրոֆ. Մ. Երիցյանի ղեկավարությամբ:

ՀՀ-ում օրգանական քիմիայի զարգացմանը նպաստել է աշխարհահռչակ գիտնական, ՌԴ ԳԱ ակադեմիկոս Հովհաննես (Իվան) Լյուդվիգի Կնունյանցը: Նա ֆտոր օրգանական միացությունների քիմիայի հիմնադիրներից մեկն է աշխարհում: Միշտ գիտագործնական կապի մեջ է եղել մեր հանրապետության քիմիկոսների հետ, որոնց թվում կային նաև իր աշակերտները, և իր խորհուրդներով նպատակուղղել է կատարվող աշխատանքները: Ակադեմիկոս Հ. Կնունյանցը եղել է քիմիայի համաաշխարհային հայ դեմքերից մեկը և այդպիսին էլ մնում է՝ մշտապես հարուցելով մեծ հիացմունք և հպարտություն:

Նուրբ օրգանական և դեղագիտական քիմիա: Կենսաբանորեն ակտիվ նյութերի և դեղապատրաստուկների առաջին սինթեզները ՀՀ-ում իրականացվել են 1930-ական, հատկապես 1940-ական թվականներին ակադեմիկոս Արմենակ Մնջոյանի կողմից Երևանի բժշկական ինստիտուտում, որտեղ ստանում և արտադրության մեջ էին ներդնում ռազմաճակատին ու թիկունքին անհրաժեշտ դեղանյութեր: Այդ աշխատանքները Ա. Մնջոյանի ղեկավարությամբ հետագայում ծավալվեցին ստեղծված Բժշկական ինստիտուտի քիմիադեղագործական լաբորատորիաներում, իսկ 1955 թ.-ից՝ ՀԽՍՀ ԳԱ համակարգում Ա. Մնջոյանի ջանքերով ստեղծված Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում (ՆՕՔԻ, 1971 թ. Ա. Մնջոյանի անվան): Այնտեղ կատարվող գիտական հետազոտությունները նպատակաուղղված էին անհրաժեշտ հատկություններով դեղամիջոցների ստացմանը: Այդ նյութերից առաջինը՝ Դիթիլինը, օգտագործվեց բժշկության մեջ որպես մկանային թուլացնող միջոց, երկրորդը՝ Սուբեխոլինը՝ որպես շնչառությունը խթանող նյութ: Տեղակալված քաղախաթթուների և ֆենոլաթթուների ամինաէսթերների հետազոտությունների հիման վրա սինթեզվել են Գանգլերոն և Քվատերոն դեղատեսակները, որոնք օգտագործվել են կրծքային հեղձուկի և խոցային հիվանդությունների բուժման համար (պրոֆ. Ա. Մնջոյան): Իսկ ֆենիլքաղախաթթվային ամինաէսթերների հիման վրա սինթեզվել են մորֆինի ածանցյալներ՝ որպես հանգստացնող և հոգեբուժական ինդոլային տեսակի միջոցներ (ՀՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Թադևոսյան): Ստեղծվել են սիրտանոթային, ստամոքսաաղիքային, կենտրոնական նյարդային համակարգերի հիվանդությունների բուժման միջոցներ՝ Արփենալ, Մեսֆենալ, Ֆոբրոմեզան անուններով, հակատուբերկուլյոզային դեղամիջոց՝ Նալեցինը (Ա. Մնջոյան և Օնիկ Մնջոյան):

ՆՕՔԻ-ում մեծ է եղել ակադեմիկոս Սարգիս Վարդանյանի դերը դեղամիջոցների սինթեզի և հետազոտության ուղղությամբ առանձնապես Ա. Մնջոյանի վախճանից հետո նրա տնօրեն եղած ժամանակահատվածում: Նրա ղեկավարությամբ նոր թափ ստացան արիւլակիլամինների, ինդոլի, պիրիմիդինի, ամինաթթուների, պեպտիդների, բուսական ծագում ունեցող միացությունների սինթեզը և հետազոտությունները, ստեղծվեցին կենտրոնական նյարդային համակարգի վրա ներգործող դեղամիջոցներ. էպիլեպսիայի բուժման համար՝ Պոֆեմիդը, նյարդաբորբերի, հյուսկաբորբերի, ռադիկուլիտների բուժման համար՝ Թիոդինը, տասներկուամտնյա աղիքի խոցի բուժման համար՝ Դիմեկումարոնը: Ակադեմիկոս Ս. Վարդանյանից հետո ՆՕՔԻ տնօրեն է աշխատել պրոֆ. Բ. Ղարիբջանյանը: Նրա ղեկավարության ժամանակ ՆՕՔԻ-ում ստեղծվել են նաև հակաուռուցքային, հակաբիոտիկային, հակամանրէային դեղատեսակներ: Հայտնաբերվել են տարացիկլային միացություններ, որոնք արդյունավետ հանգստացնող և հակասթրեսային դեղամիջոցներ են (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Նորավյան, ակադ. Ռուբեն Վարդանյան):

Նուրբ օրգանական քիմիայի բնագավառում արդյունավետ աշխատանքներ են տարվել նաև ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Դովլաթյանի ղեկավարությամբ Հայկական գյուղատնտեսական ինստիտուտում: Այնտեղ իրականացվել է օրգանական պեստիցիդային միացությունների սինթեզը՝ որպես գյուղատնտեսական բույսերի պաշտպանության մոլիբդենի և ֆենազոնի (մետազինը և ֆենազոն):

Վերջին տասնամյակներում նուրբ օրգանական և դեղագիտական քիմիայի ուղղվածությամբ մեծ ծավալի գիտահետազոտական և կիրառական բնույթի աշխատանքներ են տարվում Երևանի «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնում և ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտում ակադ. Ա. Սաղյանի ղեկավարությամբ:

Ֆիզիկական քիմիա: Քիմիայի այս ուղղության ուսումնագիտական աշխատանքները սկսվել են ԵՊՀ կազմավորումից հետո քիմիական գիտության մեծ նվիրյալ պրոֆ. Լ. Ռոտինյանի կողմից, որն առաջինը եղել է իր կողմից նոր կազմակերպած Ֆիզիկական, Անօրգանական և Անալիտիկ քիմիաների ամբիոնների վարիչը 1923-1938 թթ.: Նա լիարժեք տիրապետել է այդ երեք մասնագիտություններին՝ թե՛ ուսումնական, թե՛ գիտական ուղղու-

թյուններով: Պրոֆ. Լ. Ռոտինյանը իր լավագույն աշակերտներից մեկի՝ Հ. Չալթիկյանի հետ 1927 թ. ԵՊՀ-ում վերակազմավորեցին ավելի բարձր մակարդակի առանձին գործող Ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոն՝ Լ. Ռոտինյանի ղեկավարությամբ (1927-1938 թթ.), այնուհետև այդ ամբիոնի վարիչը դարձավ Հ. Չալթիկյանը (1939-1972 թթ.):

Լ. Ռոտինյանը եղել է ականավոր գիտնական, քիմիայի խոշոր գիտակ, և Ս. Ղամբարյանի հետ զարգացրել ու լուծել են քիմիական (բուսական, գիտական և արդյունաբերական) շատ կարևոր խնդիրներ, ինչպես համալսարանում ու դրա հիմքի վրա ստեղծված բուհերում, այնպես էլ իրենց կողմից ստեղծված քիմիական ամբիոններում, լաբորատորիաներում և արտադրական հիմնարկ-ձեռնարկություններում: Լ. Ռոտինյանի առաջին հետազոտությունները Ֆիզիկական քիմիայի ամբիոնում վերաբերել են քիմիական թերմոդինամիկային, որի ուղղությամբ այն ժամանակներում ՀՀ-ում մեծ նվաճումների հասավ նաև Լ. Ռոտինյանի և Ս. Ղամբարյանի աշակերտ Ալեքսանդր Հակոբյանը, որի գիտահետազոտական աշխատանքները նվիրված էին ացետիլենի քիմիային: Պրոֆ. Ս. Ղամբարյանի հետազոտությունները (դեռևս Գերմանիայում եղած ժամանակներից)՝ օրգանական լուծիչներում օրգանական նյութերի, հատկապես, ամինամիացությունների օքսիդացումը պերօքսիդներով, կանխորոշեցին ֆիզիկական օրգանական քիմիայի զարգացումը ՀՀ-ում, մասնավորապես ԵՊՀ-ում: Բենզոլի պերօքսիդի ու ամինների փոխազդեցության կինետիկայի ու մեխանիզմի բացահայտումը պրոֆ. Ս. Ղամբարյանի սիրելի աշակերտ Հ. Չալթիկյանի կողմից 1939 թ. դարձավ համալսարանի Ֆիզիկական քիմիայի ամբիոնի գիտական հետազոտությունների ելակետը: Գիտական նմանատեսակ աշխատանքները շարունակվեցին երկար տարիներ նրա աշակերտների կողմից (Ն. Բեյլերյան, Բելլա Սողոմոնյան, Նորա Սարուխանյան, Թելման Ղուկասյան, Ֆելիքս Կարապետյան, Ռոզա Հակոբյան, Սերգեյ Գրիգորյան, Ջուլիետա Ճձմարիտյան, Մարիետա Գևորգյան և ուրիշներ): Այդ աշխատանքներով դրվեց կինետիկական հետազոտությունների սկիզբը ՀՀ-ում, որը դարձավ ֆիզիկական քիմիայի հիմնական գիտական ուղղությունը:

Հ. Չալթիկյանի ղեկավարությամբ կատարվել են նաև ացետիլենի քիմիային նվիրված կարևոր գիտական և կիրառական բնույթի աշխատանքներ Երևանի սինթետիկ կաուչուկի գործարանի ստեղծումից հետո, ուր հա-

մատեղությամբ աշխատել է Հ. Չալթիկյանը՝ ուսումնասիրելով ացետիլենի դիմերման, վինիլացետիլենի հիդրոքլորման կատալիտիկ ռեակցիաների մեխանիզմները:

Պրոֆ. Հ. Չալթիկյանի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ 1959 թ. ԵՊՀ ֆիզքիմիայի ամբիոնին կից ստեղծվեց համամիութենական նշանակության պոլիմերման պրոցեսների կինետիկայի պրոբլեմային լաբորատորիա: Պոլիմերման պրոցեսներում հիմնական հարուցիչներ օգտագործվեցին ամին-պերօքսիդ համակարգերը: Բացահայտվեց այդ համակարգերում ռեակցիաների արագության և մեխանիզմի կախվածությունը բաղադրիչների կառուցվածքից ու ռեակցման պայմաններից (Ն. Բելյերյան): 1972-1976 թթ. ԵՊՀ ֆիզքիմիայի ամբիոնը ղեկավարել է պրոֆ. Լ. Մելքոնյանը, որի գործունեության տարիներին մեծ ուշադրություն սևեռվեց էմուլսիայում մոնոմերների պոլիմերացման հիմնահարցերին: Այդ հետազոտությունները կարևոր էին՝ կապված «Նաիրիտ» ԳԱՄ-ի գործունեության հետ: Գիտահետազոտական աշխատանքները ավելի ծավալվեցին պրոֆ. Ն. Բելյերյանի Ֆիզիկական և կոլորիդների քիմիայի ամբիոնի վարիչության տարիներին (1972-2000): Ամբիոնի գիտական գործունեությունը ընդգրկել է մի շարք գիտական պրոբլեմատիկ ուղղություններ, որոնցից կարելի է նշել՝ ամինների և դրանց մետաղական կոմպլեքսների առկայությամբ պերօքսիդների քայքայման կինետիկայի և մեխանիզմի ուսումնասիրում (Ս. Գրիգորյան, Ե. Վարդանյան), ռադիկալաշղթայական ռեակցիաների կինետիկա (Ռ. Եղոյան, Շ. Մարգարյան), լազերային քիմիա (Ռ. Չալտիկյան), ջրածնի պերօքսիդի քայքայումը հողերում և բնական ջրերում (Գ. Փիրումյան), ՄԱՆ-երի դերը և նշանակությունը պոլիմերման և օքսիդացման գործընթացներում (Ռ. Հարությունյան, Զ. Գրիգորյան, Յ. Նալբանդյան և այլք): Բավական է նշել, որ այդ տարիներին ամբիոնում պաշտպանվել են 50 թեկնածուական և 6 դոկտորական ատենախոսություններ:

2000 թ.-ից ԵՊՀ ֆիզիկական քիմիայի ամբիոնը ղեկավարել է պրոֆ. Շ. Մարգարյանը: Այդ ժամանակ գլխավորապես միջազգային դրամաշնորհների միջոցով հարստացել է ամբիոնի տեսական և փորձարարական հիմքը, որն իր հերթին անմիջականորեն փոխկապակցված է գիտական ուղղությունների զարգացման հետ: Դրա կարևորագույն արտահայտումն են կենսաբանական համակարգերի ֆիզիկաքիմիական ուսումնասիրություններ:

րը՝ հիմնված ինչպես մակրոսկոպիկ, այնպես էլ միկրոսկոպիկ մոտեցումների վրա: Մասնավորապես մոլեկուլային սպեկտրոսկոպիայի եղանակների (Ֆուրյե ձևափոխման ԻԿ, էլեկտրոնային կլանման և ֆյուորեսցենտային), ինչպես նաև խտաչափության, մակերևութային լարվածության և նանոմասնիկների չափսի և բաշխվածության որոշման լուսացրման եղանակների կիրառումը հնարավորություն են տվել բազմաթիվ դրամաշնորհների իրականացմանը և միջազգային ճանաչում ունեցող գիտական հանդեսներում տպագրվելու: Այդ տարիներին ամբիոնում արդյունավետ աշխատել են պրոֆ. Կ. Գրիգորյանը, գիտ. թեկնածուներ Գ. Գրիգորյանը, Հ. Ղազոյանը, Հ. Սարգսյանը, Լ. Գաբրիելյանը, Ա. Զատիկյանը և այլք:

ԵՊՀ տեսական քիմիայի ամբիոնում հետազոտվել են տարասեռ կատալիզի երևույթներ, հայտնաբերվել են պինդ նյութերի մակարևոյթի վրա ացետիլենային միացությունների փոխարկման նոր օրինաչափություններ, մշակվել են կիրառական հարցեր (Ա. Մուշեղյան, Գրիգոր Գրիգորյան): Ամբիոնում տեսական բնույթի գիտական աշխատանքներ են կատարել պրոֆ.-ներ Կ. Խաչատուրյանը և Հ. Դավթյանը: Պրոֆ. Կ. Խաչատուրյանի գիտական աշխատանքները վերաբերել են քիմիական թերմոդինամիկային և քվանտային քիմիային, ինչպես նաև հրթիռային շարժիչներում վառելանյութի այրման ու գազային պրոցեսների տեսության հարցերին: Պրոֆ. Հ. Դավթյանը գիտական ուսումնասիրություններ է կատարել քվանտային քիմիայի, թերմոդինամիկայի, տեսական ֆիզիկայի, կինետիկայի և կատալիզի ուղղություններով: Նա մշակել է խմբերի տեսությունը քվանտային քիմիայում կիրառելու եղանակը: Այնուհետև 2000-ական թթ. աշխատանքները տարվել են մետաղական և մետաղ-օքսիդային կոմպլեքսային կատալիզատորների սինթեզի ու հատկությունների ուսումնասիրությունների, ինչպես նաև քիմիական տեղափոխման (տրանսպորտային) ռեակցիաների կինետիկայի ուսումնասիրման ուղղություններով (Գառնիկ Գրիգորյան, Գրիգոր Գրիգորյան, Գևորգ Գրիգորյան, Օ. Քամայան և ուրիշներ):

Դեռևս 1940-ական թ.-ից ԵՊԻ-ում կատարվել են էլեկտրաքիմիական պրոցեսների և ռեակցիաների ուսումնասիրություններ (պրոֆ. Լ. Անդրուպով): 1950-ական թթ. այդ ինստիտուտում Ա. Ալչուջյանը իր գործընկերների հետ զարգացրել է կատալիզի գծով ֆիզիկաքիմիական հետազոտություններ:

Երևանի «Նաիրիտ» ԳԱՄ-ում գործող «Պոլիմերների ՀԳՀԻ»-ում մակերևութային ակտիվ նյութերի (ՄԱՆ) միցելային լուծույթների ուսումնասիրությունների հիման վրա ստեղծվել է միցելային համակարգերի կառուցվածքը բնութագրող տեսություն (պրոֆ. Լ. Մելքոնյան, ՀՀ ԳԱ ակադ. Ա. Շահինյան):

Պրոֆ. Ռազմիկ Վարդանյանի ղեկավարությամբ գիտահետազոտական աշխատանքներ են կատարվել Գորիսի ֆիզիկատեխնիկական կենտրոնում և Գորիսի պետական համալսարանում. զբաղվել են հիդրոպերօքսիդների քայքայման կինետիկայով և բուսական դեղատեսակային համակարգերի ուսումնասիրություններով:

Քիմիական ֆիզիկա: Քիմիական ֆիզիկան՝ որպես քիմիական գիտության ինքնուրույն ճյուղ, ՀՀ-ում հիմնադրել և զարգացրել է (1959-1987 թթ.) տաղանդավոր քիմիկոս, ՀՀ ակադեմիկոս Արամ Բագրատի Նալբանդյանը: Նա ՀՀ ԳԱ համակարգում 1959 թ. ստեղծեց Քիմիական ֆիզիկայի ԳՀ լաբորատորիա, ապա դրա հենքի վրա՝ 1975 թ. Քիմիական ֆիզիկայի ինստիտուտ (ՔՖԻ), որը ղեկավարել է մինչև իր կյանքի վերջը (1987 թ.): 1965 թ. Մոսկվայից մշտապես տեղափոխվել է Երևան (մինչ այդ աշխատել է Մոսկվայի քիմիական ֆիզիկայի ինստիտուտում) և ամբողջովին նվիրվել Երևանի քիմիական ֆիզիկայի ինստիտուտի կազմակերպմանն ու գործունեությանը: Ակադ. Ա. Նալբանդյանի կողմից կատարված գիտական աշխատանքները վերաբերում են գազաֆազ ճյուղավորված և այլասերված ճյուղավորված շղթայական ռեակցիաների կինետիկայի, մեխանիզմի և միջանկյալ ու վերջնանյութերի ուսումնասիրություններին:

Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի աշխատանքները ակադ. Ա. Նալբանդյանից հետո՝ 1989-2006 թթ., ղեկավարել է քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ադոլֆ Հայրապետի Մանթաշյանը: Նրա գիտական աշխատանքները հիմնականում նվիրված են ածխաջրածինների և մետաղ-սուլֆիդային միացությունների օքսիդացման մեխանիզմների բացահայտմանը:

2006-2019 թթ. Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն եղել է քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Լևոն Աղասիի Թավադյանը: Նրա գիտական աշխատանքների հիմնական ուղղություններից են հեղուկ ֆազում (այդ թվում՝ նաև կենսաբանական միջավայրերում) ընթացող բարդ ռեակցիաների մեխանիզմների բացահայտումն ու ղեկավարման եղանակների մշակումը,

բնական հակաօքսիդիչ նյութերի ազդեցության քիմիական մեխանիզմների բացահայտումը, ինչպես նաև բարդ (բազմափուլ) ռեակցիաների մեխանիզմների հետազոտման թվային եղանակների մշակումը:

Գիտական հետազոտությունները Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում հիմնականում տարվել են երեք ուղղություններով: Դրանցից առաջինի նպատակն էր հետազոտել բարդ գազաֆազ օքսիդացման (ջրածնի, ածխաջրածինների և այլն) ռեակցիաների կինետիկան և մեխանիզմը (Ա. Նալբանդյան, Ի. Վարդանյան, Ա. Մանթաշյան, Լ. Թավադյան, Թ. Ղարիբյան և ուրիշներ): Ինստիտուտում կատարվել են նաև ածխաջրածինների հեղուկաֆազ օքսիդացման հետազոտություններ (Լ. Թավադյան): Գիտական աշխատանքները հիմնականում վերաբերել են հեղուկ լուծույթներում ընթացող ազատ ռադիկալային ռեակցիաներին, օրգանական միացությունների հեղուկաֆազ օքսիդացման ռեակցիաների կատալիզին և արգելակմանը, քիմիական գործընթացների մաթեմատիկական մոդելավորմանը: 1988 թ. Լ. Ա. Թավադյանը ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի իր գործընկերների հետ դարձել է ԽՍՀՄ հայտնագործության հեղինակ՝ բազմակենտրոն շղթայական պրոցեսների ընտրողական արգելակման բնագավառում նոր երևույթի բացահայտման համար: Ինստիտուտում կատարվող հետազոտությունների երկրորդ ուղղությունը վերաբերում է ինքնատարածվող բարձրաջերմաստիճանային սինթեզին (ԻԲՄ), որի առաջին հեղինակը Խորհրդային Միությունում եղել է հայազգի ակադեմիկոս Ա. Մերժանովը: Այն վերաբերում է պինդ ֆազում ընթացող բարձրաջերմաստիճանային այրման ռեակցիաների ուսումնասիրություններին և նպատակն է ԻԲՄ եղանակով մշակել անօրգանական միացությունների և նյութերի ստացման գիտական հիմունքները: Այդ ուղղությամբ ՀՀ-ում զբաղվել է Ա. Մերժանովի աշակերտներից քիմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Սուրեն Խառատյանը՝ աշխատանքները ղեկավարելով Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում, իսկ 1995 թվականից՝ զուգահեռաբար նաև ԵՊՀ-ում: Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում տարվող երրորդ գիտական ուղղությունը քիմիական տեղափոխման (տրանսպորտային) գործընթացների ուսումնասիրություններն են, որոնք կատարվել են հիմնականում անօրգանական մետաղօքսիդների և աղերի փոխարկումների ուղղությամբ՝ գազ-պինդ ֆազ համակարգերում՝ որպես խթանիչներ օգտագործելով ջրածնի և օրգանական պերօքսիդներ (Ա. Բ. Նալբանդյան, Գ. Լ. Գրիգոր

րյան, Լ. Ա. Վարտիկյան, Է. Գ. Սարգսյան, Ա. Ն. Աբրահամյան): ԵՊՀ-ում անօրգանական նյութերի տրանսպորտային փոխարկման գործընթացներում և ռեակցիաներում առաջին անգամ օգտագործվել են հիդրոպերօքսիդները որպես ակտիվ խթանիչներ (պրոֆ. Գառնիկ Գրիգորյան, դոց. Գևորգ Գրիգորյան):

Քիմիական ֆիզիկայի և ֆիզիկական քիմիայի բնագավառում Մոսկվայի ՔՖԻ-ում նշանակալի գիտական աշխատանքներ է կատարել ՀՀ ԳԱԱ անդամ և ՌՖ ԳԱ թղթակից անդամ Վիլեն Ազատյանը, որն իր գիտահետազոտական գործունեության ընթացքում հասել է մեծ հաջողությունների և դարձել միջազգային ճանաչված գիտնական: Նա երկար տարիներ հրավերով դասախոսել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում, նպաստել կադրերի պատրաստման գործընթացին և հետազոտական աշխատանքների զարգացմանը:

Անալիտիկ (Վերլուծական) քիմիա: Անալիտիկ քիմիային վերաբերող ուսումնագիտական աշխատանքները Խորհրդային Հայաստանում թելադրված էին տեղական հանքանյութերի քիմիական վերլուծությունները (անալիզները) իրականացնելու անհրաժեշտությամբ: ՀՀ-ում անալիտիկ քիմիայի ներդնողը և զարգացնողը եղել է քիմիական գիտության նվիրյալ, տաղանդավոր պրոֆ. Լևոն Ռոտինյանը, որի ջանքերով առաջինը Երևանի համալսարանում 1923 թ. կազմակերպվեց և ստեղծվեց Անօրգանական ու անալիտիկ քիմիայի համատեղ ամբիոն, որի առաջին վարիչն էր հենց ինքը: Առաջին աշխատանքներն իրականացվեցին դասական եղանակներով ժողովնոտիտրիի հետազոտական լաբորատորիայում և ԵՊՀ-ում:

Լ. Ռոտինյանի սան պրոֆ. Վերգինե Թառայանի անվանն է առնչվում ՀՀ-ում և ԵՊՀ-ում անալիտիկ քիմիայի զարգացման հիմնական շրջանը: Նրա ղեկավարությամբ իրականացվել են պրոֆ. Լ. Ռոտինյանի կողմից առաջարկած նստեցման և կոմպլեքսագոյացման մի շարք ռեակցիաների պոտենցաչափական հետազոտությունները: Վ. Թառայանը զարգացրել է մերկուրոռեդուկտոմետրիան, որը լայն կիրառում ստացավ անալիտիկ քիմիայում: Այս եղանակի տեսական հիմունքները և բազմաթիվ տարրերի որոշման համար դրա կիրառման հնարավորությունը ամփոփվեցին «Тароян В. М., Меркуроредуктометрия. Меркурометрия как редуктометрический метод титриметрического анализа (Եր., 1958, 1980) մենագրության մեջ:

1950-ական թթ. ամբիոնում մշակվել է գիտական նոր ուղղություն՝ հազվագույտ և ցրված տարրերի (Re, Se, Te, Ga, Tl և այլն) անալիտիկ քիմիան, որը մեծ հոչակ բերեց ինչպես Վ. Թառայանին, այնպես էլ ամբիոնին: Ամբիոնում զարգանում էր սուլֆիդային հանքանյութերում, սիլիկատային ապարներում, շլամի մեջ և համահալվածքներում մի շարք տարրերի բաժանման, խտացման և որոշման գործընթացների ուսումնասիրությունը (Վ. Թառայան, Ե. Հովսեփյան): Մեր հանրապետության համար կարևոր տարր ռենիումին նվիրված գիտական աշխատանքներն ամփոփվեցին «Тараян В. М., Аналитическая химия реная, Ер., Митк, 1966» մենագրության մեջ, որը լայն ճանաչում ունեցավ քիմիական աշխարհում: 1970-ական թթ. ամբիոնում սկսվեց ավելի հետաքրքիր շրջան, երբ տարրերի միկրոգրամային քանակների որոշման համար սկսեցին կիրառել օրգանական հիմնային ներկանյութերով լուծահանալուսաչափական և լուծահանաֆլուորաչափական եղանակները (Վ. Թառայան, Ե. Հովսեփյան (1978-1983 թթ. ամբիոնի վարիչ), Ժ. Առստամյան, Ա. Քանքանյան. Ջ. Միքայելյան, Գ. Շապոշնիկովա, Ս. Վարդանյան և այլք): 1960-ական թթ. ամբիոնում կազմակերպվեց քրոմատագրության լաբորատորիա (Դ. Գայբակյան) և օպտիկական ու էլեկտրաքիմիական եղանակների հետ կիրառվել են նաև անալիտիկ քրոմատագրության եղանակները (իոնափոխանակային, նրբաշերտ, թղթյա և էլեկտրաքրոմատագրության): 1983 թ.-ից ամբիոնի վարիչ Համբարձում Խաչատրյանի ղեկավարությամբ տարվել են հետազոտություններ՝ նվիրված հիմնային ներկանյութերի հետ հազվագույտ և ցրված տարրերի անիոնային կոմպլեքսներին (ք.գ.դ. Ժ. Առստամյան, դոց. Ջ. Միքայելյան և ուրիշներ), զարգացվել են նաև գազ-հեղուկ քրոմատագրության եղանակով ԳՀ աշխատանքները (ք.գ.դ. Ս. Հայրապետյան):

ԵՊՀ անալիտիկ քիմիայի ամբիոնի գիտական ձեռքբերումներն ակնհայտ էին և մեծ ճանաչում ու արձագանք էին ստացել: Այդ էր պատճառը, որ 1968 և 1974 թթ. Երևանում կազմակերպվեցին համամիութենական գիտաժողովներ՝ կապված ամբիոնում ծավալված աշխատանքների հետ:

ՀՀ-ում անալիտիկ քիմիայի զարգացմանը նպաստել են հանրապետության ԳՀ ինստիտուտներում և արդյունաբերական ձեռնարկություններում այդ ուղղությամբ տարվող գիտազործնական աշխատանքները: Վ. Թառայանի ղեկավարությամբ ԳՀ խումբ է աշխատել ՀՀ ԳԱ համակարգում



Քիմիայի ֆակուլտետի դասախոսական կազմը, 1957 թ.

*Ձախից աջ I շարք (նստած)՝ Մ. Սարգսյան, Տ. Ղազանյան, Ե. Թառայան, Մ. Դանդայան,
Հ. Չալտիկյան, Մ. Դարբինյան, Ա. Քանքանյան, Գ. Չոբյան*

*II շարք՝ Ա. Մանուկյան, Ռ. Մխիթարյան, Մ. Հեքիմիյան, Ս. Ավագյան, Ժ. Հովսեփյան,
Ա. Ավետիսյան, Լ. Գյուլբուդաղյան, Ա. Մամյան, Ա. Տիտանյան, Վ. Գրիգորյան,
Ա. Մուրադյան*

*III շարք՝ Ռուզան Չաքարյան, Է. Մեսրոպյան, Ս. Առաքելյան, Մ. Զալինյան, Ա. Զազյան,
Ս. Ղազարյան, Ա. Հարությունյան*

*IV շարք՝ Գ. Շահնազարյան, Ռ. (Ջուլյա) Հակոբյան, Ա. Սողոյան, Դ. Կոստանդյան,
Ս. Ափյան, Լ. Գրիգորյան, Դ. Գայրակյան, Ն. Բեյլերյան*



ՕԲԻ մի խումբ գիտաշխատողներ, 2003 թ.

*Ձախից I շարք՝ ք.գ.դ. Մաղենա Հովակիմյան, ակադեմիկոս Մայա Ինճիկյան, ք.գ.դ. Էմմա
Չուխաջյան, ակադեմիկոս Ստեփան Մացոյան*

*II շարք՝ ք.գ.դ. Ալեքսանդր Գևորգյան, ք.գ.դ. Մասուն Քոչարյան, ք.գ.դ. Առնոս
Հովհաննիսյան, ԳԱԱ թղթակից անդամ Գևորգ Դանազուլյան, ք.գ.դ. Արա Գյուլնազարյան*



*Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի գիտաշխատողներ, 2015 թ.
Ձախից աջ I շարք՝ գիտաշխատող Ս. Ծառուկյան, գիտաշխատող Տ. Սարգսյան, ք.գ.թ. Ա.
Հարությունյան, ֆիզմաթ. գ.թ. Գ. Սարգսյան, ք.գ.դ. Ա. Առուստամյան, ք.գ.թ. Լ.
Մանուչարովս*



*Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի մի խումբ գիտաշխատողներ, 2007 թ.
Ձախից աջ I շարք (նստած) տ.գ.դ. Ս. Դոլուխանյան, գիտաշխատող Ա. Ալեքսանյան,
տեխնիկներ Զ. Պողոսյան և Կ. Տեր-Կորունյան
II շարք՝ ք.գ.թ. Դ. Մայյան, ք.գ.թ. Ն. Աղաջանյան, ճարտարագետ Կ. Աբրահամյան,
ք.գ.թ. Հ. Հակոբյան, գիտաշխատող Ն. Մնացականյան, գիտաշխատող Օ. Տեր-Գալստյան,
ճարտարագետ Ժ. Վարդանյան, ֆիզմաթ. գ.դ. Վ. Շեխման*



*Օրգանական քիմիայի ամբիոնի դասախոսական կազմը, 1973 թ.
Ձախից աջ ներքևի շարք՝ Օ. Սարգսյան, Օ. Խաղազորձյան, Մ. Ջալինյան, Է. Մեսրոպյան,
Լ. Գյուլբուդաղյան, Մ. Դանդուբեյան, Ս. Առաքելյան, Ա. Տիտանյան, Ա. Ավետիսյան,
Ա. Դուրգարյան, Ա. Ջազյան
Վերևի շարք՝ Վ. Դուրգարյան, Լ. Ոսկանյան, Վ. Հարությունյան, Գ. Համբարձումյան,
Յ. Բունիաթյան, Գ. Թաթևոսյան, Մ. Մանուկյան, Ս. Հակոբյան, Բ. Հակոբյան, Ժ. Բոյաջյան,
Ա. Ղուկասյան*



Հ. Բունիաթյանը կենսաքիմիայի ինստիտուտի աշխատակիցների հետ



Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի աշխատակազմը, 2019 թ.
Ձախից աջ I շարք ներքևից՝ պրեպարատոր Ասլանյան Ս., ք.գ.թ. Բեգլարյան Հ., ավ. լաբ. Գալստյան Ն., ք.գ.թ. Մխիթարյան Ռ., ք.գ.թ., ամբիոնի վարիչ Մարտիրյան Ա., ք.գ.թ. Պետրոսյան Գ., ք.գ.թ. Ադամյան Ռ., ք.գ.դ. Հարությունյան Լ.
II շարք՝ ք.գ.դ. Հարությունյան Ռ., ք.գ.թ. Թադևոսյան Լ., ավ. լաբ. Վարդանյան Ն., ք.գ.դ. Խաչատրյան Հ., ք.գ.թ. Դարբինյան Հ., ք.գ.թ. Մանգասարյան Լ., ավ. լաբ. Պետրոսյան Բ., ք.գ.թ. Ներսիսյան Լ., ավ. լաբ. Դայան Ռ.
III շարք՝ դեղ. գ. թ. Պետրոսյան Հ., ք.գ.թ. Մկրտչյան Ռ., ք.գ.դ. Փիրումյան Գ., ք.գ.թ. Միմոնյան Գ., ք.գ.դ., ԳԱԱ թղթ. անդամ Խառատյան Ս., ք.գ.դ. Հայրապետյան Ս., ուս. լաբ. վարիչ Մարգարյան Կ.

(ԸԱՔԻ)՝ հանրապետության հանքանյութերի քիմիական անալիզի և հազվագյուտ տարրերի կոմպլեքսագոյացման ուղղություններով (ք.գ.թ. Ֆ. Միրզոյան և այլք):

Անալիտիկ քիմիայի ուղղությամբ գիտագործնական բնույթի աշխատանքներ են տարվել Օրգանական քիմիայի և Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտներում: Մշակվել են ֆիզիկաքիմիական անալիզի և սպեկտրաչափական անալիզի եղանակներ (գործել է ՕՔԻ-ում և ՆՕՔԻ-ում), իսկ ներկայումս՝ միացյալ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնում (ք.գ.թ. Լ. Խաժակյան, ք.գ.դ.-ներ Ա. Աբրահամյան, Ա. Մուշեղյան, Տ. Կուրտիկյան, ք.գ.թ.-ներ Ֆ. Քինոյան, Ռ. Գրիգորյան, Հ. Փանոսյան, ֆ.մ.գ.թ.-ներ Ա. Շախաթունի, Ռ. Թամազյան):

ՀՀ երկրաբանության վարչության և Երկրաբանական գիտությունների ինստիտուտի կենտրոնական լաբորատորիաներում մեծ կիրառություն են ստացել սպեկտրալուսաչափական եղանակները, հատկապես հազվագյուտ և ցրված տարրերի որոշումը բնական հանքանյութերում և այլ օբյեկտներում:

«Նաիրիտ» ԳԱՄ-ում, Պոլիվինիլացետատ և այլ գործարաններում գործել են անալիտիկ քիմիայի լաբորատորիաներ, որոնք բավարարել են դրանց համապատասխան խնդիրների լուծմանը՝ միաժամանակ զարգացնելով անալիզի ժամանակակից եղանակները:

Պոլիմերների քիմիա: Պոլիմերների սինթեզի և հետազոտության առաջին գիտական աշխատանքները ՀՀ-ում կապված են սինթետիկ կաուչուկի արտադրության հետ: 1959 թ. ստեղծվեց սինթետիկ կաուչուկի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի Երևանի մասնաճյուղը՝ Պոլիմերների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտը (Պոլիմերների ՀԳՀԻ), որը 1976 թ. մտցվեց «Նաիրիտ» ԳԱՄ-ի մեջ, որտեղ սինթեզվում և հետազոտվում էին նոր տեսակի քլորոպրենային կաուչուկներ, լատեքսներ ու ներդրվում արտադրության մեջ: Այդ ուսումնասիրություններով բացահայտվեցին էմուլսիայում քլորոպրենի պոլիմերման հիմնական օրինաչափությունները (պրոֆ.-ներ Լ. Մելքոնյան, Է. Ոսկանյան): Մշակվեց բուտադիենի հեղուկաֆազ քլորման եղանակ և ներդրվեց արտադրության մեջ (պրոֆ. Գ. Մարտիրոսյան): Կարբօքսիլ խումբ պարունակող քլորոպրենային համապոլիմերների հիման վրա մշակվել են նոր տեսակի բարձրորակ

կոմպլեքս հատկություններով օժտված լատեքսների (թաղանթանյութերի) և ադգեզիվ նյութերի (կաուչուկների տեսքով) ստացման եղանակներ (պրոֆ. Ա. Գևորգյան և այլք): Ստացված նյութերը մեծ կիրառություն են ունեցել տարբեր ոլորտներում:

ՀՀ ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտի մոնոմերների և պոլիմերների քիմիայի լաբորատորիայում պրոֆ. Ս. Մացոյանի ղեկավարությամբ սինթեզվել են նոր տեսակի կատալիզատորներ, ստացել ցիանուրիլ քլորիդային ջերմակայուն պոլիմերներ (դոկտորներ՝ Լ. Հակոբյան, Է. Դարբինյան և Գ. Պողոսյան): Պարզաբանվել են ռեակցիաների կինետիկական օրինաչափությունները և պոլիմերային արգասիքների հատկությունները (Վ. Դանիելյան):

ԳՀ աշխատանքներ են տարվել վինիլացետատի պոլիմերման ուղղությամբ նաև ԵՊՀ ֆիզքիմիայի ամբիոնին կից «Պոլիմերման պրոցեսների կինետիկայի պրոբլեմային լաբորատորիայում» պերօքսիդների և ամինասպիրտների առկայությամբ: Մակերևութային ակտիվ նյութերի ներկայությամբ ուսումնասիրվել են նաև վինիլացետատի, քլորոպրենի և այլ մոնոմերների պոլիմերման գործընթացի կինետիկական օրինաչափությունները (Ն. Բելլերյան, Ֆ. Կարապետյան, Ռ. Հարությունյան, Զ. Գրիգորյան, Յ. Նալբանդյան, Ն. Սարուխանյան, Գ. Սիմոնյան, Գ. Փիրումյան, Ա. Խաչոյան, Զ. Հակոբյան և այլք):

ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում իրականացվել է հազեցած և արոմատիկ նիտրիլների համապոլիմերումը էպօքսիդների հետ, մշակվել են արոմատիկ ալդեհիդների և վինիլային մոնոմերների համապոլիմերների ստացման եղանակներ, ինչպես նաև քլորոպրենից էպօքսիդների և α -քլոլկետոնների ստացման եղանակներ (Ա. Դուրգարյան, Ն. Դուրգարյան):

ԵՊԻ օրգանական սինթեզի և պլաստմասաների ամբիոնում իրականացվել է վինիլացետատի համապոլիմերում վինիլպրոպիոնատի հետ: Այդ աշխատանքները ղեկավարել է պրոֆ. Հ. Սայադյանը՝ միաժամանակ կատարելով «Սինթետիկ կաուչուկ» գործարանին առնչվող ԳՀ այլ աշխատանքներ:

Օխտինսկի «Պլաստպոլիմեր» միավորման Երևանի բաժանմունքում մշակվել են պոլիվինիլացետատային պոլիմերների ու համապոլիմերների ստացման նոր եղանակներ (Մ. Երիցյան և ուրիշներ):

ԵՊԻ-ում ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Ս. Դավթյանի և պրոֆ. Ա. Տոնոյանի ղեկավարությամբ վերջին տասնամյակներում կատարվել են կիրառական նշանակություն ունեցող հետազոտություններ ճակատային (ֆրոնտալ) պոլիմերման բնագավառում, որոնք ունեն միջազգային ճանաչում:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի քիմիայի ֆակուլտետում վերջին տասնամյակներում կարևոր հետազոտություններ են տարվել իզոցիանուրաթթվի և այլ մոնոմերների ու դրանց պոլիմերների մետաղիոնային կոմպլեքսների սինթեզի և հետազոտությունների ուղղություններով (պրոֆ. Մ. Երիցյան):

Պոլիմերային գործընթացների ֆիզիկաքիմիական հետազոտությունների բնագավառում Վանաձորի պոլիմերային սոսինձների պետական ինստիտուտում կարևոր և էական աշխատանքներ են կատարվել պրոֆեսորներ Հ. Ղազարյանի, Մ. Երիցյանի և Ռ. Վարդանյանի ղեկավարությամբ:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ-ում ֆիզիկական քիմիայի, քիմիական ֆիզիկայի և պոլիմերների քիմիայի զարգացմանը էապես նպաստել է աշխարհահռչակ գիտնական, ՌԴ ԳԱ ակադեմիկոս Ն. Ենիկալոյանը: Նա սերտ կապեր է ունեցել մեր քիմիկոսների հետ և իր գործնական առաջարկներով և խորհուրդներով նպատակաուղղել է նշված բնագավառներում կատարվող աշխատանքները: Նա մեծ ներդրում ունի նաև հայ քիմիկոս կադրերի պատրաստման գործում:

Քիմիական տեխնոլոգիա: Որպես քիմիային վերաբերող գիտություն՝ քիմիական տեխնոլոգիան ՀՀ-ում սկիզբ է առել 1940-ական թթ., խոշոր քիմիական արտադրության զարգացման, հատկապես Երևանի կաուչուկի գործարանի ստեղծմանը զուգընթաց: Առաջին տեխնոլոգիական գիտական աշխատանքների հեղինակներն էին գործարանային (նաև անօրգանական նյութերի ստացման) ճարտարագետները, ինչպես և բուհական համակարգի դասախոսները: Այդ տեսանկյունից առանձնապես արժեքավոր էին Արծրուն Մարտիրոսի Գասպարյանի ղեկավարությամբ կատարված գիտաարտադրական աշխատանքները, որոնց շնորհիվ Երևանի սինթետիկ կաուչուկի գործարանի արտադրական սխեմաներում մտցվել են մի շարք բարելավումներ: Պրոֆ. Ա. Մ. Գասպարյանի ամենախոշոր ներդրումը քիմիական արտադրության մեջ, ոչ միայն Խորհրդային Միությունում, այլև աշխարհում՝ նրա կողմից մշակված քլորաջրածինը ջրով անընդհատ կլանելու տեսու-

թյունն է, որի շնորհիվ Ա. Մ. Գասպարյանը մշակել է աղաթթու ստանալու անընդհատ եղանակ, որը ներդրվել է արտադրության մեջ: Այն կոչվել է «Գասպարյանի եղանակ» և լայն կիրառություն ստացել ամբողջ աշխարհում (1946 թ. Ստալինյան մրցանակ): Գործարանում մշակվել է նաև քլորոպրենային լատեքսի մանրահատիկ ու մոնոդիսպերս մակարդման եղանակ (Է. Տեր-Ղազարյան, Է. Լազարյան, Ն. Կարապետյան): Իսկ քլորբենզոլի արտադրությունը ավելի շահավետ դարձնելու նպատակով մշակվել և ներդրվել է անընդհատ գործող ռեակտոր (Հ. Սայադյան, Է. Տեր-Ղազարյան): Հետագայում քիմիական տեխնոլոգիական հետազոտությունները ծավալվեցին նաև ԵՊԻ և Քիմիայի ինստիտուտներում, ինչպես նաև ԵՊՀ-ում: ԵՊԻ-ում հետազոտությունները վերաբերել են երկֆազ համակարգերի (պինդ-հեղուկ, պինդ-գազ, հեղուկ-գազ) մասնակցությամբ ընթացող տեխնոլոգիական գործընթացների ուսումնասիրություններին, որոնց գործնական մշակումները ներդրվեցին Խորհրդային Միության 80-ից ավելի հիմնարկ-ձեռնարկություններում (Ռ. Հակոբյան, Ռ. Միրզախանյան, Ա. Գասպարյան և այլք):

Քիմիական տեխնոլոգիայի ուղղությամբ մեծ ծավալի և բարձր մակարդակի գիտահետազոտական աշխատանքների կատարումը սկսվել է 1930-ական թթ. ԵՊՀ-ում, ապա՝ շարունակաբար 1933 թ.-ից նորաստեղծ Պոլիտեխնիկական ինստիտուտում, իսկ հետագայում քիմիական արդյունաբերության զարգացմանը զուգընթաց նաև մյուս հիմնարկ-ձեռնարկություններում: Տարբեր ժամանակահատվածներում քիմիական տեխնոլոգիական գիտության զարգացումը ԵՊԻ-ում իրագործել են մեծ գիտնականներ Ս. Ղամբարյանը (1933-1937 թթ.), Լ. Ռոտինյանը (1933-1937 թթ.), Ա. Գասպարյանը, Լ. Ղազարյանը (1938-1945 թթ.), Հ. Սայադյանը (1946-1975 թթ.), Կ. Թահմազյանը (1976-2001 թթ.), Գ. Թորոսյանը (2001 թ.-ից), որոնք, բացի ուսումնական գործառնությունից, կատարել են նաև արտադրական տեխնոլոգիաների մշակումներ: ԵՊԻ-ում զարգացվել է նաև էլեկտրաքիմիական արտադրությունների տեխնոլոգիան՝ ԽՍՀՄ պետական մրցանակակիր, էլեկտրաքիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա. Եդիգարյանի ղեկավարությամբ:

Դեռևս 1930-ական թթ. պրոֆեսոր Լ. Ռոտինյանի սկսած աղեղային վառարաններում բազալտի էլեկտրաձուլման աշխատանքները հետագայում շարունակվեցին «Քար և սիլիկատներ» ԳՀԻ-ում (ակադ. Կ. Ա. Կոստանյան և ուրիշներ)՝ սինթեզելով բարձրորակ բյուրեղապակի՝ անցումային մետաղ-

ների հետ կապակցման համար: 1966 թ. Երևանում ստեղծվել է «Քար և սիլիկատներ» ԳՀԻ, որը եզակի էր աշխարհում իր գործառույթներով և ԳՀ աշխատանքների ուղղվածությամբ: Հիմնադիրը և առաջին տնօրենը եղել է Մամիկոն Լևոնի Հովհաննիսյանը: Ինստիտուտում աշխատանքները տարվել են հիմնականում երեք ուղղություններով:

1. Սիլիկատների տեխնոլոգիա: Մշակվել և ներդրվել են հեղուկ ապակու, մետասիլիկատի, ապակու սկզբունքորեն նոր տեսակի՝ կոմպլեքս ապակու, հումքի ստացման տեխնոլոգիաներ (Գ. Մելքոնյան, Վ. Բաղրամյան և այլք):

2. Տեղական հումքից ստացվել և ներդրվել են փքած պեռլիտի և դրա հիման վրա ջերմամեկուսիչ և ձայնամեկուսիչ նյութեր (Հ. Հակոբյան և այլք): Ներդրվել են փրփրապակու և փրփրապակե գնդիկների ստացման տեխնոլոգիա (Էմմա Սահակյան և այլք), տեղական հումքից սիտալների (Քնարիկ Յարալովա և այլք) և շինանյութերի ստացման (Մ. Բաղայան և այլք), բազալտից հանքային մանրաթելերի ստացման և ներդրման տեխնոլոգիաներ (Գ. Պետրոսյան և այլք):

3. Քարի արդյունահանման համար հանող և մշակող հաստոցների մշակում:

1980-ական թթ. սկզբին «Քար և սիլիկատներ» ինստիտուտի բազայի հիման վրա կազմակերպվեց «Քար և սիլիկատներ» ԳԱՄ-ը, որտեղ ներդրվել են ինստիտուտում մշակված բազմաթիվ տեխնոլոգիաներ: Ստեղծվեցին ՀՀ-ում լեռնային ապարների մշակման և վերամշակման նոր եղանակներ, և տարվեցին լուրջ աշխատանքներ անօրգանական նյութերի նպատակային կիրառման ուղղությամբ (Գ. Մելքոնյան, Հ. Բաբայան և այլք):

Քիմիական կարևոր սինթեզներ են տարվել նաև Վանաձորի քիմիական կոմբինատում, Ալավերդու պղնձածուլական գործարանում, Զանգեզուրի պղնձամոլիբդենային արտադրական միավորումում:

Վերջին տարիներին ՀՀ-ում քիմիատեխնոլոգիական աշխատանքներ հիմնականում տարվում են հանքարդյունաբերության բնագավառում և որոշ մասնագիտական արտադրություններում:

Կենսաքիմիա: Կենսաքիմիական գիտության զարգացումը ՀՀ-ում հիմնադրվել է Երևանի նորաստեղծ համալսարանի բժշկական ֆակուլտետում 1923-1924 թթ. պրոֆ. Հակոբ Հովհաննիսյանի կողմից, որը եղել է նաև կեն-

սաքիմիայի ամբիոնի առաջին վարիչը (1923-1930): Ակադ. Հ. Հովհաննիսյանի աշխատանքներից շատ արժեքավոր են Շ վիտամինի կառուցվածքի և կենսաքիմիական ֆունկցիայի ուսումնասիրությունները: Այնուհետև ՀՀ-ում կենսաքիմիայի զարգացումը շարունակել է ակադ. Հրաչյա Բունիաթյանը՝ ընդլայնելով և զարգացնելով կենսաքիմիան: Մեծ գիտնական-կենսաքիմիկոսի գործունեության հիմնական ուղղություններն էին՝ ուղեղի կենսաքիմիա (նյարդաքիմիա), նյարդային կարգավորման մեջ առանձին վիտամինների, կենսածին ամինների և ֆոսֆատիդների կենսաքիմիան, որոնք հետագայում դարձան առանձին գիտական ուղղություններ: Այդ հետազոտությունները հիմք հանդիսացան ՀՀ ԳԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի կազմում գտնվող կենսաքիմիայի բաժնի հիման վրա 1961 թ. ՀՀ ԳԱ կենսաքիմիայի ինստիտուտի ստեղծման համար, որը հետագայում կոչվեց առաջին տնօրեն Հ. Բունիաթյանի անունով և դարձավ ուղեղի կենսաքիմիայի խոշոր կենտրոններից մեկը աշխարհում: Կենսաքիմիայի ինստիտուտում հետաքրքիր աշխատանքներ են կատարել դոկտորներ Ռ. Նալբանդյանը, Գ. Ադոնցը, Ա. Հարությունյանը, Ա. Սիմոնյանը, Գ. Ապրիկյանը, Կ. Ղարաբյոզյանը և ուրիշներ: Ակադեմիկոս Հ. Բունիաթյանից հետո Հայաստանում կենսաքիմիայի զարգացման բնագավառում շատ մեծ դեր է կատարել ակադեմիկոս Ա. Գալոյանը՝ սկսած 1980-ական թթ.: Ա. Գալոյանի և աշխատակիցների կողմից զարգացվել են նեյրոքիմիայի և մոլեկուլային նեյրոէնդոկրինոլոգիայի երկու նոր, այսպես կոչված, նեյրոէնդոկրին սրտաբանության և ուղեղի նեյրոէնդոկրին իմուն համակարգության ուղղություններով: Նա՝ որպես կենսաքիմիայի հայկական ընկերության նախագահ, մեծ ավանդ ունի նյարդաքիմիայի զարգացման գործում ինչպես Հ. Բունիաթյանի անվան ինստիտուտում, այնպես էլ ՀՀ կենսաքիմիայի տարբեր կենտրոններում:

Ինստիտուտում իրականացվող հետազոտություններից պարզվել է, որ սրտի նախասրտերը ևս արտադրում են պեպտիդային հորմոններ, որոնք ուղեղի կարդիոտրոպ հորմոնների անջատողներն են ուղեղից արյան մեջ: Այսպիսով, գոյություն ունի ուղեղ-սիրտ նեյրոհումորալ համակարգությունը, որը ունի չափազանց մեծ նշանակություն սիրտ-անոթային համակարգի գործունեության կանոնավորման մեջ: Դեռևս 1970-ական թթ. ինստիտուտում ստեղծված պատրաստուկներից մեկը (հիպոթալամը) հաստատվել է ԽՍՀՄ

Ֆարմկոմիտեի կողմից սրտի ինֆարկտի և այլ սիրտ-անոթային հիվանդությունների բուժման համար:

Վերջին 15 տարիների ընթացքում առավել զարգացում է ստացել ուղեղի նեյրոէնդոկրին իմունային համակարգության տեսությունը: Հիպոթալամուսից, ինչպես նաև նեյրոսեկրետոր գրանուլներից անջատվել են ավելի քան 20 նոր իմունամոդուլյատորներ և հեմոգլոբինի բեկորներ: Պրոլինոլ հարուստ ցիտոկիններից մեկը՝ գալարմինը, որը լիմֆոգենիզի և միելոգենիզի հզոր կանոնավորիչներից մեկն է, հանձնված է ՀՀ ֆարմակոլոգիական կոմիտեի քննարկմանը՝ իմունային հիվանդությունների բուժման համար: Այսպիսով, ուղեղի կենսաբանական ակտիվ պեպտիդների ու սպիտակուցների հայտնաբերումը և վերջիններիս քիմիական կառուցվածքների պարզաբանումը նոր էջ են բացել նեյրոկենսաբանության, իմունային համակարգի, ինչպես նաև բժշկության մի շարք ուղղությունների զարգացման համար:

Նշանակալից արդյունքներ են ստացվել երկարատև ճգման համախտանիշի ժամանակ նոր կենսաքիմիական մեխանիզմների և սրտամկանի ինֆարկտի առաջացման մեխանիզմների բացահայտման, փորձարարական նեյրոդեգեներատիվ հիվանդությունների վրա ցիտոկինների ազդեցության մոլեկուլային մեխանիզմների, գլուտամինից գամմա-ամինակարապաթթվի առաջացման մեխանիզմի վերաբերյալ, մակրոէրզիկ միացությունների և ֆերմենտների, ինստիտուտում հայտնաբերված ուղեղի կարդիոտրոպ հորմոնների, իմունային համակարգի ազդանշանային մոլեկուլների ազդեցության մեխանիզմների ուսումնասիրության ուղղությամբ: Նշված գործընթացներում կարևոր նշանակություն ունեն ազատ ռադիկալների գոյացման և չեզոքացման կենսաքիմիական մեխանիզմները: Ինստիտուտում շուրջ 20 անուն սպիտակուցներ և ֆերմենտներ են անջատվել, որոնք մասնակցում են ռադիկալների առաջացման, չեզոքացման, ինչպես նաև թոքախտի հայտնաբերման ու ախտորոշման գործընթացներում:

1970 թ.-ից ինստիտուտում գործում է հանրապետությունում միակ սցինտիլյացիոն սպեկտրասկոպիայի ռադիոիզոտոպային լաբորատորիան, որը սպասարկում է ակադեմիկական և բուհական գիտական կենտրոններին:

Վերջին 20 տարիների ընթացքում հրատարակվել է ՌԴ ԳԱ և ՀՀ ԳԱ համատեղ «Նեյրոքիմիա» ամսագիրը (գլխավոր խմբագիր՝ ակադ. Ա. Գալոյան), որն ունի միջազգային լայն ճանաչում: Հաշվի առնելով ՀՀ ԳԱԱ Հ. Բու-

նիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի, ինչպես նաև հանրապետության մի շարք գիտական ինստիտուտներում ստացված գիտական արդյունքները՝ ՀՀ կենսաքիմիկոսների նոր ստեղծած ընկերությունը 2002 թ. հոկտեմբերին հաստատվեց որպես Եվրոպայի կենսաքիմիկոսների ընկերության դաշնության անդամ:

Բժշկական ինստիտուտի կենսաքիմիայի ամբիոնում ակադ. Հ. Բունիաթյանի ղեկավարությամբ կատարվել են հետազոտություններ C վիտամինի կառուցվածքի և ֆունկցիայի պարզաբանման, ինչպես նաև նյարդաքիմիայի ուղղությամբ: Նույն ինստիտուտում ակադ. Ա. Գալոյանի ղեկավարությամբ կատարվել են նաև ԳՀ աշխատանքներ՝ նվիրված ներքին օրգանների հորմոնալ կարգավորման նյարդաքիմիային:

ԵՊՀ կենսաքիմիայի ամբիոնում և պրոբլեմային լաբորատորիայում հետազոտությունները ակադ. Մ. Դավթյանի ղեկավարությամբ կատարվել են համեմատական-էվոլյուցիոն տեսանկյունից: Գիտական հետազոտությունները նվիրված են եղել ամինաթթուների փոխանակության ու համապատասխան խմորիչների ակտիվության կարգավորման հարցերին: Հիմնավորվել են բնության մեջ նոր արգինազի գոյությունը և դրա մակաձման վճռորոշ դերը ուրեոթեիլիզմի ձևավորման մեխանիզմում: Հաստատվել է արգինազի և պրոլինի կենսասպինթեզը օրգանիզմում կատալիզող ֆերմենտի և ոչ ուրեոթեիլիկ արգինազի միջև գոյություն ունեցող համապատասխանությունը (պրոֆ. Ա. Աղաջանյան):

Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի կենսաքիմիայի և օրգանական քիմիայի ամբիոնում (վարիչ՝ Լ. Դավթյան) և Պրոբլեմային լաբորատորիայում ուսումնասիրվել է էթանոլամինի դերը նյութափոխանակության ընթացքում, ցույց է տրվել կոլամինի դրական ու բուժիչ դերը կենդանիների օրգանիզմում:

ՀՀ գյուղատնտեսական ինստիտուտում կենսաքիմիայի հիմնադիրը եղել է պրոֆ. Գուրգեն Քամալյանը: Նրա գիտական աշխատանքները վերաբերում են նյութափոխանակության կարգավորման, գյուղատնտեսական կենդանիների և բույսերի մթերատվության բարձրացման ֆիզիոլոգիական-սաքիմիական հիմունքների ուսումնասիրություններին: Որպես աճման կենսաժին խթանիչ՝ հիմնավորել և առաջարկել է էթանոլամինը, որը օգտագործվել է որպես անասնաբուժական և անասնաբուժական միջոց բուսաբու-

ծուփյան և բժշկության մեջ, իսկ էթանոլամիինի հիդրոքլորիդը և ֆոսֆատը որպես համակցված կերերի միկրոհավելուրդ՝ կենդանիների համար: Կենսաքիմիական ԳՀ հետազա աշխատանքները իրականացրել է Գ. Քամայանի որդին՝ Ռոմիկ Քամայանը՝ սկսած 1960-ական թթ.:

Բժշկական (կլինիկական) կենսաքիմիայի հիմնադիրը ՀՀ-ում ակադեմիկոս Հ. Բունիաթյանն է: Նորաստեղծ բժշկագիտական այդ ուղղության հետազա զարգացման գործում մեծ ներդրումներ են ունեցել ՀՀ ԳԱ ակադեմիկոսներ Արմեն Գալոյանը, Կոնստանտին Ղարազյոզյանը, պրոֆեսորներ Պետրոս Ղազարյանը, Գևորգ Գևորգյանը, Միխայիլ Աղաջանովը և ուրիշներ, որոնց գյուտարարություններից շատերը ներդրվել են գործնական բժշկության մեջ:

Մեծ է եղել աշխարհահռչակ գիտնական, ՌԴ ԳԱ ակադեմիկոս Նորայր Սիսակյանի դերն ու նշանակությունը ՀՀ-ում կենսաքիմիայի զարգացման գործընթացում: Նրա անմիջական մասնակցությամբ ՀՀ-ում կազմակերպվել են կենսաքիմիայի ԳՀ կենտրոններ, պատրաստվել են կենսաքիմիայի ուղղությամբ մասնագետներ, որոնք բարձր, կարելի է ասել միջազգային մակարդակի են պահել կենսաքիմիական գիտությունը:

Ագրոքիմիա: Ագրոքիմիան կենսաբանական ու քիմիական գիտությունների և տեխնոլոգիաների հարակցման հանգույցում ձևավորված գիտություն է, որն ուսումնասիրում է բույսերի հանքային սննդառությունը և արտաքին միջավայրի հետ դրանց փոխազդեցությունների քիմիական մեխանիզմը, բույսերի սննդառության գիտական հիմունքների մշակումը՝ որակյալ ու անհրաժեշտ քանակով բուսական նյութ ստանալու նպատակով: Ագրոքիմիան ուսումնասիրում է բնության մեջ եղած կարևոր մակրո և միկրո սննդատարների շրջանառությունը, բույսերում տեղի ունեցող ֆիզիկաքիմիական գործընթացները, պարարտանյութերի ազդեցությունը (էկոլոգիան և բարձր բերքատվությունը): Ագրոքիմիայի ծագմանը և զարգացմանը նպաստել են մեծ գիտնականներ Ժ. Բուսենգոն, Յու. Լիբիխը, Ջ. Ջիլբերտը, Հ. Հելսիգելը, Դ. Մենդելեևը, Կ. Տիմիրյազևը, Դ. Պրյաշնիշկովը, իսկ ՀՀ-ում՝ Պ. Քալանթարյանը և նրա աշակերտները՝ Գ. Դավթյանը, Ե. Մովսիսյանը, Գ. Ասլանյանը, Ա. Հարությունյանը, Հ. Փանոսյանը, Մ. Արևշատյանը և ուրիշներ:

Ագրոքիմիական բնագավառի գիտության զարգացումը Հայաստանում սկսվել է խորհրդային ժամանակից (1920-ական թ.-ից), երբ պրոֆ. Պապա

Բեջանի Քալանթարյանի ղեկավարությամբ 1922 թ. ստեղծվեց Երևանի համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի ագրոքիմիայի ամբիոնը: Այնուհետև շարունակաբար ստեղծվեց Հայաստանի հողփողկոմատի կենտրոնական լաբորատորիան (1928թ.), ապա՝ 1929 թ.՝ պարարտացման ԳՀ կայանը, որը 1939 թ. դարձավ համամիութենական ինստիտուտի հայկական մասնաճյուղ և կոչվեց «Քիմիացման և ագրոհողագիտության ԳՀ կայան»: 1943 թ. կազմակերպվեց ՀԽՍՀ ԳԱ երկրագործության ինստիտուտը, իսկ 1947 թ.՝ Ագրոքիմիայի պրոբլեմների և հիդրոպոնիկայի ԳՀԻ: ՀՀ հողածածկի առաջին ագրոքիմիական քարտեզը կազմվել է 1962 թ.: Արդեն սկսած 1966 թ.-ից ուսումնասիրվել են սննդատարրերի և ճառագայթատարրերի շրջապտույտը ՀՀ-ի հիմնական հողակլիմայական գոտիներում, նաև բույսերի հիդրոպոնիկ արտադրության ագրոքիմիական, ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հիմունքները (Գ. Դավթյան, Վ. Անանյան, Գ. Բաբայան և ուրիշներ): Ագրոքիմիական հետազոտություններ են կատարվել նաև ՀՀ հողագիտության ու ագրոքիմիայի ԳՀԻ-ում (հիմնադրված՝ 1958 թ.): Մշակվել են հողում շարժուն ազոտի, ֆոսֆորի, կալիումի որոշման եղանակներ և միկրոտարրերի տարածման օրինաչափությունները (Ն. Ավագյան և ուրիշներ): 1962 թ. ՀՀ երկրագործության ԳՀԻ-ում մշակվել են բույսերի պարարտացման համակարգերը, պարզվել են բույսերի յուրացման սննդատարրերը և այլ հարցեր (Հ. Գրիգորյան, Գ. Դավիդովսկի, Վ. Սիմոնյան, Գ. Ասլանյան, Բ. Աստվածատության և ուրիշներ): ՀՀ խաղողագործության, գինեգործության, պտղաբուծության ԳՀԻ-ի ագրոքիմիայի և հողագիտության բաժնում հետազոտվել են այգիների պարարտացման, խաղողի վազում մակրոտարրերի և միկրոտարրերի բաղադրության և դրանց շրջապտույտի հարցերը (Ա. Հարությունյան, Վ. Հարությունյան և ուրիշներ): Հայկական գյուղատնտեսական ինստիտուտում ուսումնասիրվել են բույսերի սննդային ռեժիմը, հանքային պարարտանյութերի և հերբիցիդների կիրառման, պարարտանյութերի ազդեցության խնդիրները (Ե. Մովսիսյան, Ռ. Այդինյան, Վ. Դովլաթյան և ուրիշներ):

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ



ԱԲԵԼՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԻԳՐԱՆԻ (13.04.1849, Վարդաբլուր, Լոռի – 01.10.1921, Ցյուրիխ): Քիմիկոս, պրոֆ. (1884):

Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում և որպես առաջավոր շրջանավարտ 1865 թ. ուղարկել են Եվրոպա ուսումը շարունակելու Հայդելբերգի համալսարանի բնագիտական ֆակուլտետում, որտեղ աշակերտել է ավանի քիմիկոսներ Ռ. Բունզենին, Գ. Կիրխհոֆին և Հ. Հելմհոլցին: 1872 թ. ավարտել է Ցյուրիխի համալսարանը և դարձել է Ցյուրիխի նահանգային քիմիկոս (1877-1884), ապա Ցյուրիխի համալսարանի պրոֆեսոր (1884-1921): Եղել է Գերմանիայի քիմիական ընկերության անդամ: Նրա գիտական աշխատանքները հիմնականում նվիրված են վերլուծական քիմիային: Հետազոտել է նավթի բոցավառման գործընթացը, ստեղծել դրա ջերմությունը չափող սարքավորում, որը հետագայում կոչվել է իր անունով: Զբաղվել է նաև ածխաջրածինների, երկքլորեթերների և սննդանյութերի քիմիական վերլուծությամբ: Հեղինակել է «Առաջնորդ որակական անալիզի» գերմաներենով գրած դասագիրքը, որը ունեցել է բազմաթիվ հրատարակություններ: 1896 թ. գիտական նպատակներով եկել է Հայաստան, բարձրացել Արարատի գագաթը և իր տպավորությունները գրել Եվրոպական թերթերում: Պրոֆ. Հ. Աբելյանը եղել է Ցյուրիխի հայ գաղութի Պատվավոր նախագահ:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ ԱԲՐԱՀԱՄԻ (25.10(7.11). 1909, Արճեշ (Վանի նահանգ) - 17.9.1978, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1971), պրոֆ. (1974):

Ավարտել է ՀՊՄԻ (1931) և ԵՊԻ (1936): 1941-1958 թթ. եղել է ՀԳԻ ընդհանուր քիմիայի ամբիոնի վարիչ, 1958-1978 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտի ֆիզքիմիական եղանակների և օրգանական նյութերի վերլուծության լաբորատորիայի վարիչ: Աշխատանքները վերաբերում են ՀՀ պեմզաների և տուֆերի մակակլանման հատկությունների ուսումնասիրմանը: Զբաղվել է օրգանական նյութերում տարբեր տարրերի միկրովերլուծության եղանակների մշակման հարցերով:

Հեղինակ է «Օրգանական միացությունների քանակական միկրոէլեմենտար անալիզ» (Եր., 1963 թ.) աշխատությանը:



ԱՐԱՀԱՄՅԱՆ ՍԻԼՎԱ ՍԱՄՍՈՆԻ (18.03.1942, Երևան), կենսաքիմիկոս: Կենս. գիտ. դոկ. (2004):

1959 թ. ավարտել է Երևանի Հ. Հակոբյանի անվան դպրոցը, 1966 թ.՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի բաժինը: 1960-1969 թթ. աշխատել է ՀՀ ԳԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտում որպես լաբորանտ, 1969 թ.-ից՝ ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտում սկզբում որպես ավագ լաբորանտ, 1970 թ.-ից՝ կրտսեր գիտաշխատող, 1987 թ.-ից՝ ավագ գիտաշխատող: 1979 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

Աշխատանքները վերաբերում են իմունահիստոքիմիական եղանակների օգտագործմամբ, տարբեր նեյրոպեպտիդների մորմալ և պատֆիզիոլոգիական պայմաններում, ինչպես նաև որոշ կենսամոդուլյատորների ներգրավման հետազոտությանը նյարդային վերականգնման մեխանիզմներում:

1987-1992 թթ. աշխատել է Բուդապեշտի Ջեմելվեյսի համալսարանի անատոմիայի ինստիտուտում, իսկ 1997 թ.՝ Լոնդոնի Համերսմիթթ հոսպիտալի հիստոլոգիայի բաժանմունքում:

Հեղինակ է 52 գիտական աշխատության: Անդամ է ՀՀ մորֆոլոգների, էլեկտրոնային միկրոսկոպիստների և կենսաքիմիկոսների ընկերությունների:



ԱՐԱՀԱՄՅԱՆ ՍԻՆԱՐԱ ԱՐԱՄԻ (15.02.1947, գ. Կալինինո (այժմ՝ գ. Տաշիր, Լոռու մարզ)), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դոկ. (1991):

Ավարտել է ԵՊՀ-ն (1973): 1973 թ.-ից աշխատում է Հողագիտության, ագրոքիմիայի և հողաբարելավման ԳՀԻ-ում (այժմ՝ Հ. Պետրոսյանի անվան գիտական կենտրոն): Կազմել է հողի փոխանակային կատիոնների կազմի թթվայնության և ֆերմենտային ակտիվության որոշմանը վերաբերող մեթոդական ձեռնարկներ:

Աշխատանքները վերաբերում են հողի կենսաքիմիայի, կենսաբանական և ֆերմենտային ակտիվության կարգավորման և այլ հարցերին:

ԱԴԻԲԵԿ-ՄԵԼԻՔՅԱՆ (ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ) ԱՐՏԱՇԵՍ ԻՍԱՀԱԿԻ (03(15).05.1884, Թիֆլիս - 28.12.1956, Երևան), քիմիկոս-ճարտարագետ:

Ավարտել է Ժնևի համալսարանը: Աշխատել է Ժնևում, Շլիսելբուրգում, Կրասնոդարում, Ռոստովում: 1933 թ. տեղափոխվել է Խորհրդային Հայաստան: Վանաձորի (Կիրովականի) քիմիական գործարանի կազմակերպիչներից է, 1933-1938 թթ.՝ գլխավոր ճարտարագետ և տեխնիկական տնօրեն: 1938-1945 թթ. աշխատել է ՀԽՍՀ ՆԳ և տեղական արդյունաբերության ժողկոմատներում, 1945-1956 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ քիմիայի ինստիտուտի՝ իր նախաձեռնությամբ ստեղծված վերլուծական քիմիայի լաբորատորիայի վարիչ:



ԱՂՈՒՆՑ ԳԱՆՈՒՍ ԹԵՎՈՍԻ (08(21).03.1915, գ. Հին Գորիս (այժմ՝ ՀՀ Գորիս քաղաքի շրջագծում) – 15.11.1997, Երևան), կենսաքիմիկոս: Կենսաբ. գիտ. դոկ. (1968), պրոֆ. (1980):

Ավարտել է ԵՊՀ-ն (1941): 1949 թ.-ից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտում. 1953-1954 թթ.՝ տնօրեն, 1954-58 թթ.՝ փոխտնօրեն և կենսաքիմիայի բաժանմունքի վարիչ: 1958-1961 թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ կենսաքիմիայի բաժանմունքում, 1961-1986 թթ.՝ Կենսաքիմիայի ինստիտուտի ֆերմենտների լաբորատորիայի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են կենդանիների մոտ ածխաջրածնաֆոսֆորային փոխանակության որոշ ֆերմենտային գործընթացների առաջացմանն ու կարգավորմանը:



ԱՋԱՏՅԱՆ ՎԱՂԱՐՇ ԴԱՎԹԻ (14.01.1904, Թիֆլիս – 28.12.1992, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. թեկնածու (1940), դոցենտ: Վ. Վ. Ազատյանի հայրը:

Ավարտել է Ներսիսյան դպրոցը և ընդունվել ԵՊՀ գյուղատնտեսական ֆակուլտետը, որն ավարտել է 1928 թ.: 1930 թ. ավարտել է բնագիտական ֆակուլտետի

կենսաբանության, 1931 թ.' նույն ֆակուլտետի քիմիայի բաժինը: 1928-1934 թթ. աշխատել է ԵՊՀ-ում որպես դասախոս, քիմիայի ֆակուլտետի առաջին դեկան և պրոռեկտոր: 1940 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1939-1943 թթ. եղել է ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (Արմֆան) տնօրեն Հ. Օրբելու տեղակալը: Նրա մասնակցությամբ ստեղծվել է Արմֆանի քիմիայի ինստիտուտը (Օրգանական քիմիայի ինստիտուտ), որի տնօրենն էր 1939-1945 թթ.: Նրա գործուն մասնակցությամբ ստեղծվել է նաև Հայաստանի քիմիական ֆիզիկայի ինստիտուտը:

Հայաստանի քիմիական արդյունաբերության զարգացման գործում մեծ նշանակություն են ունեցել քլորոպրենային կաուչուկի, դիքլորբութենի, ացետիլենային միացությունների սինթեզի, տարրօրգանական միացությունների կատալիտային ցիկլոօկտատետրաենի ածանցյալների ուսումնասիրման բնագավառում նրա ստացած գիտական արդյունքները: Կարևոր դեր է ունեցել նաև «Հայկական քիմիական ամսագրի» ստեղծման (1947 թ.) գործում: Երկար տարիներ եղել է ՀԽՍՀ ԳԱ տերմինաբանական խորհրդի փոխնախագահ: Իր բացառիկ լեզվախմբությամբ և լեզվաբանական հարուստ գիտելիքներով մեծապես նպաստել է հայերեն քիմիական տերմինաբանության մշակմանն ու զարգացմանը: Մեծ է նրա ավանդը նաև ռուս-հայերեն քառահատոր և ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանների ստեղծման գործում: Նա զգալիորեն նպաստել է նաև Հայկական հանրագիտարանի ստեղծմանը:

Եղել է ԽՍՀՄ Մենդելեևյան քիմիական ընկերության ստեղծողներից և ղեկավարներից:

Պարգևատրվել է Կարմիր դրոշի շքանշանով:



ԱՋԱՏՅԱՆ ՎԻԼԵՆ ՎԱՂԱՐՇԻ (25.03.1931, Երևան), ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1978), պրոֆ. (1985), ՌԳԱ թղթ. անդամ (2000), ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2008): Որդին է Վ. Դ. Ազատյանի:

Դպրոցն ավարտել է Երևանում և 1949 թ. ընդունվել ՄՊՀ քիմիայի ֆակուլտետը, որն ավարտել է 1954 թ. և աշխատանքի անցել ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտում: 1982 թ.-ից ղեկավարել է ԽՍՀՄ ԳԱ կառուցվածքային միկ-

րոկինետիկայի ինստիտուտի (Մոսկվա) տարասեռ և շղթայական ռեակցիաների լաբորատորիան:

Աշխատանքները վերաբերում են գազերի այրման, պայթյունի և ճայթյունի գործընթացների ֆիզիկաքիմիական ուսումնասիրություններին: Հայտնաբերել է այրման ռեակցիաներում շղթաների տարասեռ շարունակման և ճյուղավորման երևույթը, գազաֆազ շղթայական և ռադիկալային ռեակցիաների կինետիկայի ու մակերևույթի վիճակի փոխադարձ կապը և առաջարկել այդ ռեակցիաների տեսությունը: Էական ներդրում ունի ջրածնի ստացման, տեղափոխման և օգտագործման հարցերի լուծման գործում:

Պատրաստել է գիտությունների բազմաթիվ թեկնածուներ և դոկտորներ: Անդամ է Հիմնարար և կիրառական քիմիայի միջազգային միության, Այրման միջազգային ինստիտուտի, ՌԴ ԳԱ նախագահության այրման և պայթյունի գիտական խորհրդի բյուրոյի:

Հեղինակ կամ համահեղինակ է մի քանի հարյուր աշխատության, այդ թվում՝ «Inhibition of Chain Reactions» (L, 2000 թ.) գրքի:



ԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍԻ (20.10.1954,

Չիստյունսկ, Ալթայի երկրամաս), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2015), պրոֆ. (2015):

Աքսորավայրից ՀԽՍՀ վերադառնալուց հետո սովորել և ավարտել է Վիլյամ Սարոյանի անվան 138 դպրոցը:

1973-1978 թթ. սովորել է ԵՊԻ քիմիկատեխնոլոգիական ֆակուլտետում: 1978-1981 թթ. աշխատել է «Պլաստպոլիմեր» ԳԱՄ-ում որպես ճարտարագետ: 1981 թ.-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ ՕՔԻ «Հետերոցիկլիկ մոնոմերների և պոլիմերների սինթեզ»-ի լաբորատորիայում: 1989 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Ազոլների N-վինիլ ածանցյալների սինթեզը, հատկությունները և պոլիմերումը» թեմայով: 1991-1994 թթ. ղեկավարել է ՕՔԻ-ի թ.5 լաբորատորիան: 1996 թ.-ից զբաղվում է ազոտ պարունակող հնգանդամանի տարացիկլային միացությունների սինթեզով և պոլիմերմամբ: Դոկտորական ատենախոսության թեման է «Հետազոտություններ ազոլների ֆունկցիոնալացման տեխնոլոգիապես մոդելավորվող ռեակցիաների բնագավառում և ստացված միացությունների հատկությունների ուսումնասիրում»:

Գիտական հետազոտություններ է իրականացրել տեղակալված և չտեղակալված պիրազոլների, իմիդազոլների և տրիազոլների բնագավառում: Մշակել է վերջիններիս բազմաթիվ նոր ածանցյալների սինթեզի մատչելի եղանակներ, ուսումնասիրել դրանց հատկությունները, ինչպես նաև գործնական կիրառության ոլորտները: Նրա աշխատանքներում առանձնանում են ազոլների N- և C-վինիլածանցյալների սինթեզի ու դրանց հիման վրա ստացված պոլիմերների հատկությունների ուսումնասիրմանն ու կիրառմանը նվիրված աշխատանքները:

Սինթեզել է ավելի քան 400 նոր տարացիկլիկ միացություններ, որոնցից շատերն օժտված են կենսաբանական ակտիվությամբ: Մասնավորապես՝ սինթեզվել են 1-վինիլտրիազոլի և *ω*-դիվինիլբենզոլի ցանցկեն համապոլիմերները և ուսումնասիրվել որպես էնտերոկլանիչներ: Նրա կողմից սինթեզված 1-վինիլ-4-պիրազոլկարբոնաթթուներով վերափոխված խիտոզանն օժտված է բարձր հակաայրվածքային հատկություններով:

Հեղինակ է 140 գիտական աշխատության (108 հոդված, 16 արտոնագիր, գիտաժողովների 17 թեզիս):

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ ԼԵՎՈՆԻ (10.11.1904, Պարտիզակ (այժմ՝ Բախչեջիկ՝ Թուրքիայում) – 02.09.1992, Փարիզ), երկրաֆիզիկայի, օպտիկայի, ֆիզքիմիայի բնագավառի գիտնական: Գիտ. դոկ. (1937, Սորբոն):

Բարձրագույն կրթությունը ստացել է Ֆրանսիայում (1926-1931): 1955-1967 թթ. գլխավորել է Ֆրանսիայի ածխարդյունաբերության ԳՀ կենտրոնի սպեկտրոսկոպիայի, ապա՝ ռենտգենյան և հանքաբանության լաբորատորիաները: 1957-1980 թթ. եղել է այդ կենտրոնի գլխավոր ճարտարագետ, գիտական խորհրդական, Ֆրանսիայի արդյունաբերության գիտական զարգացման նախարարության գլխավոր ճարտարագետ: Աշխատանքները վերաբերում են տարածաշրջանային և կիրառական երկրաֆիզիկային, ֆիզքիմիայի հարցերին: Արժանացել է Ֆրանսիայի «Պատերազմական խաչ» շքանշանի, իսկ գիտական ծառայությունների համար՝ «Համազգային գնահատանքի ասպետ» տիտղոսի:



ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ ԳԱՌՆԻԿԻ (08.10.1938)

քիմիկոս: Ֆիզիկամաթեմ. գիտ. դոկ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2008):

ՌԳԱ Ն. Ն. Սեմյոնովի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ավագ գիտաշխատող:



ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՍԵՐԳԵՅԻ (14.03.1946, գ.

Լուսաղբյուր, Շիրակի մարզ), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դոկ. (1996), պրոֆ. (2009):

Ավարտել է Աղքնի դպրոցը (1963), այնուհետև ԵԱԱԻ-ին (1968) և աշխատել Հ. Խ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտում ավագ լաբորանտ (1968 թ.-ից), կրտսեր գիտաշխատող (1970 թ.-ից), իսկ 1978-1982 թթ.՝ ավագ գիտաշխատող, խմբի ղեկավար, լաբորատորիայի վարիչ: 1971 թ. եղել է ԽՍՀՄ ԳԱ բնական միացությունների քիմիայի ինստիտուտի ստաժոր-հետազոտող: 1975 թ. պաշտպանել է թեկնածուականատենախոսություն: 1980 թ. Գյումրիում կազմապերպել է նոր նեյրոհորմոնների կենսատեխնոլոգիական լաբորատորիա, 1980 թ.-ից աշխատել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում ավագ դասախոս, 1983 թ.-ից՝ դոցենտ, 1990 թ.-ից՝ կենսաբանության ամբիոնի վարիչ, 1993-1995 թթ.՝ միաժամանակ բնագիտաշխարհագրական ֆակուլտետի ղեկան, 1995 թ.՝ և 2011-2016 թթ.՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, 2002 և 2009 թթ.՝ կենդաբանության ամբիոնի պրոֆեսոր, 2017 թ.-ից՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի լաբորատորիայի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են նյութափոխանակության կարևոր օղակների վրա գլխուղեղի ենթատեսաթմբից անջատված պսակաձև անոթների տոնուսը կանոնավորող «C» և «K» նյարդահորմոնների ազդեցության ուսումնասիրությանը: Ակտիվորեն համագործակցում և այժմեական գիտական հետաքրքիր աշխատանքներ է իրականացնում Հ. Խ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի մասնագետների հետ:

Ղեկավարել է ֆինանսավորվող գիտական թեմաներ, Գյումրիում կազմակերպել է գիտաժողովներ:

Հեղինակ է 170 գիտական հոդվածի և հետևյալ գրքերի. «Տնական նյութերի բառարան» (Եր., 2013), «Մեծ պարբերությունների քիմիական տարրերի տեղեկագիրք» (Եր., 2009), «Փոքր պարբերությունների տարրերի տեղեկագիրք» (Եր., 2009): Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են թեկնածուական 3 ատենախոսություն:

Անդամ է մասնագիտական, գիտական և խմբագրական խորհուրդների, ՀՀ կենսաքիմիկոսների (1970 թ.-ից) և Նյարդաքիմիայի միջազգային (2000 թ.-ից) ընկերությունների:

Պարգևատրվել է՝ ՀՀ Ազգային ժողովի մեդալով, ՀՀ նախագահի շնորհակալագրով, ՀՀ ԿԳՆ վաստակագրով և ՀՀ ԳԱԱ պատվոգրով:

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԻԼԵՆ ՏԱՃԱՏԻ (15.05.1927, Թիֆլիս – 09.03.1983, Մոսկվա), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1970), պրոֆ. (1972):

Ավարտել է Լենինգրադի համալսարանը (1948): 1965-1983 թթ. եղել է Մոսկվայի տարրօրգանական միացությունների ինստիտուտի մոլեկուլային սպեկտրադիտման լաբորատորիայի վարիչ: Աշխատանքները վերաբերում են տատանող-պտտողական փոխազդեցության և բազմատոմ մոլեկուլների ենթակարմիր սպեկտրների կլանման շերտերի ինտենսիվության հարցերին:



ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՔՆԱՐԻԿ ԱՆԱՆԻԿԻ (09.12.1952, Երևան), կենսաքիմիկոս, ուռուցքաբան: Կենսք. գիտ. դոկ. (2000):

Ավարտել է ԵԲԻ-ն (1976): 1976-1984 թթ. եղել է ԵԲԻ ավագ գիտաշխատող, 1984 թ.-ից աշխատել է Ուռուցքաբանության գիտական կենտրոնում, 2000 թ.-ից՝ կլինիկական կենսաքիմիական լաբորատորիայի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են ուռուցքաձևությանը և ուռուցքների աճի մեխանիզմներին, ուռուցքային տեղորոշակետերի (մարկերներ), լիպիդային գերօքսիդման, անոթաառաջացման (անգիոգենեզ), քաղցկեղի բուժման և կանխարգելման խնդիրներին:

ՀՀ կենսաքիմիկոսների (1976 թ.-ից) և Ուռուցքաբանների ընկերությունների նախագահության (1984 թ.-ից) անդամ:



ԱԼԻԽԱՆՈՎ ՎԱԿԻՄԻՐ ԱՆՏԻՊԻ (17.02.1938),
 ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դոկ., պրոֆ.:

Ավարտել է Հյուսիսային Օսեթիայի պետական համալսարանը: Եղել է Հյուսիս-Կովկասյան պետական տեխնոլոգիական համալսարանի ընդհանուր, ֆիզիկական և վերլուծական քիմիայի ամբիոնի վարիչ: Աշխատանքները վերաբերում են բազմաբաղադրամաս համակարգերում (այդ թվում՝ մետաղական կոմպոզիտային նյութերում) ֆիզիկաքիմիական փոխազդեցությունների ուսումնասիրությանը. կառուցել է մեծ թվով կրկնակի և եռակի համակարգերի վիճակի տրամագիրներ (դիագրամներ): ՌԴ բնական ԳԱ թղթ. անդամ:



ԱԼՉՈՒՋՅԱՆ ԱՋԱՏ ՀԱԿՈՒԻ (18.02.(3.3)1906,
 Ախլցխա – 27.07.1974, Երևան), քիմիկոս-ճարտարագետ: Քիմ. գիտ. դոկ. (1953 թ.), պրոֆ. (1953 թ.), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1965 թ.):

Միջնակարգ կրթությունը ստացել է Բաքվում, 1928 թ. ընդունվել է Նովոչերկասկի պոլիտեխնիկ ինստիտուտի քիմիայի ֆակուլտետը, իսկ 1930 թ. տեղափոխվել է Լենինգրադի քիմիական տեխնոլոգիական ինստիտուտը, որը 1932 թ. ավարտելով՝ ստացել է ճարտարագետ-քիմիկոսի մասնագիտություն: Ավարտելուց հետո ընդունվել է Լենինգրադի բարձր ճնշման ԳՀ քիմիական ինստիտուտի ասպիրանտուրան, 1938 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ հիդրոկատալիզի թեմայով և շարունակել աշխատել ինստիտուտում (1935-1938 թթ.): 1938 թ. տեղափոխվել է Երևան և 1939 թ. նշանակվել ԵՊԻ անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ, որտեղ աշխատել է մինչև 1970 թ., ապա հիվանդության պատճառով զբաղեցրել պրոֆեսոր խորհրդատուի պաշտոնը: 1944-1947 և 1951-1958 թթ. աշխատել է որպես Քիմիատեխնոլոգիական ֆակուլտետի դեկան, 1939 թ. ստացել է դոցենտի կոչում: 1948 թ. գործուղվել է Մոսկվա՝ ԳԱ նավթի ինստիտուտի դոկտորան-

տուրա, 1952 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ նվիրված հիդրոգեն կատալիզին:

Ա. Ալչուջյանը հեղինակ է տասնյակ գիտական աշխատությունների, որոնք հիմնականում նվիրված են հիդրոգեն կատալիզին: Երկար տարիներ զբաղվել է Սվարանցի երկաթ-օլիվինիտային հանքի, Շորժայի մագնեզիումական սիլիկատային ապարների և Ջողի ոսկու հանքերի համալիր վերամշակման խնդիրներով: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են մի քանի ատենախոսություններ: Հրատարակել է «Բարձրամոլեկուլային սինթետիկ միացություններ» ձեռնարկը (Եր., 1966 թ.): Հեղինակ է քիմիայի գործնական աշխատանքների ձեռնարկի: Պարգևատրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով, մեդալներով:



ԱՎՈՒՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ

(30.12.1868, Շամախի – 16.07.1947, Բլագովեշչենսկ), քիմիկոս, պրոֆ. (1935):

Ավարտել է Բաքվի ռեալական դպրոցը (1888 թ.), Մոսկվայի կայսերական տեխնիկական ուսումնարանը (1895 թ.)՝ ստանալով ճարտարագետ-քիմիկոս-տեխնոլոգի կոչում:

1895-1897 թթ. աշխատել է Բաքվում: Կատարելագործվելու նպատակով 1897 թ. մեկնել է Գերմանիա (Դրեզդեն, Յյուրիխ, Գյոտինգեն): 1907 թ. վերադարձել է Թիֆլիս և հիմնադրել ու խմբագրել «Ковкавская школа» մանկավարժական հանդեսը (1913-1916 թթ.):

1907-1918 թթ. աշխատել է Թիֆլիսի Միխայելովսկու քաղաքային արհեստավորական ուսումնարանում որպես տնօրեն: 1919 թ. տեղափոխվել է Հայաստան և խորհրդայնացումից հետո նշանակվել բանակի մատակարարման գծով առաջին արտակարգ լիազոր: 1921 թ. եղել է Խորհրդային Հայաստանի ԺՏԽ-ի ժամանակավոր նախագահ: 1922 թ. անցել է մանկավարժական աշխատանքի Երևանի թիվ 2 միջնակարգ դպրոցում, ապա Ինդուստրիալ տեխնիկումում և Բանֆակում: 1925 թ. թիվ 2 միջնակարգ դպրոցում ստեղծել է Խորհրդային Հայաստանում առաջին քիմիական լաբորատորիան: 1924 թ. հրավիրվել է դասախոսելու ԵՊՀ-ում, այնուհետև Բժշկական և Գյուղատնտեսական ինստիտուտների՝ անօրգանական ու վերլուծա-

կան քիմիայի ամբիոններում: Հետագայում գլխավորել է ՀԳԻ և ԵԲԻ անօրգանական և վերլուծական քիմիայի ամբիոնները:

Հեղինակ է «Ձեռնարկ քանակական անալիզ» (Եր., 1928), «Որակական անալիզ» (Եր., 1932) գրքերի և համահեղինակ՝ «Անօրգանական քիմիա» (Եր., 1931-1935, 6 պրակով) ձեռնարկի:

1937 թ. հուլիսի 27-ին ձերբակալվել է հակախորհրդային քարոզչություն ծավալելու մեղադրանքով և 5 տարով արքայազն Ղազախստան, որտեղ 1942-1944 թթ. աշխատել է Սեմիպալատինսկի մարզի Կազան-Չունկուր գյուղի միջնակարգ դպրոցում որպես ուսուցիչ, իսկ 1944-1947 թթ.՝ գլխավորել է Բլագովեշչենսկ քաղաքի Կալինինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի քիմիայի ամբիոնը:



ԱՂԱԲԱԼՅԱՆՑ ԳԵՈՐԳԻ ԳԵՐԱՍԻՄԻ

(05(18).10.1904, Ղզլար (Դաղստան) -20.03.1967, Մոսկվա), գինու քիմիայի և տեխնոլոգիայի բնագավառի գիտնական: Գղտ. գիտ. դոկ. (1937), պրոֆ. (1938): ՌԽՖՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ (1964):

Ավարտել է Նովոչերկասկի (Ռոստովի մարզ) գյուղատնտեսական ինստիտուտը (1930): 1961 թ.-ից աշխատել է Սննդի արդյունաբերության համամիութենական հեռակա ինստիտուտի գինեգործության ամբիոնի վարիչ: Առաջարկել է գինիների գիտական դասակարգման եղանակ, ուսումնասիրել մադերացման, խերեսացման, գինուց կոնյակի սպիրտի թորման մեխանիզմները: Մշակել ու ներդրել է անընդհատ հոսքով տեխնոլոգիական գործընթացների ավտոմատացման, մադերա և խերես գինիների արտադրության եղանակներ, գինու որակի և քիմիական բաղադրության որոշման նոր եղանակներ: Առաջարկել է գինու քիմիական կազմի և որակի հսկման եղանակներ, գինեգործության մնացուկների համալիր օգտահանման սխեմա:

1961 թ. արժանացել է Լենինյան մրցանակի:

Հեղինակ է՝ «Химикотехнологический контроль производства советского шампанского» (Մ., 1954); Химия вина (Մ.), (համահեղինակ); «Химикотехнологический контроль виноделия» (Մ., 1969) (համահեղինակ); «Избранные работы по химии и технологии вина, шампанского и коньяка» (Մ., 1972):



ԱՐԱՐԵԿՈՎ ՎԱՆԴԻՄԻՐ ԵՆՈՔԻ (19.01.1940, Գրոզնի), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1981), Բելառուսի ԳԱԱ ակադեմիկոս (2003, թղթ. անդամ 1996), Բելառուսի գիտության վաստակավոր գործիչ (2008), ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2008):

Դպրոցն ավարտելով ընդունվել է Գրոզնու նավթի ինստիտուտի քիմիատեխնոլոգիական ֆակուլտետը, որը ավարտել է 1963 թ. և աշխատել Բելառուսի ԳԱԱ ֆիզիկաօրգանական քիմիայի ինստիտուտում՝ կրտսեր, ապա ավագ գիտաշխատող: 1965-1968 թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրայում, 1969 թ. պաշտպանել է թեկնածուականատենախոսություն: 1985 թ. ընտրվել է Բելառուսիայի ԳԱԱ ֆիզիկաօրգանական քիմիայի ինստիտուտի նուրբ թաղանթների քիմիայի լաբորատորիայի վարիչ, իսկ 1988 թ.՝ կինետիկայի և ռեակցիադինամիկայի բաժնի վարիչ, 1999 թ.-ից Բելառուսի ԳԱԱ նոր նյութերի քիմիայի ինստիտուտի տնօրեն:

Աշխատանքները վերաբերում են հեղուկ բյուրեղային նյութերում կառուցվածքային փոխարկումներին, հեղուկ բյուրեղական սարքերի արտադրության գիտատարողունակ նյութերի, բաղադրիչների և հեռանկարային տեխնոլոգիաների ստացմանը, տարբեր նշանակության սուսինձների, մակերևութային ակտիվ նյութերի, լուսազգայուն նյութերի և օպտիկական ակտիվ հավելույթների ստեղծմանը: Նրա ղեկավարությամբ ստեղծվել է երկչափկարգավորված համակարգերում քիմիական ռեակցիաների կարգավորման սկզբունքների մշակման նոր գիտական ուղղություն: Հաստատվել է փոխադարձ կապ օրգանական նյութերի քիմիական կառուցվածքի և համապատասխան նուրբ թաղանթային նյութերի ձևավորման մեխանիզմի միջև: Առաջին անգամ Բելառուսում ստացվել են բևեռացումային լուսազտիչ (պոլյարոիդ) թաղանթներ հեղուկ բյուրեղային սարքերի համար: Արդյունավետ գիտական աշխատանքներ է կատարում արտերկրների, ինչպես նաև ՀՀ գիտնականների հետ:

Անդամ է մի շարք մասնագիտական, գիտական, խմբագրական խորհուրդների: Հեղինակ է 600 գիտական աշխատության, 4 մենագրության և 100 գյուտի: Պատրաստել է գիտությունների 16 թեկնածու: Արժանացել է Ֆրանցիսկ Սկորինի մեդալի (2000):



ԱՐԱՋԱՆՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ ԽԱՉԱՏՈՒՐԻ

(08.02.1937, Դաշուշեն, Ասկերանի շրջան, Արցախի Հանրապետություն – 11.06.2013, Երևան), կենսաքիմիկոս: Կենս. գիտ. դոկ. (1990), պրոֆ. (1990):

1954 թ. ավարտել է Շուշիքենդի (այժմ՝ Շոշ գյուղ, Արցախի Հանրապետություն) միջնակարգ դպրոցը, 1960 թ.՝ ԵԱԱԻ-ն, 1964 թ.՝ ասպիրանտուրան: 1966 թ.

պաշտպանել է թեկնածուականատենախոսություն: 1967-1969 թթ. եղել է ԵՊՀ կենսաքիմիայի ամբիոնի կրտսեր գիտաշխատող, 1969-1990 թթ.՝ ավագ գիտաշխատող, 1988-1990 թթ.՝ գիտահետազոտական լաբորատորիայի վարիչ, 1990-2000 թթ.՝ կենսաքիմիայի ամբիոնի պրոֆեսոր, 2001-2006 թթ.՝ նույն ամբիոնի վարիչ, 2006-2013 թթ.՝ ամբիոնի պրոֆեսոր:

Հետազոտել է արգինազի և պրուլինի կենսասինթեզի ֆերմենտների փոխադարձ կապը, ցույց տվել, որ էվոլյուցիոն և անհատական զարգացման ընթացքում արգինինից պրուլինի կենսասինթեզը կատալիզող ֆերմենտների և ոչ ուռեոթելիկ արգինազի ակտիվության միջև գոյություն ունի լրիվ համապատասխանություն: Զբաղվել է նաև բույսերի կենսաքիմիայով, ստացել արտոնագրեր՝ հակաշաքարային պատրաստուկ «Արմադ» (2006 թ.) և շագանագեղձի բորբոքման պատրաստուկ «Պրոստոադենոլ» (2007 թ.):

Հեղինակ է 110 գիտական աշխատության, այդ թվում՝ «Կենսաքիմիայի պրակտիկում» (Եր., 2002), «Կենսաքիմիայի լաբորատոր աշխատանքների ուսումնական ձեռնարկ» (Եր., 2003) գրքերի:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 14 ատենախոսություն:



ԱՐԱՋԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ ԵՂԻՇԵԻ (15.12.1946, գ.

Խանաձախ, Սյունիքի մարզ): Քիմիկոս-կենսատեխնոլոգ: Քիմ. գիտ. դոկ. (2008), պրոֆ. (2018):

1963 թ. ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը ու նույն տարում ընդունվել ԵՊՄԻ քիմիա-կենսաբանական ֆակուլտետը: 1968 թ. ավարտել և աշխատանքի է անցել Երևանի Քիմիական ռեակտիվների գործարանում սկզբում որպես ավագ լաբորանտ, իսկ հետո ճարտա-

րագետ-քիմիկոս: 1969-1970 թթ. ծառայել է Խորհրդային բանակում: 1970 թ.-ից աշխատել է ՀՀԳԱԱ ԸԱՔԻ-ում՝ ավագ ճարտարագետ, խմբի ղեկավար: 1979-1983 թթ. սովորել է այդ ինստիտուտի ասպիրանտուրայում: 1984 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Тиосульфатные комплексы элементов подгруппы меди и их сорбция на анионитах»:

1984 թ.-ից աշխատել է Երևանի ամինաթթուների ԳՀ տեխնոլոգիական ինստիտուտում՝ ավագ գիտաշխատող, առաջատար գիտաշխատող: 1992-2018 թթ. աշխատել է նույն ինստիտուտի ԿԱՄ-ի անջատման և մաքրման լաբորատորիայի վարիչ, 2019 թ.-ից՝ առաջատար գիտաշխատող:

Հետազոտական աշխատանքները ամփոփված են դոկտորական թեզում՝ «Разработка технологии выделения и очистки аминокислот и некоторых других БАВ из ферментационных растворов»:

2013 թ.-ից համատեղության կարգով որպես դասախոս աշխատել է ՀԱՊԻ բնապահպանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնում:

Հեղինակ է 47 գիտական հոդվածների, 31 գյուտերի և պատենտների, ինչպես նաև մանրէաբանական եղանակով սպիտակուցային ամինաթթուների ու սննդային օքսիթթուների ստացման 13 փորձա-արտադրական կանոնակարգերի:

Նրա հեղինակությամբ և համահեղինակությամբ հրատարակվել են հետևյալ ուսումնական ձեռնարկները՝ Ա. Ե. Աղաջանյան, Ս. Հ. Սարգսյան «Կենսասինթեզի տեխնոլոգիա» (2015): Ա. Ե. Աղաջանյան, Ն. Լ. Ասատրյան, Ս. Հ. Սարգսյան «Ֆերմենտային և կենսակատալիզային գործընթացները պարենամթերքի արտադրության տեխնոլոգիաներում» (2016): Ա. Ե. Աղաջանյան «Կենսատեխնոլոգիական գործընթացների տեսական հիմունքների լաբորատոր աշխատանքների մեթոդական ցուցումներ» (2019):



ԱՂԱՋԱՆՈՎ ՄԻՔԱՅԵԼ ԻՈՍԻՖԻ (03.07.1939, Թբիլիսի), բժիշկ-կենսաքիմիկոս: Կենս. գիտ. դոկ. (1979), պրոֆ. (1984), ՀՀ գիտության վաստակավոր գործիչ (2010):

Ավարտել է ԵԲԻ-ն (1963): 1967 թ.-ից աշխատել է ԵԲԻ կենսաքիմիայի ամբիոնում, 1986 թ.-ից՝ վարիչ, 1989-1991 թթ., միաժամանակ՝ գիտության գծով պրոռեկտոր: Աշխատանքները վերաբերում են տարբեր

ախտաբանական վիճակների ժամանակ օքսիդատիվ գերհույզի (սթրեսի) և դրա հակաօքսիդանտային կարգավորման հարցերին: Ուսումնասիրել է Ալց-հեյմերի հիվանդությունը և մշակել դրա բուժման և կանխարգելման ուղիներ: Հեղինակ է «Կենսաքիմիա» (2001) և «Բերանի խոռոչի կենսաքիմիա» (2015) դասագրքերի, համահեղինակ է «Կենսաանօրգանական քիմիայի գործնական պարապումքների ձեռնարկ»-ի (1986): Եղել է «Կենսաքիմիա» միջազգային հանդեսի գլխավոր խմբագիր (Մոսկվա, 2014):

Արժանացել է ԽՍՀՄ ԺՏՆՑ ոսկե մեդալի (1988), ԵՊԲՀ ոսկե մեդալի (2000), ԵՊԲՀ ոսկե կրծքանշանի (2010), ԵՊԲՀ ոսկե շքանշանի (2014), ՀՀ ԿԳՆ ԳՊԿ ոսկե մեդալի (2014), ՀՀ ՊՆ ծովակալ Հ.Ս. Իսակով մեդալի (2019):



ԱՂԱՆՈՎ ԱԼԲԵՐՏ ՎԱՐԴԱՆԻ (21.04.1941, ք. Ունդուրխան (Մոնղոլիա)), ֆիզիկոս, ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1986), պրոֆ. (1986): Թաթարստանի գիտ. վաստ. գործիչ (1996):

Ավարտել է Կազանի համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը (1963): 1966 թ.-ից աշխատել է նույն համալսարանում, ֆիզիկայի ամբիոնի վարիչ, 1991 թ.-ից՝ դեկան, միաժամանակ՝ միջուկային մագնիսական ռեզոնանսի (ՄՄՌ) լաբորատորիայի գիտական ղեկավար:

Աշխատանքները վերաբերում են մոլեկուլային սպեկտրաչափության և դինամիկայի, տարբեր ֆազային վիճակներում գտնվող օրգանական մոլեկուլների և դրանց կոմպլեքսների դինամիկական ՄՄՌ սպեկտրաչափությանը, էներգիայի քվանտաքիմիական հաշվարկներին, քիմիական կապերի մագնիսական հատկություններին:

ՌԴ բնական ԳԱ անդամ է (2000): ՌԴ նախագահի պետական թռչակակիր է (2000) և ԱՊՀ երկրների ՄՄՌ սպեկտրասկոպիստների ընկերության փոխնախագահ, «Новости ЯМР в письмах» տեղեկագրի գլխ. խմբագիր:

Համահեղինակ է «Новые аспекты применения ЯМР в исследовании процессов обмена» («Успехи химии», 1985, т. 54); «Физика вокруг нас. Качественные задачи по физике» (3 изд., М., 1999); «Conformational Analysis

of MNCB (MBNC) Esters and Amides: Promisig Chiral Reagents for Stereoselective Applications Teteaedron» (55, 1999 թ.) աշխատությունների:



ԱՂԱՋԱՆՅԱՆ ՅՈՒԱԿ ԵՓՐԵՄԻ (12.10.1933, Բաթում – 01.04.2001, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1990):

Ավարտել է ԵՊՀ-ն (1955): 1962-1964 թթ. և 1966-1967 թթ. աշխատել է Մոսկվայի Բնական միացությունների քիմիայի ինստիտուտում, 1965-1966 թթ., միաժամանակ՝ «Վնիսինթեզբելոկ» ինստիտուտում, 1967 թ.-ից՝ ՀՀ ԳԱԱ ՆՕՔԻ-ում, 1979 թ.-ից՝ տարաբազմանիստ

միացությունների լաբորատորիայի վարիչ: Աշխատանքները վերաբերում են ամինաթթուների, պեպտիդների, ազաադամանտանների և տարաբազմանիստ այլ միացությունների ածանցյալների սինթեզին: Հայտնաբերել է տարաբազմանիստ միացությունների ստացման նոր ուղիներ: Մշակել է մատչելի հումքից տարաբազմանիստերի և դրանց օղակների ճեղքման արգասիքների ստացման եղանակներ:



ԱՂԱՍՅԱՆ ՊԵՐՃ ԿԱՐԱՊԵՏԻ (25.12.1908, Չորլու (Բալկաններ, Թուրքիա) – 14.02.1997, Մոսկվա), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1969), պրոֆ. (1970):

Միջնակարգ կրթությունը ստացել է Սմիրնա քաղաքում (Թուրքիա) հայկական դպրոցում: 1922 թ. ընտանիքը տեղափոխվել է Աթենք, որտեղ մինչև 1925 թ. հաճախել է գերմանական դպրոց և ֆրանսերենի բարձրագույն դասընթացների:

Տնտեսական ծանր վիճակի պատճառով հայկական բարեգործական մի ընկերության միջամտությամբ եկել է Հայաստան և սովորել Հայաստանի համալսարանում, որն ավարտել է 1929 թ.: 1930 թ.-ից եղել է ВАСХНИЛ-ի խաղողագործության և գինեգործության գոտիական (զոնա) կայանի պետի տեղակալ, որտեղ մշակել է կենսաբանական օբյեկտների անալիզի եղանակներ: 1935 թ. ընդունվել է ՄՊՀ երկրաբանա-հողագիտության ֆակուլտետի ասպիրանտուրան (հողի քիմիա մասնագիտությամբ): 1940 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատել նշված ֆակուլտետում:

Նույն թվականին ընդունվել է որպես ասիստենտ ՄՊՀ քիմիայի ֆակուլտետի անալիտիկ քիմիայի ամբիոնում: Մեծ հայրենական պատերազմի սկզբում եղել է աշխարհագրայինների շարքում, սակայն պետական առաջադրանք կատարելու համար վերադարձվել է: Համալսարանի հետ տեղահանվել է Աշխաբադ, այնուհետև Սվերդլովսկ, իսկ 1943 թ. վերադարձել են Մոսկվա: 1945 թ. ընտրվել է Անալիտիկ քիմիայի ամբիոնի դոցենտ, իսկ 1953 թ.՝ ամբիոնի ավագ գիտաշխատող: 1970 թ. առաջինը ԽՍՀՄ-ում կազմակերպել և գլխավորել է էլեկտրաքիմիական եղանակներով անալիզի մասնագիտական լաբորատորիա: 1991 թ. անցել է կենսաթոշակային հանգստի: Մասնագետ կադրեր է պատրաստել նաև մեր հանրապետության համար:

Աշխատանքները վերաբերում են էլեկտրաքիմիական եղանակների մշակմանը և զարգացմանը (վոլտամպերաչափություն, պոտենցաչափություն, կուլոնաչափություն): ԽՍՀՄ-ում ժամանակակից կուլոնաչափական եղանակի հիմնադիրն է:

Համահեղինակ է «Кулонометрический метод анализа» (Մ., 1984); «Основы электрохимических методов анализа» (Մ., 1986) գրքերի:

ԱՂԲԱԼՅԱՆ ՍԵՂԱ ԳԱՐԵԳԻՆԻ (23.5.1929, Երևան), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դոկ. (1975):

Ավարտել է ԵՊՀ-ն (1951): 1961-1998 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ օրգանական քիմիայի ինստիտուտում, 1979-1998 թթ.՝ տարացիկլային միացությունների լաբորատորիայի վարիչ: Աշխատանքները վերաբերում են ամինների քիմիային և տարացիկլային շարքի կենսաբանական ակտիվ նյութերի սինթեզին: 1998 թ.-ից ապրել է ԱՄՆ-ում:



ԱՅՎԱԶՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄՆԱՑԱԿԱՆԻ

(07.11.1947, գ. Փոքր Խանչալի, Վրաստանի Բոգդանովկայի (այժմ՝ Նինոծմինդայի) շրջանում), քիմիկոս, խմբագիր, հրատարակիչ, հասարակական, մշակութային գործիչ: Քիմ. գիտ. դոկ. (1998):

1966 թ. ավարտել է Երևանի քիմիատեխնիկական տեխնիկումը, 1971 թ.՝ ԵՊԻ քիմիատեխնոլոգիական ֆակուլտետը: 1972-1974 թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Գորիսի ֆիզիկատեխ-

նիկական կենտրոնում, 1974-1979 թթ.՝ Փորձարարական կենսաբանության ինստիտուտում, 1979-1999 թթ.՝ Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրի տեղակալ, 1999 թ.-ից՝ «Հայկական հանրագիտարան. հրատարակչություն» գլխավոր խմբագիր-տնօրեն:

1979 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը, որը նվիրված է մակերևութային ակտիվ նյութերի ջրային լուծույթներում միցելների առաջացման և դրանց ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրմանը, իսկ դոկտորական ատենախոսությունը «Հայկական քիմիական անվանակարգության կայացման ու զարգացման պատմությունը»՝ ԻՅՈՒՊԱԿ-ի նոր պահանջներով դրա բարեփոխման հարցերին: Արդյունքներն ամփոփված են «Հայկական քիմիական անվանակարգության բարեփոխման հիմնախնդիրները» (1998) մենագրության մեջ (համահեղինակ):

Նրա գլխավորությամբ հրատարակվել են «Տնային տնտեսություն» (1997), «Հանրամատչելի բժշկական» (2001), «Հայկական համառոտ հանրագիտարան»-ի 3-րդ (1999) և 4-րդ (2003) հատորները, «Քրիստոնյա Հայաստան» (2002), «Հայ Սփյուռք» (2003), «Հայաստանի բնաշխարհ» (2006), «Ով ով է. հայեր» կենսագրական երկհատոր (2005-2007), «Դպրոցական մեծ» (քառահատոր, 2007-2010), «Հայաստան» (2012), «Հայ գրատպություն և գրքարվեստ» (2015), «Հայ երաժշտություն» (2019), «Հովհաննես Թումանյան» (2020) հանրագիտարանները, երկհատորյա «Հանրագիտական բառարան»-ը (հ. 1, 2016, հ. 2, 2018): Հեղինակ է «Հաղթանակած բանակի գեներալը» (վավերագրական արձակ, 2001), «Զորավար Անդրանիկ և Հովհաննես Թումանյան» (2004), «Հաղթանակի և վերհուշի ճամփաներով» (2006), «Հարսանիք» (գեղ., 2008), «Մի հայտնագործության պատմություն» (2009), «Հաղթելու արվեստը» (2011), «Դպրոցական հանրագիտարան» մատենաշարով՝ «Հին աշխարհի յոթ հրաշալիքներ և... Հայաստան» (2005), «Տիեզերք» (2008), «Էկոլոգիա» (2010), «Օրերի անձանձիր հոլովույթում» (2015), «Ձեռքս բաց մի թող» (չափածո գործերի ժողովածու, 2020) գրքերի:

Եղել է «Զավախք» հայրենակցական բարեգործական միության (1994-2006), դրա «Ասպնջակ» պաշտոնաթերթի խմբագրական խորհրդի (2001-2006) նախագահ:

Արժանացել է Ֆրիտյոֆ Նանսեն միջազգային հիմնադրամի ոսկե (2002), ՀՀ մշակույթի նախարարության (2012), ԵՊՀ (2017) ոսկե, ՀՀ

«Երախտագիտության» (2017) և «Գրիգոր Նարեկացի» (2017) մեդալների և ՀՀ ԳԱԱ վաստակագրի (2017):

ԱՅՎԱԶՅԱՆ ՈԱՖԻԿ ՀՐԱՆՏԻ (29.07.1956, գ. Փոքր Խանչալի (այժմ՝ Վրաստանի Նինոծմինդայի շրջանում)), ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1997):

Ավարտել է ԵՊՀ-ն (1978): 1980-1999 թթ. աշխատել է ԽՍՀՄ ԳԱ Մոսկվայի քիմիական ֆիզիկայի ինստիտուտում: 1999 թ.-ից ապրում է ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգի Նապա քաղաքում:

Աշխատանքները վերաբերում են տարասեռ շղթայական ռեակցիաների, սիլիցիումի և գերմանիումի հիդրիդների և դրանց քլորաձանցյալների օքսիդացման, կատալիտիկ ջերմային քայքայման և քլորացման ռեակցիաների ուսումնասիրությանը: Զբաղվում է գերբարձր հաճախականության աղբյուրներով հարստացված էկոլոգիական ոլորտի պլազմային գործընթացների տեխնոլոգիայի մշակումներով:



ԱՆՏՈՆՅԱՆ ԱԻԴԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ (12.11.1937, գ. Խնձորեսկ, Սյունիքի մարզ), կենսաքիմիկոս: Կենս. գիտ. դոկ. (1988):

Ավարտել է Գորիսի թիվ 2 դպրոցը (1954), ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը (1959), Լենինգրադի պետհամալսարանի ասպիրանտուրան (1964) և պաշտպանել թեկնածուական թեզ «Քլորելլայի կենսաքիմիական կազմը միջավայրի վրա բազմազան ազդեցությունների դեպքում» թեմայով (1966): 1967 թ.-ից մինչև 1994 թ. աշխատել է Մոսկվայի բժշկա-կենսաբանական պրոբլեմների ինստիտուտում (ՄԲԿԻ), 1971 թ.-ից՝ ավագ գիտաշխատողի պաշտոնով:

Աշխատանքները վերաբերում են տիեզերական կենսաբանության և ավիատիեզերական բժշկության բնագավառներին: Նրա երկարամյա գիտական հետազոտությունները լայն կիրառում են գտել օձանելիքի, դեղագործության, սննդի արդյունաբերության, անասնապահության կերային բազան վիտամիններով հարստացնելու ոլորտներում: Դրանց կիրառմամբ ակտիվորեն

գրադվել են նաև արտասահմանյան հանրահայտ «Lifestrern International inc», «Nutri Power» և ռուսական «Сплат» ֆիրմաները:

Հեղինակ է ավելի քան 100 գիտական աշխատության, եղել է 2-3 հատոր կազմող 11 գիտական աշխատության պատասխանատուն: Մասնակցել է միջազգային բազմաթիվ գիտաժողովների: Ռուսերեն լեզվով հրատարակել է «Ջանգեգորի չոր չղերը ծաղկալ են» հուշերի գիրքը (Մ., 2005, «Խոսք» ֆիրմա):

Բնագիտության և կենսաքիմիայի, տիեզերական պայմաններում ջրի-մուռների կիրարկման բնագավառներում ձեռք բերած գիտական հաջողությունների համար 1981 թ. նրան շնորհվել է ավագ գիտաշխատողի գիտական կոչում «Տիեզերական կենսաբանություն և ավիատիեզերական բժշկություն» մասնագիտությամբ:

Պարգևատրվել է մի շարք մեդալներով, այդ թվում Ս. Ի. Կորոլովի անվան:



ԱՊԱՎԻՅԱՆ ՎԱՐՏԿԵՍ ԱՐԱՅԻ (02.09.1955, ԱՄՆ), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2008):

Կալիֆոռնիայի համալսարանի քիմիական դեպարտամենտ, NSF-CBC on «Chemistry at the Sace – Time himit» տնօրեն:

Ամերիկյան քիմիական ընկերության անդամ:



ԱՊՐԻԿՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՎԱՐԴԵՎԱՆԻ (04.02.1930, Բերդավան, Տավուշի մարզ – 25.08.2014, Երևան), կենսաքիմիկոս: Կենս. գիտ. դոկ. (1973), պրոֆ. (1978): ՀՀ-ում փորձարարական ծերաբանության հիմնադիրը:

1948 թ. ավարտել է դպրոցը և ընդունվել ԵԲԻ բուժական ֆակուլտետը, որն ավարտել է 1954 թ. և 4 տարի աշխատել Ամասիայի շրջանի Գյուլիբուլախ (այժմ Հայա-

կերտ) գյուղի տեղամասային հիվանդանոցի գլխավոր բժիշկ: 1958 թ. ընդունվել է ՀՀ ԳԱԱ կենսաքիմիայի բաժնի ասպիրանտուրան և 1962 թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն:

1969 թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱԱ կենսաքիմիայի ինստիտուտում, 1974 թ.-ից՝ հասակային նյարդաքիմիական լաբորատորիայի վարիչ, 1979-1991 թթ.՝ փոխտնօրեն:

Աշխատանքները վերաբերում են ծերացման ընթացքում ամինաթթուների փոխանակության, ամոնիակի առաջացման ու չեզոքացման, գլխուղեղում ընթացող նյութափոխանակության գործընթացների, նյարդային հաղորդականության առանձնահատկությունների և կյանքի տևողության երկարացման հարցերին: Առաջին անգամ ցույց է տվել, որ լոշտակ բույսի արմատների պատրաստուկները օժտված են կյանքը երկարացնելու հատկությամբ և բացահայտել է այդ ազդեցության կենսաքիմիական մեխանիզմները:

Ծերաբանության և կենսաքիմիայի ուղղությամբ մասնակցել է բազմաթիվ միջազգային գիտաժողովների:

Հեղինակ է շուրջ 160 գիտական հոդվածների և «Ծերաբանություն: Առողջության ամրապնդման և երկարակեցության գաղտնիքները» մենագրության (2005): Նրա խորհրդատվությամբ և ղեկավարությամբ պաշտպանվել են դոկտորական և թեկնածուական 16 ատենախոսություն:

Եղել է գիտական, մասնագիտական և խմբագրական մի շարք խորհուրդների անդամ, ծերաբանների միջազգային ընկերության, կենսաքիմիկոսների Եվրոպական միության, բնական բժշկության միջազգային ընկերության (Տոկիո) և ՌԴ բնական ԳԱ հայկական մասնաճյուղի անդամ:



ԱՊՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՍԵՐԳԵՅԻ (23.04.1957, ք.

Օրենքուրգ, ՌԴ – 05.02.2016, Երևան), կենսաքիմիկոս: Կենս. գիտ. դոկ. (1996):

1974 թ. ավարատել է Երևանի թիվ 85 դպրոցը, 1980 թ.՝ ԵԱԱԻ-ն և ծառայել Խորհրդային բանակում: 1984 թ. ընդունվել է ՀՀ ԳԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի ասպիրանտուրան և գործուղվել Մոսկվա: 1988 թ. ԽՍՀՄ ԱՆ իմունաբանության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Դոկտորական ատենա-

խոսությունը պաշտպանելուց հետո վերադարձել է Երևան և աշխատել Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտում և ղեկավարել նեյրոիմունոլոգիայի լաբորատորիան: Ուսումնասիրել է ուղեղի հիպոթալմուսի նոր պեպտիդների կարգավորիչ ազդեցությունը իմունային համակարգում, հեմատոպոեզից մինչև իմունային պատասխան ուղին՝ հիպոթալմուս-ոսկրածուծ-ուրցագեղձ համակարգը:



ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱԼՎԱՐԴ ՍԱՀԱԿԻ (24.05.1947, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1996):

Ավարտել է ԵՊՀ-ն (1970): 1970 թ.-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ ՕՔԻ-ում, 1996 թ.-ից՝ առաջատար գիտաշխատող: Աշխատանքները վերաբերում են բիս լ հալոգեն եթերների ցիկլոալկիլման ռեակցիաների, ինչպես նաև տեղակալման և պոկման ռեակցիաների մի շարք առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Ձևակերպել է պոկման ռեակցիայի ուղղությունը կանխատեսող ընդհանրացված կանոն, որը հնարավորություն է տալիս պարզաբանել տեսության և սինթեզի որոշ խնդիրներ:



ԱՌՍԱՄՅԱՆ ԺԵՆՅԱ ՄԵԼԻՔԻ (14.09.1935, գ. Կաղարծի (այժմ՝ ԼՂՀ Մարտունու շրջանում)), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1999), պրոֆ. (2001):

1953 թ. ավարտել է Ստեփանակերտի թիվ 1 դպրոցը, 1958 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: Մեկ տարի աշխատել է նավթի անդրկովկասյան որոնողական արշավախմբերում որպես ճարտարագետ-քիմիկոս, 1959 թ. ընդունվել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ասպիրանտուրան, 1961 թ.-ից աշխատել է ԵՊՀ անալիտիկ քիմիայի ամբիոնում որպես ասիստենտ, 1974 թ.-ից՝ դոցենտ, 2001-2011 թթ.՝ պրոֆեսոր: 2011 թ. ազատվել է ԵՊՀ-ից, 2013-2018 թթ. աշխատել է ՀՊՃՀ մետալուրգիայի և նյութագիտության ֆակուլտետի գիտական թեմայում: 1974 թ. վերապատրաստվել է Մոսկվայի պետական համալսարանում:

Աշխատանքները վերաբերում են ջուր-օրգանական լուծիչ համակարգում կոմպլեքսների լուծահանման խնդիրներին, հողի, բույսերի, սննդա-

մթերքի, մսի, կաթնամթերքի և ծխախոտի մեջ ծանր ու թունավոր տարրերի, ինչպես նաև դեղապատրաստուկներում և արյան մեջ անալգինի միկրոգրամային քանակների որոշման եղանակների մշակմանը:

Ձեկուցումներով հանդես է եկել հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովներում: Անդամ է մասնագիտական և գիտական խորհուրդների, եղել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ՈՒԳԸ գիտական ղեկավար և արհմիութենական բյուրոյի անդամ:

Հեղինակ է շուրջ 150 գիտական աշխատության, ինչպես նաև «Սիլիկատների անալիզի գործնական աշխատանքներ» (1989), «Քրոմի և կադմիումի էքստրակցիոն-ֆոտոմետրիկ որոշումը հիմնային ներկանյութերով կաթի մեջ և կաթնամթերքում» (2003), «Քլորոզանական և ֆոսֆորոզանական պեստիցիդների անջատման մեթոդներ» (2003) ուսումնամեթոդական ձեռնարկների, համահեղինակ է «Քիմիական տերմինների ռուս-հայերեն ուսումնական համառոտ բառարան»-ի (2000):

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 4 ատենախոսություն:

Պարգևատրվել է ՀՀ ԿԳՆ և ԵՊՀ պատվոգրերով:



ԱՌՈՒՏԱՄՅԱՆ ԱՐՄԵՆ ՄԱՄԻԿՈՆԻ
(05.04.1950, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2007), պրոֆ. (2019):

Ավարտել է Երևանի թիվ 20 դպրոցը (1967) և սովորել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում (1967-1972), այնուհետև ՀՀ ԳԱ քիմիական ֆիզիկայի ասպիրանտուրայում (1973-1976): 1978 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել ավագ գիտաշխատողի (1990) ու դոցենտի (2013) կոչումներ: 1972-2013 թթ. աշխատել է ՀՀ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտում՝ ավագ լաբորանտ (1972-1973), կրտսեր (1976-1982) և ավագ (1982-2013) գիտաշխատող: 2013 թ.-ից աշխատում է ՀՄՀ կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում որպես դոցենտ (2013-2019) և պրոֆեսոր (2019-թ.-ից): 2009 թ. համատեղությամբ աշխատել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի էկոլոգիական քիմիայի ամբիոնում որպես դոցենտ:

Աշխատանքները վերաբերում են օրգանական միացությունների ցածր ջերմաստիճանային օքսիդացմանը և բոցավառմանը գերօքսիդային ռադիկալներով տարասեռային ռադիկալային հարուցմամբ, որոնք առաջանում են ռեակցման անոթի պատերին կլանված օրգանական գերօքսիդների ռադիկալային տրոհման ռեակցիայի հետևանքով: Հեղինակ է 80 գիտական հոդվածների, հեղինակային արտոնագրերի և ուսումնամեթոդական ձեռնարկների: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 1ատենախոսություն:

2012 թ. արժանացել է վաստակագրի:



ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆԺԵԼԱ ԲՈՐԻՍԻ (1924, Երևան – 1995, Երևան), կենսաքիմիկոս: Բժշկ. գիտ. դոկ.:

Ավարտել է ԵԲԻ-ն (1948): 1949-1969 թթ.՝ ՀԽՍՀ առողջապահության նախարարության Կուրորտաբանության և ֆիզիոթերապիայի ԳՀԻ կենսաքիմիայի լաբորատորիայի և իզոտոպային կաբինետի վարիչ, 1969-1995 թթ.՝ կլինիկական կենսաքիմիայի բաժանմունքի գիտական ղեկավար:

Աշխատանքները վերաբերում են տարբեր հիվանդությունների դեպքում կենսաքիմիական և ախտաբանագենետիկական գործոնների վրա «Արզնի» և «Ջերմուկ» հանքային ջրերի և բարձրլեռնային կլիմայի ազդեցության մեխանիզմների ուսումնասիրությանը:

ԱՍԱՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՇԱՔԱՐԻ (10(23).09.1904, Իջևան – 8.10.1960, Երևան), ագրոքիմիկոս: Գղտ. գիտ. դոկ. (1956):

Ավարտել է ՀԳԻ-ն (1931): 1944-1953 թթ. և 1955-1960 թթ.՝ ՀԽՍՀ երկրագործության ԳՀԻ (այժմ գիտական կենտրոն) փոխտնօրեն: Աշխատանքները վերաբերում են ագրոքիմիայի և մշակաբույսերի պարարտացման, բույսերի վրա միկրոտարրերի ֆիզիոլոգիական ազդեցության խնդիրներին:

Հեղինակ է՝ «Հացահատիկային կուլտուրաների պարարտացումը» (Եր., 1951); «Դաշտային կուլտուրաների պարարտացումը Հայկական ԽՍՀ-ում» (Եր., 1959) գրքերի:



ԱՍԼԱՆՅԱՆ ՆՈՒԲԱՐ ԼԵՎՈՆԻ (12.11.1931, Կահիրե (Եգիպտոս) – 12.09.2007, Երևան), կենսաքիմիկոս, ժամանակակենսաբան: Բժշկ. գիտ. դոկ. (1969), պրոֆ. (1971):

Ավարտել է ԵԲԻ-ն (1954): 1972 թ.-ից՝ Սրտաբանության ինստիտուտի կլինիկական կենսաքիմիայի և ժամանակակենսաբանության լաբորատորիայի, միաժամանակ 1994 թ.-ից՝ ԵՊԲՀ կենսաքիմիայի, 1993 թ.-ից՝ ՀՀ

ԱԱԻ ախտորոշագիտության ամբիոնների վարիչ:

Մշակել է հիպերտոնիկ հիվանդության բուժման նոր՝ էլեկտրոլիտային հոմեոստազի հետազոտության եղանակ:

Հեղինակ է՝ «Ռեմատիզմի ախտորոշման բիոքիմիական մեթոդները» (Եր., 1967), «Կլինիկական ախտորոշում կենսաքիմիական մեթոդներով» (Եր., 1996), համահեղինակ՝ «Արյան մակարդում» (Եր., 1980), «Սրտի իշեմիկ հիվանդության զարգացմանը նպաստող գործոնները և պայքարը նրանց դեմ» (Եր., 1986) ուսումնական ձեռնարկների և «Нарушение электролитного гомеостаза при гипертонической болезни» (Ե., 1973); «Патологическая физиология биологических ритмов» (Մ., 1989); «Достижения хронобиологии и хрономедицины» (Ե., 2002) (համահեղինակ) գրքերի:

Եղել է ՀԽՍՀ առողջապահության նախարարության լաբորատոր գործի գլխավոր մասնագետ (1971-1988), Հայաստանի ժամանակակենսաբանների ընկերության հիմնադիր-նախագահ (1979 թ.-ից):

ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ ԲՈԳԴԱՆ ՆԵՐՍԵՍԻ (17.01.1929, Երևան – 2007, Երևան), ագրոքիմիկոս: Գղտ. գիտ. դոկ. (1973), պրոֆ. (1983):

Ավարտել է ՀԳԻ-ն (1953): 1961-1973 թթ. և 1990 թ.-ից՝ Երկրագործության ԳՀԻ-ի (այժմ՝ գիտական կենտրոն) ագրոքիմիայի լաբորատորիայի վարիչ, փոխտնօրեն, 1973-1986 թթ.՝ տնօրեն: 1987-1991 թթ.՝ ՄԱԿ-ի ատոմային էներգիայի միջազգային գործակալության խորհրդական:

Ուսումնասիրել է ՀՀ հողերի հումուսի, ազոտի, ֆոսֆորի, կալիումի և միկրոտարրերի ռեժիմը և դրանց արդյունավետությունը ցանքատարածություններում: Մշակել է Չեռնոբիլի վթարից հետո ռադիոնուկլիդներով աղ-

տոտված հողերի իրացման տեխնոլոգիա, ինչպես նաև լեռնային էկոհամակարգերի երկրագործության հիմնահարցը:

Եղել է միջազգային ագրոէկոլոգիական ակադեմիայի անդամ (1994): Արժանացել է ՄԱԿ-ի արծաթե մեդալի (1989):



ԱՎԱԳՅԱՆ ԲՈՐԻՍ ՊԵՏՐՈՍԻ (07.12.1928, ք. Գոբյաշևոդսկ (այժմ՝ ՌԴ Ստավրոպոլի երկրամասում) – 04.11.1997, Երևան), գինու կենսատեխնոլոգիայի, կենսաքիմիայի և մարնէաբանության բնագավառի գիտնական: Կենս. գիտ. դոկ. (1970), պրոֆ. (1971):

Ավարտել է Սանկտ Պետերբուրգի սննդի արդյունաբերության տեխնոլոգիայի ինստիտուտը (1952): 1977-1985 թթ.՝ ՀԽՍՀ գյուղատնտեսական նախարարության գիտության և քարոզչության վարչության պետ, 1985-1997-ին՝ Խաղողագործության, գինեգործության և պտղաբուծության ԳՀԻ-ի (այժմ՝ գիտական կենտրոն) մանրէակենսաբանության բաժնի վարիչ:

Հիմնադիր է խաղողագործության և գինեգործության արտադրական թափոնների օգտահանմամբ սպիտակուցավիտամինային նյութերի ստացման նոր ուղղության: Ուսումնասիրել է անդրաձայնային ալիքների, ենթակարմիր և անդրամանուշակագույն ճառագայթների ազդեցությունը գինու միկրոֆլորայի վրա, մշակել և ներդրել է հոսքում խաղողահյութի անընդհատ խմորման եղանակ: Եղել է Իտալիայի գյուղատնտեսական ակադեմիայի թղթակից անդամ (1985):

Հեղինակ է «Սկզբնական գինեգործություն» (Եր., 1959) (համահեղինակ), «Стерилизация вина холодным способом» (Մ., 1972); «Микрофлора продуктов переработки винограда» (Է., 1988) աշխատությունների:



ԱՎԱԳՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՍԵՓԻ (20.11.1917, գ. Աղքորփի (այժմ՝ Վրաստանի Մառնեուլի շրջանում) – 09.03.1992, Երևան), ագրոքիմիկոս: Գղտ. գիտ. դոկ. (1971), պրոֆ. (1974):

Ավարտել է ԵՊԻ-ն (1941): 1958-1986 թթ.՝ Հողագիտության և ագրոքիմիայի ԳՀԻ-ի (այժմ՝ Հ. Պետրոսյանի

անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն) ագրոքիմիայի բաժնի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են ՀՀ հողերի ագրոքիմիական քարտեզագրման ժամանակակից եղանակների մշակման և արմատավորման, պարարտանյութերի կիրառման, հողերում սննդանյութերի, շարժուն միկրոտարրերի պարունակության, միկրոպարարտանյութերի կիրառման, բույսերի կալիումական սննդառության խնդիրներին:

Հեղինակ է «Պարարտանյութերի կիրառման հիմունքները» (Եր., 1975) գրքի:



ԱՎԱԳՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՆԱԶԱՐԻ (16.03.1918, Դարբաս, Լոռու մարզ – 2.04.1995, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1967), պրոֆ. (1969):

1936 թ. ավարտել է Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) թիվ 1 միջնակարգ դպրոցը, ապա՝ ԵՊԻ քիմիատեխնոլոգիական ֆակուլտետը: 1941 թ. կամավոր մեկնել է ռազմաճակատ: Պատերազմի ավարտից հետո ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրան (1946): 1946 թ.-ից աշխատել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում որպես ասիստենտ, ապա՝ ավագ դասախոս, դոցենտ, պրոֆեսոր: 1953 թ. պաշտպանել է թեկնածուականատենախոսություն:

1973-1975 թթ. եղել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկան, 1975-1984 թթ.՝ ՀՊՄԻ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր և միաժամանակ քիմիայի ամբիոնի վարիչ, 1984-1989 թթ.՝ ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, ապա պրոֆեսոր:

Հեղինակ է ավելի քան 100 գիտական աշխատության, որոնք նվիրված են անցումային շարքի մետաղների նոր՝ օլիֆենային, դիօլիֆենային-խելատային կոմպլեքս միացությունների սինթեզմանը և հետազոտմանը:

Եղել է ՀՀ ՈՒԳՀԸ հանրապետական խորհրդի նախագահ, ՈՒԳՀԸ համամիութենական խորհրդի նախագահության անդամ, Կրթության և գիտության նախարարության քիմիայի և քիմիական տեխնոլոգիայի գիտա-մեթոդական բաժնի նախագահ: Պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով, մեդալներով և ՀԽՍՀ ԳԻՍ պատվոգրով:



ԱՎԱԳՅԱՆՑ ՍԵՐԳԵՅ ԴԵՏՐՈՍԻ (25.12.1940, գ. Գեորգիևսկ (ՌԴ Ստավրապոլի երկրամաս)), գինու կենսաքիմիայի և տեխնոլոգիայի բնագավառի գիտնական: Կենսբ. գիտ. դոկ. (1977), պրոֆ. (1978):

Ավարտել է Կրասնոդարի պոլիտեխնիկ ինստիտուտը (1962): 1980 թ.-ից՝ Սննդի արդյունաբերության համաժողովրդական հեռակա ինստիտուտի գինու տեխնոլոգիայի ամբիոնի վարիչ: Ուսումնասիրել է փրփրուն գինիների ստացման տեսական, գինիների հասունացման ժամանակ ընթացող գործընթացները, խմորասնկերի ինքնալուծման (ավտոլիզ) մեխանիզմը: Մշակել է սեղանի խաղողային գինիների արտադրության, խմորիչային մնացորդների օգտահանման, ինչպես նաև կատալիզորդների միջոցով գինիների հասունացումն արագացնող եղանակներ: Առաջարկել է փրփրուն գինիների որակի գնահատման, գինու տեսակի և բուրումնավետացնող նյութերի որոշման եղանակներ:

Իտալիայի խաղողագործության և գինեգործության ակադեմիայի թղթակից անդամ է (1979):

Հեղինակ է «Биохимические основы технологии шампанского» (Մ., 1980) աշխատության:



ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԻՂԱ ԱՎԵՏԻՍԻ (10.12.1938, Երևան – 19.10.2009, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1975), պրոֆ. (1976), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1996):

1955 թ. ավարտել է Երևանի թիվ 15 միջնակարգ դպրոցը, 1960 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, 1964 թ.՝ ասպիրանտուրան: 1965 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և 1968 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1965-1967 թթ. աշխատել է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում որպես ասիստենտ, 1967-1975 թթ.՝ դոցենտ, 1979-2000 թթ.՝ նույն ամբիոնի վարիչ, 1984-2009 թթ.՝ քիմիայի ֆակուլտետի դեկան, 2005-2009 թթ.՝ նաև ԳՀ լաբորատորիայի գիտական դեկավար:

Աշխատանքները վերաբերում են թթվածին, ազոտ, ծծումբ պարունակող տարացիկլային, այդ թվում մի շարք կենսաբանական ակտիվ միացու-

թյունների սինթեզին և հետազոտմանը: Ստացել է վերափոխված պոլիվինիլպիրալիդոն (արյան փոխարինիչ), հայտնաբերել հիդրազոնների ցիկլոմոլ պիրազոլիդոնների ստացման նոր ռեակցիա: Մշակել է կումարինների և թիոլակտամների ստացման եղանակ:

Հեղինակ է ավելի քան 500 գիտական աշխատության, այդ թվում՝ 120 հեղինակային արտոնագրի: Համահեղինակ է «Օրգանական քիմիա» (Եր., 1988), «Օրգանական քիմիայի խնդրագիրք» (Եր., 1988), «Օրգանական քիմիայի պրակտիկում» (Եր., 2011), «Ալկեններ, ցիկլոալկեններ, ալկիններ. կառուցվածքը և հատկությունները» (Եր., 2008), «Ալկենների քիմիական հատկությունները» (Եր., 2005) դպրոցական և բուհական ձեռնարկների:

Եղել է ԵՊՀ-ի և հանրապետական մի շարք գիտական, մասնագիտական և խմբագրական խորհրդների անդամ և նախագահ:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 35 և դոկտորական 4 ատենախոսություն:

Արժանացել է Անանիա Շիրակացու մեդալի (1999), ՀՀ Նախագահի մրցանակի (2004): Եղել է ՀՃԱ (1994), ճարտարագիտության (1999) և էկոլոգիայի (1996) միջազգային, ՌԴ բնական գիտությունների (2000) ակադեմիաների անդամ:

ԱՏՈՎՄՅԱՆ ԼԵՎՈՆ ՕՀԱՆԻ (07.07.1927, Թիֆլիս), ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1972), պրոֆ. (1976), ՌԴ գիտ. վաստ. գործիչ (2000):

Ավարտել է ԵՊՀ-ն (1951): 1960 թ.-ից աշխատել է ՌԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտում, 1967 թ.-ից՝ նույն ինստիտուտի Չեռնոգոլովկայի մասնաճյուղի՝ իր նախաձեռնությամբ ստեղծված բյուրեղաքիմիայի լաբորատորիայի վարիչ, 1968-1972 թթ. և 1987-1990 թթ., միաժամանակ՝ փոխտնօրեն:

Աշխատանքները վերաբերում են բարդ կոորդինացված միացությունների մոլեկուլի և բյուրեղի կառուցվածքի, դրանցից նյութերի ֆիզքիմիական հատկությունների կախման հարցերին: Հայտնաբերել է սպինային իզոմերիայի երևույթը բյուրեղներում:

Համահեղինակ է «Кристаллохимия и стереохимия координационных соединений молибдена» (М., 1974) աշխատության:



ԱՐՇՐՈՒՆԻ ԱՆԴՐԵԱՍ (ԱՆԴՐԵՅ) ԵՐԵՄԻԱՅԻ

(15(27).11.1847, Մոսկվա – 10(22).09.1898, Հոհենհոնոֆ, Գերմանիա), երկրաբան, քիմիկոս, գրական-հասարակական գործիչ: Քիմ. գիտ. դոկ. (1871), պրոֆ., Սանկտ Պետերբուրգի ԳԱ թղթակից անդամ (1895): «Մշակ» թերթի խմբագիր և տնօրեն Գրիգոր Արծրունու եղբայրը:

Դպրոցը ավարտելուց հետո ընդունվել է Սանկտ Պետերբուրգի համալսարանը, ապա ուսումը շարունակել Դորպատի, այնուհետև Հայդելբերգի համալսարաններում՝ ստանալով երկրաբանի և քիմիկոսի որակավորում, նաև քիմիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան (1871): Նա 1871-1875 թթ. ընդմիջումներով ապրել է Թիֆլիսում, զբաղվել Կովկասի երկրաքիմիական հետազոտությամբ, նաև մանկավարժությամբ: Առաջ է քաշել Անդրկովկասի քիմիական արդյունաբերության զարգացման հարցը: 1877 թ. հրավիրվել է Բեռլինի համալսարան, զբաղեցրել պրիվատ դոցենտի և զուգահեռաբար հանքաբանության թանգարանի տնօրենի պաշտոնները (1880-1883): Այնուհետև դարձել է Բրեսլավլի համալսարանի պրոֆեսոր (1884-1897), նաև Ախենի պոլիտեխնիկ ինստիտուտի պրոֆեսոր (1884-1897) և հանքաբանության ամբիոնի վարիչ: 1880-1890 թթ. կազմակերպել է արշավախմբեր Կովկաս, Ուրալ, Եվրոպական երկրներ, Չիլի, Եգիպտոս, Բրիտանական Գվինանա (այժմ Գայանա): Ուսումնասիրել է Հայաստանի երկրաբանական կառուցվածքն ու օգտակար հանածոները: 1884 թ. բարձրացել է Փոքր Մասիս, հերքել Հումբոլդտի և Արիֆսի տեսությունը Հայաստանի հրաբուխների ուղղաձիգ տեղադիրքի մասին: Վանա լճի մակարդակի տատանումները բացատրել է երկրաբանական գործոններով: Տաղանդավոր գիտնականի գիտական աշխատանքները նվիրված են երկրաքիմիայի, բյուրեղաքիմիայի, հանքաբանության, ապարագիտության բնագավառներին, ինչպես նաև՝ տնտեսագիտության, փիլիսոփայության ու գրականության հարցերին: Եղբոր՝ Գ. Արծրունու մահից հետո դարձել է «Մշակի» անվանական հրատարակիչը (1895-1898):

Հեղինակ է «Բյուրեղների ֆիզիկական քիմիա» աշխատության, որը հրատարկվել է գերմաներենով (1893): Ընտրվել է Թուրինի թագավորական և Բավարիայի ԳԱ թղթակից անդամ: Հանքանյութերից (միներալներից) մեկը կոչվում է նրա անունով՝ Արծրունուփոս: Գերմանիայի Ախեն քաղաքի

պոլիտեխնիկական ինստիտուտի շենքի առջև կանգնեցված է Անդրեաս Արծրունու կիսանդրին:



ԱՐԱՎԻԱՆՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԱՇՈՏԻ (20.05.1937, Երևան), ագրոքիմիկոս: Գղտ. գիտ. դոկ. (1990):

Ավարտել է ՀԳԻ-ն (1960): 1973 թ.-ից՝ Հիդրոպոնիկ փորձարարական կայանի վարիչ, միաժամանակ, 1992 թ.-ից՝ ԼՂՀ վարչապետի խորհրդական, Արցախի զարգացման գործակալության (2010) և Արցախի գիտական կենտրոնի (2012) ղեկավար: ՀՀ-ում և ԼՂՀ-ում հիմնել է հիդրոպոնիկական և հողային պայմաններում դեղաբույ-

սերի և ռազմավարական նշանակության մշակաբույսերի աճեցումը, իրականացրել մի շարք արժեքավոր բույսերի ներմուծումը (ինտրոդուցիան) հիդրոպոնիկական և հողային պայմաններում: Մշակել է և արտադրության մեջ ներդրել արտաքին միջավայրի կառավարվող պայմաններում կանաչ վիտամինային կերի անընդհատ արտադրության բուսատեխնոլոգիան:

Եղել է ՀՀ ԳԱԱ և ԼՂՀ ընդհանուր հարցերը համակարգող (1997 թ.-ից), ՌԴ բնական ԳԱ անդամ (2001):

Համահեղինակ է հետևյալ աշխատությունների՝ «Բույսերի մշակությունը հիդրոպոնիկայում» (Եր., 1974) (համահեղինակ); «Տնային պայմաններում գինու արտադրության տեխնոլոգիան» (Եր., 2007); «Непрерывное гидропоническое производство свежего травяного корма и эффективность его применения» (Ե., 1977) (համահեղինակ); «Ядовитые растения и грибы на территории Армении и Арцаха» (Ե., 2005); «Плотность поврежденной нервной системы при различных воздействиях» (Ե., 2008):



ԱՐԱՅԱՆ ԱՐԱՔՍԻ ԹՈՎՄԱՍԻ (05.05.1906, Երևան - 13.02.1993, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1945), պրոֆ. (1945), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1968), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1961):

1929 թ. ավարտել է ԵՊՀ գյուղատնտեսական և 1937 թ.՝ ԵՊԻ քիմիայի ֆակուլտետները: Ուսումնառությանը զուգահեռ աշխատել է Երևանի անասնաբուծա-

կան-անասնաբուժական ինստիտուտում: 1942-1956 թթ. եղել է նույն ինստիտուտի օրգանական քիմիայի ամբիոնի վարիչը: Նրա գիտական գործունեությունը, սկսած 1935 թ.-ից, կապված է եղել ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի քիմիայի ինստիտուտի հետ (1957 թ.-ից՝ ՀԽՍՀ ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտ), որտեղ 1949-1953 թթ. եղել է գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն, 1955-1957 թթ.՝ բաժնի վարիչ, 1957 թ.-ից մինչև կյանքի վերջը ղեկավարել է ինստիտուտի ամինամիացությունների լաբորատորիան: 1961-1972 թթ. համատեղությամբ դասավանդել է նաև ԵՊՀ-ում:

Հեղինակ է ավելի քան 400 գիտական աշխատության, այդ թվում՝ «Внутримолекулярное перегруппировки солей четырех-замещенного аммония» (Եր., 1976) մենագրության և շուրջ 70 հեղինակային իրավունքի:

Նրա վաղ շրջանի աշխատանքները նվիրված են ացետիլենային Գ-գլիկոլների սինթեզին, որը գրականության մեջ հայտնի է «Ֆավորսկու-Բաբայանի ռեակցիա» անունով: Հետագա աշխատանքները հիմնականում նվիրված են ամինների և ամոնիումային միացությունների հետազոտմանը: Մեծ արժեք է ներկայացնում Հոֆմանի ռեակցիայի գործնական կիրառության հնարավորության հայտնաբերումը: Պարզաբանել է բազմահալոգենալկիլ խումբ պարունակող չորրորդային ամոնիումային աղերի ջրահիմնային ճեղքման ռեակցիայի մեխանիզմը, առաջարկել β , γ և α , β չհագեցած խմբեր պարունակող համապատասխան աղերի վերախմբավորման-ճեղքման ռեակցիաներ, որոնք կարող են օգտագործվել կետոնների, կարբոնաթթուների էսթերների և ենամինների սինթեզի համար:

Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել են 50-ից ավելի թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ:

Եղել է «Հայկական քիմիական ամսագրի» գլխավոր խմբագիր, Խորհրդային կանանց կոմիտեի անդամ, ՀԽՍՀ ԳԻ պատգամավոր (1947-1959):

Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի, Ժողովուրդների բարեկամության, Պատվո նշան շքանշաններով:



ԲԱԲԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ ՀՐԱՆՏԻ (06.12.1954, Երևան), ջրաքիմիկոս: Տեխ. գիտ. դոկ. (2008): Դուստրն է Հ. Գ. Բաբայանի:

Ավարտել է Երևանի թիվ 77 դպրոցը (1972), ապա ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը (1977): Աշխատելուն զուգահեռ կատարել է գիտական հետազոտություն և պաշտպանել ատենախոսություն ու ստացել աշխարհագրական գիտ. թեկն. գիտական աստիճան «Հիդրոքիմիա» մասնագիտությամբ (1989): Դոկտորական թեզը պաշտպանել է Երևանում «Երկրաբնապահպանություն» մասնագիտությամբ:

Աշխատել է Երևանի «Կանազ» այլումինի գործարանի սանիտարական լաբորատորիայում ճարտարագետ (1977-1980), Սևանի ջրակենսաբանական կայանի ավագ գիտաշխատող (1980-1989), Հիդրոմետվարչության շրջակա միջավայրի մոնիտորինգի կենտրոնում ֆիզիկաքիմիական լաբորատորիայի վարիչ (1989-1999), Հայաստանի քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության «Ավիամեդ» ՓԲԸ որպես թունաբան (համատեղություն, 1997-1999), «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ որպես ջրի որակի բաժնի պետ (1999-2014), ՀՀ ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտական կենտրոնում (2015-2020):

Մասնագիտական ոլորտը՝ ջրի որակ, բնապահպանություն, ջրաքիմիա: Նրա ջանքերով ստեղծվել է 21 հատ ջրի որակի (խմելու և կեղտաջրերի) լաբորատորիա, մշակել է դրանց համար համապատասխան մեթոդական հրահանգներ և կարգեր, պատրաստել բնապահպանական հաշվետվություններ:

Հեղինակ է 40-ից ավելի գիտական հոդվածի և 3 մենագրության: Եղել է մասնագիտական և գիտական խորհուրդների անդամ:



ԲԱԲԱՅԱՆ ՀՐԱՆՏ ԳՐԻԳՈՐԻ (01.09.1927, Երևան – 24.02.2012, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1966), պրոֆ.(1970), ՀՃԱ ակադեմիկոս (1992), ՀՀ գիտ. վաստակավոր գործիչ (1981): Ս. Գ. Բաբայանի եղբայրը, Գ. Հ. Բաբայանի հայրը:

Ավարտել է ԵՊԻ քիմիատեխնոլոգիական ֆակուլ-

տետր (1952) և ընդունվել ԽՍՀՄ ԳԱ Ն. Կուռնակովի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի ասպիրանտուրան: 1956 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ: 1956 թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱ քիմիայի ինստիտուտում՝ գիտաշխատող, գիտության գծով փոխտնօրեն: 1969-1983 թթ.՝ ԵՊՀ ընդհանուր և անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, 1971-1983 թթ. ղեկավարել է իր նախաձեռնությամբ ԵՊՀ-ում ստեղծված «Հազվագյուտ և ցրված տարրերի քիմիայի և տեխնոլոգիայի ճյուղային լաբորատորիան», որտեղ մշակել են հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների արտադրական թափոնների և հանքային նյութերի հետազոտման ու առանձնացման եղանակներ: 1983-1993 թթ.՝ «Քար և սիլիկատներ» ԳԱՄ-ի գլխավոր տնօրեն, 1993 թ.-ից՝ փոխտնօրեն, միաժամանակ՝ ԵՊՀ ընդհանուր և անօրգանական քիմիայի ամբիոնի պրոֆեսոր: Աշխատանքները վերաբերում են եռբաղադրիչ համաձուլվածքների ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրմանը, բազմաբաղադրիչ հանքանյութերից հազվագյուտ և ցրված տարրերի կորզման տեխնոլոգիայի մշակմանը, ինչպես նաև ոչ հանքային ապարների վերամշակմանը: Առաջարկել է նատրիումի մետասիլիկատի ստացման արդյունաբերական եղանակ: Եղել է քիմիայի գծով դպրոցական հանրապետական և համամիութենական օլիմպիադաների հանձնաժողովների նախագահ, ՀՀ քիմիական ընկերության նախագահ, տարբեր խորհուրդների անդամ:

Հեղինակ է ավելի քան 350 գիտական աշխատության, որից 70-ը՝ հեղինակային արտոնագիր: Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել են մի քանի տասնյակ թեկնածուական և դոկտորական թեզեր:

Եղել է ՀՃԱ փոխնախագահ (1994), Միջազգային ճարտարագիտական ակադեմիայի անդամ (1994):



ԲԱԲԱՅԱՆ ԱՏԵՓԱՆ ԳՐԻԳՈՐԻ (28.10.1931, Երևան – 24.05.2017, Երևան), քիմիկոս-տեխնոլոգ: Քիմ. գիտ. դոկ. (1977), պրոֆ. (1980): Հ. Գ. Բաբայանի եղբայրը:

Ավարտել է Մոսկվայի քիմատեխնոլոգիական ինստիտուտը (1955): 1967-1971 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ Անօրգանական և ընդհանուր քիմիայի ինստիտուտի

(1964-1969 թթ., միաժամանակ՝ ԵՊՀ դասախոս), 1971-1986 թթ.՝ քիմիական ռեակտիվների և գերմաքուր քիմիական նյութերի «ԻՌԵԱ» ԳԱՄ-ի հայկական մասնաճյուղի լաբորատորիայի վարիչ, 1986-1991 թթ.՝ նույն մասնաճյուղի, 1991-1995 թթ.՝ «Քիմ. տեխ» քիմիատեխնոլոգիական ԳՀԻ տնօրեն: 1997-2002 թթ. եղել է ՀՀ առևտրի և արդյունաբերության նախարարության վարչության պետ, ապա՝ խորհրդական, 2002 թ.-ից՝ Միջազգային բիզնեսի կենտրոնի բաժնի պետ:

Աշխատանքները վերաբերում են ճառագայթաակտիվ տարրերի քիմիային, անօրգանական միացությունների, գերմաքուր նյութերի, կլանիչների արտադրության տեխնոլոգիաների և ոչ մետաղային հանածոների մշակմանը: Ներդրել է անագի և կապարի, սիլիկազոլի, նրբաշերտ քրոմատագրության սպիկների, կատալիզատորների, ալյումինասիլիկատային կրողների, Նոյեմբերյանի ցեոլիտների հիմքի վրա մոլեկուլային մաղերի, հեղուկ ապակու արտադրություն:

Եղել է ՀՃԱ (1994) և Միջազգային ՃԱ անդամ (1999):



ԲԱՐԱՅԱՆ ՎՈՎԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (01.09.1917, Թիֆլիս – 16.03.1999, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1972), պրոֆ. (1973): ՀԽՍՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործիչ (1981):

Տարրական կրթությունը ստացել է Արցախի Վանք գյուղի դպրոցում: 1928 թ. տեղափոխվել են Երևան: Ավարտել է Ն. Կ. Կրուպսկայայի անվան դպրոցը և ԵՊԻ քիմիատեխնոլոգիական ֆակուլտետը (1940): Ուսմանը զուգընթաց, դեռևս դպրոցում սովորելիս աշխատել է բանվոր, իսկ ԵՊԻ-ում սովորելուց՝ Արմֆանի քիմիայի ինստիտուտում որպես լաբորանտ: Զորակոչվել է բանակ և Հայրենական պատերազմի առաջին օրից մինչև դրա հաղթական ավարտը կռվել տարբեր ռազմաճակատների տանկային զորամասերում: 1945 թ. զորացրվել է կուրծքը զարդարված Կարմիր աստղի և Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշաններով ու մի շարք մեդալներով: Աշխատել է գործարանում որպես ճարտարագետ: Սակայն ունկնդրելով իր սիրելի պրոֆեսոր Ս. Ղամբարյանի ձայնին՝ տրվում է գիտությանը: 1948 թ.-ից աշխատել է Քիմիայի ինստիտուտի օրգանական քիմիայի բաժնում որպես

կրտսեր գիտաշխատող, իսկ 1949 թ. ընդունվել է այդ ինստիտուտի ասպիրանտուրան: Այդ տարիներից աշխատել է նաև ՀՊՄԻ քիմիայի ամբիոնում:

1953 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Բազմակորիզ ածխաջրածինների սինթեզի ուղղությամբ» թեմայով: Դոկտորականի թեման էր «Ուսումնասիրություններ հալոգեն պարունակող 1,3-դիենային միացությունների բնագավառում»:

1949-1956 թթ. եղել է ՀԽՄԻ քիմիայի ամբիոնի դասախոս, 1956-1986 թթ. ղեկավարել է քիմիայի, ապա օրգանական և ֆիզիկական քիմիայի, այնուհետև քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնները: 1963-1965 թթ. եղել է ինստիտուտի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, իսկ հետո՝ շուրջ ութ տարի, բնագիտաքիմիական ֆակուլտետի ղեկան:

Հեղինակ է շուրջ 100 գիտական հոդվածների և հեղինակային վկայագրերի, ինչպես նաև ուսումնամեթոդական ձեռնարկների: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 6 ատենախոսություն:

Եղել է գիտական և մասնագիտական խորհուրդների անդամ, ակտիվորեն մասնակցել է մանկավարժական ինստիտուտի հասարակական աշխատանքներին և պարգևատրվել Աշխատանքային արիության համար մեդալով և ՀԽՍՀ գերագույն խորհրդի պատվոգրով:



ԲԱԴԱՆՅԱՆ ՇԱԼԻԿՈ (ՇԱՎԱՐՇ) ՀՈՎԱԿԻՄԻ

(24.10.1933, գ. Մերենիս, Ախալքալաքի շրջան – 19.02.2003, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1972), պրոֆ. (1974), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1996):

Ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը (1956) և աշխատել ՕՔԻ-ում: 1988-2002 թթ. եղել է ՕՔԻ տնօրեն, 1985-1988 թթ.՝ միաժամանակ ՀՀ ԳԱ համակարգիչ

խորհրդի փոխնազահ:

Աշխատանքները վերաբերում են ալիլային և պրոպարգիլային համակարգերի ուսումնասիրմանը: Հայտնաբերել է դրանց անոմալ տեղակալման և դիմերման նոր ռեակցիաներ, ինչպես նաև Ca^{2+} իոնի օրգանական ռեակցիաների ուղղությունը շրջելու հատկությունը: Մշակել է ֆերոմոնների, հորմոնների, իզոպրենոիդների և պերմետրինների սինթեզի եղանակները: Նրա

կողմից սինթեզված նյութերից օգտագործվել են գյուղատնտեսական մշակաբույսերի պաշտպանության համար:

Հեղինակ է հարյուրավոր գիտական հոդվածի և տասնյակ գյուտերի արտոնագրի:

Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել են թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ:

Եղել է գիտական, մասնագիտական և խմբագրական խորհուրդների անդամ:



ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԵՐՎԱՆԴ ԳՐԻԳՈՐԻ (05.05.1931, գ. Տեղ Սյունիքի մարզ – 15.12.2019, Երևան), կենսաքիմիկոս: Կենս. գիտ. դոկ. (2001), պրոֆ. (2002):

Սովորել է Գորիսի թիվ 1 դպրոցում: Հաղթահարելով տվյալ ժամանակաշրջանին հատուկ սովի դաժան տարիները, յուրաքանչյուր շաբաթվա վերջում անցնելով Տեղից մինչև Գորիս ընկած 25 կմ ճանապարհը՝ ավարտել է դպրոցը և 1948 թ. ընդունվել ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը, որն ավարտելուց հետո գործուղվել է Սպիտակի նորաստեղծ շաքարի գործարան: 1962 թ. ընդունվել է ասպիրանտուրա և գործուղվել Սարատովի պետհամալսարան, որտեղ էլ 1965 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ: Այնուհետև վերադարձել է Երևան և աշխատանքի անցել ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի փորձարարական լաբորատորիայում (կրտսեր և ավագ գիտաշխատող): 2001 թ. համապատասխան հրավերով աշխատանքի է մեկնել Գորիսի պետհամալսարան, որտեղ գլխավորել է նորաբաց կենսաբանության ամբիոնը: Իր ուսանողների հետ մշակած հատուկ մեթոդաբանությամբ և նորարական առաջարկներով ձեռնարկել է տեղական բուսատեսակների բուժիչ հատկությունների ուսումնասիրության և դրանցից ստացվող օգտակար կենսանյութերի արտադրության նոր տեխնոլոգիաների ներդրման գործը: 1990-ական թթ. հրավիրվել է Գերմանիա և Բեռլինի գիտական կենտրոններից մեկում կատարել համատեղ ուսումնասիրություններ՝ միկրոօրգանիզմների կենսաքիմիական կիրառությունների արդյունավետության բարձրցման ուղղությամբ:

Աշխատանքները վերաբերում են Candida ցեղի խմորասնկերի D և ամինաթթվային օքսիդազների ուսումնասիրմանը: Հետազոտել է B խմբի վիտամինների սինթեզը հողային մանրէների (բակտերիաների) կողմից:

Հեղինակ է 200-ից ավելի գիտական հոդվածների և ձեռնարկների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 2 ատենախոսություն:



ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԱՓՈՐ ԱՍԵՓԱՆԻ

(18(31).11.1908, Փարիզ - 10.03.2000, Մոսկվա), ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1951), պրոֆ. (1953), ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս (1981, թղթ. անդամ՝ 1968):

Ավարտել է ՄԲՏՈՒ քիմիայի ֆակուլտետը (1931): 1936 թ.-ից աշխատել է Մոսկվայի Լ. Յա. Կարպովի անվան ֆիզքիմիայի ինստիտուտում, 1958 թ.-ից՝ լուսաքիմիայի լաբորատորիայի վարիչ:

Աշխատանքները վերաբերվում են ազատ ռադիկալային մեխանիզմով ընթացող պոլիմերման ռեակցիաների կինետիկայի, լուսաքիմիայի, ճառագայթային քիմիայի, վերախմբավորման լյումինեսցենսման հարցերին, տոպոքիմիական ռեակցիաների տեսությանը: Առաջարկել է ազատ ռադիկալային ռեակցիաների արագությունների վրա մոլեկուլների կառուցվածքների ազդեցության ընդհանուր տեսություն: Ապացուցել է երկքվանտային լուսաքիմիական ռեակցիաների գոյությունը, որի քիմիական գործողությունն իրականացվում է լույսի երկու քվանտների հաջորդական կլանմամբ, ընդ որում՝ երկրորդ քվանտը կլանվում է տրիպլետ վիճակում գտնվող գրգռված մոլեկուլի կողմից: Եղել է բարձր էներգիաների քիմիայի գիտական խորհրդի լուսաքիմիայի բաժանմունքի նախագահ (1963 թ.-ից):

Հեղինակ է «Теория радикальной полимеризации» (2 изд., перераб. и доп., М., 1966); «Двухквантовая фотохимия» (М., 1976); «Возбужденные состояния и радикальные реакции в жидкой среде» (М., 1992) աշխատությունների:



ԲԱՂՂԱՍԱՐՈՎ (ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ) ԽԱԶԻԿ ՍԱՀԱ-ԿԻ (21.05.1929, Սամարղանդ – 05.10.2013, Մոսկվա), անօրգանական դժվարահալ բյուրեղների նյութագետ, ֆիզքիմիկոս: Ֆիզմաթ գիտ. դոկ. (1971), ՌԳԱ թղթ. անդամ (1991):

Ավարտել է Մոսկվայի պողպատի ինստիտուտը (1951): 1987 թ.-ից՝ ՌԳԱ բյուրեղագիտության ինստիտուտի (Մոսկվա) բարձր ջերմաստիճանային բյուրեղացման բաժնի վարիչ: Առաջինն է ապացուցել աճեցվող միաբյուրեղների ամրության պայմանավորվածությունը դաշտի գերձայնային տատանումների հաճախությամբ: Առաջարկել է գերձայնային մշակմամբ միա- և բազմաբյուրեղների կառուցվածքի ամրացման, միաբյուրեղների աճեցման նոր եղանակներ: Մշակել է քվանտային էլեկտրոնիկայում անհրաժեշտ նյութերի ստացման համալիր խնդիրը, որի հիման վրա ստեղծվել է լազերային բյուրեղների արդյունաբերական արտադրություն:

Արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի (1972):



ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ ՆԻՆԱ ՀԱՅԿԱԶԻ (28.01.1950, Երևան), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դոկ. (1994):

Ավարտել է Երևանի թիվ 30 դպրոցը (1967) և ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը (1972): 1972 թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱԱ կենսաքիմիայի ինստիտուտում, 1991 թ.-ից՝ նեյրոպեպտիդների կենսաքիմիայի խմբի, 2003 թ.-ից՝ լաբորատորիայի վարիչ: 1984 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 2010 թ.-ից դասավանդում է ԵՊՀ կենսաքիմիայի ամբիոնում:


Առաջին անգամ ցույի գլխուղեղի հիպոթալամուսից անջատել է կենսաբանական ակտիվ 5 նեյրոպեպտիդ: Բացահայտել է, որ կալցիում նեյրինն այն առանցքային ֆերմենտն է, որի միջոցով իրագործվում է հեմորֆինների ազդեցությունը նյարդային և իմունային համակարգերում: Պարզվել է, որ հեմորֆինները ազդում են ուղեղի սերտոնիներգիկ համակարգի վրա կորտիկոտրոպին ռելիզինգ հորմոն-կախյալ ուղիներով:

Ղեկավարել է մի քանի միջազգային դրամաշնորհային ծրագրեր: Համատեղ աշխատանքներ է կատարել Գերմանիայի և ԱՄՆ-ի համալսարան-

ներում: Հեղինակ է 85 գիտական աշխատության: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 4 ատենախոսություն:

Անդամ է ԽՍՀՄ կենսաքիմիկոսների (1983-1991), Նյարդաքիմիկոսների հայկական (1991 թ.-ից), եվրոպական (1991 թ.-ից), միջազգային (1993-2000) միությունների:

Եղել է ԽՍՀՄ նյարդաքիմիկոսների բաժանմունքի գիտքարտուղար (1985-1991), մասնագիտական և գիտական խորհուրդների անդամ:



ՔԵՅԼԵՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ ՄԱՆՎԵԼԻ (14.07.1929, Կահիրե), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1974), պրոֆ. (1977), ՀԽՍՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործիչ (1981):

1947 թ. ավարտել է Կահիրեի Գալուստյան ազգային վարժարանը և նույն տարում ընտանիքով տեղափոխվել Խորհրդային Հայաստան: 1953 թ. ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, 1962 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1965 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1953 թ.-ից աշխատել է ԵՊՀ ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնում որպես ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր, 1976-2000 թթ.՝ ամբիոնի վարիչ, միաժամանակ՝ պոլիմերային պրոցեսների կինետիկայի պրոբլեմային լաբորատորիայի գիտական ղեկավար: 2011 թ.-ից անցել է վաստակած հանգստի:

Գիտական հետազոտություններն ընթացել են մի շարք հիմնարար ուղղություններով. լուծույթներում պերօքսիդների մասնակցությամբ ընթացող ռեակցիաների կինետիկական և մեխանիզմը, պերօքսիդ-ամին համակարգով հարուցված ռադիկալային պոլիմերման օրինաչափությունները էմուլսիայում, փոքր չափաբաժինների ճառագայթային քիմիա, կոնդեսված միջավայրի լազերային քիմիա, ջրածնի պերօքսիդի քայքայման օրինաչափությունների ուսումնասիրումը հողերում և բնական ջրերում, ՀՀ որոշակի տեսակի հողերի կատալազային և ֆոսֆատազային ակտիվության ուսումնասիրում կինետիկական եղանակով, էկոլոգիական քիմիայի հետ կապված որոշ պրոբլեմների ուսումնասիրում, շրջված միջֆազային կատալիզ: Ստացված արդյունքների մի մասը ներդրվել է արտադրության մեջ:

Հեղինակ է ավելի քան 700 գիտական հոդվածի, 30 հեղինակային արտոնագրի և երկհատոր դասագրքերի՝ «Քիմիական կինետիկա» (Եր., 1978, 1980), «Ֆիզիկական քիմիա» (Եր., 2016), համահեղինակ է «Էկոլոգիան և ժամանակակից քիմիան» (Եր., 1986), «Քիմիայի խնդիրների լուծումներ» (Եր., 1984), «Քիմիայի շտեմարան» (Եր., 1998) գրքերի:

Հանրապետական մամուլում բազմաթիվ հոդվածներով անդրադարձել է ՀՀ գիտության և կրթության խնդիրներին: Գործուն մասնակցություն է ունեցել սփյուռքի հետ համագործակցությանը: Եղել է մի շարք գիտխորհուրդների անդամ:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 52 և դոկտորական 7 ատենախոսություն:

Արժանացել է պարգևների և կոչումների՝ պատվոգրեր և շնորհակալագրեր, Աշխատանքային արիության համար մեդալ (1970), ԵՊՀ ոսկե մեդալ (1999, 2000), «Տարվա մարդ» (1998, 2008, 2009, 2011 ԱՄՆ ամերիկյան կենսագրական ինստիտուտ), «2012 տարվա միջազգային գիտնական» (Քեմբրիջի միջազգային կենսագրական կենտրոն): Եղել է ՀՀ ՃԳԱ (2010), ԷՄԱ (1996), ՌԴ բնական ԳԱ Հայաստանի բաժանմունքի (1998), Ամերիկյան քիմիական ընկերության անդամ (2012), ԵՊՀ ֆիզքիմիայի ամբիոնի պատվավոր վարիչ (2001):

ՔՈՍՏԱՆՋԻՅԱՆ ՍԵՅՐԱՆ ԱՐՏԱՇԵՍԻ (28.02.1930, գ. Մեծ Սալա (ՌԴ Ռոստովի մարզ)), մեխանիկոս, ֆիզքիմիկոս: Ֆիզմաթ գիտ. դոկ. (1976), պրոֆ. (1984):

Ավարտել է Դոնի Ռոստովի պետական համալսարանը (1954): 1960-1988 թթ. աշխատել է ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի Չեռնոգոլովկայի մասնաճյուղում, միաժամանակ դասախոսել է Կույբիշևի (այժմ՝ Սամարա) պոլիտեխնիկական, 1988 թ.-ից՝ ՌԳԱ Ա. Մերժանովի անվան կառուցվածքային մակրոկինետիկայի և նյութագիտության հիմնահարցերի ինստիտուտներում:

Աշխատանքները վերաբերում են ջերմության քիմիական և մեխանիկական աղբյուրների առկայության դեպքում ոչ հավասարաջերմային հիդրոդինամիկայի, հավասարաջերմային և ոչ հավասարաջերմային դիմադրադինամիկայի ուսումնասիրությանը, պոլիմերային նյութերի վերամշակման, քի-

միատեխնոլոգիական գործընթացների մակրոկինետիկայի տեսության, ինքնատարաձվող բարձր ջերմաստիճանային գործընթացի մաթեմատիկական մոդելավորման հարցերին: Հետագոտել է թռչնի փետուրի միկրոկառուցվածքն ու կառուցատարրերի առանձնահատկությունները և դրանց կապը թռչնի թևի օդադինամիկական բնութագրերի հետ:

2017 թ. արժանացել է ՌԳԱ պատվոգրի:



ԲՈՒՆԻԱԹՅԱՆ ՀՐԱՉՅԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ

(10(14).05.1907, Նոր Բայազետ (այժմ՝ ք. Գավառ) - 19.03.1981, Թբիլիսի, աճյունն ամփոփված է Երևանում), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դոկ. (1937), պրոֆ. (1939), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1940):

Ավարտել է ԵՊՀ բժշկական ֆակուլտետը (1930): 1939-1941 թթ. եղել է ԵԲԻ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1942-1946 թթ.՝ ԵՊՀ ռեկտոր, 1947-1957 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ կենսաբանության բաժանմունքի, 1958-1961 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար, 1961-1967 թթ.՝ փոխնախագահ, 1961-1981 թթ.՝ ՀՀ ԳԱ կենսաքիմիայի ինստիտուտի տնօրեն: 1943 թ.-ից ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի կենսաքիմիայի բաժինը: Ղեկավարել է ԵԱԱԻ-ի, այլունհետև, ավելի քան երկու տասնամյակ, ԵԲԻ կենսաքիմիայի ամբիոնը: Աշխատանքները վերաբերում են վիտամինների (մասնավորապես՝ A և C) ուսումնասիրությանը, նյութափոխանակության նյարդահումորալ և պայմանառեֆլեկտորային կարգավորման հարցերին: Հետագոտել է գամմա-ամինակարագաթթվի դերը ուղեղի կենսաքիմիական գործընթացներում, հայտնաբերել է (աշխատակիցների հետ) նոր տվյալներ ուղեղում և այլ օրգաններում նյարդահորմոնների և ֆոսֆոլիպիդների փոխանակության վերաբերյալ:

Նա կենսաքիմիական գիտության հիմնադիրն է ՀԽՍՀ-ում: ՀՀ ֆիզիոլոգների, կենսաքիմիկոսների և դեղաբանների (1947-1955), կենսաքիմիկոսների (1960-1981) ընկերությունների նախագահ, բնախոյզների «Լեոպոլդինա» գերմանական ակադեմիայի (1971), ինչպես նաև մի շարք միջազգային կազմակերպությունների և գիտական ընկերությունների անդամ: 1982 թ.-ից նրա անունով է կոչվում ՀՀ ԳԱ կենսաքիմիայի ԳՀԻ: Պարգևատրվել է Լե-

նինի, Հոկտեմբերյան հեղափոխության, Աշխատանքային կարմիր դրոշի (2) շքանշաններով:

Երևանի Մաշտոցի պողոտայի թիվ 9 շենքի պատին ամրացված է հուշատախտակ:

Հեղինակ է բազմաթիվ հոդվածների և մենագրությունների, այդ թվում՝ «Фосфотиды как про- и антиоксиданты при самоокислении жиров и витамина “А” (каротиноидов)» (Ե., 1937); «Инсулиновая гипополикемия и значение центральной нервной системы в реализации гипогликемического действия инсулина, “Вопросы биохимии”» (т. 1, Ե., 1960):



ԳՎԱՌՅԱՆ ԱՐՄԵՆ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ (01.05.1929, գ.

Փոքր Պարնի (այժմ՝ գ. Անուշավան՝ ՀՀ Շիրակի մարզում) – 04.10.2012, Երևան), կենսաքիմիկոս, նյարդաքիմիկոս: Կենս. գիտ. դոկ. (1964), պրոֆ. (1965), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1986, թղթ. անդամ՝ 1971 թ.-ից):

Ավարտել է Արթիկի միջնակարգ դպրոցը (1947) և ԵԲԻ-ն (1953), ընդունվել ասպիրանտուրա և գործուղվել

Մոսկվա՝ Կոլցովի անվան կենսաբանության ինստիտուտ: 1956 թ. պաշտանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատել ԽՍՀՄ բժշկական ԳԱ ուղեղի ինստիտուտում: 1958 թ. վերադարձել է Երևան և աշխատել ՀՀ ԳԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտի կենսաքիմիայի բաժնում: 1961 թ. այդ բաժինը վերածվեց Կենսաքիմիայի ինստիտուտի, որտեղ նա անցել է ավագ գիտաշխատողի, լաբորատորիայի և բաժնի վարիչի, ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալի (1965-1979), ինստիտուտի տնօրենի (1982-2006) ուղին: 1979-1982 թթ. եղել է ՀՀ ԳԱ փորձարարական կենսաբանության ինստիտուտի տնօրեն: 1972-2006 թթ. ղեկավարել է Մոսկվայի Ա. Բախի անվան կենսաքիմիայի ինստիտուտի նեյրոհորմոնների կենսաքիմիայի երևանյան մասնաճյուղը (Երևանի կենսաքիմիայի ինստիտուտում), որտեղ զգալի աշխատանքներ են ծավալել նոր հորմոնների քիմիական կառուցվածքների պարզաբանման ուղղությամբ: Համատեղ գիտական հետազոտություններ է կատարել արտասահմանյան մի շարք առաջատար գիտական կենտրոնների հետ:

Աշխատանքները վերաբերում են գլխուղեղի հորմոնների առաջացման և ազդեցության մեխանիզմներին: Հայտնաբերել է գլխուղեղի սպիտակու-

ցային բնույթի նոր հորմոններ, որոնք կարգավորում են սրտի և մյուս օրգանների նյութափոխանակությունն ու ֆունկցիաները: Ապացուցել է (1967), որ սիրտը ներզատիչ օրգան է, նախասրտերից անջատել է գլխուղեղի և մյուս օրգանների աշխատանքը կանոնավորող պեպտիդային բնույթի հորմոններ: Մշակել է սրտի արյան շրջանառության նյարդաներզատիչ կարգավորման տեսություն: Աշխատակիցների հետ առաջին անգամ ուղեղի նյարդաներզատային բջիջներից անջատել է ցիտոկիններ և սինթեզել: Առաջ է քաշել ուղեղի նյարդաներզատային իմունային համակարգի տեսությունը:

Նրա խորհրդատվությամբ և ղեկավարությամբ պաշտպանվել է դոկտորական 18 և թեկնածուական 60 ատենախոսություն:

Հեղինակ է 600 գիտական հոդվածի և 4 մենագրության, որոնցից են «Некоторые проблемы биохимии гипоталамической регуляции» (Է., 1965); «Biochemistry of Novel Cardioactive Hormones and Immunomodulators of the Functional System Neurosecretory Hypothalamus – Endocrin Heart, Moscow, 1999; Neurosecretory Citokines of Brain in the Molecular Mechanisms of Immune Response and Neuronal Survival» (2003) և համահեղինակ է «Կենսաքիմիական տերմինների ռուս-հայերեն բառարան»-ի (Եր., 1997):

Եղել է «Նեյրոքիմիա» (ռուս.) ամսագրի գլխավոր խմբագիր (1981 թ.-ից), ՀՀ կենսաքիմիկոսների ընկերության նախագահ (1981 թ.-ից), «Նեյրոքեմիքսը դիսըրջ» (անգլ. ԱՄՆ) ամսագրի խմբագրական խորհրդի (1983), Ուղեղի ուսումնասիրության միջազգային կազմակերպության (1974 թ.-ից), Նյու Յորքի ԳԱ (1985), Գիտությունների միջազգային ակադեմիայի (1996), ՌԳԱ Ա. Ն. Բախի անվ. կենսաքիմիայի ինստիտուտի արտասահմանյան Պատվավոր (1997) անդամ: Պարգևատրվել է ՀՀ Անանիա Շիրակացու (2003), ԵՊԲՀ ոսկե (2004) մեդալներով:



ԿԱԼՍՅԱՆ ԱԼԵՔՍԵՅ ՇՄԱՎՈՆԻ (14.09.1928, գ. Քարահունջ (Սյունիքի մարզ) - 05.08.1987, Երևան), ագրոքիմիկոս: Կենսբ. գիտ. դոկ. (1970):

Ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը (1950): 1961-1987 թթ. եղել է ՀԽՍՀ գյուղատնտեսության նախարարության հողագիտության և ագրոքիմիայի ԳՀԻ հողերի կենսաքիմիայի բաժնի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են հողերի ֆերմենտների, բույսերի ազոտային և ֆոսֆորային սննդառության հարցերին: Բացահայտել է ՀՀ հողերի կենսաբանական առանձնահատկությունները պայմանավորող մի շարք օրինաչափություններ և առաջարկել հողերի ֆերմենտային ակտիվության որոշման եղանակներ:

Հեղինակ է գիտական հոդվածների և հետևյալ մենագրությունների՝ «Распределение азота и фосфора в холопчатнике» (Ե., 1955); «Ферментативная активность почв Армении» (Ե., 1974):



ՎԱՍԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ ՀԱՅՎԱՐԱՄԻ

(05.11.1949, գ. Ձորագյուղ, Գեղարքունիքի մարզ), ագրոքիմիկոս-հողագետ: Գլտ. գիտ. դոկ. (2007), պրոֆ. (2013):

Ավարտել է ՀԳԻ-ն (1971) և Բարձրագույն կուսակցական դպրոցը (1987): 1971-1973 թթ. աշխատել է ՀՀ Մարտունիի շրջանում գյուղատնտես, 1973-1985 թթ.՝ ՀԼԿԵՄ ՀԿԿ Մարտունիի շրջկոմի քարտուղար, 1985-1989 թթ.՝ շրջգործկոմի նախագահ, 2000-2003 թթ.՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սպասարկումների բաժնի պետ, միաժամանակ՝ ՀԱԱՀ դասախոս, 2008-2019 թթ. ագրոէկոլոգիայի ամբիոնի վարիչ և 2008 թ.-ից էկոլոգիայի ու օրգանական գյուղատնտեսության հետազոտական կենտրոնի տնօրեն, 2019 թ.-ից անտառագիտության և ագրոէկոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր: Համահեղինակ է «ՀՀ կենսաբազմազանության և բնության հատուկ պահպանվող տարածքներ» (Եր., 2009), «Բնապահպանության հիմունքներ» (Եր., 2010), «ՀՀ բնական ռեսուրսներ» (Եր., 2013) ուսումնական ձեռնարկների և սիսեռի՝ «Արփի» և ոսպի՝ «Համիդ» տեսակների ստեղծմանը, հեղինակ է «Աշնանացան ցորենի և կարտոֆիլի պարարտացման արդյունավետությունը Սևանի ավազանի պայմաններում», (Եր., 2007) գրքի:

Աշխատանքները վերաբերում են բույսերի սննդառության, շրջանառության և միջշրջանառության, բնօգտագործման, օրգանական գյուղատնտեսության հիմնախնդիրներին, տեխնաձին աղտոտված տարածքից էկոլոգիապես անվտանգ սննդամթերքի ստացմանը:

Պարգևատրվել է ՌԴ Լոմոնոսովի անվան մեդալով (2009):



ԳԱՅՐԱԿՅԱՆ (ՁԵՅԹՈՒՆՑ) ԴԱՆԻԵԼ ՍԵՂՐԱԿԻ
(01.02.1929, Բաղդադ – 27.11.2004, Երևան), քիմիկոս:
Քիմ. գիտ. դոկ. (1989), պրոֆ. (1990)

Դպրոցական կրթությունը ստացել է Բաղդադում, 1947 թ. ընտանիքը ներգաղթել է Խորհրդային Հայաստան և բնակություն հաստատել Երևանում: 1953 թ. ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, 1961 թ.՝ ասպիրանտուրան: 1965 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1968 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1953-1958 թթ. եղել է ՀԽՍՀ գյուղնախարարության հողագիտության և ագրոքիմիայի ԳՀԻ կրտսեր գիտաշխատող: 1961 թ.-ից մինչև կյանքի վերջն աշխատել է ԵՊՀ վերլուծական քիմիայի ամբիոնում:

Զբաղվել է ՀՀ-ի հողերում շարժուն այլումինի քանակի և աղուտներում ծարիրե էլեկտրոդով pH-ի որոշման հարցերով, մի շարք հազվագյուտ տարրերի քրոմատոգրական ուսումնասիրությամբ՝ կիրառելով քրոմատոգրության իոնափոխանակային, նրբաշերտ, թղթե- և էլեկտրաքրոմատոգրության եղանակներ, ինչպես նաև հազվագյուտ տարրերի քրոմատոգրության և դրա պատրաստուկային տարբերակների ուսումնասիրությամբ՝ որպես կլանիչ-կրող կիրառելով ՀՀ ոչ մետաղային հանքերի փոշիներ:

Հեղինակ է ավելի քան 200 գիտական հոդվածի և «Անալիզի քրոմատոգրաֆիական եղանակներ» (Եր., 1983) ուսումնական ձեռնարկի: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 10 ատենախոսություն:

Հեղինակել է «Իմ անուշ Ձեյթուն» և «Իմ հերոս Ձեյթուն» պոեմները, ինչպես նաև արձակ ու չափածո այլ ստեղծագործություններ: Եղել է «Ձեյթուն» հայրենակցական, բարեգործական, մշակութային միության հիմնադիր-նախագահ (1991):

Նրա անունով է կոչվում Երևանի թիվ 152 մանկապարտեզը:



ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ՄԱՐՏԻՐՈՍԻ
(02(15).05.1908, Վան - 02.11.1994, Երևան), ճարտարագետ-քիմիկոս: Տեխ. գիտ. դոկ. (1964), պրոֆ. (1965), ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1967), ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ (1970):

Ավարտել է ԵՊԻ-ն (1936): Աշխատել է Երևանի սինթետիկ կաուչուկի գործարանի տեխնիկական բաժնի պետ, ապա գլխավոր ճարտարագետ (1936-1949), ՀՀ ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն (1949-1966), ԵՊԻ ռեկտոր (1966-1980), 1980-1988 թթ.՝ քիմիական տեխնոլոգիայի պրոցեսների և ապարատների ամբիոնի վարիչ: Աշխատանքները վերաբերում են երկֆազ հոսքերի հիդրոդինամիկայի, ինչպես նաև պնևմափոխադրման հարցերին: Նրա մշակած «Աղաթթվի ստացման ադիաբատ եղանակը» ներդրվել և գրականության մեջ հայտնի է որպես «Գասպարյանի եղանակ» (ԽՍՀՄ Ստալինյան մրցանակ, 1946): Մշակել է երկվինիլացետիլների և ացետիլենի պոլիմերման արգասիքներից բարձրարժեք էթինոլային լաքի ստացման տեխնոլոգիան (Ա. Գասպարյան, Է. Տեր-Ղազարյան, Կ. Կոստանտինով): Եղել է ՀԽՍՀ ԳԻՆ նախագահ (1972-1975) և պատգամավոր (1967-1980), մասնագիտական և գիտական խորհուրդների անդամ և նախագահ:



ԳԱՍՊԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ ՊԱՐՈՒՅՐԻ (02.03.1963, Երևան), կենսաքիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2018):

1979 թ. ընդունվել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետ: 1984 թ. ավարտելով ուսումը՝ աշխատանքի է անցել Ա. Լ. Մնջոյանի անվան ՆՕՔԻ հակաբիոտիկների լաբորատորիայում որպես ավագ լաբորանտ, այնուհետև կրտսեր գիտաշխատող, գիտաշխատող: 2008թ.-ից աշխատել է ՕԴՔԳՏԿ-ի ՆՕՔԻ-ի հակաբիոտիկների սինթեզի լաբորատորիայի վարիչի պաշտոնակատար, իսկ 2011թ.-ից՝ վարիչ: Աշխատանքների հիմնական ուղղվածությունները արտացոլված են թեկնածուական (1999)՝ «Բնական հակաուռուցքային հակաբիոտիկ սարկոմիցինի նոր ածանցյալների սինթեզը և հատկությունները» և դոկտորական՝ «Հետազոտություններ 2-արիլ- և 2-հետերիլպիրոլիդինների քիմիական փոխարկումների և կենսաբանական հատկությունների ուսումնասիրման բնագավառում» ատենախոսություններում:



ԳՅՈՒԼՔՈՒԴԱՂՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ ՎԱՂԱՐՇԱԿԻ

(23.07.1912, գ. Կողբ, Սուրմալուի գավառ – 15.05.2003, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1973), պրոֆ. (1974):

1917 թ. ընտանիքը գաղթել է Երևան, ապա վերաբնակվել ներկայիս ՀՀ Արմավիրի մարզի Մեծ Շահրիար (այժմ՝ Նալբանդյան) գյուղում: 1930 թ. ավարտել է Երևանի թիվ 2 միջնակարգ դպրոցը և շուրջ չորս տարի աշխատել շրջանային թերթի պատասխանատու քարտուղար: 1939 թ. ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը և որպես ասպիրանտ գործուղվել ԽՍՀՄ Զելինսկու անվան օրգանական քիմիայի ինստիտուտ (Մոսկվա): Սակայն ուսումն ընդհատվել է և 1939-1945 թթ. մասնակցել է Երկրորդ համաշխարհային պատերազմին: 1945 թ. զորացրվելուց հետո աշխատել է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում որպես ասիստենտ, դասախոս, պրոֆեսոր: 1951 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

Աշխատանքները նվիրված են պարաալկոքսի բենզոլյական թթվի էսթերների սինթեզին և դրանց հետագա փոխարկումներին (Ա. Լ. Մնջոյանի հետ), որոնք մասամբ հիմք դարձան հետագայում ՀԽՍՀ ԳԱ ՆՕՔԻ-ում ներդրված «Գանգլերոն» և «Քվատերոն» դեղամիջոցների սինթեզի համար: Իրականացրել է խինոլինային շարքի բնական միացությունների և արդեն կիրառություն գտած սինթետիկ դեղամիջոցների կառուցվածքում համապատասխան թթվածին, ազոտ, ծծումբ պարունակող բազմաթիվ տարացիկլային միացությունների սինթեզ, մշակել տարացիկլային միացությունների և դրանց բազմաթիվ ածանցյալների ստացման մատչելի եղանակներ:

Հեղինակ է շուրջ 200 գիտական աշխատության, 30 հեղինակային իրավունքի, ինչպես նաև «Քիմիայի հրաշալիքներ» (Եր., 1955), «Հրաշալի նյութեր» (Եր., 1965) գիտահանրամատչելի գրքերի և «Օրգանական քիմիայի պրակտիկում» (Եր., 1961, 1974, 1984) ուսումնական ձեռնարկի: Պարգևատրվել է Հայրենական պատերազմի II աստիճանի, Կարմիր աստղի, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով ու մեդալներով, ԵՊՀ շնորհակալագրերով և պատվոգրերով:



ԳՅՈՒԼՋԱԴՅԱՆ ԱԶԱՏ ԱՐԱՄԱՅԻՍԻ (1930, Դիլիջան – 2006, Երևան), քիմիկոս-տեխնոլոգ: Տեխ. գիտ. թեկ. (1967), պրոֆ. (1987), ՀՀ վաստակավոր ճարտարագետ (1983):

1948 թ. ավարտել է Դիլիջանի №1 միջնակարգ դպրոցը և ընդունվել ԵՊԻ շինարարական ֆակուլտետը, ապա տեղափոխվել քիմիատեխնոլոգիական ֆակուլտետ, որն ավարտել է 1953 թ. և նշանակվել աշխատանքի նույն ֆակուլտետի ՀՕՆՍՏ ամբիոնում որպես լաբորանտ, իսկ 1954 թ.՝ ասիստենտ: 1961 թ. մրցույթով ընտրվել է ավագ դասախոս և դասավանդել «Ընդհանուր քիմիա» պոլիտեխնիկի բոլոր ֆակուլտետներում: Երեք տարի հետո ընտրվել է ինստիտուտի միացյալ արհկոմիտեի նախագահ, 1967 թ. դարձել գիտությունների թեկնածու, 1969 թ.՝ դոցենտ: 1969 թ.-ից աշխատել է որպես ԵՊԻ ընդհանուր և անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, իսկ 1972-1988 թթ.՝ նաև ֆակուլտետի դեկան, կատարելով մեծ դեր՝ կադրերի համալրման, համերաշխ կոլեկտիվի ստեղծման, գիտարտադրական կապերի զարգացման, ուսումնական աշխատանքների կազմակերպման գործընթացներում: Հրապարակել է 100-ից ավելի գիտական աշխատություն: Պարգևատրվել է Պատվո նշան շքանշանով (1976), ՀՀ ԿԳՆ ոսկե հուշամեդալով (2003):



ԳՅՈՒԼՄԻՍԱՐՅԱՆ ԹԵՆԳԻՉ ԳՐԻԳՈՐԻ (03.08.1935, Թիֆլիս), նավթի և գազի վերամշակման բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դոկ. (1982), պրոֆ. (1987):

Ավարտել է Մոսկվայի նավթաքիմիայի և գազի արդյունաբերության ինստիտուտը (1961): 1961-1970 թթ. աշխատել է Անվադողերի արդյունաբերության ԳՀԻ-ում (Մոսկվա), 1970-1973 թթ. և 1982 թ.-ից՝ Մոսկվայի նավթի և գազի ինստիտուտում, 1973-1976 թթ.՝ Ալժիրի նավթի և գազի ազգային ինստիտուտի ամբիոնի վարիչ, 1987-1990 թթ.՝ այդ ինստիտուտի խորհրդային մասնագետների ղեկավար:

Աշխատանքները վերաբերում են տեխնիկական ածխածնի ստացման, արտադրության մեջ նավթի և կոքսաքիմիական հումքի կիրառման գիտական հիմունքների մշակմանը:

Հեղինակ է բուսական դասագրքերի՝ «Сырье для производства углеродных печных саж» (Մ., 1975) (համահեղինակ); «Технология технического удлерада» (Մ., 1979); «Основы сажеобразования» (Մ., 1997):

ԳՅՈՒԼՅԱՆ ՄԻՀՐԱՆ (1930, Ուփհոքն (ԱՄՆ)), կենսաքիմիկոս:

Ավարտել է Հարավային Կալիֆոռնիայի համալսարանը: Աշխատել է առողջապահության բնագավառում, պաշտոնավարել աֆրիկյան երկրներում, համագործակցել Ա. Շվեյցերի հետ: Չիկագոյի համալսարանում դասավանդել է ներքին հիվանդություններ և արյունաբանություն: 1967 թ. Ա. Քորնբերգի և Ռ. Սինշեյմերի հետ ստացել է դեզօքսիդիբոնուկլենիաթթու (ԴՆԹ):



ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԱ ԽԱԺԱԿԻ (30.12.1946, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1997):

Ավարտել է Երևանի թ. 19 դպրոցը (1964), ԵՊՀ-ն (1969): Նույն թվականից աշխատել է ՀՀ ԳԱԱ ՕՔԻ-ում, 1999-2002 թթ.՝ փոխտնօրեն, 2002-2003 թթ.՝ տնօրեն, 2003-2008 թթ.՝ գիտքարտուղար, 2008 թ.-ից՝ ՕԴՔԳՏԿ-ի գիտքարտուղար և N7 ազոտ օրգանական միացությունների լաբորատորիայի վարիչ: Աշխատանքները վերաբերում են ամոնիումային համակարգերի փոխարկումներին, մասնավորապես հալոգենացման և ապահիդրոհալոգենացման ռեակցիաներին: Ստացել է մեղմ բրոմացնող ազենտներ, սինթեզել հակավիրուսային ակտիվությամբ օժտված միացություններ:

Եղել է մասնագիտական, գիտական և խմբագրական խորհուրդների անդամ:

Հեղինակ է 150 գիտական աշխատության (հոդվածներ, հեղինակային վկայականներ, զեկուցումների թեզիսներ): Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 2 ատենախոսություն:

Արժանացել է ՀՀ ԳԱԱ գովեստագրերի:

Կինը՝ Տատյանա Սահակյանը և դուստրը՝ Շուշանիկ Գյուլնազարյանը քիմ. գիտ. թեկնածուներ են:




ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ ԼԵՎՈՆԻ (15.03.1939, գ. Ազնավույ, Իրանի Փերիայի գավառ), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1990), պրոֆ. (2006):

1946 թ. ներգաղթել են Խորհրդային Հայաստան, 1956 թ. ավարտել է ՀԽՍՀ Արտաշատի շրջանի (այժմ՝ ՀՀ Արարատի մարզ) Մխչյան գյուղի միջնակարգ դպրոցը, 1961 թ.՝ ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը, 1965 թ.՝ Երևանի քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան: 1971 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1973 թ. նրան շնորհվել է ավագ գիտաշխատողի կոչում: 1961-1963 թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի, 1963-1994 թթ.՝ քիմիական ֆիզիկայի ինստիտուտներում: 1994-2017 թթ. դասավանդել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում:

Հիմնականում զբաղվել է «պինդ մարմին-գազ» ֆազերի սահմանին ընթացող բարդ ռեակցիաների կինետիկայի և մեխանիզմի հետազոտմամբ: Ուսումնասիրել է մի շարք տարասեռ ռեակցիաների մեխանիզմներ, բացահայտել ջրածնի պերօքսիդի տարասեռ քայքայման ռադիկալային մեխանիզմը և ցույց տվել, որ ածխաջրածինների օքսիդացումը պինդ մարմնի մակերևույթին շղթայական մեխանիզմով կարող է ընթանալ նաև ցածր ջերմաստիճաններում: Բյուրեղային նյութերի (աղեր, օքսիդներ) և գերօքսիդների գոլորշիների փոխազդեցությամբ ստացել է նոր միացություններ:

Հեղինակ է ավելի քան 80 աշխատության և մի քանի գյուտի: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 7 ատենախոսություն: 1970 թ. պարգևատրվել է «Մարտական արիության համար» մեդալով:

2018 թ.-ից բնակվում է ԱՄՆ-ում:



ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ (ՀՐԱՆՏ) ՀԱՄԱՋԱՍՊԻ (12.08.1931, Երևան – 21.12.2017, Չեռնոգոլովկա), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2000):

Ավարտել է ԵՊՀ-ն (1954): 1953-1995 թթ. աշխատել է ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնում, 1967-1987 թթ., միաժամանակ՝ Հայկական հանրագիտարանի խմբագրությունում, 1995 թ.-ից՝ ՌԳԱ քիմիական ֆիզիկայի հիմնախնդիրների ինստիտուտում (Չեռնոգոլովկա):

Առաջինն է սինթեզել և հետազոտել նիոբիումի հալկոգենիդները, մշակել և իրականացրել ցածրջերմաստիճանային պլազմայում դժվարահալ բարդ օքսիդների սինթեզի եղանակ: Մշակել է հազվագյուտ տարրերի միկրոգրամային և նանոգրամային քանակների, ինչպես նաև թունաքիմիկատների քանակական որոշման, կավահողի արտադրական մեծածավալ լուծույթների գունազրկման եղանակներ:

Եղբայրը՝ Ռուդոլֆ Համազասպի Գրիգորյանը, քիմիկոս է, տեխ. գիտ. դոկտոր: Աշխատում է ՈԳԱ քիմիական ֆիզիկայի հիմնախնդիրների ինստիտուտում (Չեռնոգոլովկա):



ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԻՆԵ ՌԱՖԱՅԵԼԻ (28.03.1958, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2010), պրոֆ. (2016):

1975 թ. ավարտել է թիվ 67 միջնակարգ դպրոցը, 1984 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: 1991 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 2004 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1976 թ.-ից աշխատել է ԵՊՀ ֆիզիկական և կոլոիդների քիմիայի ամբիոնում որպես պրեպարատոր, 1981 թ.-ից՝ լաբորանտ, 1988 թ.-ից՝ ավագ լաբորանտ, 2001 թ.-ից՝ ասիստենտ, 2004 թ.-ից՝ դոցենտ, 2015 թ.-ից՝ պրոֆեսոր: 2009 թ.-ից համատեղությամբ եղել է ԵՊՀ քիմիական և կենսաբանական համակարգերի ֆիզիկաքիմիական հետազոտությունների լաբորատորիայի գիտաշխատող, 2013 թ.-ից՝ ավագ գիտաշխատող:

Աշխատանքները վերաբերում են կենսաբանական համակարգերի (ԴՆԹ-սպիտակուցներ, լիպոսոմներ) բարեփոխման և տարբեր բնույթի լիզանդների հետ փոխազդեցությունների ուսումնասիրություններին:

Հեղինակ է գիտական 82 հոդվածի, 3 արտոնագրի, ուսումնական 2 ձեռնարկի, մեթոդական 6 աշխատանքի: Մի քանի գիտական և մասնագիտական խորհուրդների անդամ է:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 2 ատենախոսություն:

Պարգևատրվել է պատվոգրերով, շնորհակալագրերով և ԵՊՀ ոսկե հուշամեդալով (2018):



ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՎԱՂԱՐՇԱԿԻ (12.04.1934, գ. Բասարգեչար (այժմ՝ ք. Վարդենիս՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում) – 26.12.2016, ԱՄՆ), երկրաբան, երկրաքիմիկոս: Երկրաբանահանքաբանական, գիտ. դոկ. (1971), պրոֆ. (1976), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1990):

Ավարտել է Մոսկվայի գունավոր մետաղների և ոսկու ինստիտուտը (1958): 1966-1975 թթ. եղել է Մոսկվայի Հազվագյուտ և ցրված տարրերի հանքաբանության, երկրաքիմիայի և բյուրեղաքիմիայի ԳՀԻ-ի բաժնի վարիչ, 1975-1986 թթ.՝ փոխտնօրեն: 1987-1992 թթ.՝ ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն: 1993-1999 թթ.՝ Արտասահմանյան երկրների երկրաբանության ինստիտուտի փոխտնօրեն (Մոսկվա), 1999 թ.-ից՝ ՀՀ ԳԱԱ երկրի մասին գիտությունների պրոբլեմային խորհրդի նախագահ: Գիտական 2 հայտնագործության (1979, 1994) հեղինակ է: Հանքային մարմնի շուրջ քիմիական տարրերի որոշակի գոտիականությամբ բաշխվածության վրա հիմնված հանքավայրերի որոնման նրա եղանակներն ունեն համաշխարհային կիրառություն:

Աշխատանքները վերաբերում են շահագործվող հանքավայրերի խորքային հորիզոններում թաքնված հանքամարմինների հայտնաբերմանը և բնապահպանական գնահատմանը:

Կիրառական երկրաքիմիայի միջազգային (ԱՊՀ) ընկերակցության նախագահ (1993), երկրաքիմիայի և տիեզերաքիմիայի միջազգային ընկերակցության գործադիր կոմիտեի (1982-1992), ՌԴ բնական ԳԱ (1990) անդամ: Ստացել է «Ընդերքի պատվավոր հետախույզ» (1984) կոչումը:

Հեղինակ է «Геохимические методы поисков рудных месторождений» (Մ., 1981) (համահեղինակ); «Геохимические методы при поисках скрытого оруденения» (Մ., 1982); «Рудничная геохимия» (Մ., 1992) գրքերի:



ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԿՈՍՏԱՆԴԻ (17.07.1938, գ. Հաթերք, Արցախի Հանրապետություն), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1986), պրոֆ. (1987):

1954 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1959 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, 1964 թ.՝ ասպիրանտուրան: 1966 թ. պաշտպանել է թեկնածուական ատե-

նախոսություն և 1967 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1959 թ.՝ 5-րդ կուրսում, եղել է ԵՊՀ ֆիզիկական քիմիայի ամբիոնի լաբորանտ, 1960-1961 թթ. «Կանազի» կենտրոնական լաբորատորիայի ճարտարագետ, գործարանի տեխնիկական բաժնի պետ, 1964-1967 թթ.՝ ԵՊՀ ֆիզիկական քիմիայի ամբիոնի ասիստենտ, 1967-1972 թթ.՝ ավագ դասախոս, 1967-1969 թթ.՝ ֆակուլտետի դեկանի տեղակալ, 1972-1987 թթ.՝ դոցենտ, 1987-1989 թթ. պրոֆեսոր, 1989-2007 թթ.՝ ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, 2005-2014 թթ.՝ «Անօրգանական նյութերի սինթեզ և հետազոտություն» ԳՀ բազային լաբորատորիայի ղեկավար, 2014 թ.-ից՝ նույն լաբորատորիայի ավագ գիտաշխատող:

Հեղինակ է ավելի քան 250 գիտական աշխատության՝ նվիրված ջրային լուծույթներում հիդրոպերօքսիդների հետ ամինամիացությունների ու մետաղիոնների փոխազդեցություններին, քլորոպրենային պոլիմերների և լատեքսների կայունացման ու կիրառական խնդիրներին: Հեղինակ է «Ֆիզիկական և կոլոիդային քիմիա» (Եր., 1983), «Ընդհանուր քիմիա» (Եր., 2002) դասագրքերի, համահեղինակ՝ «Հայկական քիմիական անվանակարգության բարեփոխման հիմնախնդիրը» մենագրության (Եր., 1998) և «Ընդհանուր քիմիայի պրակտիկում» (Եր., 2003, 2007) ուսումնական ձեռնարկի, «ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի պատմությունը (1919-2019)» (Եր., 2019) գրքի:

Եղել է գիտական և մասնագիտական խորհուրդների անդամ, 1994-1999 թթ.՝ ԵՊՀ-ում գործող անօրգանական քիմիայի մասնագիտական խորհրդի նախագահ, քիմիայի ֆակուլտետի կուրսարտուղար, ՌԻԳԸ գիտական ղեկավար, համալսարանի ժողովրահակողության նախագահի տեղակալ, «Ղարաբաղ» կոմիտեի նախագահության անդամ, ՀՀ ՃԱ անդամ (1999 թ.):

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 7 ատենախոսություն:

Պարգևատրվել է ԽՍՀՄ պաշտպանության նախարարության (1984) և ԵՊՀ (1994) մեդալներով ու պատվոգրերով:

Տղան՝ Գևորգ Գրիգորյանը քիմ. գիտ. թեկնածու է:



ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՏԵՓԱՆ ԳՐԻԳՈՐԻ (20.09.1947, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1988):

Ավարտել է Երևանի թիվ 55 դպրոցը (1965), այնուհետև ԵՊԻ քիմիատեխնոլոգիական ֆակուլտետը (1970) և ընդունվել ՀՀ ԳԱ ՕՔԻ-ի ասպիրանտուրան: 1975 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ: Աշխատել է ՕՔԻ-ում որպես կրտսեր (1974-1978), ապա ավագ (1978-1980)

գիտաշխատող, Երևանի համամիութենական քիմիական ռեակտիվների ինստիտուտում լաբորատորիայի վարիչ (1980-1992): 1992-1996 թթ. եղել է բրիտանական «Բուկվինոս Քեմիքս» ՍՊԸ-ում գիտական և տեխնիկական գծով խորհրդատու (Լոնդոն, Մոսկվա), 1998-2001 թթ.՝ այդ ընկերության տնօրեն (Երևան), իսկ 2001-2008 թթ.՝ նույն ընկերության գիտական գծով խորհրդատու: 2008 թ.-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ ՕԴՔԳԿ որպես առաջատար գիտաշխատող:

Աշխատանքները վերաբերում են բարձրամոլեկուլային միացությունների քիմիային, կոմպոզիտների, նանոկոմպոզիտների, կլաինչների և մակերևութային ակտիվ նյութերի ստացմանը և կիրառմանը:

Մասնակցել է մի շարք միջազգային դրամաշնորհային նախագծերի իրականացմանը որպես խմբի կամ նախագծի ղեկավար:

Հեղինակ է շուրջ 120 գիտական աշխատության և 14 գյուտի:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 4 ատենախոսություն:



ԳՐԻԿՈՅԱՆ ՅՈՒՐԱ ԱՐՐԱՀԱՄԻ (1935, ք. Գուս-Խրուստալ, ՌԴ – 26.02.2019, Գուս-Խրուստալ), քիմիկոս-տեխնոլոգ: Տեխ. գիտ. դոկ. (1983), պրոֆ., ՌԴ գիտության վաստակավոր գործիչ (2002):

Ծնվել է աքսորյալ հայ ընտանիքում: Ավարտել է Գուս-Խրուստալի դպրոցը, ապա ապակու տեխնիկումը (1954) և աշխատել Գուսնի բյուրեղապակու գործարանում: Այնուհետև ծանայել է Խորհրդային բանակում և զորացրվելով վերադարձել է հայրենի բյուրեղապակու գործարան՝ աշխատելով ապակեհալորդ, հերթափոխի

պետ, ճարտարագետ տեխնոլոգ: Միաժամանակ ավարտել է ճարտարագիտաշինարարական ինստիտուտը և ասպիրանտուրան:

1964 թ.-ից աշխատել է Ապակու պետական ինստիտուտի Գուսնի մասնաճյուղում և մասնակցել կամ ղեկավարել է ապակետարայի, կարգային սպասքի, ջերմապահների (թերմոսների) և այլ արտադրանքների արտադրության յուրացումը Ռուսաստանում, Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Ղազախստանում, Թուրքմենիայում, Տաջիկստանում և Ուկրաինայում: Եղել է ինստիտուտի անփոփոխ փոխտնօրենը գիտության գծով: Դասախոսել է Վլադիմիրի պոլիտեխնիկական համալսարանում և դրա Գուստրուստայի մասնաճյուղում, ինչպես նաև հարազատ ապակու քոլեջում: Թեկնածուական և դոկտորական թեզերը պաշտպանել է Մոսկվայի Մենդելևի անվան քիմիատեխնոլոգիական ինստիտուտում:

Աշխատանքները ուղղորդված էին ապակու ֆիզիկական քիմիային և տեխնոլոգիային:

Հեղինակ է 350 գիտական հոդվածի և գյուտի, արտասահմանյան պատենտի, 15 գրքի (դասագրքեր, մենագրություններ, արտադրական և տեղեկատվական գրականություններ): Նրա աշխատանքներից շատերը թարգմանվել են օտար լեզուներով:

Եղել է Նյու Յորքի ԳԱ անդամ, Պատվավոր աշխատող (ապակու արդյունաբերության), Գուստրուստայ քաղաքի պատվավոր քաղաքացի:



ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱԼԲԵՐՏ ՎԱՉԻԿԻ (20.10.1939, գ. Վերնաշեն, Վայոց ձորի մարզ), քիմիկոս: Տեխ. գիտ. դոկ. (1991), պրոֆ. (1991):

Ավարտել է Եղեգնաձորի միջնակարգ դպրոցը (1956), ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը (1961), ընդ որում, վերջին տարին սովորել է Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգի) պետական համալսարանում:

1961 թ.-ից աշխատել է «Նաիրիտ» ԳԱՄ-ում որպես կրտսեր գիտաշխատող, 1964 թ.-ից՝ ավագ գիտաշխատող, իսկ 1977-2010 թթ.՝ հատուկ նշանակության քլորոպրենային լատեքսների և կաուչուկների ստացման տեխնոլոգիայի լաբորատորիայի վարիչ: 1967 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Լուծույթում պոլիքլորոպրենի մոլեկուլների կառուցված-

քի և հիդրոդինամիկական պարամետրերի ուսումնասիրությունը» թեմայով (Ֆիզմատ գիտությունների թեկնածու):

Աշխատանքները վերաբերում են գիտական նոր նախադրյալների ստեղծմանը՝ որակական նոր տեսակի քլորոպրենային լատեքսների և կաուչուկների ստեղծման տեխնոլոգիաների մշակմանը, փորձաարտադրական կամ մասսայական մակարդակով այդ պոլիմերների արտադրության կազմակերպմանը, ինչպես նաև դրանց հիման վրա զանազան կոմպոզիտային նյութերի ստացմանը և նպատակային կիրառմանը:

Հեղինակ է ավելի քան 200 աշխատության, այդ թվում 50-ից ավելի գյուտերի, որոնց մի մասը ներդրվել է տեխնիկայի տարբեր բնագավառներում և արտադրության մեջ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 10 ատենախոսություն:

Արժանացել է ԽՍՀՄ ժողտնտեսության նվաճումների ցուցահանդեսի ոսկե և արծաթե մեդալների և պատվոգրերի:



ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ
(25.3.1935, Ճարտար, Արցախ – 13.05.2014, Երևան), քիմիկոս : Քիմ. գիտ. դոկ. (1979), պրոֆ. (1985):

Ավարտել է ԵՊՀ-ն (1958): 1958-1961 թթ. և 1969 թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱԱ ՕՔԻ-ում, 1974 թ.-ից՝ բուրավետ նյութերի լաբորատորիայի վարիչ, 1961-1963 թթ. և 1965-1998 թթ.՝ Պոլիմերների համամիութ. («Նաիրիտին» կից)

ԳՀԻ-ում:

Աշխատանքները վերաբերում են քիմիական ռեակցիաների շարժիչ ուժի բացահայտման, գոյացող միջանկյալ մասնիկների հատկություններով դրանց ուղղության կանխատեսման հարցերին: Առաջարկել է օրգանական ռեակցիաների ընթացման ուղղության և տարածաքիմիայի առաջին ընդհանրական իոնական-զույգային գիտական վարկած: Հայտնաբերել է α -էֆեկտը 1,3- երկօքսանների վերացիկլումը պիրանային միացությունների, ստացել է մի շարք գերակտիվ կատալիզատորներ և շուրջ երկու տասնյակ բուրավետ նյութեր, որոնցից վարդի իզոօքսիդը արտադրվել է օգտագործվել է Ռուսաստանում:

Հեղինակ է բազմաթիվ հոդվածների, հեղինակային իրավունքի և մենագրությունների:

Եղել է մասնագիտական, գիտական և խմբագրական խորհուրդների անդամ: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են դոկտորական և թեկնածուական ատենաձուռություններ:



ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՅՈՒԼՆԱՐԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ
(10.04.1938, Գուսանագյուղ, Շիրակի մարզ): Քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2007):

1949 թ.-ից ընտանիքի հետ աքսորվել է Սիբիր, 1955 թ. վերադարձել Երևան: 1956 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը և ընդունվել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: 1961 թ. ավարտել է ուսումը և աշխատանքի նշանակվել ՀՀ ԳԱ ՆՕՔԻ-ում, որտեղ և աշխատում է մինչ այժմ՝ սկզբում որպես կրտսեր գիտաշխատող, ապա գիտաշխատող և ավագ գիտաշխատող: 1988-2020 թթ. եղել է ինստիտուտի արոմատիկ միացությունների լաբորատորիայի վարիչը:

1972 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ, 1979 թ. նրան շնորհվել է ավագ գիտաշխատողի կոչում:

Հեղինակ է 250 աշխատության, այդ թվում՝ 7 ակնարկային հոդվածի և 19 հեղինակային իրավունքի:

Անդամ է ՌԴ և Եվրոպական բնական ԳԱ-ների (2011), մասնագիտական և գիտական խորհուրդների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 6 ատենախոսություն:

Պարգևատրվել է գովեստագրերով և պատվոգրերով:



ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԱՐՏԱՇԵՍԻ (09.07.1947, Լենինական (Գյումրի)), կենսաքիմիկոս: Կենս. գիտ. դոկ. (1998), պրոֆ. (2001):

Ավարտել է ԵՊՀ կենսաբանության (1972) և ՄՊՀ ռադիոքիմիայի (1976) ֆակուլտետները: 1968 թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱԱ Կենսաքիմիայի ինստիտուտում, 1976 թ.-ից՝ ճառագայթաիզոտոպային եղանակների լաբորատորիայի վարիչ,

1993 թ.-ից, միաժամանակ՝ փոխտնօրեն, 2006-2012 թթ.՝ տնօրեն: 1994 թ.-ից մանկավարժական գործունեություն է ծավալել Հայկական բժշկական ինստիտուտում: Աշխատանքները վերաբերում են կենսաբանական ակտիվ նյութերի ազդեցությանը տարբեր ախտաբանական գործընթացների, հատկապես սիրտանոթային և ուղեղային ախտահարումների՝ ենթաստամոքսային գեղձի սուր բորբոքումների և երկարատև ճնշման (կրաշ) համախտանիշի ժամանակ: Նրա ղեկավարությամբ պաշտպանել են թեկնածուական 6 ատենախոսություն:

Անդամ է Ֆրանսիայի «Սակլե» միջուկային կենտրոնի գիտական խորհրդի (1976-1992), Միջազգային (1991 թ.-ից) և Եվրոպական (1995 թ.-ից) նյարդաքիմիկոսների, Ուղեղի հետազոտության միջազգային (1995 թ.-ից) ընկերությունների, Հայաստանի նյարդաքիմիկոսների ընկերության քարտուղար (1989 թ.-ից), Հայաստանի կենսաքիմիկոսների ընկերության փոխնախագահ (2002 թ.-ից):



ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԴՈԼՖ ԳՐԻԳՈՐԻ (15.06.1935, Վանաձոր – 17.04.2014, Երևան), երկրաքիմիկոս, երկրաբան: Երկրաբանահանքաբանական գիտ. դոկ. (1995), պրոֆ. (2004):

1953 թ. ավարտել է Երևանի թիվ 25 միջնակարգ դպրոցը, 1958 թ.՝ ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետը, 1964 թ.՝ ասպիրանտուրան: 1959-1961 թթ. աշխատել է ՀԽՍՀ ժողտնտխորհում և հայկական երկրաբանական վարչությունում որպես ավագ ճարտարագետ: 1965 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1966-1978 թթ. աշխատել է ԵՊԻ-ում որպես ԳՀ բաժնի գիտքարտուղար և երկրաբանության, հետախուզման տեխնիկայի ամբիոնի դոցենտ:

1967-1968 թթ. վերապատրաստվել է Ֆրայբերգի լեռնային ակադեմիայում (Գերմանիա): 1978-1993 թթ. եղել է Վ. Վերնադսկու անվան երկրաքիմիայի և անալիտիկ քիմիայի ինստիտուտի հայկական ԳՀ երկրաքիմիայի մասնաճյուղի տնօրեն, 1993 թ.՝ սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության երկրաքիմիական կենտրոնի տնօրեն, 1993-1994 թթ.՝ նույն կենտրոնի գլխավոր տնօրենի տեղակալ, 1993-1996 թթ.՝ ՀՀ արտակարգ իրավի-

ճակների վարչության միջազգային կապերի բաժնի վարիչ: 1994-2014 թթ. աշխատել է ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետում, 1997-2009 թթ. եղել է հանքաբանության, ապարաբանության և երկրաքիմիայի ամբիոնի վարիչ, 2009 թ.-ից մինչև կյանքի վերջը՝ նույն ամբիոնի պրոֆեսոր:

Հեղինակ է 170 գիտական աշխատության, մի շարք ուսումնամեթոդական ձեռնարկների ու գրքերի, այդ թվում՝ «Ընդհանուր միներալոգիայի դասընթաց (լաբորատոր աշխատանքներ)» (Եր., 1977), «Միներալոգիայի լաբորատոր աշխատանքների ձեռնարկ» (Եր., 1999), «Միներալների առաջացման պրոցեսներ» (Եր., 2002), «Հայաստանի օֆիոլիտային պալեոպլիանոյան կեղևը (Հարավային Կովկաս)» (Եր., 2002), «Միներալոգիա. բյուրեղագիտության հիմունքներով» (Եր., 2006):

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:

Եղել է գիտական և մասնագիտական խորհուրդների անդամ:



ԴԱԴԱՅԱՆ ՍԼԱՎԻԿ ԱՐՇԱԿԻ (20.01.1955, գ. Գիշի, Արցախի Հանրապետություն), կենսաօրգանիկ: Քիմ. գիտ. դոկ. (2016):

1972 թ. ավարտել է Գիշիի միջնակարգ դպրոցը: 1973-1978 թթ. սովորել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում: 1978 թ.-ից աշխատել է Կիրովականի (Վանաձորի) «Պոլիմերային սոսինձների ԳՀԻ»-ում, 1987-2001 թթ. Սպիտակի շրջանի Ղուրսալի գյուղում՝ որպես դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն: 2001 թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ում, նախ որպես «Ոչ սպիտակուցային ամաինթթուների ասիմետրիկ սինթեզ»-ի լաբորատորիայի վարիչ, իսկ 2017 թ.-ից՝ «Հալենային և նորհալենային դեղապատրաստուկներ»-ի լաբորատորիայի վարիչ: 2006 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 2013 թ. ստացել է դոցենտի կոչում: 2007 թ.-ից համատեղության կարգով աշխատում է ԵՊՀ ֆարմացիա ինստիտուտի դեղերի տեխնոլոգիայի ամբիոնում:

Գիտական հիմնական ուղղություններն են՝ բարձր ակտիվությամբ որոշ հալենային և նոր հալենային պատրաստուկների ստացում և հետազոտում, բուսական հումքի բուսաքիմիական բնութագրում՝ դրանցում կենսաբանորեն ակտիվ միացությունների բացահայտման, տարանջատման և քանակական

գնահատման համար, դեղաբուսային հումքերից անջատված առավել ակտիվ դեղապատրաստուկների արտադրական տեխնոլոգիաների մշակում, նմուշների ստացում, հավաստագրում, բուսապատրաստուկների արտադրության մշակված տեխնոլոգիաների ներդրում և համապատասխան հալենային պատրաստուկների թողարկում:

Հեղինակ է ավելի քան 75 գիտական հոդվածի: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

Դուստրը՝ Անի Դադայանը, քիմ. գիտ. թեկնածու է:



ԴԱՄԱԴՅԱՆ (ՏԱՄԱՏՅԱՆ) ՌԵՅՄՈՆ (1936, Նյու Յորք), կենսաքիմիկոս, քաղցկեղագետ:

1951 թ. ընդունվել է քոլեջ, ստացել մաթեմատիկոսի դիպլոմ: Ստացել է բժշկական կրթություն, արժանացել պատվավոր դոկտորի աստիճանի: Այնուհետև ուսանել է Հարվարդի համալսարանի կենսաքիմիայի ֆակուլտետում, 1967 թ.-ից Նյու Յորքի համալսարանում դասավանդել է կենսաքիմա և օրգանական քիմիա: 1973 թ.

գիտության մեջ ներդրել է քաղցկեղը որոշող էլեկտրասարք, որի վրա աշխատել է 10 տարուց ավելին, որը մեծ հռչակ է բերել հեղինակին:



ԴԱՆԱԳՈՒԼՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՀՐԱԶԻ (10.03.1951, ք. Գավառ), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2000), պրոֆ. (2014), ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ (2010):

Ավարտել է Երևանի թիվ 20 դպրոցը (1968) և ընդունվել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, որն ավարտել է 1973 թ. և ընդունվել Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետհամալսարանի քիմիայի ֆակուլտետի ասպիրանտուրան, որտեղ էլ 1978 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը: 1977-1982 թթ. աշխատել է Ա. Մնջոյանի անվան ՆՕՔԻ-ում, 1982-2000 թթ.՝ Երևանի տնտեսագիտական ինստիտուտում՝ ավագ գիտաշխատող, օրգանական քիմիայի լաբորատորիայի վարիչ, գիտական թեմայի ղեկավար: 2001 թ.-ից աշխատում է ՕՔԻ ազոտ պարունակող տարացիկլային միացությունների լաբորատորիայի վարիչ: 2006 թ.-ից գիտական աշխատանքը զուգորդում է

դասախոսական աշխատանքի հետ՝ զբաղեցնելով պրոֆեսորի պաշտոն Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում և միաժամանակ ղեկավարելով համալսարանի կենսաբժշկության և դեղագործության ինստիտուտի տարացիկլային միացությունների սինթեզի և հետազոտման ԳՀ լաբորատորիան:

Աշխատանքները վերաբերում են ազոտային տարաարմատիկ համակարգերի միջդասային փոխարկումներին, որոնք հնարավորություն են տալիս հիմնովին վերակառուցել մոլեկուլի կմախքը: Հայտնաբերվել են պիրիմիդինների նոր ռեակցիաներ՝ «ամինային փոխանակմամբ ընթացող ենամինային վերախմբավորում»: Հետազոտությունների ուղղություններից է ազոտ պարունակող կենսաակտիվ տարացիկլային միացությունների սինթեզը և դրանց կենսաբանական ակտիվության ուսումնասիրումը: Սինթեզված բազմաթիվ միացություններ ցուցաբերել են հակավիրուսային, հակաքաղցկեղային, միզամուղ, հակաբորբոքային, հակասնկային, հակաօքսիդիչ հատկություններ:

Հեղինակ է շուրջ 300 գիտական աշխատության, զեկուցներով մասնակցել է 40 միջազգային գիտաժողովների, որպես հրավիրված պրոֆեսոր դասախոսություններ է կարդացել արտասահմանյան մի շարք երկրների բուհերում: Ղեկավարել է 11 միջազգային դրամաշնորհային ծրագրեր և համագործակցել միջազգային մեծ ճանաչում ունեցող գիտնականների հետ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 7 ատենախոսություն:

Անդամ է տարբեր խմբագրական, գիտական և մասնագիտական խորհուրդների, ՀՀ պետական մրցանակների հանձնախմբի: 2009 թ.-ից Հայկական քիմիական ընկերության գործադիր տնօրենն է:

2014 թ. պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով, 2010 թ. տարացիկլային միացությունների քիմիայի բնագավառում մեծ նվաճումների և ներդրման համար ՌԴ Մենդելեևյան ընկերության դիպլոմի, Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետհամալսարանի կողմից արժանացել է դիպլոմի և «Ոսկե նշանի», իսկ 2015 թ. «Գիտական համագործակցություն» միջազգային գիտական հիմնադրամի կողմից պարգևատրվել է ոսկե մեդալով:

Վրաստանի պրոֆեսիոնալ քիմիկոսների ընկերության պատվավոր անդամ է, Հայ-ռուսական համալսարանի վաստակավոր պրոֆեսոր:



ՊԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՇԵ ՀԱԿՈՔԻ (23.04.1929, Բուխարեստ, Ռումինիա – 30.04.1994, Երևան), քիմիկոս-տեխնոլոգ: Քիմ. գիտ. դոկ. (1985), պրոֆ. (1987): Ռ. Վ. Եղոյանի ամուսինը:

Բուխարեստում ավարտել է հայ համայնքի հայկական յոթնամյա դպրոցը, ապա շարունակել ուսումը Բուխարեստի ֆրանսիական լիցեյում: 1948 թ. նրա ընտանիքը հայրենադարձվել է Խորհրդային Հայաստան: 1949 թ. ընդունվել է ԵՊԻ քիմիատեխնոլոգիական ֆակուլտետը, որը ավարտելով ստացել է էլեկտրաքիմիկոսի մասնագիտություն: 1954 թ. գործուղվել է Բաշկիրիայի ԻԽՍՀ Ուֆայի քիմիական կոմբինատ և աշխատել որպես հերթափոխի ճարտարագետ: 1956 թ. վերադարձել է ՀՀ և մինչև 1959 թ. աշխատել Վանաձորի քիմիական կոմբինատում որպես հերթափոխի պետ, ապա արտադրամասի պետ: ԳՀ գործունեությունը սկսել է 1959 թ.-ից՝ աշխատելով «Նաիրիտ»-ի «Վնիպոլիմեր» ԳՀ մասնաճյուղում որպես ավագ գիտաշխատող, մասնակցելով քլորապրենային կաուչուկի ֆիզիկաքիմիական հետազոտությունների լաբորատորիայի ստեղծմանը: Այնուհետև տեղափոխվել է ՀՀ ԳԱ ՕՔԻ, որտեղ աշխատել է որպես ավագ գիտաշխատող, ապա՝ ֆիզիկաքիմիական լաբորատորիայի վարիչ: 1970 թ. տեղափոխվել է Ս. Մերգելյանի կողմից Գորիսում ստեղծած ԳԱ ֆիզիկատեխնիկական կենտրոն և ղեկավարել լաբորատորիաներից մեկը: Նա նաև դասավանդել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում: 1980-1994 թթ. եղել է ԵՊԻ ռետինի և պլստմասանների վերամշակման տեխնալոգիայի ամբիոնի վարիչ: Գիտական աշխատանքները հիմնականում վերաբերում են պոլիմերների ֆիզիկաքիմիայի բնագավառին, հանդիսանում է ՀՀ-ում քիմիական գիտության մեջ նոր ուղղության հիմնադիր: Հեղինակ է 70-ից ավելի գիտական աշխատության և ուսումնական ձեռնարկների: Եղել է գիտական, մասնագիտական և այլ խորհուրդների ու հանձնաժողովների անդամ, ԵՊԻ քիմիական ընկերության նախագահ:

Պարգևատրվել է ԽՍՀՄ գյուտարար մեդալով:



ԴԱՆՂՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ ՏԻԳՐԱՆԻ (15.11.1907, գ. Ձորաղբյուր, Կոտայքի մարզ – 11.07.1984, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1949), պրոֆ. (1950), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1965):

1930 թ. Երևանում ավարտել է դպրոցը և երկու տարի զբաղվել ուսուցչական աշխատանքով: 1936 թ. ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, ընդունվել ասպիրանտուրա և երկու տարի անց պաշտպանել թեկնածուական ատենախոսություն պրոֆ. Ա. Մնջոյանի ղեկավարությամբ:

1952-1979 թթ. գլխավորել է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնը, իսկ 1953-1961 և 1967-1973 թթ. եղել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկան:

Աշխատանքները վերաբերում են երկցիաներկամիդների նոր ռեակցիաների ուսումնասիրմանը, բազմաֆունկցային γ-լակտոնների սինթեզին և հատկությունների պարզաբանմանը, չհագեցած լակտոնների սինթեզին ու հետազոտություններին, խինոլային հիմքերի քիմիային:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 36 և դոկտորական 5 ատենախոսություն:

Եղել է մասնագիտական և գիտական խորհուրդների անդամ և նախագահ:

Պարգևատրվել է Պատվո նշան և Հոկտեմբերյան հեղափոխության շքանշաններով, պատվոգրերով և շնորհակալագրերով:



ԴԱՎԹՅԱՆ ԳԱԳԻԿ ԱՏԵՓԱՆԻ (07.11.1909, Դիլիջան – 09.03.1980, Երևան), ագրոքիմիկոս, ԽՍՀՄ-ում հիդրոպոնիկայի հիմնադիրներից: Գյուղ. գիտ. դոկ. (1940), պրոֆ. (1942), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1950, 1947 թ.-ից թղթակից անդամ), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1956):

1926թ. Դիլիջանի երկրորդ աստիճանի դպրոցն ավարտելուց հետո մինչև 1930թ. ուսանել է ԵՊՀ գուղատնտեսության ֆակուլտետում: 1929թ. աշխատել է ԵՊՀ ագրոքիմիայի ամբիոնում որպես լաբորանտ:

1930-1933 թթ. գործուղվել է Պարարտանյութերի և ագրոհողագիտության համամիութենական ինստիտուտի Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգի) բաժանմունք որպես ասպիրանտ: Սովորելու տարիներին մասնակցել է Անդրկովկասի բամբակացան շրջանների հողերի քիմիացման համամիութենական արշավախմբի աշխատանքներին: Ասպիրանտուրան ավարտելուց հետո վերադարձել է ՀՀ:

1936 թ. ընդունվել է ԽՍՀՄ ԳԱ Վ.Դոկուչևսկի անվան հողագիտության ինստիտուտի ագրոքիմիայի լաբորատորիայի դոկտորանտուրա: 1941թ. ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի կենսաբանության ինստիտուտին կից ստեղծել է հողի բերրիության լաբորատորիա, իսկ 1947թ. ագրոքիմիայի լաբորատորիա:

1950-1955 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ, 1955-1957 թթ.՝ ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահի տեղակալ, ՀԿԿ կենտկոմի և Երևանի քաղկոմի անդամ, ԽՍՀՄ ԳԽ պատգամավոր (1958-1962): 1957-1961 թթ. եղել է ԵՊՀ ռեկտոր: 1966 թ. ագրոքիմիայի լաբորատորիայի հիման վրա հիմնել է ՀԽՍՀ ԳԱ ագրոքիմիայի պրոբլեմների և հիդրոպոնիկայի ինստիտուտը, որը ղեկավարել է մինչև կյանքի վերջը (այժմ՝ Դավթյանի անվան գիտական կենտրոն): 1967-1971 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար: Ավելի քան 20 տարի ագրոքիմիա է դասավանդել ԵՊՀ-ում և ՀԳԻ-ում:

Աշխատանքները վերաբերում են հողի բերրիության, պարարտանյութերի կիրառման, բույսերի սննդառության, ՀՀ հողերի ֆոսֆորային ռեժիմի, արհեստական պայմաններում բույսերի անհող արդյունաբերական արտադրության խնդիրներին:

Հեղինակ է ավելի քան 250 գիտական հոդվածի: Կարևորագույն մենագրություններն են՝ «Հողի քիմիական պարարտացումը» (Եր., 1932), «Կալցիում ցիանամիդ» (Եր., 1932), «Հանքային պարարտանյութերի արդյունաբերությունը Հայկական ՍՍՀ և Նախիջևանի ԻՍՍՀ բամբակացան շրջաններում» (Եր., 1934), «Հայաստանի հողերի ֆոսֆորացման ռեժիմը» (Եր., 1946), «Հայկական ՍՍՀ հողածածկի ագրոքիմիական բնութագիրը» (Եր., 1966), «Վարդաբույր խորդենու անհող արտադրությունը» (Եր., 1976, համահեղինակ), «Непрерывные гидропоническое производство свежего троянного корма и эффективность его применения» (Եր., 1977, համահեղինակ):

Նա ակտիվորեն մասնակցել է Հայկական խորհրդային հանրագիտարանի ստեղծմանը, եղել հանրապետության Գերագույն խորհրդին կից տերմինաբանական կոմիտեի անդամ, «ԳԱ ագրոքիմիական պրոբլեմների և հիդրոպոնիկայի ինստիտուտի հաղորդումներ» ամսագրի խմբագիր: Պարգևատրվել է Լենինի (2), Աշխատանքային կարմիր դրոշի, Ժողովուրդների բարեկամության, Պատվո նշան շքանշաններով և մի շարք մեդալներով:

Երևանի Մաշտոցի պողոտայի թիվ 9 շենքի պատին ամրացված է հուշատախտակ:



ԴԱՎԹՅԱՆ ԼԱՌԻՐԱ ՎԱՀՐԱՄԻ (10.02.1934, Երևան – 10.12.2014, Երևան), կենսաքիմիկոս: Կենսագիտ. դոկ. (1976), պրոֆ. (1979), ՀԳԳԱ թղթ. անդամ (1999):

Ավարտել է ԵԱԱԻ-ին (1956): 1956-ից աշխատել է նույն ինստիտուտում (1994 թ.-ից ՀԳԱ), 1983-2001 թթ.՝ ՀԳԱ կենսաքիմիայի և օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, 1986-1995 թթ., միաժամանակ՝ պրոռեկտոր:

Աշխատանքները վերաբերում են բույսերի ու կենդանիների աճի էկոլոգիապես մաքուր կենսաձին խթանիչների ազդեցության կենսաքիմիական մեխանիզմի պարզաբանման խնդիրներին: Բացահայտել է գյուղատնտեսական կենդանիների և բույսերի մթերատվության ու աճի խթանման, էներգետիկ փոխանակության վրա էթանոլամինի և դրա ածանցյալների ազդեցությունը: Հեղինակ է «Կենդանիների կենսաքիմիա» (1989) դասագրքի, համահեղինակ՝ «Էթանոլամինը տեսության մեջ և գործնականում» (1989) աշխատության:



ԴԱՎԹՅԱՆ (ԽԱՆՈՅԱՆ) ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՊԵՏԻ (15(28).04.1911, գ. Ախուրյան, ՀՀ Շիրակի մարզ – 28.12.1990, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1944), պրոֆ. (1953):

Ավարտել է ՄՊՀ-ն (1936): 1946-1953 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկական քիմիայի լաբորատորիայի տնօ-

րեն, 1953-1968 թթ.՝ Օդեսայի համալսարանի ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչ, 1968-1971 թթ.՝ Երևանի կոմպլեքսային էլեկտրասարքավորումների ՀամԳՀԻ էլեկտրաքիմիական էներգետիկայի բաժնի վարիչ, 1970 թ.-ից՝ ԵՊՀ տեսական քիմիայի ամբիոնի պրոֆեսոր: Նա առաջինն է տվել գազային էլեկտրատարրերի տեսությունը, ստեղծել է երկբևեռ էլեկտրավառելիքային և ավկալիբուֆերային կուտակիչների տեխնոլոգիա: Հոսանքի նման կուտակիչները օգտագործվել են Լուսնի վրա վայրէջք կատարած ամերիկյան տիեզերանավում: Հայտնաբերել է իոնական բյուրեղներից գերիոնական կոնդենսատորների ստեղծման հնարավորությունը: Առաջարկել է Տիեզերքի իներցիոն ձգողականության (գրավիտացիոն) դաշտի համափոփոխական հավասարումներ:

Եղել է մասնագիտական և գիտական խորհուրդների անդամ:

Հեղինակ է բազմաթիվ հոդվածների և գրքերի, այդ թվում՝ «Квантовая химия» (Մ., 1962); «Кинетика и катализ химических электродных процессов» (Է., 1984); «Теории инерциального поля и квантовой корреляции» (Է., 1987) (համահեղինակ).



ԴԱՎԹՅԱՆ ՄԻՍԱԿ ԱՐՇԱՄԻ (14.10.1934, Սոֆիա, Բուլղարիա – 25.06.2018, Լոս Անջելես, ԱՄՆ), կենսաքիմիկոս: Կենս. գիտ. դոկ. (1970), պրոֆ. (1972), ՀՀ ԳԱԱ կադդեմիկոս (1996), ՀՀ ԲԳԱ անդամ (2003), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1981):

Մինչև 5-րդ դասարանը սովորել է Սոֆիայի հայկական ազգային վարժարանում: 1946 թ. հայրենադարձվել է և 1952 թ. ավարտել Երևանի թիվ 10 միջնակարգ դպրոցը, 1958 թ.՝ ԵԲԻ-ն, 1963 թ.՝ ասպիրանտուրան: 1963 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1958-1959 թթ. աշխատել է ՀԽՍՀ Թալինի շրջանում (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզ) որպես տեղամասային բժիշկ, 1963-1970 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ կենսաքիմիայի ինստիտուտում: 1971-2000 թթ. եղել է ԵՊՀ կենսաքիմիայի ամբիոնի վարիչ, 1971-2014 թթ.՝ կենսաքիմիայի պրոբլեմային (այժմ՝ ԳՀ) լաբորատորիայի ղեկավար, 1985-1989 թթ.՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1989-1990 թթ.՝ ժողովրդական կրթության նախարար,

1990-1991 թթ.՝ ԵՊՀ առաջին պրոռեկտոր, 1978-1985 թթ. և 1996-1999 թթ. կենսաբանության ֆակուլտետի դեկան, 1999-2002 թթ. ՀՊՄՀ ռեկտոր, 2000-2005 թթ.՝ ԵՊՀ կենսաքիմիայի ամբիոնի պրոֆեսոր, 2006-2014 թթ.՝ այդ ամբիոնի վարիչ:

Գիտական հետազոտությունները նվիրված են ազոտ պարունակող միացությունների, հատկապես ամինաթթուների փոխանակության ու համապատասխան խմորիչների ակտիվության կարգավորման հիմնահարցերին: Հիմնավորել է բնության մեջ նոր՝ ոչ ուրեոթելիկ, արգինազի գոյությունը և պարզել դրա կարևոր դերը նյութափոխանակության մեջ: Հայտնաբերել է գլխուղեղում օրնիտինային ցիկլի 5 խմորիչներից 3-ը, որոնք ապահովում են նյութափոխանակության կարևոր կարգավորիչ ազոտի մոնօքսիդի անխափան սինթեզն արգինինից, հիմնավորել նոր տեսակետ էվոլյուցիոն և անհատական զարգացման ընթացքում ուրեոթելիզմի ձևավորման մեխանիզմում ուրեոթելիկ արգինազի մակաձման վճռորոշ դերի մասին:

Հեղինակ է շուրջ 320 հոդվածի և հեղինակային վկայագրերի: Նրա դեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է ավելի քան 70 թեկնածուական և 4 դոկտորական ատենախոսություն:

Եղել է ԵՊՀ-ում գործող կենսաքիմիայի և կենսաֆիզիկայի մասնագիտական խորհրդի նախագահ (1977-2014), «Կենսաբանություն» միջբուհական հանդեսի խմբագիր:



ԴԱՎԹՅԱՆ ՍԵՎԱՆ ՊԱՐՈՒՅՐԻ (22.06.1942, ք. Ալխալքալաք – 09.06.2020, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1978), պրոֆ. (1988), ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ (2006), ՀՀ գիտության վաստակավոր գործիչ (2008): Ա. Տոնոյանի ամուսինը:

Ավարտել է ԵՊՀ մեխմաթ ֆակուլտետը (1965), ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի Չեռնոգոլովկայի մասնաճյուղում ասպիրանտուրան և 1969 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը «О некоторых особенностях процессов модификации гетероцепных полимеров» թեմայով (ֆիզմաթ. գիտ. թեկնածու): Մինչև 1990 թ. աշխատել է ԽՍՀՄ ԳԱ ՔՖԻ-ի Չեռնոգոլովկայի մասնաճյուղում՝ Պոլիմերացման պրոցեսների մակրոկինետիկա լաբորատորիայի վարիչ,

1990 թ.-ից՝ ԵՊԻ Էլեկտրաքիմիայի և ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչ, 2003-2006 թթ.՝ ՀՀ ԳԱԱ Մ. Մանվելյանի անվան ԸԱՔԻ-ի տնօրեն, 2006-2020 թթ. ԵՊԻ ընդհանուր քիմիայի և քիմիական պրոցեսների ամբիոնի վարիչ, 2006-2020 թթ. ԵՊԻ քիմիական տեխնոլոգիաներ և պոլիմերային նանոկոմպոզիտներ ԳՀ լաբորատորիայի վարիչ:

Բարձր մակարդակով մաթեմատիկայի և ֆիզիկական քիմիայի իմացությունը նպաստել են բացահայտելու ոչ հավասարաջերմային (իզոթերմային) պայմաններում ընթացող պոլիմերման գործընթացների կինետիկական օրինաչափությունները, մշակել է էկոլոգիապես մաքուր պոլիմերային նյութերի ստացման արդյունավետ եղանակներ, հիմնադրել է ճակատային (ֆրոնտալ) պոլիմերման գիտագործնական նոր ուղղություն, որն ունի որոշակի առավելություններ պոլիմերների սինթեզի ավանդական եղանակների նկատմամբ և ունի լայն կիրառում:

Հեղինակ է ավելի քան 420 աշխատության, 4 մենագրության, 3 ուսումնական ձեռնարկի, 30-ից ավելի արտոնագրի:

Ղեկավարել է միջազգային մի քանի դրամաշնորհային ծրագրեր: Եղել է ՀՀ նախագահի մրցանակի դափնեկիր (Ա. Տոնոյանի հետ, 2015), ՀՀ ԿԳՆ ոսկե հուշամեդալակիր (2012), ՀՀ ԿԳՆ ԳՊԿ «Արդյունավետ գիտաշխատող» (2012, 2017), «American Nano Society» ընկերության (2011-2013) և Վրաստանի Քիմիկոսների միության պատվավոր անդամ, մի քանի գիտական, մասնագիտական և խմբագրական խորհուրդների նախագահ կամ անդամ:

Նրա խորհրդատվությամբ և ղեկավարությամբ պաշտպանվել են դոկտորական 7 և թեկնածուական 34 ատենախոսություն:

Մենագրություններ. Ս. Ս. Դավթյան, Ա. Օ. Թոնոյան, «Теория и практика адиабатической и фронтальной полимеризации» (Palmarium Academic Publishing, 2014); Ս. Պ. Դավթյան, Ա. Հ. Տոնոյան, «Նանոտեխնոլոգիաների հիմնադրույթները: Նանոմասնիկներ և պոլիմերային նանոկոմպոզիտներ» (Եր., 2011); Ս. Ս. Դավթյան, Ա. Օ. Թոնոյան, «Высокотемпературные сверхпроводники. Сверхпроводящие полимер-керамические наноконпозиты» (Ե., 2008); Ս. Ս. Դավթյան, «Неизотермические методы синтеза полимеров» (1. Теория и практика процессов адиабатической полимеризации, Ե., 2004):

ԴԱՐԲԻՆՅԱՆ ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐԻ (26.4.1937, Երևան – 25.10.1988, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1981):

Ավարտել է ԵՊՀ-ն (1959): 1959-1988 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ ՕՔԻ-ում, 1981 թ.-ից՝ մոնոմերների և պոլիմերների քիմիայի լաբորատորիայի վարիչ:

Առաջարկել է երկացետիլենային և վինիլացետիլենային միացություններին հիդրազինի և դրա ածանցյալների ցիկլամիացմամբ պիրազոլիների և պիրազոլինների սինթեզի ռեակցիա, որի հիման վրա մշակել է երկացետիլենից պիրոլիզային ացետիլենի մաքրման քիմկլանման (քիմսորբման) եղանակ՝ միաժամանակ արժեքավոր 3(5)-մեթիլպիրազոլի ստացմամբ:



ԴԱՐԲԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ ՎԱՐԴԱՆԻ (25.12.1908, Գյումրի – 17.04.1969, Երևան), քիմիկոս: Տեխ. գիտ. դոկ. (1953), պրոֆ. (1954), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1967):

Միջնակարգ դպրոցն ավարտել է 1925 թ. Թիֆլիսում: 1929 թ. ավարտել է ԵՊՀ գյուղատնտեսական, 1931 թ. դրսեկությամբ՝ քիմիայի ֆակուլտետը: 1939 թ. պաշտպանել է թեկնածուականատենախոսություն:

Ուսանողական տարիներին (1927 թ.-ից) աշխատել է ԵՊՀ-ում որպես տեխնիկ-լաբորանտ, ապա՝ դասախոսել քիմիայի ֆակուլտետում: 1954-1963 թթ. եղել է ԵՊՀ վերլուծական քիմիայի, 1963-1969 թթ.՝ անօրգանական քիմիայի ամբիոնների վարիչ:

1938 թ.-ից համատեղությամբ աշխատել է նաև Լեոնամետալուրգիական ԳՀԻ-ում որպես լաբորատորիայի վարիչ: 1962-1969 թթ. եղել է Քարերի և սիլիկատների ԳՀԻ-ի քարերի ծուլման ու ջերմաքիմիական վերամշակման բաժնի վարիչ:

Հեղինակ է ավելի քան 100 գիտական աշխատության, այդ թվում հեղինակային իրավունքի տասնյակ արտոնագրերի: Հայտնի են ուսումնասիրությունները մագնեզիումի և դրա աղերի, կալցիումի, բարիումի, ստրոնցիումի վակուումային ջերմակարբիդային եղանակների մշակման բնագավառում: Առաջարկել է Քաջարանի և Դաստակերտի մոլիբդենային հանքերի և խտույթների համալիր մշակման նոր ջրամետալուրգիական ավտոկլավային

տեխնոլոգիական սխեմա, ուսումնասիրել Ալավերդու պղնձածուլական կոմբինատի խարամներից երկաթի, սիլիկահողի, դյուրահալ մետաղների ստացման հնարավորությունը:

Նրա ղեկավարությամբ հետազոտություններ են կատարվել Հայաստանի սիլիկատային ապարների մշակման բնագավառում, սինթեզվել տարբեր ապակիներ և քիմիապես կայուն, կիրառական մեծ նշանակություն ունեցող շինանյութեր՝ սիտալներ ու պետրոսիտալներ, փրփրեցրած քար և այլն:

Զբաղվել է նաև կալցիումի կարբիդի և ցիանամիդի, պերլիտից ցեոլիտների ստացման, ինչպես նաև՝ քիմիայում հազվագյուտ տարրերի իոնափոխանակային քրոմատոգրոֆայան կիրառման և այդ տարրերի բաժանման եղանակների մշակման հարցերով:



ԴԵՄԻՐՉՕՂԵԱՆ ՎԱՀԱԳՆ ԱՏԵՓԱՆԻ

(12(24).04.1875, Ախալքալաք – 01.07.1938, Երևան), քիմիկոս, մանկավարժ: Դ. Կ. Դեմիրճյանի հորեղբոր որդին:

Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ավարտել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1896): Դասավանդել է նույն դպրոցում: 1924 թ.-ից ապրել է Երևանում: «Արժեքականությունն ըստ քիմիկական տարրերի առաջացման իմ տեսություն» (1914, ռուս., վիմատիպ) գրքում ներկայացրել է արժեքականության էլեկտրոնային բնույթի իր տեսակետը, համաձայն որի՝ քիմիական միացություն առաջացնելու ատոմի հատկությունը պայմանավորված է իներտ գազի ատոմի նման կայուն էլեկտրոնային կառուցվածք ձեռք բերելու հակումով: Առաջարկել է իզոտոպներն անվանել «տարատեսակ» կամ «աննորմալ զարգացած» քիմ. տարրեր: «Արժեքականությունը և ատոմների կառուցվածքը» (1926, ռուս.) գրքում ամբողջացրել է արժեքականության և ատոմի կառուցվածքի մասին պատկերացումները: Զբաղվել է նաև քանդակագործությամբ: Նրա մարմարե քանդակներից մեկը գտնվում է Լուվրի թանգարանում:



ԴՈՒՆԻՆԱՆՅԱՆ ՍԵՂԱ ԿԱՐԵՆԻ (04.06.1939, Երևան), ֆիզքիմիկոս: Տեխ. գիտ. դոկ. (1985), պրոֆ. (1992):

Ավարտել է Երևանի Ձերժինսկու անվան դպրոցը (1956), ԵՊԻ մեխանիկայի ֆակուլտետը (1961), ԽՍՀՄ ԳԱ բարձր ճնշումների ֆիզիկայի ինստիտուտի (Մոսկվայի մարզ, Տրոիցք) ասպիրանտուրան (1971): 1971 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Ալմաստների սինթեզի տեխնիկայի զարգացումը» թեմայով:

Աշխատել է ՀԽՍՀ մեքենաշինության ԳՀ ինստիտուտում որպես ճարտարագետ-հետազոտող (1961-1964), Երևանի «Ալմաստ» գործարանում՝ ավագ ճարտարագետ-տեխնոլոգ (1964-1972), ՀՀ ԳԱԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտում լաբորատորիայի վարիչ (1972 թ.-ից):

Գիտական գործունեության ոլորտներն են՝ այրման գործընթացներ, հիդրիդների բարձրջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզ (ԲԻՍ եղանակ), դժվարահալ միացությունների և դրանց հիդրիդների նյութաբանություն, ճառագայթային ջերմային գործընթացներ մետաղ-ջրածին համակարգում: Մշակել է տիտանի և ցիրկոնիումի հիդրիդների, ինչպես նաև մոլիբդենի երկսիլիցիդի ստացման արդյունաբերական եղանակներ: Վերջինս ներդրվել է Վանաձորի բարձրջերմաստիճանային տաքացուցիչների գործարանում:

Հեղինակ է 200-ից ավելի գիտական աշխատության, որից 20-ը հեղինակային իրավունք և 2-ը պատենտ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 9 ատենախոսություն:

Ստացել է ՀԽՍՀ պետական մրցանակ (1980), ԱՄՆ-ի «Տարվա գիտնական» կոչում (2001), ՀՀ ԳԱԱ պատվոգիր (2003) և տարբեր բնույթի դիպլոմներ:



ԴՈՎԱԱԹՅԱՆ ՎՌԱՄ ՎԱԴԻՆԱԿԻ (13.08.1923, Նոր Բայազետ (այժմ՝ Գավառ) – 25.12.2005, Երևան), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դոկ. (1965), պրոֆ. (1967), ՀՀ ԳԱԱ ակադ. (1994, թղթ. անդամ՝ 1986 թ.-ից): ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1980):

Ավարտել է ԵՊՀ-ն (1949): 1954 թ.-ից աշխատել է ՀԳԻ-ում, 1959-1989 թթ.՝ ընդհանուր քիմիայի ամբիոնի, 1962 թ.-ից, միաժամանակ՝ թունաքիմիկատների սինթեզի և փորձարարական լաբորատորիայի վարիչ: Սինթեզել է հերբիցիդներ, հակասնկիկային նյութեր և աճման խթանիչներ (կրոտիլին, մեթազին, սուլֆազին, ֆենագոն, լավին և այլն), որոնց մի մասը ներդրվել է գյուղատնտեսության մեջ: Ուսումնասիրել է ացետացախաթթվային բարդ եթերի քլորմեթօքսիլմեթիլման ռեակցիաները, չորրորդային ամոնիումային աղերի կատալիտիկ ազդեցությունը կարբոնաթթուների բարդ եթերների առաջացման վրա: Հայտնաբերել է քլորալկօքսի (թիո, ամինա)-սիմ-տրիագինների ինքնատեսակ վերախմբավորման ռեակցիաներ (համակցված տարա-սիմ-տրիագինների ստացումով): Նրա առաջարկած ցիանամինա-սիմ-տրիագինների սինթեզի եղանակը արտոնագրված է Գերմանիայում, Ճապոնիայում, Շվեյցարիայում:

Ընդգրկված է համաշխ. գիտության բնագավառի 500 ազդեցիկ առաջատարների ցուցակում: Եղել է ՌԴ բնական ԳԱ անդամ (1994): Ստացել է ՀՀ Անանիա Շիրակացու մեդալ (2002), Ամերիկյան կենսագրական ինստիտուտի «Տարվա մարդ-1997» և «Դարի մարդ» կոչում:



ԴՈՒՐԳԱՐՅԱՆ ԱՆԺԵԼՈ ՀԱԿՈՒԲԻ (15.02.1928, գ. Գանձա, Զավախք - 05.04.2021, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1972), պրոֆ. (1974): Ն. Ա. Դուրգարյանի հայրը:

1945 թ. ավարտել է Գանձայի միջնակարգ դպրոցը, 1951 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: 1958 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1951-1960 թթ. աշխատել է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում, լինելով գիտական թեմայի ղեկավար, 1960-1966 թթ. եղել է ԵՊՀ ֆիզիկական և կոլորիդային քիմիայի ամբիոնի նորաստեղծ պոլիմերների պրոբլեմային լաբորատորիայի

իոնական պոլիմերման գիտական խմբի ղեկավար, 1966 թ.-ից աշխատել է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում որպես դոցենտ, այնուհետև՝ պրոֆեսոր:

1960-ականներից զբաղվելով իոնական պոլիմերման և համապոլիմերման հարցերով՝ մոնոմերների շարքը համալրել է նոր դասի միացություններով՝ նիտրիլներով: Արտածել է ելային խառնուրդի բաղադրությունից համապոլիմերի բաղադրության կախումը և համապոլիմերի մակրոմոլեկուլում մոնոմերային միավորների բաշխումն արտահայտող բանաձևեր, ճշգրտել համապոլիմերի բաղադրության Կ. Այվինի բանաձևը: Նրա արտածած բանաձևերի օգնությամբ քանակական կապ է հաստատվել համապոլիմերի բաղադրության ու լուծիչի խտության, ինչպես նաև մոնոմերի հավասարակշռային խտության ու լուծիչի խտության միջև: Սինթեզել է իոնափոխանակիչ, կոմպլեքսագոյացնող, կիսահաղորդչային, լուսայլումինեսցենտ (ֆոտոլյումինեսցենտ) հատկություններ ունեցող նոր պոլիմերներ: Նրա ղեկավարությամբ մշակվել է NH_2/NH_2 ծայրային խմբերով խինոնաերկիմինային խմբեր պարունակող պոլիմերների և օլիգոմերների սինթեզի նոր եղանակ:

Հեղինակ է շուրջ 125 գիտական աշխատության և հեղինակային իրավունքների, «Բարձրամոլեկուլային միացությունների քիմիա» (Եր., 2004) ուսումնական ձեռնարկի:

Գիտական գործունեության հիմնական գործընկերներից է կինը՝ ք.գ.թ. Ռիմա Առաքելյանը:

Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 4 և դոկտորական 1ատենախոսություն:



ԴՈՒՐԳԱՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ ԱՆԺԵԼՈՅԻ (28.03.1963, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2013), պրոֆ. (2015): Ա. Ի. Դուրգարյանի դուստրը:

1979 թ. ավարտել է Երևանի թիվ 4 միջնակարգ դպրոցը, 1984 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, 1987 թ.՝ ասպիրանտուրան: 1996 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 2009 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

ցենտի կոչում:

1984 թ. աշխատել է ք. Աբովյանի «Սիրիուս» ԳԱՄ-ում որպես ճարտարագետ: Նույն թվականին ընդունվել է ՀՀ ԳԱԱ ՕՔԻ ասպիրանտուրան, որը ավարտելուց հետո 1988 թ.-ից աշխատել է նույն ինստիտուտում որպես գիտաշխատող: 1993 թ.-ից աշխատում է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում, 2016 թ.-ից՝ ամբիոնի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են պոլիմերային քիմիայի տեսությանը, քլորօքսիրանների քիմիայի հարցերին և տարբեր եղանակներով էլեկտրասկոպի, կոմպլեքսագոյացնող, կենսասակտիվ բարձրամոլեկուլային միացությունների սինթեզին:

Հեղինակ է 80 գիտական աշխատության և 2 ուսումնամեթոդական ձեռնարկ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 2 ատենախոսություն:



ԵՂԻՊԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ ԱՄՐԱՍՏԱՆԻ

(17.04.1924, Եղվարդ – 26.08.2011, ԱՄՆ), քիմիկոս-տեխնոլոգ, էլեկտրաքիմիկոս: Տեխ. գիտ. դոկ. (1972 թ.), պրոֆ. (1973), ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ (1983):

Միջնակարգ կրթություն ստացել է ծննդավայրում (1940 թ.) և ընդունվել ԵՊԻ քիմիատեխնոլոգիական ֆակուլտետը: 1942 թ. զորակոչվել է Խորհրդային բանակ ու մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: 1946 թ. զորացրվել է և ուսումը շարունակել ԵՊԻ-ում: 1950 թ. գերազանցիկությամբ ավարտել է Քիմիատեխնոլոգիական ֆակուլտետը էլեկտրաքիմիկոսի մասնագիտությամբ: 1950-1953 թթ. սովորել է Կիևի Պոլիտեխնիկ ինստիտուտի ասպիրանտուրայում, դարձել տեխ. գիտ. թեկնածու (1953): 1954-1956 թթ. աշխատել է ԵՊԻ էլեկտրաքիմիական արտադրությունների տեխնոլոգիայի ամբիոնում որպես ասիստենտ, ապա դոցենտ, իսկ 1956-1959 թթ.՝ ֆիզիկայի ամբիոնում որպես դոցենտ: 1959 թ.-ից որպես լաբորատորիայի վարիչ նվիրվել է կիսահաղորդիչների հետազոտման աշխատանքներին: Այդ աշխատանքները շարունակել է Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀ ինստիտուտում՝ լինելով լաբորատորիայի վարիչ: 1972-1989 թթ. եղել է ԵՊԻ էլեկտրաքիմիական արտադ-

րությունների տեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, իսկ 1989-1995 թթ.՝ ամբիոնի պրոֆեսոր: Մեծ ներդրում է ունեցել մեր հանրապետությունում կերամաշմաման (կոռոզիայի) գործընթացների հետազոտման կենտրոնի ստեղծման գործում: Հետազոտական աշխատանքներ է կատարել ֆերոմագնիսական համաձուլվածքների էլեկտրոլիտիկ նստեցման հարցերի և կաթոդի վրա թթվածնի իոնացման մեխանիզմի պարզաբանման, ինչպես նաև ալյումինի ստացման ջերմային հաշվարկների ուղղությամբ: Մագնիսական բարակ թաղանթների ստացման և հետազոտման աշխատանքների շնորհիվ նրա կողմից մշակվել են էլեկտրոնային հաշվիչ մեքենաների հիշողության սարքերի նոր տարրեր և ստեղծել դրանց արտադրության տեխնոլոգիա: Այս աշխատանքները նպաստել են հայկական մաթեմատիկական հաշվիչ մեքենաների որոշ հանգույցների որակը դարձնել մրցունակ նույն կարգի ճապոնական մեքենաների հետ: Կատարած աշխատանքների համար Ա. Եփզարյանին ու իր աշխատակիցներին 1974 թ. շնորհվել է ԽՍՀՄ պետական մրցանակ:

1995 թ.-ից աշխատել է Մոսկվայի ֆիզիկական քիմիայի ինստիտուտում որպես լաբորատորիայի վարիչ՝ զբաղվելով քրոմի նստեցման խնդիրներով: 2003 թ.-ից բնակվել է ԱՄՆ-ում:



ԵՂՅԱՆ ՈԱՅԱ ՎԱՀԱՆԻ (22.02.1936, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1998), պրոֆ. (2003): Վ. Դանելյանի կինը:

1953 թ. ավարտել է Երևանի թիվ 44 միջնակարգ դպրոցը, 1958 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: 1975 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, իսկ 1978 թ. ստացել է դոցենտի կոչում:

1958-1959 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ ՆՕՔԻ-ի աշխատող, 1959-1961 թթ.՝ ԵՊՀ ֆիզիկական քիմիայի ամբիոնի, 1961-1965 թթ.՝ նույն ամբիոնին կից ԳՀ լաբորատորիայի ավագ լաբորանտ, 1965 թ.-ից՝ ամբիոնի ասիստենտ, դոցենտ, 2000-2011 թթ.՝ ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի պրոֆեսոր: 2011 թ.-ից անցել է վաստակած հանգստի:

Աշխատանքները վերաբերում են լուծիչի բնույթի ազդեցությանը մի քանի վինիլային մոնոմերների ռադիկալային հոմո- և համապոլիմերման կինետիկական օրինաչափությունների և ստացված պոլիմերների մոլեկուլային,

հիդրոդինամիկական և թերմոդինամիկական պարամետրերի վրա: Փոփոխելով միջավայրի բնույթը կարելի է կարգավորել պատվաստված համապոլիմերի բաղադրությունը և կառուցվածքը: Համապոլիմերից առաջարկել է որպես կայունացնող-դաբաղող նյութ կաշվի վերամշակման գործընթացում, իսկ դրանցից ստացված ճկուն թաղանթները՝ բժշկության մեջ վերքերը և այրվածքները ծածկելու համար:

Հեղինակ է շուրջ 70 գիտական հոդվածի, 2 հեղինակային իրավունքի և 5 ուսումնամեթոդական աշխատանքի:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 2 ատենախոսություն:

Պարբերաբար հանդես է եկել զեկուցումներով համամիութենական (Կազան-1973, Իրկուտսկ-1987, Գորկի-1989) և միջազգային (Տաշքենդ-1978, Բրատիսլավա-1979) գիտաժողովներում:

ԵՂԻՅԱՆ ՍԵՐՈԲԵ (05(18).03.1905, գ. Կարմիրք, Խոտորջուրի գավառակ – 11.02.1971, Միլան), գյուտարար-քիմիկոս:

1919-1924 թթ. սովորել է Վենետիկի Մուրատ-Ռափայեյլյան վարժարանում: Ավարտել է Միլանի համալսարանը (1929) և աշխատել նույն համալսարանում: Աշխատանքները վերաբերում են քիմիայի և ատոմագիտության հարցերին: Լույս է տեսել նրա «Հիլեական ռումբը» (1946) մենագրությունը:



ԵՆԳՈՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՓԱՅԼԱԿԻ (01.02.1950, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2003), պրոֆ. (2003):

1967 թ. ավարտել է Պուշկինի անվան դպրոցը և ընդունվել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, ապա նույն ֆակուլտետի ֆիզիկական քիմիայի ամբիոնի ասպիրանտուրան (1972 թ.): Թեկնածուական թեզը կատարել է Մոսկվայում (Համամիութենական քիմիա-դեղագործական ԳՀԻ-ում), որը պաշտպանել է 1976 թ.: Նա առաջիններից մեկն է ՀՀ-ում հիմնադրել մոլեկուլի կառուցչի ուսումնասիրման ժամանակակից հզոր եղանակը՝ միջուկային մագնիսական ռեզոնանսի սպեկտրոսկոպիան: Աշխատել է ՀՀ ԳԱ ՆՕՔԻ ֆիզիկաքիմիական ուսումնասիրությունների լաբորատորիայում որպես կրտսեր գիտաշխատող (1976-1978), ավագ գիտաշխատող

(1978-1986), ապա լաբորատորիայի վարիչ (1986-1996): Այդ տարիներին զբաղվել է կենսաբանորեն ակտիվ միացությունների, ինչպես նաև ինստիտուտում մշակված դեղամիջոցների մոլեկուլների կառուցվածքի և ֆիզիոլոգիական հատկությունների միջև եղած կապի ուսումնասիրություններով:

1996 թ. անցել է գիտամանկավարժական գործունեության Հայաստանի Ագրարային համալսարանի ընդհանուր քիմիայի ամբիոնում որպես դոցենտ: 2006 թ. նշանակվել է պեստիցիդների սինթեզի և բույսերի պաշտպանության լաբորատորիայի վարիչ: Այդտեղ գիտական ուսումնասիրությունների բնագավառը դարձել է մշակաբույսերի պաշտպանության նոր քիմիական միջոցների և աճախթանիչների մշակումը: Միաժամանակ 2003 թ.-ից համատեղությամբ աշխատել է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում որպես պրոֆեսոր, 2007-2017 թթ. եղել է բժշկական կենսաքիմիայի ֆակուլտետի ընդհանուր և դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչ, իսկ 2017 թ.-ից՝ նույն ամբիոնում որպես պրոֆեսոր:

Հեղինակ է մոտ 200 գիտական հոդվածների և թեզիսների, ինչպես նաև 9 արտոնագրի և 3 ուսումնական ձեռնարկի:

Եղել է ՌԴ (2008) և Եվրոպայի (2010) բնական ԳԱ-ների անդամ: 2015 թ. պարգևատրվել է ՀՀ ԿԳՆ պատվոգրով:

Գիտական ղեկավար է թեկնածուական 7 ատենախոսության:



ԵՆԻԿՈԼՈՊՅԱՆ (ԵՆԻԿՈԼՈՊՈՎ) ՆԻԿՈԼԱՅ ՍԵՐԳԵՅԻ (13.03.1924, Ստեփանակերտ – 22.01.1993, Հելսինկի (Գերմանիա), թաղված է Մոսկվայում), ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1960), պրոֆ. (1961), ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս (1976, թղթ. անդամ՝ 1966 թ.-ից), ԽՍՀՄ Պատվավոր քիմիկոս (1984):

Ավարտել է ԵՊԻ-ին (1945), 1946-1981 թթ. աշխատել է ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտում, 1953-1993 թթ., միաժամանակ՝ դասախոսել Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում (1982 թ.-ից՝ բարձր ամրության պոլիմերային համակարգերի ֆիզիկայի ամբիոնի վարիչ), 1981-1993 թթ.՝ Սինթետիկ պոլիմերային նյութերի ինստիտուտի (1998 թ.-ից՝ Ն. Ս. Ենիկոլոպովի անվամբ) տնօրեն:

Աշխատանքները վերաբերում են ածխաջրածինների օքսիդացման շղթայական և իոնային պոլիմերման ռեակցիաների կինետիկայի և մեխանիզմի, մակրոմոլեկուլների առաջացման և փոխարկումների վրա ֆիզիկական ազդակների ներգործության հարցերին: Մշակել է այլասերված, ճյուղավորված պոլիմերման գործընթացների քանակական տեսության հիմունքները: Հայտնաբերել է (1963) ածող շղթայի և մակրոմոլեկուլի օղակների փոխազդեցության ընթացքում շղթայի կտրմամբ շղթայի փոխանցման տարրական ակտը: Ստեղծել է պինդֆազային անիզոտրոպ պոլիմերման տեսությունը և հայտնագործել (1966) բարձր ճնշման և սահքի ձևախախտման պայմաններում օրգանական նյութերի պինդֆազային պոլիմերման օրինաչափությունը: Մշակել է լցունված պոլիմերային նյութերի ստացման ժամանակակից տեխնոլոգիա, որով հնարավոր է դարձել ստեղծել բարձրակայուն և կառուցվածքային բարձրամոդուլային պոլիմերային նյութերի նոր դաս: Հայտնագործել է պինդ մարմինների առաձգական ձևախախտմամբ քայքայման, ճնշման տակ պոլիմերային դիէլեկտրիկների էլեկտրահաղորդիչ մասնիկներից էլեկտրոնների ներարկման (ինժեկցիայի) խթանման (1981) երևույթները և առաջարկել էլեկտրահաղորդիչ պոլիմերային նյութերի ստացման նոր եղանակ: Նրա հայտնագործությունների և հեղինակային իրավունքների մի մասն արտոնագրված է ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և այլ երկրներում:

Եղել է ԽՍՀՄ ԳԱ ընդհանուր և տեխնիկական քիմիայի բաժանմունքին կից բարձրամոլեկուլային միացությունների գծով գիտական խորհրդի (1968-1993), Ռուսաստանի գիտության և տեխնիկայի կոմիտեին կից ժողոտնտեսության մեջ պոլիմերների օգտագործման գիտխորհրդի (1972-1993) նախագահ, ԽՍՀՄ և արտասահմանյան բազմաթիվ կոմիտեների և կազմակերպությունների անդամ: Ստացել է Լենինյան (1980), Վ. Ա. Կարգինի (1984), Զինաթափման միջազգային ընկերության և համաշխարհային լաբորատորիայի միջազգային «Ոսկե գայլ» մրցանակներ, Լենինի (1981) և այլ շքանշաններ ու մեդալներ:

Համահեղինակ է մեծ պահանջարկ ունեցող հետևյալ աշխատությունների՝ «Химия и технология полиформальдегида» (Մ., 1968); «Межцепной обмен в полимерах» (Մ., 1975); «Кинетика полимеризационных процессов» (Մ., 1978); «Сетчатые полимеры. Синтез, структура, свойства» (Մ., 1979);

«Расчеты высокоэффективных полимеризационных процессов» (М., 1980);
«Металлопорфирины» (М., 1988):



ԵՐԻՅՅԱՆ ՄԵԺԼՈՒՄ ԼԵՎՈՆԻ (05.05.1940, գ. Բարսում (Ադրբեջանի Շամխորի շրջան)), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1985), պրոֆ. (1989):

Ավարտել է տեղի դպրոցը (1957), Երևանի գյուղատնտեսական տեխնիկումը (1959), այնուհետև ծառայել է Խորհրդային բանակում (1959-1962 թթ): 1967 թ. ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, 1971 թ.՝ ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի Չեռնոգոլովկայի մասնաճյուղի ասպիրանտուրան և նույն թվին պաշտպանել թեկնածուական ատենախոսություն: 1971-1982 թթ. աշխատել է Վանաձորի Պոլիմերային սոսինձների ԳՀ-ում որպես լաբորատորիայի վարիչ (1971-1976 թթ.) և բաժնի վարիչ (1976-1982 թթ.), իսկ 1983-1987 թթ.՝ Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգի) Օխտայի պլաստպոլիմեր ԳՀ-ի Երևանի մասնաճյուղում՝ լաբորատորիայի վարիչ, 1987-1989 և 2012-2019 թթ.՝ ՀՊՄՀ քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, 2019 թ.-ից՝ այդ ամբիոնի պրոֆեսոր, 1989-2002 թթ., միաժամանակ՝ Կենսաբանության և քիմիայի ֆակուլտետի դեկան, 2002-2011 թթ.՝ պրոռեկտոր:

Աշխատանքները վերաբերում են սիմտրիազիների ռեակցիաունակ ածանցյալների սինթեզի և պոլիմերման ու պոլիկոնդենսման հարցերին: Մշակել է մի շարք ջերմակայուն և ֆիզիկամեխանիկական բարձր հատկություններով օժտված սոսինձներ: Զբաղվել է ջրակլանիչ պոլիմերների սինթեզի և դրանց կիրառման խնդիրներով, ինչպես նաև անցման շարքի մետաղների հիման վրա մետաղօրգանական կոմպլեքսների նպատակային սինթեզին, ազոտ և այլ տարա(հետերո)ատոմ պարունակող մոնոմերների սինթեզին և դրանց հիման վրա պոլիմերների սինթեզին և համապատասխան բաղադրությունների ստացմանը:

Հեղինակ է ավելի քան 320 գիտական աշխատության, որից 95-ը հեղինակային իրավունքի և 4-ը մեթոդական ձեռնարկի ձևով: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 8 ատենախոսություն: Անդամ է ՌԴ բնական ԳԱ (1997), Բնության և հասարակության մասին գիտությունների

միջազգային ակադեմիայի (1997), Էկոլոգիայի և կյանքի անվտանգության միջազգային ակադեմիայի (2009), ՀՀ ճարտարագիտական ակադեմիայի (2016): Պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» (2003), «Խաչատուր Աբովյան», «Մանկավարժական համալսարան» (2011), ՀՀ Ազգային ժողովի մեդալներով և պատվոգրերով:



ԶԱԽՆՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ (ՄԻՇԱ) ԳԱՐԵԳԻՆԻ

(24.05.1930, գ. Ղզղալա (այժմ՝ գ. Գետավան, ՀՀ Լոռու մարզ) – 14.03.2017, Երևան), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դոկ. (1975), պրոֆ. (1977): ԽՍՀՄ գյուտարար (1983):

Ավարտել է ԵՊՀ-ն (1952): 1952-1981 թթ. աշխատել է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում ասիստենտ, դոցենտ, պրոֆ., 1981-1998 թթ.՝ ԵԺՏԻ (1999 թ.-ից՝ ԵՊՏԻ) բնական գիտությունների ամբիոնի վարիչ, 1998-2017 թթ.՝ պրոֆեսոր:

Աշխատանքները վերաբերում են հազեցած բազմաֆունկցային լակտոնների սինթեզի եղանակների մշակման և քիմիական փոխարկումների հետազոտման, ինչպես նաև լակտոնային և տարացիկլային միացությունների համակցման հիման վրա նոր, ֆիզիոլոգիապես ակտիվ նյութերի սինթեզի հարցերին: Ղեկավարել է հանրապետական և համամիութենական դպրոցական և ուսանողական օլիմպիադաներ, մրցույթներ: Հեղինակ է «Քիմիա» (1967, 4-րդ վերամշակված և լրացված հրտ.՝ 2003) դպրոցական ուսումնական ձեռնարկի:

Եղել է ՌԴ բնական ԳԱ (1998) և ՀՃԱ անդամ, ստացել է Խ. Աբովյանի անվան մեդալ (1987), Ֆրիտյոֆ Նանսեն միջազգային հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2005), Պ. Էռլիխի արծաթե մեդալ (2005):



ԶԱԽԱՐՈՎ ԼԵՎ (ԱՍԼԱՆ) ԱՎԱԳԻ (10(23).09.1911, Թիֆլիս – 26.02.1992, Երևան), քիմիկոս-տեխնոլոգ: Տեխ. գիտ. դոկ. (1971), պրոֆ. (1970), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1981):

Միջնակարգը ավարտելուց հետո ընդունվել է Վրաստանի Պոլիտեխնիկական ինստիտուտը, որը ավարտել է 1938 թ.՝ սիլիկատների տեխնոլոգիա մասնագիտությամբ և աշխատանքի անցել Թբիլիսիի աղյուսի գործարանում, որպես հերթափոխի պետ: Հայրենական պատերազմի սկզբից զորակոչվել է բանակ և ծառայել մինչև պատերազմի ավարտը՝ պարգևատրվելով պետական բարձր շքանշաններով և մեդալներով: Բանակից զորացրվել է 1945 թ. ու Թբիլիսիում անցել աշխատանքի հանքային հումքանյութերի Անդրկովկասյան ինստիտուտում որպես ճարտարագետ, ապա գիտաշխատող: 1950 թ. Խարկովի Երկաթգծի տրանսպորտի ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական թեզ: Նույն տարում տեղափոխվել է Երևան և աշխատանքի անցել Շինարարության և ճարտարապետության ԳՀ ինստիտուտում որպես գիտաշխատող, ապա լաբորատորիայի վարիչ: 1961 թ. նրա ղեկավարած լաբորատորիան տեղափոխվել է Քար և սիլիկատներ ԳՀ ինստիտուտ և նա նշանակվել է Կապակցող նյութեր լաբորատորիայի վարիչ: Այդտեղ նա բեղմնավոր գիտական և ճարտարագիտական գործունեություն է ծավալել, հրատարակել հարյուրից ավելի աշխատություններ, ստացել երկու տասնյակ հեղինակային իրավունքներ: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են տասից ավելի թեկնածուական թեզեր: 1971 թ. Նովոչերկասկի Պոլիտեխնիկ ինստիտուտում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Կավահողային ցեմենտ» թեմայով: 1971 թ. մշտական աշխատանքի է անցել ԵՊԻ-ում, եղել է քիմիատեխնոլոգիական ֆակուլտետի սիլիկատների տեխնոլոգիա ամբիոնի վարիչը (1971-1985 թթ.):

Եղել է տարբեր ուսումնական և գիտական խորհուրդների անդամ: Հեղինակ է «Глиноземисто-белитовый цемент» (Է., 1969) մենագրության:



ԶՈՒՆՈՒՄՅԱՆ ՆՇԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (08.04.1946,

Կոկինո, Հունաստան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2008):

Ավարտել է Կիրովականի (Վանաձոր) թիվ 9 դպրոցը (1963), իսկ 1971 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: 1973-1975 թթ. եղել է ԽՍՀՄ ԳԱ Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգի) Սիլիկատային քիմիայի ինստիտուտի ասպիրանտ, 1978 թ. պաշտպանել է թեկնածուական ատենա-

խոսություն «Բարդ կառուցվածքի սիլիկատային բյուրեղավանդակների տատանումները» թեմայով:

Աշխատել է «Կիրշին» տրեստում (1964-1965), ԵՊՀ տեսական քիմիայի ամբիոնի լաբորանտ (1971), ՀՀ ԳԱ ԸԱՔԻ-ում ավագ-ճարտարագետ (1971-1973, 1976-1977), կրտսեր (1977-1979), ավագ (1979-1994) գիտաշխատող, լաբորատորիայի վարիչ (1994 թ.-ից), գիտական գծով փոխտնօրեն (2006-2019):

Աշխատանքները վերաբերում են սիլիկատային միացությունների կառուցվածքային առանձնահատկությունների ուսումնասիրությանը, սիլիկատային ապարների քիմիական մշակմանը, սիլիկատային և սիլիցիում-օրգանական միացությունների սինթեզին, դրանց հատկությունների ուսումնասիրությանը:

Հեղինակ է ավելի քան 175 աշխատության: Անդամ է մասնագիտական և գիտական խորհուրդների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 4 ատենախոսություն:



ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ՎԱՀԱՆԻ (14.10.1946,

Երևան), քիմիկոս-տեխնոլոգ: Տեխ. գիտ. թեկն. (1979), պրոֆ. (2009):

Վանաձորում ավարտել է դպրոցը (1966) և ընդունվել ԵՊԻ քիմիատեխնոլոգիական ֆակուլտետը, որն ավարտել է 1971 թ.: 1976-1979 թթ. եղել է Մոսկվայի Դ. Ի. Մենդելեևի անվան քիմիատեխնոլոգիական ինստիտու-

տի ասպիրանտ: 1971-1985 թթ. աշխատել է «Պլաստպոլիմեր» գիտաարտադրական միավորման երևանյան բաժանմունքում (ճարտարագետ, ավագ

գիտաշխատող, լաբորատորիայի վարիչի տեղակալ), 1985-2001 թթ.՝ ԵՊԻ-ում (դոցենտ, ՔՏ և ՔՃ ֆակուլտետի դեկանի տեղակալ), 2000-2003 թթ.՝ Բնապահպանության նախարարության փորձագետ (համատեղություն), 2001-2020 թթ.՝ ՀԱՊՀ-ում (պրոֆեսոր, ՔՏ և ՔՃ ֆակուլտետի դեկան), 2020 թ.-ից ՀԱՊՀ-ի «Լեռնամետալուրգիա և քիմիական տեխնոլոգիաներ» ինստիտուտի գիտական գծով փոխտնօրեն: 1984 թ. ստացել է ավագ գիտաշխատողի, իսկ 1989 թ.՝ դոցենտի կոչումներ:

Հեղինակ է 120 աշխատության, այդ թվում 13 արտոնագրի և պատենտի, 14 ուսումնական ձեռնարկի և 3 դասագրքի (Թադևոսյան Ա. Վ., Մինասյան Ս. Ա. «Մթնոլորտի աղտոտման վերահսկում», Եր., 2004; «Էկոլոգիական ռիսկի գնահատում», Եր., 2006; Սիրականյան Մ. Ա., Թադևոսյան Ա. Վ. «Էկոլոգիական նորմավորում և մոնիթորինգ», Եր., 2015): Եղել է գիտահետազոտական թեմաների ղեկավար: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է 7 թեկնածուական ատենախոսություն: Եղել է մասնագիտական ու գիտական խորհուրդների և հանձնաժողովների անդամ, ՀԱՊՀ գիտատեխնիկական խորհրդի «Երկրաբնապահպանություն» փորձագիտական հանձնաժողովի նախագահ, ՀԱՊՀ – բանբեր «Քիմիական և բնապահպանական տեխնոլոգիաներ» սերիայի գլխավոր խմբագիր:

Ստացել է ԽՍՀՄ-ի գյուտարար կոչում (1982), ՀՀ ԿԳՆ պատվոգիր (2003) և ոսկե մեդալ (2008), ՀՊՃՀ ոսկե հուշամեդալ (2006), ՀԱՊՀ վաստակագիր (2016, 2018), ՌԴ բնագիտական ակադեմիայի կողմից՝ Գիտության և կրթության վաստակավոր աշխատակից (2016) և Գիտության ու տեխնիկայի վաստակավոր գործիչ (2017), «Նոբելի» անվան մեդալ (2018):

Եղել է Էկոլոգիայի և կենսագործունեության անվտանգության միջազգային ակադեմիայի անդամ (2003), ՀՀ ՃԱ թղթակից-անդամ (2013):



ԹԱՀՄԱՋՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԾԵՐՈՒՆԻ (22.06.1931, Հալեպ, Սիրիա – 12.06.2009, Երևան), քիմիկոս-տեխնոլոգ: Քիմ. գիտ. դոկ. (1976), պրոֆ. (1977), ԽՍՀՄ վաստակավոր գյուտարար (1986):

Նախամիջնակարգ կրթությունը ստացել է ծննդավայր Հալեպի հայկական վարժարանում: 1946 թ. ընտանիքով տեղափոխվել է Խորհրդային Հայաստան: Գերազանցությամբ ավար-

տել է Լենինականի (Գյումրի) № 17 դպրոցը, 1950-1955 թթ. սովորել է ԵՊԻ քիմիատեխնոլոգիական ֆակուլտետում, որը գերազանցությամբ ավարտելով մեկնել է Սումգաիթ և աշխատել նորաստեղծ կաուչուկի գործարանում: 1960-ական թթ. սկզբին վերադարձել է Երևան և աշխատել Պոլիպլաստ գործարանում, ապա ընդունվել է Մոսկվայի Էլեմենտորգանական քիմիայի ինստիտուտի ասպիրանտուրան, սակայն սոցիալական դժվարությունների պատճառով ստիպված վերադարձել է Երևան ու ասպիրանտուրան շարունակել ՀՀ ԳԱ ՕՔԻ-ում՝ պրոֆ. Արաքսի Բաբայանի ղեկավարությամբ: Նրա հետ հայտնաբերել է (1964) չորրորդային ամոնիումային միացությունների ներմոլեկուլային ցիկլմամբ վերախմբավորման ռեակցիան: Ստացել է բարձր ջերմաստիճաններում մետաղական կառուցվածքները թթվային քայքայումից (կոռոզիա) պաշտպանող արդյունավետ նյութեր (արգելակիչներ - ինհիբիտորներ): Մշակել է արտադրական և կենցաղային հոսքաջրերի մաքրման արտադրական եղանակ, որը կիրառվել է «Սոյուզ-գազ»-ի ձեռնարկություններում:

1974 թ.-ից աշխատել է ԵՊԻ-ում՝ ամբիոնի պրոֆեսորից դառնալով քիմիական ֆակուլտետի դեկան (1974-1986), նաև զուգահեռաբար ընտրվելով ԵՊԻ օրգանական սինթեզի և տեխնոլոգիայի ամբիոնի վարիչ: Շուրջ 11 տարի ղեկավարել է ՀՀ նախարարների խորհրդին կից ստեղծված հակակոռոզիայի խորհրդի գործունեությունը: Եղել է մի շարք գիտական և մասնագիտական խորհուրդների անդամ, Պատվավոր պրոֆեսոր:

Հեղինակ է «Օրգանական քիմիա» (հ. 1-3, 1992-1995), համահեղինակ՝ «Տեխնոլոգիական պրոցեսների տեսություն» (2003), «Արդյունաբերական և կենցաղային հոսքաջրերի վնասազերծման տեխնոլոգիաներ» (2005) ուսումնական ձեռնարկների: Պարգևատրվել է ՀՀ ԿԳՆ ոսկե մեդալով (2002):



ԹԱՌԱՅԱՆ ՎԵՐԳԻՆԵ ՄԱԿԱՐԻ (06.11.1905, Թիֆլիս – 16.04.1985, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1954), պրոֆ. (1956), ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ (1956), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1961)

1929 թ. ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի մանկավարժական ֆակուլտետի քիմիադեղագործության ուսական բաժինը և աշխատանքի անցել

ՀԽՍՀ ժողովնախորհի կենտրոնական քիմիական լաբորատորիայում, որտեղ շուրջ երկու տարի զբաղվել է հանքանյութերի վերլուծությամբ: 1933-1935 թթ. աշխատել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ընդհանուր քիմիայի ամբիոնում որպես ասիստենտ, 1935-1938 թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղում: 1938 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1939 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1938-1942, 1946-1954 և 1962-1977 թթ. եղել է ԵՊՀ վերլուծական քիմիայի ամբիոնի վարիչ, 1961-1964 թթ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկան:

Ձեռնարկել է նոր գիտական աշխատանքներ մերկուրոմիացությունների վերականգնող հատկությունների ուսումնասիրության ուղղությամբ, մշակել բազմաթիվ տարրերի և իոնների որոշման նոր եղանակներ, ստեղծել ծավալային վերլուծության նոր եղանակ՝ մերկուրոռեդուկտոմետրիա: Զբաղվել է նաև հազվագյուտ հողային տարրերի և ազնիվ մետաղների միկրոքանակների որոշման լուծահանման-լուսաչափական նոր եղանակների մշակմամբ: Առանձնապես կարևոր են հիմնային ներկանյութերի և տարա(հետերո)-պոլիթթթուների փոխազդեցության համալիր ուսումնասիրմանը նվիրված աշխատանքները:

Հեղինակ է ավելի քան 230 աշխատության և «Аналитическая химия рения» (Եր., 1966), «Меркуроредуктометрия. Меркуроредуктометрия как редуктометрический метод объемного анализа» (Եր., 1958, 1980) մենագրությունների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական շուրջ 30 ատենախոսություն:

1965 թ.-ից եղել է ԽՍՀՄ ԳԱ վերլուծական քիմիայի գիտական խորհրդի անդամ, ԵՊՀ-ում գործող գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահ:

Պարգևատրվել է Պատվո նշան շքանշանով, պատվոգրերով և շնորհակալագրերով:



ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՏԻԳՐԱՆԻ

(20.6(3.7).1906, Թիֆլիս – 18.12.1973, Երևան), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դոկ. (1956), պրոֆ. (1957), ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ (1968), ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961):

Դպրոցը ավարտել է Թբիլիսիում, 1925 թ.-ից տեղափոխվել է Երևան և 1993 թ. ավարտել Հայկական մանկավարժական ինստիտուտի քիմիայի ֆակուլտետը, որից հետո աշխատել է ԵՊԻ օրգանական քիմիայի ամբիոնում որպես լաբորանտ, այնուհետև դասախոսական ասիստենտ: 1936-1939 թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտի ասպիրանտուրայում, 1940 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, վիրավորվել և զորացրվել: 1943 թ. վերջից աշխատել է Քիմիայի ինստիտուտում, որտեղ մինչև 1955 թ. գիտաշխատողից հասել է Օրգանական սինթեզի բաժնի վարիչի պաշտոնին: 1956 թ.-ից մինչև կյանքի վերջը աշխատել է ՆՕՔԻ-ում՝ ղեկավարելով տարացիկլային միացությունների բաժինը: Աշխատանքները վերաբերում են էթիլենային կապի ռեակցիաունակության վրա արոմատիկ տեղակալիչների ազդեցությանը: Վինիլային տեսակի քլորիդների ձմբաթթվային հիդրոլիզով ստացել է բազմակրորիզ հիդրոարոմատիկ կետոններ, մորֆինի ածանցյալներ, նոր ալկալոիդներ, տրանկվիլիզատորային հատկությամբ օժտված մի շարք միացություններ:

Եղել է «Հայկական քիմիական ամսագրի» պատասխանատու խմբագիր (1963-1973), ՀՀ ԳԱ «Տեղեկագիր» (քիմիական գիտություններ) ամսագրի խմբագրի տեղակալ, ակադեմիայի ֆիզիկամաթեմատիկական, բնական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի գիտական քարտուղար:

Հեղինակ է ավելի քան 100 գիտական հոդվածի, ինչպես նաև «Ангидроневые основаная β-карболинового ряда» մենագրության:

Պարգևատրվել է Պատվո նշան շքանշանով և մեդալներով:

**ԹԱԴԵՎՈՍՅԱՆ****ՅՈՒՐԻ****ՎԻԿՏՈՐԻ**

(18(02).02(10).1947, գ. Մեծ Գոնդուրա (այժմ՝ Վրաստանի Նինոծմինդայի շրջանում) – 17.06.2017, Երևան), կենսաքիմիկոս: Կենս. գիտ. դոկ. (1996), պրոֆ. (2008):

1970 թ. ավարտել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը և աշխատանքի անցել ՀՀ ԳԱ կենսաքիմիայի ինստիտուտի լիպիդների կենսաքիմիայի լաբորատորիայում որպես ավագ լաբորանտ, 1973 թ. նշանակվել է կրտսեր, իսկ 1985 թ.՝ ավագ գիտաշխատողի պաշտոնում: 1978 թ. ստացել է կենս. գիտ. թեկն. գիտական աստիճան: Այս շրջանի գիտական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և բնութագրվել են լիպիդային փոխանակության տարբեր ֆերմենտային համակարգեր բջջաթաղանթում և ենթաբջջային թաղանթային գոյացություններում: Բացահայտվել են նաև ֆոսֆոնիոզիտիդային ազդանշանային և լիպիդային վերափոխման (մոդիֆիկացման) համակարգերի արագընթաց և փոխկապակցված գործընթացների կոոպերացման մեխանիզմները նորմայում, ինչպես նաև դրանց խանգարումների առանձնահատկությունները օրգանիզմի տարբեր փորձարարական և հիվանդագին վիճակների ժանանակ:

1987 թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱ փորձարարական կենսաբանության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող և գիտական խմբի ղեկավար: 1996 թ. վերանվանված Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտում զբաղեցրել է առաջատար գիտաշխատողի պաշտոն, իսկ 1997-2017 թթ. ղեկավարել է բջջային ակտիվության կարգավորման լաբորատորիայի աշխատանքները:

Ավելի ուշ շրջանի հետազոտությունները նվիրված են արյան լիմֆոցիտների բջջաթաղանթում ազդանշանային և լիպիդային վերափոխման կոոպերատիվ գործառույթների ուսումնասիրությանը նորմայում, ինչպես նաև տարբեր չարորակ նորագոյացությունների ժամանակ դրանց խանգարումների մոլեկուլային ախտաբանական մեխանիզմների բացահայտմանը: Այս հետազոտությունները նպատակամղված են քաղցկեղի ախտորոշման, հիվանդագին վիճակի գնահատման և բուժման արդյունավետ եղանակների մշակմանը: Ստացված գիտական արդյունքների հիման վրա ստացել է (2008 թ., 2009 թ.) գյուտի 2 արտոնագիր:

Հեղինակ է շուրջ 115 աշխատության: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 8 ատենախոսություն:



ԹԱՎԱԴՅԱՆ ԼԵՎՈՆ ԱՂԱՍՈՒ (09.06.1951, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1988), պրոֆ. (1989), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (2014), ՀՀ գիտության վաստակավոր գործիչ (2014):

1968 թ. ավարտել է Երևանի թիվ 20 միջնակարգ դպրոցը, 1973 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, 1976 թ.՝ Մոսկվայի քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան: 1977 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1973 թ.-ից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ քիմիական ֆիզիկայի (այժմ՝ ՀՀ ԳԱԱ Ա. Բ. Նալբանդյանի անվան) ինստիտուտում որպես ավագ լաբորանտ, ապա՝ գիտական խմբի ղեկավար, լաբորատորիայի վարիչ, 1984-2006 թթ.՝ գիտության գծով փոխտնօրեն, 2007-2018 թթ.՝ ինստիտուտի տնօրեն: 2011 թ.-ից ՀՀ ԳԱԱ քիմիական և Երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարն է: 1991-2007 թթ. դասավանդել է ԵՊՀ-ում:

Հայտնաբերել է բազմակենտրոն շղթայական գործընթացներում ընտրողական արգելակման նոր երևույթ (ԽՍՀՄ հայտնագործություն թիվ 338), ստեղծել է բարդ քիմիական ռեակցիաների արժեքավորման տեսությունը և համապատասխան հաշվողական ծրագիրը: Քիմիական կինետիկա է ներմուծել նոր արժեքային հասկացություններ, որոնցով թվայնորեն ի հայտ է բերվում քիմիական բաղադրիչների և բարդ ռեակցիաների առանձին փուլերի կինետիկական դերը: Հայտնաբերել է նոր երևույթներ հեղուկաֆազ ազատ-ռադիկալային տարրական ռեակցիաներում, առաջարկել կենսանմանակման հիման վրա օքսիդացման ռեակցիաների նոր դասի կատալիզատորներ և հակաօքսիդիչներ: Նրա նորարարական բազմաթիվ առաջարկություններ գրանցվել են ՀՀ Ստանդարտների ազգային ինստիտուտում:

Հեղինակ է ավելի քան 150 գիտական աշխատության և համահեղինակ՝ «Анализ кинетических моделей химических реакционных систем. Ценностный подход» (Եր., 2005); «Tocopherol Concentration and Antioxidant Efficacy» (Champaign, Illinois, USA, 2008); «Analysis of Kinetic Models of Chemical Reaction Systems. Value Approach» (2014, New York) մենագրությունների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 8 ատենախոսություն:



ԹՈՐՈՍԵՎԻՉ ԹԵՈՂՈՐ ԲՈԳԴԱՆԻ (Թորթոյան Թադևոս Ասատուրի (07.(18).9.1789, Ստանիսլավ, այժմ՝ Իվանո-Ֆրանկովսկ – 29.03(10.4).1876, Լվով), բժիշկ, դեղագործ, քիմիկոս, հասարակական գործիչ:

Ավարտել է Վիեննայի համալսարանի բժշկական ֆակուլտետը (1812): 1815 թ.-ից աշխատել է Լվովում, 1819 թ. հիմնել դեղատուն, քիմիական լաբորատորիա: Պատրաստել է բուսական, կենդանական և քիմիական ծագման տարբեր դեղեր: Ուսումնասիրել է Տրուսկավեց, Նեմիրով, Դրոգոբիչ և այլ առողջավայրերի հանքային ջրերի բուժիչ հատկությունները, արդյունքներն ամփոփել «Գալիցիայի և Բուկովինայի թագավորությունների հանքային աղբյուրները» աշխատությունում:

Տրուսկավեցում կատարել է «Ֆերդինանդ», «Մարիա» և «Նավթա» (այժմ՝ «Նավթույա») հանքային աղբյուրների ջրի քիմիական վերլուծությունը, շրջակայքում հայտնաբերել հանքամուխ հարուստ պաշար, որը նպաստել է Լեհաստանում օժանդելիքի արդյունաբերության զարգացմանը: Ուսումնասիրել է ապակիների տարբեր հատկությունները և ստացել դեղասրվակների համար պիտանի կարմիր ու դեղին ապակի: Մասնակցել է Լվովի հայկական համայնքի կյանքին, զբաղվել բարեգործությամբ, իր միջոցներով Լվովում բացել է հոգևոր դպրոց: Լվովի բժշկական ինստիտուտի թանգարանում գտնվում է նրա կիսանդրին: Նրա անունով է կոչվել Լվովի փողոցներից մեկը: Տրուսկավեցի առողջարանային համալիրի կենտրոնական շենքի պատին ամրացված է նրա հուշատախտակը:



ԹՈՐՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (16.12.1947, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1986), պրոֆ. (1995): Ամուսինն է Դ. Հովհաննիսյանի:

1965 թ. ավարտել է դպրոցը և ընդունվել ԵՊԻ քիմիատեխնոլոգիական ֆակուլտետը, որն ավարտելով, 1970 թ. ընդունվել է ՀԽՍՀ ԳԱ ՕՔԻ ասպիրանտուրան:

1975 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ չորրորդային ամոնիումային աղերի ներմուղեկուլային ցիկլման ռեակցիայի վերաբերյալ: 1974-1988 թթ. աշխատել է ՕՔԻ-ում ավագ լաբորանտից դառնալով միջգերատեսչական (ՕՔԻ, Քիմիական ռեակտիվների գործարան, ԵՊՀ) գիտատեխնիկական լաբորատորիայի վարիչ: 1982 թ. ստացել է ավագ գիտաշխատողի կոչում: 1973-1985 թթ. վերապատրաստվել և աշխատանքային գործունեություն է ունեցել Մ. Լոմոնոսովի անվան ՄՊՀ քիմիայի ֆակուլտետում, ԽՍՀՄ ԳԱ Սիբիրյան բաժանմունքի օրգանական քիմիայի ինստիտուտում, Կազանի համալսարանում և Ուֆայի նավթային ինստիտուտում: 1979 թ.-ից գիտական ուսումնասիրությունները կապված են միջֆազային կատալիզի բնագավառի հետ, որի հենքում ընկած է ՀՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Թ. Բաբայանի 1950-ական թթ. հայտնաբերած քիմիական որոշ ռեակցիաների իրականացման հնարավորությունը չորրորդային ամոնիումային աղերի ներկայությամբ: Այս բնագավառում հմտացել է՝ աշխատելով առաջատար համալսարանների քիմիայի լաբորատորիաներում (Ճապոնիա, Հոլանդիա, Գերմանիա, Իտալիա, Թուրքիա, Իսպանիա): 1990 թ.-ից աշխատում է ԵՊԻ-ում, եղել է «Սոյուզագազի» հայկական միավորման պետի՝ Գ. Ա. Թաթարյանի, գիտական խորհրդատուն և իրականացրել ներդրումային աշխատանքներ: 1991-1994 թթ. աշխատել է ՀՀ ԲԿԳ նախարարությունում որպես Բարձրագույն կրթության վարչության պետ և դասավանդել ԵՊՀ-ում և ԵՊԻ-ում: 1994-2002 թթ. միաժամանակ աշխատել է ԵՊՀ-ում, ՀՊՃՀ-ում, ԵՃՇՊՀ-ում, «Հրաչյա Աճառյան» համալսարանում և ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Պարեն» գիտաարտադրական միավորումում: 1999 թ.-ից աշխատում է ՀՊՃՀ ՔՏ և ՔՃ դեպարտամենտի ՕՆՍՍ և ՔՃ ամբիոնում որպես պրոֆեսոր, իսկ 2001 թ.-ից որպես նույն ամբիոնի վարիչ: 2006 թ. նշանակվել է ՀՊՃՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, 2010 թ.-ից ՀՊՃՀ քիմիական տեխնոլոգիաների, իսկ 2016 թ.-ից քիմիա-կենսա և բնապահպանական տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ: Աշխարհի շուրջ 60 երկրներում մասնակցել է միջազգային գիտաժողովների աշխատանքներին, ինքն էլ կազմակերպել է մասնագիտական գիտաժողովներ: Եղել է միջազգային մասնագիտական մի քանի ամսագրերի խորհրդի, ՀՀ ԲԿԳ նախարարության կոլեգիայի և մասնագիտական խորհուրդների անդամ: Ղեկավարել է միջազգային և հանրապետական գիտական դրամաշնորհային ծրագրեր:

1993 թ. Գրքաշարյան եղբայրների հետ Փարիզում նախաձեռնել է «Արարատ» ակադեմիայի ստեղծումը:

Հեղինակ է մոտ 500 գիտական աշխատության, որից 30-ը՝ հեղինակային իրավունք: Զանգվածային լրատվամիջոցներում տպագրել է մոտ 300 հոդվածներ, որոնք հիմնականում ամփոփված են «Հետադարձ հայացք կամ 20 տարի անց» (Եր., 2018) գրքում: Հեղինակ և համահեղինակ է «Օրգանական քիմիա», «Էկոլոգիական էկոնոմիկա», «Հոսքաչրերի մաքրումը օրգանական մնացուկներից» բուհական դասագրքերի, բազմաթիվ ուսումնական ձեռնարկների և մեթոդական աշխատանքների:

Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել են թեկնածուական 29 և դոկտորական 3 ատենախոսություն:

Արժանացել է ՀԱՊՀ-ի ոսկե մեդալի և վաստակագրերի, պատվոգրերի, Նանսենի անվան մեդալի: Անդամ է ՀՀ, Ուկրաինայի և Միջազգային ճարտագիտական ակադեմիաների:



ԹՈՔՄԱՋՅԱՆ ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳԻ (08.07.1951,

Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2012), պրոֆ. (2014):

1968 թ. ավարտել է թիվ 55 դպրոցը, 1973 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, 1977 թ.՝ ասպիրանտուրան: 1979 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 2003 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1973-1979 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ ՕՔԻ-ի ավագ լաբորանտ, ապա՝ կրտսեր գիտաշխատող, 1979-1980 թթ.՝ քիմիական ռեակտիվների համամիութենական ինստիտուտի հայկական մասնաճյուղի ավագ գիտաշխատող: 1980 թ.-ից աշխատում է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում, 2005 թ.-ից՝ նաև ամբիոնի ազոտ, թթվածին և ծծումբ պարունակող հետերոցիկլիկ միացությունների քիմիայի լաբորատորիայի ավագ գիտաշխատող: 1990 և 1994 թթ. գործուղվել է Ռոստոկի համալսարան (Գերմանիա) և կատարել համատեղ գիտական աշխատանքներ գերմանացի գործընկերների հետ:

Աշխատանքները վերաբերում են թթվածին և ազոտ պարունակող տարացիկլային միացությունների բնագավառին՝ չհագեցած γ- և δ- լակտոնների ստացման նոր եղանակների մշակմանը և դրանց հիմքի վրա պոտենցիալ կենսաբանորեն ակտիվ նոր ածանցյալների սինթեզին:

Հեղինակ է շուրջ 100 գիտական աշխատության, այդ թվում՝ «Կենցաղային քիմիա» (Եր., 2013), «Միջֆազային կատալիզը որոշ օրգանական ռեակցիաներում» (Եր., 2014), «Չհագեցած միացությունների քիմիա» (Եր., 2015) և «Սննդի քիմիա» (Եր., 2019) ուսումնական ձեռնարկների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 4 ատենախոսություն:



ԹՈՓՈՒՋՅԱՆ ՎԻԳԵՆ ՕՆԻԿԻ (18.02.1951, Բեյրութ), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դոկ. (2004), պրոֆ. (2007), ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2014):

Ավարտել է Երևանի N 78 դպրոցը (1968) և ԵՊՀ-ն (1974): 1974 թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱԱ ՆՕՔԻ ամինաթթուների և պեպտիդների ֆիզիոլոգիապես ակտիվ ածանցյալների սինթեզի լաբորատորիայում, 1992-1997 թթ.՝ նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում որպես մասնագետ, ապա վարչության պետ: 2006 թ. նշանակվել է ՀՀ ԳԱԱ ՆՕՔԻ տնօրեն, իսկ 2007 թ. ՆՕՔԻ հետ ՕՔԻ և ՄԿՈՒԿ-ի միավորումից հետո ստեղծված Օրգանական և դեղագործական քիմիայի ԳՏ կենտրոնի տնօրեն (2007-2018 թթ.): 2018 թ.-ից նույն կենտրոնի գիտահետազոտական աշխատանքների ղեկավարն է, միաժամանակ ՆՕՔԻ N4 լաբորատորիայի վարիչը:

Աշխատանքները վերաբերում են հագեցած և α , β -դեհիդրոամինաթթուների քիմիային, բնական և չհագեցած ամինաթթուների և պեպտիդների սինթեզին և հատկությունների ուսումնասիրություններին, որոնց ուղղությամբ պաշտպանել է դոկտորական թեզ:

Հեղինակ է շուրջ 180 աշխատության, այդ թվում 11 հեղինակային իրավունքի և ուսումնական 2 ձեռնարկի: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 10 ատենախոսություն:

Անդամ է ՌԴ բնական ԳԱ, մասնագիտական և գիտական խորհուրդների:

Գլխավոր խմբագիրն է «Некоторые успехи органической и фармацевтической химии» (2012, 2015, 2017) և «Синтезы гетерециклических соединений» (2018, 2019) աշխատանքների ժողովածուների:



ԹՈՂՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ ԱՐՄԵՆԻ (14.05.1989, Երևան), կենսաքիմիկոս, մանրէաբան: Կենս. գիտ. դոկ. (2017), պրոֆ. (2021):

2005 թ. ավարտել է Երևանի թիվ 8 միջնակարգ դպրոցը, 2011 թ.՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի մագիստրատուրան և ընդունվել ասպիրանտուրա, 2013 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 2019 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում: 2021 թ.-ից աշխատել է ՀՀ ԿԳՄՍ փոխնախարար:

2009 թ.-ից աշխատել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում, 2015-2019 թթ. եղել է ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ, 2019 թ.-ից՝ նույն ամբիոնի դոցենտ: 2015 թ. նշանակվել է նորաստեղծ Կենսաբանության ԳՀ ինստիտուտի փոխտնօրեն: Նրա անմիջական մասնակցությամբ ստեղծվել է ԵՊՀ մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնը, որի տնօրենն է 2018 թ.-ից:

Զբաղվում է մանրէներում, մասնավորապես աղիքային ցուպիկում (*Escherichia coli*) և կլոստրիդիումներում առկա տարբեր հիդրոգենազների դերի պարզաբանմամբ խմորման ընթացքում միջավայրի տարբեր պայմաններում: Հիդրոգենազների միջոցով մանրէներն արտադրում են մոլեկուլային ջրածին (H_2), որը այլընտրանքային և վերականգնվող էներգիայի աղբյուր է: Ցույց է տվել գլիցերոլի, գլյուկոզի և ածխածնի տարբեր աղբյուրների խառնուրդների խմորման ընթացքում H_2 -ի արտադրության համար պատասխանատու հիդրոգենազները: Հաջողվել է գտնել H_2 -ի արտադրության նպաստավոր պայմանները և երկարաձգել այդ կենսատեխնոլոգիական գործընթացը (մինչև 240 ժամ): Առաջին անգամ ցույց է տրվել հիդրոգենազ ֆերմենտների դարձելիությունը: Առաջարկել է խմորման կենսաէներգետիկայում պրոտոնաշարժ ուժի առաջացման նոր տեսակետ, որը լրացնում է Միտչելի քեմիոսմոսային տեսությանը:

Հեղինակ է շուրջ 100 գիտական աշխատության: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 1 ատենախոսություն:

Գիտական աշխատանք է կատարել և դասախոսություններ կարդացել արտերկրյան մի շարք համալսարաններում և գիտական կենտրոններում:

Անդամ է Ամերիկայի մանրէաբանական ընկերության և ՀՀ-ում այդ ընկերության դեսպանը: Անդամակցում է եվրոպական կենսաքիմիկոսների և մանրէաբանների ընկերություններին: Եղել է «Nature Scientific Reports, Frontiers in Microbiology» միջազգային հանդեսների խմբագիր:

2019 թ. արժանացել է ԵՊՀ ոսկե մեդալի, 2014 թ.՝ Հայկյան մրցանակի, 2013 թ.՝ ՀՀ ԳԱԱ «Ակադեմիա» և այլ մրցանակների:



ԹՈՒՄԱՆՅԱՆ ԲՈՐԻՍ ՊԵՏՐՈՍԻ (04.07.1948, Բաքու), նավթաքիմիայի և գազի արդյունաբերության բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դոկ. (1993), պրոֆ. (1993):

Ավարտել է Մոսկվայի նավթաքիմիայի և գազի արդյունաբերության ինստիտուտը (1971): 1993 թ.-ից եղել է Ռուսաստանի նավթի և գազի պետական ակադեմիայի վարիչ, 2001-2003 թթ.՝ «Ռուստեխէքսպերտիզա» ընկերակցության գլխավոր, 2003 թ.-ից՝ գիտության, տեխնոլոգիաների և միջազգային կապերի գծով տնօրեն:

Աշխատությունները վերաբերում են նավթային հումքի մշակման և նավթային դիսպերս համակարգերում ֆազային անցումների կարգավորման, նախատեխնոլոգիաների, նավթային հումքի մշակման մեխանիկաքիմիական և ալիքային գործընթացների առանձնահատկություններին:

Հեղինակ է մենագրությունների և ուսումնամեթոդական ձեռնարկների: Եղել է «Նավթի և գազի տեխնոլոգիա» (ռուս.) ամսագրի գլխ. խմբագիր, «Վառելանյութերի և յուղերի քիմիա և տեխնոլոգիա» (ռուս.) ամսագրի գլխավոր խմբագրի տեղակալ:

Անդամ է ՌԴ բնական ԳԱ:



ԹՈՒՏԵԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ (08.02.1942, Մոսկվա), կենսաքիմիկոս, թունաբան: Բժշկ. գիտ. դոկ. (1977), ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2008), ՌԴ ԳԱ (2013) և ՌԲԳԱ ակադեմիկոս (1997, թղթ. անդամ՝ 1993), ՌԴ գիտության վաստակավոր գործիչ (2005), ՌԴ կառավարության մրցանակակիր (2008):

1965 թ. ավարտել է Մոսկվայի 1-ին բժշկական ինստիտուտը, 1965 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Роль ферментов лизосом в процессе адаптации к характеры питания» թեմայով: Դոկտորական ատենախոսության թեման է «Ферментная характеристика лизосом и ее изменения под влиянием алиментарных и токсических факторов»:

2015-2017 թթ. եղել է ՌԲԳԱ ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնակատար, 1980 թ.-ից՝ Սննդի ԳՀ ինստիտուտի (Մոսկվա) սննդի բաժնի վարիչ, ՌԲԳԱ սննդի ինստիտուտի տնօրեն, «Вопросы питания» գիտական ամսագրի գլխավոր խմբագիր, Առողջապահության համաշխարհային կազմակերպության փորձագետ սննդի անվտանգության հարցերով:



ԻՆՃԻԿՅԱՆ ՄԱՅԱ ՀՐԱՆՏԻ (01.05.1930, Մոսկվա – 13.12.2013, Երևան), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դոկ. (1966), պրոֆ. (1973), ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1986-ից): Կինն է Ռ. Խաչատրյանի:

Ավարտել է ՄՊՀ (1953) և նույն թվականից աշխատել ՀՀ ԳԱԱ ՕՔԻ-ում, 1970 թ.-ից՝ տարրօրգանական միացությունների լաբորատորիայի վարիչ, 2003-2013 թթ. միաժամանակ՝ փոխտնօրեն: 1980-ական թթ. համատեղությամբ աշխատել է ԵՊՀ-ում:

Աշխատանքները վերաբերում են ջրահիմնային միջավայրում չորրորդային ամոնիումային աղերի առկայությամբ ընթացող ակիլացման ռեակցիաների ուսումնասիրությանը: Հայտնաբերել է (1961, Ա. Բաբայանի հետ), α և β չհագեցած խմբեր պարունակող չորրորդային ամոնիումային աղերում ընթացող նոր ռեակցիա և անվանել «վերախմբավորման-ճեղքման ռեակցիա»: ՀՀ-ում առաջինն է հետազոտել ֆոսֆոր- և բորօրգանական միացությունները: Ուսումնասիրել է չհագեցած խումբ պարունակող չորրորդային ֆոսֆոնիումային աղերի իզոմերիան, հիմնային հիդրոլիզի և ջերմային ճեղքման ռեակցիաները: Ստացել է նոր տեսակի ֆոսֆորետախիններ: Սինթեզել է բույսերի պաշտպանության մի շարք ակտիվ պատրաստուկներ, ուսումնասիրել ածխածին-տարր (ազոտ, ծծումբ, թթվածին, հալոգեն) կապի խզման ռեակցիաները:

Եղել է մասնագիտական, գիտական և խմբագրական խորհուրդների անդամ: Պատրաստել է քիմ. գիտ. թեկնածուներ և դոկտորներ:

Ստացել է ՀՀ Անանիա Շիրակացու մեդալ (2003):



ԻՍԱԳՈՒԼՅԱՆՑ ՎԱԶԵ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (ԻՎԱՆՆԻ) (10.04.1893, Շուշի – 22.01.1973, Մոսկվա), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1932), պրոֆ. (1936), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943):

Ավարտել է Շուշիի ռեալական դպրոցը, 1917 թ.՝ Մոսկվայի առևտրի ինստիտուտի տեխնոլոգիական ֆակուլտետը: 1921-1930 թթ. աշխատել է Մոսկվայի քիմիա-դեղագործական գործարանում (Կարպովի անվան), ապա անցել գիտամանկավարժական աշխատանքի Մոսկվայի ժողովրդական տնտեսության, ապա՝ Դ. Ի. Մենդելեևի անվան քիմիատեխնոլոգիական ինստիտուտներում (1931-1932 թթ.): 1933–1941 թթ. եղել է Մոսկվայի նավթի քիմիայի և գազի արդյունաբերության ինստիտուտի նավթի քիմիայի ամբիոնի վարիչ, ապա՝ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր: Միաժամանակ Մոսկվայում ղեկավարել է օժանելիքային քիմիայի, հատկապես անուշահոտ (բուրավետ) նյութերի բնագավառում տարվող հետազոտությունները՝ ստեղծելով այդ ճյուղի հայրենական առաջին արտադրության հիմքերը Կալուգայի կոմբինատում:

1941 թ. հրավիրվել է Երևան և ղեկավարել ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (Արմֆան) քիմիայի ինստիտուտը (1941-1946 թթ.) և միաժամանակ զբաղվել ացետիլենի քիմիայի ու տեղական արդյունաբերության թափոնների օգտագործման հետազոտություններով: 1942-1946 թթ. աշխատել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում, 1942-1944 թթ.՝ ղեկավարել օրգանական քիմիայի ամբիոնը:

1946 թ. հրավիրվել է Մոսկվա, ղեկավարել նավթաքիմիական և գազային արդյունաբերության ինստիտուտը (1946-1963 թթ.), 1963-1973 թթ.՝ նույն ինստիտուտի հավելանյութերի պրոբլեմային լաբորատորիան:

ՀՀ-ում աշխատելու տարիներին համագործակցել է պրոֆեսորներ Ս. Ղամբարյանի և Ա. Մնջոյանի հետ: Նա օրգանական քիմիայի ճանաչված մասնագետ էր, Խորհրդային Միության օժանելիքի և բուրումնավետ նյութե-

րի քիմիայի ու նավթաքիմիայի հիմնադիրը: Սինթեզել է սինթետիկ, իսկ դեղաբույսերից՝ բնական հոտավետ նյութեր: Մշակել է նեոսավարսանի, նավթի ածխաջրածիններից երրորդային սպիրտների և թթվածին պարունակող մի շարք արժեքավոր ածխաջրածինների ստացման եղանակներ: Ստեղծել է կատիոնների ներկայությամբ ֆենոլների ալկիլման անընդհատ եղանակ և առաջինն է կիրառել եթերի բացակայությամբ ալկիլ- ու արիլ- մազնեզիումի հալոգենիդների հիմքով սինթեզի և քայուղերի որակի բարձրացման եղանակները:

Հեղինակ է «Синтетические душистые вещества» (2-е изд., Ер., 1947); «Химия нефти» (М.- Л., 1949); «Ионообменный катализ» (Катализ в присутствии ионообменных смол) (Ер., 1975) մենագրությունների, համահեղինակ՝ «Химия нефти. Руководство к лабораторным занятиям (для нефт. специальностей вузов)» (М., 1965) ձեռնարկի:



ԻՐԱԴՅԱՆ ՄԵԼՔՈՆ ԱՐՓԻԱՐԻ (18.03.1942, ք. Տիրգովիշչե (Բուլղարիա) – 27.10.2018, Երևան), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դոկ. (1995):

Ավարտել է ԵՊՀ-ն (1966): 1959 թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱԱ ՆՕՔԻ-ի հակառուտուցքային միացությունների սինթեզի լաբորատորիայում, 1994 թ.-ից՝ առաջատար գիտաշխատող:

Աշխատանքները վերաբերում են իմիդազոլի ածանցյալների հիման վրա նոր հակառուտուցքային միացությունների սինթեզին:

Եղել է ՌԴ բնական ԳԱ անդամ (1998):

ԼՈՐՅԱՆ ՎԱԶԳԵՆ ԷԴՎԱՐԴԻ (12.05.1952, Վանաձոր), ֆիզքիմիկոս: Տեխ. գիտ. դոկ. (1995):

Ավարտել է ԵՊԻ-ն (1974): Աշխատել է ԽՍՀՄ գյուտարարական բարձրաչափմաստիճանային տաքացուցիչների գործարանին կից էլեկտրաջերմային սարքավորումների ՀամԳՀԻ-ում, 1985-1988 թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի Չեռնոգոլովկայի մասնաճյուղում, 1988 թ.-ից՝ ՌԳԱ կառուցվածքային մակրոկինետիկայի և նյութագիտության հիմնահարցերի ինստիտուտում:

Աշխատանքները վերաբերում են ինքնատարածվող բարձրջերմաստիճանային սինթեզի ռեժիմում, մասնավորապես, բոր, սիլիցիում, ալյումինում, տիտան, ցիրկոնիում քիմիական տարրերի և դրանց խառնուրդների՝ ազոտի միջավայրում 0.5-700 ՄՊա ճնշման պայմաններում այրման գործընթացների ուսումնասիրությանը: Ստեղծել է նիտրիդային խեցեղենից փոշիների և այլ արտադրանքի ստացման՝ աշխարհում նմանօրինակը չունեցող տեխնոլոգիաներ:

Արժանացել է ԽՍՀՄ ԺՏՆՑ ոսկե մեդալի (1991):



ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԵԼ ՍԱՄՍՈՆԻ (16.12.1924, գ. Բռուն – 06.02.1997, գ. Բռուն (այժմ՝ գ. Ակներ՝ ՀՀ Սյունիքի մարզ)), կենսաքիմիկոս: Բժշկ. գիտ. դոկ. (1964), պրոֆ. (1965):

Ավարտել է գյուղի դպրոցը, Գորիսի մանկավարժական ուսումնարանը և որպես մաթեմատիկայի ուսուցիչ աշխատել Գորիսի շրջանի Ձորաշեն գյուղում: 17 տարեկանում մեկնել է ռազմաճակատ և կռվել մինչև Հայրենական պատերազմի ավարտը (1945): 1947 թ. ընդունվել է ԵԲԻ և ավարտել 1953 թ.: Ասպիրանտուրան ավարտելուց հետո ԵԲԻ-ում աշխատել է ասիստենտ, կենսաքիմիայի ամբիոնի դոցենտ, 1965-1983 թթ.՝ նույն ամբիոնի պրոֆեսոր, 1963-1968 թթ.՝ ԵԲԻ պրոռեկտոր, 1968-1969 թթ.՝ ռեկտոր, 1967-1983 թթ., միաժամանակ՝ իր նախաձեռնությամբ կազմակերպած գլխուղեղի կենսասինթետիկ ռեակցիաների ԳՀ լաբորատորիայի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են գլխուղեղի բարձրագույն գործառույթների, մասնավորապես մտածողության և հիշողության կենսաքիմիական ուսումնասիրությանը:

Հեղինակ է 100-ից ավելի գիտական աշխատության և մի քանի գրքերի՝ «Կենսաքիմիա» (Եր., 2001) (համահեղինակ): «Биохимия головного мозга при нормальных физиологических условиях: гексомонофосфатный шунт в мозгу» (Ե., 1967); «Биохимия нуклеиновых кислот и высшие функции головного мозга» (Ե., 1981):

Եղել է ՀՀ կենսաքիմիկոսների ընկերության նախագահ (1991 թ.-ից):

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԼԱՎՐԵՆՏ ԱՐՏԱՎԱԶԴԻ (10.02.1950, գ. Աղին, ՀՀ Շիրակի մարզ), ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1998):

Ավարտել է ԵՊՀ-ն (1972): 1972-1999 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ածխաջրածինների օքսիդացման լաբորատորիայում:

Աշխատանքները վերաբերում են պարզագույն ածխաջրածինների, ինչպես նաև էթիլենի օքսիդացման առանձնահատկություններին՝ ջերմային, ենթակարմիր, լազերային և անդրամանուշակագույն ճառագայթման ազդեցության պայմաններում: 1999 թ.-ից ապրում է ԱՄՆ-ում:



ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԳՈՒՐԳԵՆԻ (11.01.1948, Էջմիածին), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1998), պրոֆ. (2007):

1965 թ. ավարտել է Երևանի թիվ 122 դպրոցը, 1970 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, 1974 թ.՝ ասպիրանտուրան (Կիևում): 1974 թ. պաշտպանել է թեկնածուականատենախոսություն, 1990 թ. նրան շնորհվել է դոցենտի

կոչում:

1974-1976 թթ. եղել է ԵՊՀ անալիտիկ քիմիայի ամբիոնի գիտահետազոտական մասի կրտսեր գիտաշխատող, 1976-1983 թթ.՝ հատուկ մաքրության նյութերի և քիմիական ռեակտիվների Համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի անօրգանական նյութերի երևանյան բաժնի ավագ գիտաշխատող, բաժնի վարիչ, լաբորատորիայի վարիչ, 1983-2013 թթ.՝ ԵՊՀ վերլուծական քիմիայի ամբիոնի վարիչ, 2013 թ.-ից՝ անօրգանական և վերլուծական քիմիայի ամբիոնի պրոֆեսոր:

Հեղինակ է ավելի քան 200 գիտական հոդվածի՝ նվիրված հիմնային օրգանական ներկանյութերի կիրառմամբ ազնիվ մետաղների, հազվագյուտ և ցրված տարրերի փոքր քանակների որոշմանը, կենսաբանորեն ակտիվ նյութերի բաժանման, մաքրման և որոշման համար հիբրիդային հանքապղիմերային նոր կլանիչների ստեղծմանը:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 10 ատենախոսություն: Եղել է մասնագիտական, գիտական և խմբագրական խորհուրդների անդամ: 2006 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի, 2014 թ.

շնորհվել է «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ» կոչում: ՀՀ ՃԱ անդամ (2014):



ԽԱՉԱՏՐՅԱՆ ՌՈՒԱՆԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

(08.08.1940, Երևան – 17.01.2002, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1993): Մ. Հ. Ինճիկյանի ամուսինը:

Ավարտել է Երևանի Շահումյանի անվան դպրոցը, ԵՊՀ-ն (1966): 1966-1978 թթ. աշխատել է ՕՔԻ-ում, 1978 թ.-ից՝ Քիմիական ռեակտիվների և գերմաքուր քիմիական նյութերի «ԻՌԵԱ» ԳԱՄ-ի հայկական մասնաճյուղում, 1979-1995 թթ.՝ լաբորատորիայի վարիչ, 1995-2002 թթ.՝ ՀՀ ԳԱԱ ՕՔԻ ավագ գիտաշխատող:

Աշխատանքները վերաբերում են չհագեցած խումբ պարունակող մի քանի ամոնիումային և ֆոսֆոնիումային աղերի ջրահիմնային ճեղքմանը: Իրականացրել է P-H թթուների ակտիվում՝ չհագեցած միացություններով միջֆազային կատալիզի կամ գերհիմնային միջավայրում: Ուսումնասիրել է α-ալենային և β-ացետիլենային խմբերով չորրորդային ֆոսֆոնիումային աղերի պրոտոտրոպ փոխարկումները և փոխազդեցությունը նուկլեոֆիլ նյութերի հետ: Մշակել է եոֆենիլֆոսֆատի ստացման արդյունաբերական եղանակ, որը ներդրվել է Երևանի քիմիական ռեակտիվների գործարանում:



ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ԿԱՐՈ ԷՐԱՆԻ (27.02.1909, գ.

Ջրաշեն, Բասենի գավառ – 29.03.1993, Երևան), քիմիկոս: Տեխ. գիտ. դոկ. (1957), պրոֆ. (1958), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1967):

1915 թ. Մեծ եղեռնից մազապուրծ նրանց ընտանիքը գաղթել է Ալեքսանդրապոլ (Գյումրի), որտեղ 1930 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը, այնուհետև՝ 1935 թ. Մոսկվայի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետը և 1939 թ.՝ ասպիրանտուրան: 1941 թ. պաշտպանել է թեկնածուականատենախոսություն:

1945-1959 թթ. եղել է Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) Ն. Կոիլովի անվան ռազմածովային ակադեմիայի ջերմադինամիկայի և այրման տեսության ամբիոնի վարիչ: 1959 թ. հրավիրվել է Երևան և նշանակվել ԵՊՀ ֆի-

զիկայի ֆակուլտետի դեկան (1960 թ.), ապա տեղափոխվել է ԵՊՀ ֆիզքիմիայի ամբիոն որպես պրոֆեսոր (1961-1964 թթ.): Եղել է իր հիմնադրած ԵՊՀ քիմիական թերմոդինամիկայի և մոլեկուլի կառույցի ամբիոնի վարիչ (1964-1967), տեսական քիմիայի ամբիոնի վարիչ (1967-1984): 1964-1967 թթ. եղել է նաև ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկան: 1967-1977 թթ. աշխատել է ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր: Այնուհետև մինչև կյանքի վերջը աշխատել է որպես պրոֆեսոր:

Գիտական աշխատանքները վերաբերում են հեղուկների և լուծույթների մակերևութային լարվածության ջերմադինամիկայի և հրթիռային շարժիչներում այրման գործընթացների տեսության հարցերին: Հեղինակ է «Տեսական քիմիայի հիմունքներ» (Եր., 1974) ուսումնական երկհատոր ձեռնարկի, «Основы термодинамики и теория горения» (Պ., 1951-1955) եռահատոր մենագրության:

Եղել է Բրատիսլավայի և Լյուբլինի համալսարանների պատվավոր պրոֆեսոր: Պարգևատրվել է Պատվո նշան շքանշանով, 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար մեդալով:



ԽԱԶԻԿՅԱՆ ԼԵՎՈՆ ՄԻՔԱՅԵԼԻ (06.03.1964, Ավստրալիա), կենսաքիմիկոս, կենսաբան: Կենսաքիմիայի, բջջային և մոլեկուլային ախտաբանակենսաբանության դոկ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2008):

Սիդնեյի հարավային Նոր Ուելսի համալսարանի անոթային հետազոտությունների կենտրոնի տնօրեն, NHMRC-ի անդամ, Ավստրալիայի բժշկագիտության միության նախկին նախագահ, 12 ամսագրերի խմբագրության անդամ, ներառյալ ամերիկյան պաթալոգիայի և ենդոթելների ամսագիրը (ռեզիդենտ խմբագիր):

Պարգևատրվել է NHMRC, Ավստրալիայի GSK, Ավստրալիայի ԳԱ Gottschalk, Էվրիկա և ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաջին մրցանակներ առողջապահության և բժշկագիտության ոլորտում նվաճումների համար, գիտության և տեխնոլոգիաների բնագավառում Խարազմի միջազգային մրցանակ:



ԽԱԶԻԿՅԱՆ ՌԱՅԱ ԶԱՀԱՆԻ (08.03.1947, գ. Աչա-
ջուր, Տավուշի մարզ), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2009):

Ավարտել է տեղի դպրոցը և 1966 թ. ընդունվել ԵՊՀ
քիմիայի ֆակուլտետը, որն ավարտել է 1971 թ. և աշխա-
տանքի անցել ՀՀ ԳԱԱ ՕՔԻ-ում: 1971-1997 թթ. աշխա-
տել է ազոտ պարունակող տարացիկիկ միացություն-
ների լաբորատորիայում, հետազոտությունները ուղղված
են եղել ազոտ, ծծումբ և ածխածին պարունակող նուկլեոֆիլների հետ β-
արոհիլակրիլաթթուների փոխազդեցությանը, որոնց հիման վրա 1986 թ.
պաշտպանել է թեկնածուականատենախոսություն: 1994 թ.-ից աշխատել է
ֆոսֆորօրգանական միացությունների լաբորատորիայում:

Աշխատանքները վերաբերում են β-ակրոհիլաթթուների, α-քլորակրիլա-
թթվի, β-քլորմետակրիլաթթվի, դրանց նախորդների՝ 2,3-երկքլոր- և 2,3-
երկբրոմպրոպիոնաթթուների և դրանց ածանցիալների հետ P- և N- նուկլեո-
ֆիլների փոխազդեցությանը: Ստացվել են կիրառական նշանակություն ու-
նեցող նյութեր, որոնք հանդիսանում են թանկարժեք և անցումային մետաղ-
ների լուծահանողներ: Դոկտորականատենախոսության թեման է՝ «Ակրի-
լաթթվի ածանցյալների փոխազդեցությունը P- և N- նուկլեոֆիլների հետ և
ստացված արգասիքների որոշ ռեակցիաներ»:

Աշխատանքները ամփոփվել են 70-ից ավել գիտական հոդվածներում,
հեղինակային իրավունքներում և թեզիսներում:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 2ատենախո-
սություն:



ԽԱՌԱՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԼԵՎՈՆԻ (01.09.1948,
Ադրբեջանի Թոփուզի շրջան), քիմիկոս: Ֆիզիկամաթե-
մատիկական գիտ. դոկ. (1995), պրոֆ. (2006), ՀՀ ԳԱԱ
թղթակից անդամ (2010):

1949 թ. ընտանիքը տեղափոխվել է ՀԽՍՀ Շամշա-
դինի շրջանի (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզ) Բերդ ավան:
1966 թ. ավարտել է տեղի թիվ 1 դպրոցը, 1971 թ.՝ ԵՊՀ

քիմիայի ֆակուլտետը, 1974 թ.' ՀՀ ԳԱԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան: 1977 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1982 թ. նրան շնորհվել է ավագ գիտաշխատողի կոչում:

1975 թ.-ից աշխատում է ՀՀ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտում. 1977-1982 թթ. եղել է «Այրման պրոցեսների թերմոդինամիկա և կինետիկա» հետազոտական խմբի ղեկավար, 1982 թ.-ից՝ բարձրաջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզի պրոցեսների կինետիկայի լաբորատորիայի վարիչ: 1998 թ.-ից համատեղությամբ աշխատել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում, 2002-2005 թթ. եղել է կատալիզի և տեխնիկական քիմիայի, 2005-2007 թթ.' քիմիական ֆիզիկայի ամբիոնի վարիչ, 2008 թ.-ից՝ անօրգանական քիմիայի (2013 թ.-ից՝ անօրգանական և անալիտիկ քիմիայի) ամբիոնի պրոֆեսոր:

Հեղինակ է ավելի քան 400 գիտական աշխատանքների, որոնք վերաբերում են բարձրաջերմաստիճանային արագընթաց ռեակցիաների կինետիկայի և մեխանիզմի ուսումնասիրմանը և կոնդենսված ֆազում այրման գործընթացների կիրառմամբ խեցեղեն և դժվարահալ այլ անօրգանական նյութերի սինթեզին: Նրա ղեկավարությամբ մշակվել են խեցեգործական, կոմպոզիտային ու դժվարահալ անօրգանական նյութերի ստացման շուրջ 30 նոր տեխնոլոգիաներ և արժեքավոր մետաղական փոշիների ստացման արդյունավետ եղանակներ: Մշակել է մի շարք նոր մաթեմատիկական մոդելներ քիմիական ռեակցիաներում դիֆուզիայի տեսության զարգացման համար:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 14 ատենախոսություն: ՌԴ ԳԱ այրման գիտական խորհրդի (1988-2000 թթ.), Այրման միջազգային ինստիտուտի (1991 թ.-ից), «Բարձրաջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզ» միջազգային ընկերության հիմնադիրների խորհրդի (2002) անդամ, «Տեխնոլոգիական այրում և նյութաբանություն» հիմնադրամի հիմնադիր-անդամ և գործադիր տնօրեն (2004 թ.-ից):

Արժանացել է Վ. Համբարձումյանի անվան (1999), ՀՀ նախագահի մրցանակների (2008), գովեստագրերի և պատվոգրերի:



ԽԻՏԱՐՈՎ (ԽԻԹԱՐՅԱՆ) ՆԻԿՈԼԱՅ ԻՎԱՆԻ

(20.09(3.10).1903, Պյատիգորսկ – 05.02.1985, Մոսկվա),
երկրաքիմիկոս: Երկրաբանական-հանքաբանական
գիտ. դոկ. (1961), ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ (1964):

Ավարտել է Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգի)
ճարտարագիտական ինստիտուտը (1930): 1925-1926
թթ. աշխատել է Հայաստանի ժողկոմխորհի երկրաբա-
նահետախուզական կազմակերպությունում, 1928-1929 թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ
անդրկովկասյան արշավախմբում: 1929-1953 թթ.՝ Լենինգրադի երկրաբա-
նական ՀամԳՀԻ-ում: 1941-1945 թթ. ղեկավարել է հանքային հումքի պա-
շարների գծով համամիութենական հանձնաժողովի մետաղների բաժինը:
1953-1985 թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ Վ. Ի. Վեռնադսկու անվան երկրաքիմիայի և վեր-
լուծական քիմիայի ինստիտուտի մագմայածին գործընթացների լաբորատո-
րիայի վարիչ, 1963-1970 թթ.՝ միաժամանակ, փոխտնօրեն: Աշխատանքնե-
րը վերաբերում են երկրակեղևի և վերին մանթիայի երկրաքիմիական փո-
խազդեցության խնդիրներին, խորքային գործընթացների հետազոտություն-
ների զարգացման հարցերին: Ուսումնասիրել է տարբեր հանքավայրերի
հանքային նյութերի օքսիդացման գործընթացները՝ բարձր ճնշման ու ջեր-
մաստիճանի պայմաններում, մշակել այդ պայմաններում աշխատող հետա-
խուզական սարքավորումներ: Աշխատակիցների հետ հայտնաբերել է ստոր-
գետնյա ջրերի բաղադրության փոփոխության երևույթը երկրաշարժերի
դեպքում (հայտնագործություն № 129՝ 1966 թ. առաջնությամբ):

Եղել է «Երկրաքիմիա» (ռուս.) հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ,
«Խորհրդային երկրաբանություն (ռուս.) հանդեսի խմբագրական խորհրդի,
բազմաթիվ մասնագիտական հանձնաժողովների ու գիտական խորհուրդ-
ների, Ֆրանսիական հանքաբանության, Ամերիկյան կիրառական երկրա-
բանության ընկերությունների անդամ: Ստացել է Լենինի (1973) և ԽՍՀՄ
պետական այլ շքանշաններ, Վ. Ի. Վեռնադսկու (1960) և Ա. Ե. Ֆերսմանի
(1970) անվան մրցանակներ, Վ. Ի. Վեռնադսկու անվան ոսկե մեդալ (1978):

Համահեղինակ է՝ «Вода в магматических расплавах» (Մ., 1971); «Экспе-
риментальная петрология глубинного магматизма» (Մ., 1978); «Термоди-
намика и геохимия ядра и мантии Земли» (Մ., 1982):

ԽՐԻՄԱՅՆ ԱՇՈՏ (01.02.1951), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2008):

Research chemist Invasive Insect Biocontrol and Behavior Laboratory of Plant Sciences Institute of Beltsville Agricultural Research Center.



ԿԱՐԱՆՅԱՆ ՅՈՒՐԻ ԿՈՌՆԵՅԻ (26.09.1935, ք. Բուդյոնովսկ, ՌԴ Ստավրոպոլի երկրամաս – 08.06.2017, Երևան), տեխնոլոգ-քիմիկոս-ճարտարագետ: Տեխ. գիտ. դոկ. (1985):

Ավարտել է ԵՊԻ-ն (1957), 1978-1988 թթ. աշխատել է Մալուխի արդյունաբերության նախագծակոնստրուկտորական և տեխնոլոգիական ԳՀԻ փոխտնօրեն, 1989 թ.-ից՝ «Նաիրիտ» ԳԱՄ առաջատար գիտաաշխատող և կաուչուկների ֆիզիկամեխանիկական հատկություններ ուսումնասիրման լաբորատորիայի վարիչ: Վերջին տարիներին աշխատել է մասնավոր ձեռնարկություններում:

Աշխատանքները վերաբերում են հալոգեն պարունակող պոլիմերներից բաղադրյալ նյութերի ստացման և տնտեսության մեջ դրանց կիրառման հարցերին:



ԿԱՋԱՐՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԳՈՒՐԳԵՆԻ (01.01.1958, Ղազախստան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1987), պրոֆ., ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2014):

Սովորել է Նովոսիբիրսկում, այնուհետև ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում և Մոսկվայում: 1991 թ. հրավիրվել է Նորինգեմի (Անգլիա) համալսարան, որտեղ աշխատել է 3 տարի: 1994-1998 թթ. աշխատել է Զորջիայի (ԱՄՆ) Տեխնոլոգիական ինստիտուտում, իսկ 1998 թ.-ից՝ Լոնդոնի Կայսերական քոլեջի քիմիական տեխնոլոգիայի դեպարտամենտի պրոֆեսոր: Քիմիայի Թագավորական ընկերության (Անգլիա) անդամ:



ԿԱԶՈՒՄՈՎ ՆՈՐԻԿ ԲԱԳՐԱՏԻ (20.06.1926, Իջևան - 04.02.2010, Երևան), գինեգործ, գինու քիմիկոս և տեխնոլոգ: Տեխ. գիտ. դոկ. (1970), պրոֆ. (2005): ՀԽՍՀ վաստակավոր գինեգործ (1978):

Ավարտել է Կիրովաբադի գյուղատնտեսության ինստիտուտը (1948): 1970-1976 թթ. եղել է Երևանի շամպայն գինիների գործարանի հիմնախնդրների լաբորատորիայի վարիչ, 1976-1989 թթ.՝ տնօրեն, 1989 թ.-ից՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության խաղողագինեպտղաբուծության գիտական կենտրոնի գինու տեխնոլոգիայի բաժնի վարիչ:

Մշակել է սեղանի, թնդեցված, աղանդերային և շամպայն գինիների տեխնոլոգիայի ու քիմիայի առանձին հարցեր, գինեգործության առաջնային և երկրորդային արտադրությունների մի շարք տեխնոլոգիական գործընթացներ և սխեմաներ: Ստեղծել է 25 («Հայկական», «Անուշ», «Նորք», «Մուսկատ», «Կարմրահյուս» ևն) տեսակավոր գինիներ:

Եղել է Խաղողագործության և գինեգործության միջազգային ակադեմիայի անդամ (1997), ստացել է ԽՍՀՄ ԺՏՆՑ արծաթե (1964), փոքր ոսկե (1969, 1981) մեդալներ:

Հեղինակ է բազմաթիվ հոդվածների և հետևյալ գրքերի՝ «Հայաստանի խաղողի և պտղա-հատապտղային գինիների տեխնոլոգիա» (Եր., 1992, 2013) (համահեղինակ); «Պտուղների և բանջարեղենի պահածոների տեխնոլոգիա» (Եր., 1993) (համահեղինակ): «Հայաստանի գինիներ» (Եր., 1995); «О технологии и химии вина типа модера» (Ե., 1960); «Виноделие десертных вин Армении» (Ե., 1971); «Технология столовых вин Армении» (Ե., 1972); «Осветление и стабилизация вин» (Ե., 1975):

ԿԱՏՎԱԼՅԱՆ ՀԱՄԼԵՏ: Քիմ. գիտ. դոկտոր:

Աշխատել է ԵՊԻ Գյումրու մասնաճյուղում, ինչպես նաև Աբովյան քաղաքի ավտոտրանսպորտի տեխնիկումում: 1990-ական թվականներից ապրել է արտերկրներում:



ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՍՄԲԱՏԻ (15.09.1930, գ. Ույան-Նորաշեն (Նախիջևան) – 09.02.2003, Երևան), քիմիկոս-տեխնոլոգ: Տեխ. գիտ. դոկ. (1997):

Ավարտել է ԵՊԻ-ն (1959): 1959 թ.-ից աշխատել է Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտում, 1968-1975 թթ.՝ նույն ինստիտուտի փորձնական գործարանի գլխավոր ճարտարագետ, արդյունաբերական թափոնների վնասագերծման լաբորատորիայի վարիչ, 1975-2003 թթ.՝ նույն ինստիտուտի և փորձնական գործարանի տնօրեն: 1982-1995 թթ. միաժամանակ դասավանդել է ԵՊԻ-ում:

Մշակել և Քանաքեռի այլումինի գործարանի էլեկտրոլիզի արտադրամասում արդյունաբերական մասշտաբներով փորձարկել է ֆտորաջրածնի կլանման նոր եղանակ: Այս աշխատանքների (Հ. Օ. Գրիգորյանի հետ) հիման վրա շահագործման է հանձնվել Գոմելի (Բելառուս) քիմիական գործարանի ֆոսֆոգիպսի չորացման և հատիկավորման արտադրամասը: Առաջարկել է տուֆային թափոններն օգտագործել որպես ջրախառնիչ հավելույթներ՝ արտադրանքի ամրությունը մեծացնելու համար: Ցեմենտային փոշու օգտահանման աշխատանքները ներդրվել են Գուլկիչ քաղաքի (ՌԴ Կրասնոդարի մարզ) սիլիկատային աղյուսի և Շանդունի (Չինաստան) ցեմենտի գործարաններում: Մշակել է Երևանի աղի հանքի «էքստրա» աղի ստացման սխեման, իրականացրել ոսկի պարունակող աղքատ հանքերից ոսկու լրիվ կորզումը և արժեքավոր սիլիկատների ստացումը:

Եղել է ՌԴ բնական (1998), Բնության և հասարակության մասին միջազգային (1998) ԳԱ-ների հայկական մասնաճյուղի անդամ, ՌԴ բժշկատեխնիկական ԳԱ անդամ (2001): Ստացել է ԽՍՀՄ և ՀԽՍՀ ԺՏՆՑ արձաթե մեդալներ (1987), Վ. Հ. Համբարձումյանի մրցանակ (1995):



ԿԱՐԱԽԱՆՈՎ ԷԴՈՒԱՐԴ ԱՎԵՏԻՍԻ (26.09.1937, Թբիլիսի), քիմիկոս, նավթաքիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1977), պրոֆ. (1981), ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2008):

1955 թ. ավարտել է դպրոցը, 1960 թ.՝ ՄՊՀ քիմիայի ֆակուլտետը և ընդունվել ասպիրանտուրա: 1963 թ.

պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1974-1975 թթ. վերապատրաստվել է Ավստրալիայի Ազգային համալսարանում, 1983 թ.-ից եղել է ՄՊՀ նավթաքիմիայի և օրգանական կատալիզի ամբիոնի վարիչը:

Հեղինակ է 500 գիտական աշխատության և 5 մենագրության:

Եղել է Ռուսաստանի ԳԱ նավթաքիմիայի բաժանմունքի գիտական խորհրդի ղեկավարի առաջին տեղակալը, Տեսական և կիրառական քիմիայի միջազգային միության և ՌԴ բնական ԳԱ անդամ:

Զեյլինսկու անվան մրցանակի դափնեկիր, Պատվո շքանշանի շքանշանակիր:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՆՈՐԱՅՐ ԳԱՐԵԳԻՆԻ: Տեխ. գիտ. դոկ., ՀՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ:

Հիմնականում աշխատել է «Նաիրտ» ԳԱՄ-ի Պոլիմերների համամիութենական գիտահետազոտական և նախագծային ինստիտուտում, որի հիմնադիրներից է և երկար տարիներ եղել է տնօրենը:



ԿԱՐԱՊԵՏՅԱՆՑ ՄԻՔԱՅԵԼ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ
(27.03(9.4).1914, Մոսկվա – 23.05.1977, Մոսկվա), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1957), պրոֆ. (1957):

Ավարտել է Մոսկվայի Դ. Մենդելեևի անվան քիմիատեխնոլոգիական ինստիտուտը (1939): Աշխատել է նույն ինստիտուտում (1961 թ.-ից՝ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ): Աշխատանքները վերաբերում են քիմիական ջերմադինամիկային: Վ. Կիրեևի հետ ստեղծել և զարգացրել է նյութերի ֆիզիկաքիմիական հատկությունների համեմատական հաշվարկման եղանակների ընդհանուր տեսություն, որը հնարավորություն է տալիս կանխորոշել և բավարար ճշգրտությամբ հաշվարկել քիչ ուսումնասիրված կամ բոլորովին չուսումնասիրված նյութերի ֆիզիկաքիմիական մեծությունները: Արժանացել է ԽՍՀՄ Պետական մրցանակի (1952):

Հեղինակ է բազմաթիվ հոդվածների և հետևյալ գրքերի՝ «Химическая термодинамика» (3 изд., М., 1975; Строение вещества, 3 изд., М., 1978) (համահեղինակ); «Введение в теорию химических процессов» (3 изд., М., 1981); «Общая и неорганическая химия» (М., 1981) (համահեղինակ):



ԿՆՅԱԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ ԲԱԲԿԵՆԻ (20.10.1951, Լեւինական (Գյումրի)), քիմիկոս-տեխնոլոգ: Տեխ. գիտ. դոկ. (2011), պրոֆ. (2013):

Ավարտել է Երևանի թիվ 21 դպրոցը (1967), ԵՊԻ քիմիկատեխնոլոգիական ֆակուլտետը (1972), Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգի) տեխնոլոգիական ինստիտուտի ասպիրանտուրան (1979) և դոկտորանտուրան (1991):

Աշխատել է ՀԽՍՀ շինարարական նախարարության կերամիկական իրերի կոմբինատում ճարտարագետ-տեխնոլոգ և գլխավոր ջերմատեխնիկ (1972-1974), ՀԽՍՀ ԳԱ ԸԱՔԻ-ում ավագ ճարտարագետ (1974-1975), կրտսեր (1979-1980), ավագ (1980-1986) և առաջատար (1992-1996, 2002-2006) գիտաշխատող, ԸԱՔԻ տնօրեն (2006-2019), փոխտնօրեն գիտության գծով (2019-ից) և լաբորատորիայի վարիչ (2006 թ.-ից): 2002-2006 թթ. եղել է ՀՊՃՀ անօրգանական սիլիկատային նյութեր և էլեկտրաքիմիական տեխնոլոգիաներ ամբիոնի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են ֆունկցիային նշանակության ապակիների, ապակեբյուրեղային, կերամիկական և ապակեկերամիկական, կոմպոզիտային նյութերի, սեգնետոէլեկտրիկների ստացմանը և մշակմանը:

Մեծ ներդրում ունի ՀՀ-ում անօրգանական քիմիայի գծով միջազգային գիտաժողովների կազմակերպմանը: Հեղինակ է շուրջ 400 աշխատության, այդ թվում 40 հեղինակային արտոնագրի: Ղեկավարել է տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրեր:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 11 առենախոսություն:

Անդամ է մանսագիտական, գիտական և խմբագրական խորհուրդների: Ստացել է ՀՀ ԳԱԱ պատվոգրեր:



ԿՆՈՒՆՅԱՆՑ ՀՈՎՀԱՆՆԵՍ (ԻՎԱՆ) ԼՅՈՒԴՎԻԳԻ (22.05(4.6).1906, Շուշի – 21.12.1990, Մոսկվա), քիմիկոս-օրգանիկ, ֆտորօրգանական միացությունների քիմիայի հիմնադիրը ԽՍՀՄ-ում: Քիմ. գիտ. դոկ. (1939), պրոֆ. (1940), ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1953, թղթ. անդամ՝ 1946 թ.-ից), ճարտարագետ-գեներալ-մայոր (1949), Սոցիալիստական աշխատանքի հերոս (1966):

Ավարտել է ՄՖՏՈՒ-ն (1928), ասպիրանտուրան (1931), դարձել քիմ. գիտ. թեկնածու (1935): 1928-1938 թթ. աշխատել է ԽՍՀՄ ԳԱ բուսական և կենդանական նյութերի սինթեզի և հետազոտման լաբորատորիայում, 1932 թ.-ից, միաժամանակ՝ Քիմիական պաշտպանության ռազմական ակադեմիայում, 1938-1954 թթ.՝ Օրգանական քիմիայի, 1954 թ.-ից՝ Տարրորգանական միացությունների ինստիտուտում:

Աշխատանքները վերաբերում են ֆտոր-, ծծումբ-, ֆոսֆորօրգանական տարացիկլային միացությունների և ֆիզիոլոգիապես ակտիվ նյութերի սինթեզին և կենսաքիմիական հատկություններին: Առաջարկել է պիրիդինային օղակի մեջ տարբեր ռադիկալներ ներմուծելու նոր եղանակ, մշակել Կ-ացետապրոպիլսպիրտի ստացման եղանակ, որի հիման վրա սինթեզել է հակամալարիային պատրաստուկներ՝ ակրիքին և պլազմաքին: Այդ մշակումների հիմնա վրա 14937 թ. Ստարայա Կուլավնայում գործարկվել է «Ակրինքին» գործարանը: Ստացել է α -ացետաբուֆիրալակտոն (Կնունյանցի լակտոն), որն օգտագործվում է B₁ վիտամինի արտադրության մեջ: Սինթեզել է ամինա-, ամիդա- և իմիդաֆոսֆորիլային մուտածին խմբեր պարունակող միջարք ամինաթթուներ ու պեպտիդներ, որոնց հիման վրա մշակել է հակաքաղցկեղային պատրաստուկներ՝ էքլորբուֆիլ, պաֆենցիլ, լոֆենալ, 5-ֆտորուրացիլ ևն: Առաջինն է մշակել (1942) կապրոլակտամի գծային պոլիմերի (կապրոնի) ատացման հնարավորությունը և նայլոնի արտադրության առանձին նյութի՝ ադիպոնիտրիլի ստացման եղանակը: 1949 թ. սկզբնավորել է ֆտորօրգանական միացությունների քիմիան ԽՍՀՄ-ում: Հայտնաբերել է ֆտորօլեֆինների մոլեկուլներում կրկնակի կապի էլեկտրոնային ամֆոտերությունը, հետազոտել դրանց փոխազդեցությունը սպիրտների, ամինների, ազիդների և մերկապտանների հետ: Մշակել է օրգանական միացությունների մոլեկուլների մեջ ֆտորի ատոմ ներմուծելու մասնակի եղանակ, ֆտորկարբանիոնների մեզոմերիայի ուսումնասիրությամբ հայտնաբերել է (1960 և 1982) դրանց նոր տեսակի վերախմբավորումներ (Կնունյանցի վերախմբավորումներ): Ցույց է տվել, որ պերֆտորալների մոլեկուլներում կան պրոտոնացվելու ունակ ջրածնի ատոմներ, որոնք կարող են տեղակալվել մետաղների ատոմներով և նուկլեոֆիլ մոլեկուլներով (հիդրագին ևն): Նրա ղեկավարությամբ աշխատանքներ են կատարվել արյան ֆտորօրգանական փոխարինիչների ստացման ուղղությամբ:

Նա նաև խոշոր մանկավարժ էր, դասավանդել է Մոսկվայի բարձրագույն տեխնիկական ուսումնարանում, Քիմիական պաշտպանության ռազմական ակադեմիկայում, Մ. Վ. Լոմոնոսովի անվան նուրբ քիմիական տեխնոլոգիայի ինստիտուտում, պատրաստել գիտության տասնյակ դոկտորներ և հարյուրից ավելի թեկնածուներ:

Եղել է «Ֆտորի քիմիա» ամսագրի (անգլ.) գիտական (1972), «Քիմիական համառոտ հանրագիտարան»-ի (ռուս., հ. 1-5, 1961-1967), «Քիմիական հանրագիտարան բառարան»-ի (ռուս., 1983), «Քիմիական հանրագիտարան»-ի (ռուս., հ. 1-2, 1988-1990), իր հիմնադրած Դ. Ի. Մենդելեևի անվ. համամիութենական քիմիական ընկերության (1954-1955 թթ.՝ նախագահ) ամսագրի (ռուս., 1956 թ.-ից) գլխավոր խմբագիր, ինչպես նաև մի շարք գիտական հանդեսների և հանրագիտարանների խմբագրական խորհուրդների և հանձնաժողովների անդամ: Հայկական և արտասահմանյան գիտական ընկերությունների անդամ: Ստացել է Լենինյան (1972), ԽՍՀՄ Պետական (1943, 1948, 1950) մրցանակներ և Կարմիր աստղի (1947), Կարմիր դրոշի (1953), Աշխատանքային կարմիր դրոշի (1961), Լենինի (1966), Հեղափոխության (1975) շքանշաններ և մի շարք մեդալներ:



ԿՈՍՏԱՆԴՈՎ ԼԵՈՆԻԴ ԱՐԿԱԴԻԻ (Արտաշեսի)

(14(27).11.1915, ք. Քերկի (այժմ՝ Թուրքմենստանում) – 05.09.1984, Լեյպցիգ, աճյունասափորը թաղված է Մոսկվայի Կրեմլի պատի մեջ), խորհրդային պետական գործիչ:

Ավարտել է Մոսկվայի քիմիամեքենաշինական ինստիտուտը (1940): 1940-1953 թթ. աշխատել է Ուգրեկստանի Չիրչիկ քաղաքի էլեկտրաքիմիական կոմբինատում՝ ճարտարագետ, արտադրամասի պետ, գլխավոր ճարտարագետ, տնօրեն: Ղեկավարել է ֆուգասային ռումբերի արտադրամասի շինարարությունը, մշակել և իրականացրել է ցածորակ ածուխների եռացող շերտում գազացման տեխնոլոգիա (Պետ. մրցանակ՝ 1951), կազմակերպել ծանր ջրի արտադրության թողարկումը (Լենինյան մրցանակ՝ 1960):

Եղել է ԽՍՀՄ քիմիական արդյունաբերության ազոտային վարչության պետ (1953-1964), Քիմիական խորհրդի պետկոմի, Պետականի կոմիտեի

նախագահ, ԽՍՀՄ քիմիական արդյունաբերության նախարար (1965-1980), ԽՍՀՄ Նախարարների խորհրդի փոխնախագահ (1980-1984), ԽՄԿԿ ԿԿ անդամ (1971 թ.-ից), ԽՍՀՄ ԳԽ պատգամավոր (1966-1984): Ստացել է «Ոսկե Մերկուրի» միազգային մրցանակ (1978): Կիսանդրին տեղադրված է Չիրչիկ կոմբինատի գլխավոր մուտքի դիմաց:



ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ ԵՐԱՆՈՍԻ (10.04.1942, ք. Կապան), քիմիկոս-տեխնոլոգ: Տեխ. գիտ. դոկ. (1982), պրոֆ. (1986), ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2008):

Ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան նուրբ քիմիական տեխնոլոգիայի ինստիտուտը (1968): 1971-1996 թթ. աշխատել է Ազոտային արդյունաբերության պետական ինստիտուտում, 1996 թ.-ից՝ ՌԳԱ Կուռնակովի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտում, 1997-1999 թթ., միաժամանակ՝ Գերմանիայի «Բայեր» ֆիրմայի ԳՀ կենտրոնում (Լևերկուզեն):

Աշխատանքները վերաբերում են քիմիական տեխնոլոգիայի գործընթացների և սարքերի հիմնախնդիրներին: Համահեղինակ է «Քիմիական տեխնոլոգիայի գործընթացների և սարքերի ընդհանուր դասընթաց» (2000, ռուս.) ուսումնական ձեռնարկի: Ստեղծել է թրթռավոր աշտարակային լուծամզիչ, ջերմազանգվածափոխանակիչ և այլ սարքեր:

Ստացել է ԽՍՀՄ Նախարարների խորհրդի մրցանակ (1983):

Համահեղինակ է «Структура потоков и эффективность колонных аппаратов химической промышленности» (М., 1977):



ԿՈՍՏԱՆՅԱՆ ԿՈՍՏԱՆ ԱՐՏԱՎԱԶԴԻ (01.09.1926, Վաղարշապատ – 2007, Երևան), տեխնոլոգ-քիմիկոս: Տեխ. գիտ. դոկ. (1963), պրոֆ. (1976), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1996, թղթ.՝ անդամ՝ 1977 թ.-ից):

1943 թ. ավարտել է դպրոցը, 1948 թ.՝ ԵՊԻ քիմիատեխնոլոգիական ֆակուլտետը, իսկ 1951 թ.՝ ՀԽՍՀ քիմիայի ինստիտուտի ասպիրանտուրան: 1952 թ. պաշտպանել է թեկնածուականատենախոսություն: 1952-1955 թթ. աշխատել է

ՀՀ ԳԱ քիմիայի ինստիտուտում, 1959-1969 թթ.՝ ՀԽՍՀ ԺՏԽ Երևանի քիմիայի ԳՀԻ ապակու քիմիայի և տեխնոլոգիայի լաբորատորիայի վարիչ, 1969 թ. նշանակվել է Երևանի քիմիայի ԳՀԻ տնօրենի պաշտոնակատար, 1970-1986 թթ.՝ ԽՍՀՄ էլեկտրավակուումային ապակու ԳՀԻ Երևանի մասնաճյուղի և փորձարարական ինստիտուտի տնօրեն, 1986-1992 թթ.՝ ՀՊՃՀ սիլիկատների տեխնոլոգիայի ամբիոնի վարիչ (1992 թ.-ից՝ պրոֆ.), միաժամանակ եղել է ԸԱՔԻ անօրգանական պոլիմերների լաբորատորիայի վարիչ (1986-2006):

Աշխատանքները վերաբերում են սիլիկատների, մասնավորապես՝ ապակիների ֆիզքիմիային ու տեխնոլոգիային: Բացահայտել է հալած ապակիների էլեկտրահաղորդականության, բաղադրության և ջերմաստիճանի միջև եղած կապի հիմնական օրինաչափությունները: Նրա ղեկավարությամբ մշակվել և արտադրության մեջ ներդրվել են ուղղակի և անուղղակի տաքացման գարնիսաժային էլեկտրական վառարաններ տարբեր հալունության ապակիների եփման համար:

Գիտական աշխատանքները ամփոփված են 9 մենագրություններում և դասագրքերում, մեկ տասնյակից ավելի մեթոդական ձեռնարկներում, 400 գիտական հոդվածներում և թեզիսներում, 115 արտոնագրերում և հեղինակային իրավունքներում: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 27 ատենախոսություն: Եղել է մի շարք գիտական, մասնագիտական և խմբագրական խորհուրդների անդամ և նախագահ: Պարգևատրվել է՝ Աշխատանքային սխրանքի համար (1970) և Անանիա Շիրակացի (1977) մեդալներով, Պատվո նշան շքանշանով (1976) և պատվոգրերով:

Հեղինակ է «Սիլիցիումի քիմիա և սիլիկատների ֆիզիկական քիմիա» (Եր., 1967); «Керамические и стеклянные диэлектрики в электронной технике» (Ե., 1984) գրքերի:



ԿՐԻԿՈՐՅԱՆ (ԳՐԻԳՈՐՅԱՆ) ՆԵՐՍԵՍ ՀԱԶԻՔԻ
(23.01.1921, ք. Հարփուֆ (Թուրքիա) – 18.04.2018, ԱՄՆ),
քիմիկոս: ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկ. (2005):

Ավարտել է Նիագարայի համալսարանը (Նյու Յորք, ԱՄՆ, 1943): 1946-1972 թթ. աշխատել է Լոս Ալամոսի ազգային լաբորատորիայում (Նյու Մեքսիկո, ԱՄՆ), 1972-

1991 թթ.՝ զանգվածային ոչնչացման զենքի տարածման կանխման կենտրոնում (IPP): Աշխատանքները վերաբերում են միջուկային հետազոտություններին և դրանց առնչվող հարցերին: Մասնավորապես ներդրումներ ունի ճառագայթային, անօրգանական, ֆիզիկական, բարձրջերմաստիճանային քիմիայի հիմնարար և կիրառական հետազոտություններում: Մասնակցել է զանգվածային ոչնչացման զենքի տարածման կանխման հիմնարար մշակումներին ու ծրագրերին:

Եղել է Լոս Ալամոսի ազգային կենտրոնի գիտական խորհրդի անդամ (1985), ստացել է Լոս Ալամոսի մեդալ (2004):



ԿՐԿԵԱՇԱՐՅԱՆ (ՔՐՔԱՇԱՐՅԱՆ) ՍԵՐՃ-ՊԵՐՃ ՄԻՍԱԿԻ (29.06.1933, Բեյրութ), ֆիզքիմիկոս, դեղաբան: Ֆիզիկաքիմիական գիտ. դոկ. (1966), պրոֆ. (1970), ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (1998):

Ավարտել է Փարիզի Սորբոնի համալսարանի դեղաբանության (1958) և գիտությունների (1961) ֆակուլտետները, ինչպես նաև Կանադայի Արևմտյան Օնտարիոյի համալսարանի քիմիայի բաժինը: 1970-1976 թթ. եղել է Բեյրութի համալսարանի բժշկական ֆակուլտետի դեկան և Բժշկական կենտրոնի տնօրեն, 1976 թ.-ից՝ Փարիզի Հարավի համալսարանի պրոֆ., 1978 թ.-ից՝ այդ համալսարանի դեղաբանության ֆակուլտետի դեկան, 1983-1998 թթ.՝ Փարիզի հիվանդանոցի դեղաբանության բաժանմունքի տնօրեն, 2001 թ.-ից՝ emeritus պրոֆ.:

Հիմնական աշխատանքները վերաբերում են օրգանական (ֆլավոնների, իզոֆլավանոնների և բնական ու սինթետիկ տարացիկլային այլ միացությունների պատրաստուկներ) և դեղաբանական (հակավիտամիններ, հակաալերգիկ ածանցյալներ և այլն) քիմիային, սիրտանոթային համակարգի և այլ հիվանդությունների բուժման համար օգտագործվող դեղամիջոցների սինթեզմանը: Կազմել է Ֆրանսիայում արտադրվող դեղանյութերի տեղեկատու (1994):

Եղել է Ֆրանսիայի դեղաբանության (1984 թ.-ից), Եվրոպական (1992 թ.-ից) դեղամիջոցների գործակալությունների դեղաբանության, Բրյուսելի Եվրոպական հանձնաժողովի գիտական (1994 թ.-ից) փորձագետ, Փարիզի

«Արարատ» միջազգային ԳԱ փոխնախագահ (1986), ՌԴ բնական ԳԱ (1996), Ֆրանսիայի դեղաբանության ազգային ակադեմիայի (1997) թղթ. անդամ, ԵՊԲՀ (1994) և այլ համալսարանների պատվավոր դոկտոր, Ֆրանսիայի դեղաբանության (1973) և բժշկական (1982) ազգային ակադեմիաների մրցանակների դափնեկիր: Պարգևատրվել է Ռուսաստանի բնական ԳԱ Պ. Կապիցայի (1996) և Պետրոս Մեծի (1996) անվան ոսկե և այլ մեդալներով:



ԿՈՒՈՅԱՆ ՌԱԶՄԻԿ ՀԱԿՈՔԻ (26.12.1938, Նոր Բայազետ (այժմ՝ Գավառ) – 01.12.2001, Երևան), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դոկ. (1985), պրոֆ. (1988):

Ավարտել է ԵՊՀ-ն (1961): 1965 թ. ընդունվել է ՕՔԻ ասպիրանտուրան և 1968 թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն: 1968 թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱ ՆՕՔԻ-ում, 1985 թ.-ից՝ լաբորատորիայի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են ազոտ պարունակող սպիրոտարացիկային միացությունների՝ ազասպիրանների սինթեզին: Համահեղինակ է 2 նոր պատվաստուկների, որոնցից մեկը («Սպիրատին» պայմանական անունով) հակաընկճումային, հակապսիխոզային միջոց է:

Հեղինակ է 160 գիտական աշխատության, այդ թվում 29 հեղինակային վկայագրի և 2 պատենտի: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 8 ատենախոսություն:




ԿՈՒՐԴԻՆՅԱՆ ԿԻՄ ԱՄԲԻՈՍԻ (19.08.1935, Կիրովական – 02.11.2013, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1986):

Ավարտել է Արթիկի թիվ 2 միջնակարգ դպրոցը (1953), ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը (1958) և աշխատել Արթիկի դպրոցում որպես քիմիայի ուսուցիչ: Այնուհետև աշխատել է «Նաիրիտ» ԳԱՄ պոլիմերների համամիութենական ԳՀ ինստիտուտում որպես կրտսեր, իսկ 1975 թ.-ից՝ ավագ գիտաշխատող: 1982 թ.-ից աշխատել է Քիմիական ռեակտիվների և քիմիական մաքուր նյութերի համամիութենական ԳՀ ինստիտուտի հայկական մասնա-

մասնա-

ճյուղում որպես լաբորատորիայի վարիչ: 1969 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Դոկտորական ատենախոսության թեման է՝ «Չհագեցած միացությունների պրեպարատիվ և արդյունաբերական սինթեզի նոր մեթոդոլոգիական սկզբունքները, հիմնված միջֆազային և կուպրոկատալիզի վրա»: Նրա կողմից չհագեցած միացությունների (ֆենիլացետիլեն, «դիէթինիլ բենզոլի կոմպոզիցիաներ», վինիլ-2-էթիլէթեր, ալիլացետիլեն) սինթեզի ինքնատեսակ մշակումները տեղ են գտել ոչ միայն պրեպարատիվ օրգանական քիմիայի շատ գրքերում, այլև ներդրվել են ՀԽՍՀ և ԽՍՀՄ տարբեր խոշոր քիմիական ձեռնարկություններում:

Հեղինակ է 94 աշխատության, որից 17-ը՝ հեղինակային իրավունք, 12-ը՝ գիտաժողովների թեզիսներ: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 6 ատենախոսություն:



ԿՈՒՐՏԻԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ ԱՏԵՓԱՆԻ (20.11.1946, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1998), պրոֆ. (2014):

Ավարտել է ԵՊՀ ֆիզկայի ֆակուլտետը (1969) և 1969-1971 թթ. աշխատել նույն ֆակուլտետում որպես ասիստենտ: 1971 թ. ընդունվել է Մոսկվայի էլեմենտօրգանական միացությունների ինստիտուտի ասպիրանտուրան, որտեղ էլ 1978 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատանքի անցել ՕՔԻ-ում, այնուհետև 1979-2012 թթ. ԻՌԵԱ-ում և ԱրիԱԿ-ում որպես գործիքային հետազոտությունների լաբորատորիայի վարիչ, 1979-1986 թթ. եղել է Գորիսի գիտական կենտրոնի լաբորատորիայի վարիչ, իսկ 1994 թ.-ից նաև Մոլեկուլի կառուցի ուսումնասիրման կենտրոնում օպտիկական սպեկտրոսկոպիայի լաբորատորիայի վարիչ:

Աշխատանքները հիմնականում նվիրված են հեմոպրոտեինների ակտիվ կենտրոնը մոդելավորող մետաղապորֆիրինների կոորդինացման ոլորտում ընթացող ռեակցիաների և գործընթացների պարզաբանմանը:

Հեղինակ է ավելի քան 250 աշխատության, այդ թվում «Ազոտի օքսիդներ հեմ-մոդելներ. Փոխազդեցությունների խճանկար» մեծարժեք մենագրության (2018): Մասնակցել է բազմաթիվ միջազգային գիտաժողովների, եղել է 2010 թ. ՀՀ-ում կայացած «Ցածր ջերմաստիճանային քիմիայի 8-րդ

միջազգային գիտաժողով»-ի կազմկոմիտեի նախագահը: Ղեկավարել է տեղական և միջազգային ֆինասավորմամբ բազմաթիվ ծրագրեր: Եղել է մասնագիտական և գիտական խորհուրդների անդամ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն: Մշտապես եղել է հանրապետության «Արդյունավետ գիտաշխատողներ» մրցույթի հաղթողների կազմում: Արժանացել է Հանրապետության նախագահի (2005), Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության և ՀՀ ԳԱԱ (2009) մրցանակների:



ՀԱՆԵՔՅԱՆ ՂՈՒԿԱՍ ՊԵՏՐՈՍԻ (01.03.1949,

Երևան – 02.06. 2013, Երևան), քիմիկոս, կենսատեխնոլոգ: Քիմ. գիտ. դոկ. (2000):

Ավարտել է ԵՊՀ-ն (1971): 1971-ից աշխատել է ՀՀ ԳԱ ՆՕՔԻ-ում, 1980 թ.-ից՝ Պլաստպոլիմեր ԳԱՄ Երևանի բաժանմունքում, 1985 թ.-ից՝ կենսատեխնոլոգիայի ԳՀԻ կենսատրանսֆորմացիայի լաբորատորիայի վարիչ: Աշխատանքները վերաբերում են կենսակատալիտիկ գործընթացների օգտագործմամբ սպիտակուցային ամինաթթուների սինթեզին և դրանց ստացման կենսատեխնոլոգիական արտադրությունների մշակմանը, ինչպես նաև ֆիզիոլոգիապես ակտիվ միացությունների ակտիվության և քիմիական կառուցվածքի կապին:



ՀԱԿՈՔՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐՇԱԿԻ (25.12.1890,

Ալեքսանդրապոլ (Գյումրի) – 14.05.1971, Երևան), քիմիկոս, մեխանիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1936), պրոֆ. (1937), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ (1940):

Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի քաղաքում: 1917 թ. ավարտել է Սանկտ Պետերբուրգի պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկայի բաժինը՝ «Թերմոդինամիկա և տեսական մեխանիկա» մասնագիտությամբ:

1917-1920 թթ. Ալեքսանդրապոլի միջնակարգ դպրոցներում դասավանդել է ֆիզիկա, մաթեմատիկա, կիրառական մեխանիկա: 1920 թ. հրավիրվել

է ԵՊՀ և դասախոսել մինչև 1930 թ.՝ դառնալով տեխնիկական ֆակուլտետի հիմնադիր կազմակերպիչներից մեկը: 1928-1929 թթ. եղել է այդ ֆակուլտետի դեկան: 1930-1939 թթ. ղեկավարել է ԵՊԻ տեսական մեխանիկայի, 1939-1954 թթ.՝ ջերմադինամիկայի և ջերմատեխնիկայի, 1954-1957 թթ.՝ ֆիզիկայի ամբիոնները: 1936-1944 թթ. եղել է ԵՊԻ գիտական և ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն:

1928-1940 թթ. եղել է Երևանի սեյսմիկ կայանի վարիչ, 1943 թ.-ից՝ ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկամաթեմատիկական բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի տեղակալ, ակադեմիայի բառարանագիտական հանձնաժողովի նախագահ:

Գիտական հետազոտությունները վերաբերում են դասական և կիրառական ջերմադինամիկայի տարբեր հարցերին: Մասնավորապես հիմնավորել է ջերմադինամիկայի երկրորդ օրենքը ջերմաստիճանի կամայական նշանի դեպքում: ԽՍՀՄ-ում առաջիններից է վեկտորական հաշվի միջոցով շարադրել տեսական մեխանիկայի դասընթացը:

Հեղինակ է շուրջ 30 գիտական հոդվածների և «Տեսական մեխանիկա» (մաս 1, Եր., 1941, մաս 2, Եր., 1964), «Թերմոդինամիկա» (Եր., 1952), «Общая термодинамика» (М.-Л., 1955), «Химическая термодинамика» (М., 1963) մենագրությունների և բուհական դասագրքերի:



ՀԱԿՈՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԿՐՏԻՉԻ

(04(17).11.1904, գ. Շավշեթ (Թուրքիայի Արդվինի վիլայետ) – 16.05.1987, Երևան), քիմիկոս: Քիմիական գիտությունների դոկ. (1971): Լ. Ա. Հակոբյանի հայրը:

Ավարտել է ԵՊՀ-ն (1931), 1931-1941 թթ. աշխատել է ՀԳԻ-ում, 1938-1941 թթ.՝ Երևանի Կիրովի անվան քիմիական գործարանի կենտրոնական լաբորատորիայի օրգանական քիմիայի բաժնի, 1946 թ.-ից՝ ՀԽՍՀ ԳԱ քիմիայի ինստիտուտի (հետագայում ՕՔԻ) լաբորատորիայի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են ագետիլենի քիմիային: Միա- և երկվինիլացետիլենների քլորաձանցյալների սինթեզով ստացել է նոր մոնոմերային և պոլիմերային նյութեր:

ՀԱԿՈՐՅԱՆ ԹԱԹՈՍ ՆԻԿՈԼԱՅԻ (27.07.1946, Երևան), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դոկ. (1990):

Ավարտել է ԵՊՀ-ն (1970): 1987-1991 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի լաբորատորիայի վարիչ: 1991-1993 թթ. աշխատել է Փարիզի Դեկարտի համալսարանում, 1993-1997 թթ.՝ Հարվարդի համալսարանի առողջապահության ինստիտուտում, 1997-2001 թթ.՝ «Վյեթ», 2001 թ.-ից՝ «Ասթրըզինիքը» դեղաբանության ընկերություններում:

Ուսումնասիրել է բջջում սպիտակուցների և պեպտիդային հորմոնների սինթեզի և քայքայման մեխանիզմները, քաղցկեղածին սպիտակուցների ակտիվացման պատճառները: Հայտնաբերել է նոր դեղաբանական թիրախներ և հետազոտել դրանց կենսաքիմիական հատկությունները:



ՀԱԿՈՐՅԱՆ ԺԱՆ ԻՇԽԱՆԻ (26.08.1936, ք. Ստեփանավան – 02.02.2021, Երևան), կենսաքիմիկոս, ֆերմենտների մոլեկուլային կենսաբան: Կենսբ. գիտ. դոկ. (1971), պրոֆ. (1986):

Ավարտել է ԵԲԻ-ն (1959): 1971-1974 թթ. եղել է Մոսկվայի ԲԳԱ կենսաբանության և բժշկական քիմիայի ինստիտուտի ամինների կենսաքիմիայի լաբորատորիայի վարիչ, 1974-1979 թթ.՝ ՀՀ ԳԱԱ փորձարարական կենսաբանության ինստիտուտի տնօրեն, 1979 թ.-ից՝ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի մոլեկուլային ֆերմենտաբանության լաբորատորիայի վարիչ, 1996-2000 թթ. Միջազգային գիտակրթական կենտրոնի, 2000 թ.-ից՝ ՀՀ ԳԱԱ մանրէաբանության ինստիտուտի տնօրեն:

Աշխատանքները վերաբերում են մոլեկուլային կենսաբանության, ֆերմենտների կենսատեխնոլոգիայի, գործառնության և կառուցվածքի հարցերին: ՀՀ-ում առաջինն է նկարագրել ֆերմենտների փոխակերպման երևույթը: Նրա ղեկավարությամբ վերծանվել է կմախքային մկանների որոշ ֆերմենտների կատալիզային ակտիվ կենտրոնների կառուցվածքը:

Եղել է ՀՀ միջազգային գիտական ֆոնդի խորհրդի նախագահ (1995 թ.-ից), ՀՃԱ (1986), Փարիզի միջազգային «Արարատ» ակադեմիայի (1993), Նյու Յորքի (1996), Միացյալ Եվրոպայի (2002) ԳԱ-ների անդամ:



ՀԱԿՈՐՅԱՆ ՀԱԿՈՐ ԵՐՎԱՆԴԻ (07(20).11.1912, Նոր Բայազետ (այժմ՝ Գավառ) – 08.03.1971, Երևան), - քիմիկոս-տեխնոլոգ: Տեխ. գիտ. դոկ. (1959), պրոֆ. (1962):

Միջնակարգը ավարտելուց հետո ընդունվել է ԵՊԻ քիմիատեխնոլոգիական ֆակուլտետը, որը 1938 թ. գերազանցիկությամբ ավարտելուց հետո գործուղվել է Լեւինգրադի (Սանկտ Պետերբուրգի) Տեխնոլոգիական ինստիտուտի ասպիրանտուրայում սովորելու: Սակայն 1941 թ.-ից մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին և այդ պատճառով ասպիրանտուրան ավարտել է պատերազմից հետո, թեկնածուականը պաշտպանել է 1947 թ., իսկ 1959 թ. նույն ինստիտուտում պաշտպանել է դոկտորական թեզը՝ «Դիվինիլացետիլենի հիման վրա մոնոմերների սինթեզը և դրանց պոլիմերումը» թեմայով: 1947-1971 թթ. աշխատել է ԵՊԻ քիմիատեխնոլոգիական ֆակուլտետում՝ դոցենտ, պրոֆեսոր, իսկ 1968-1971 թթ.՝ պլաստմասաների սինթեզի և վերամշակման ամբիոնի վարիչ: 1958-1968 թթ. աշխատել է Հայաստանի քիմիական գիտական նախագիծ ԳՀԻ վինիլացետատի բաժանմունքի պետ: Նրա ղեկավարությամբ իրականացվել են մի շարք հետազոտական աշխատանքներ և մշակվել տարբեր տեխնոլոգիաներ, որոնց մեծ մասը ներդրվել է Խորհրդային Միության տարբեր քաղաքներում: Մասնավորապես, Ռուսաստանի Լիսիչանսկի ու Նևինամինսկի քիմիական կոմբինատներում ներդրվել են պոլիվինիլսպիրտի արտադրական թափոններից՝ քացախաթթվի, մեթանոլի, մեթիլացետատի վերականգնման տեխնոլոգիաները, իսկ Երևանի «Պոլիվինիլացետատ» գործարանում գործել է «եռացող շերտում» վինիլացետատի և վինիլպրոպիոնատի ստացման արտադրամաս: Հեղինակ է ավելի քան 90 գիտական աշխատության, այդ թվում 18 հեղինակային իրավունքի:



ՀԱԿՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ (05.02.1938, Երևան – 26.06.1999, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1980), պրոֆ. (1985): Ա. Մ. Հակոբյանի որդին:

Ավարտել է ԵՊՀ-ն (1960): 1960-1994 թթ. աշխատել ՀՀ ԳԱԱ ՕՔԻ-ում, 1994-1999 թթ.՝ ԵՊՀ ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոնի գիտաաշխատող: Եղել է ՀՀ-ում գազաֆազ ռեակցիաների էՊՌ եղանակով ուսումնասիրման նախաձեռնողներից: Աշխատանքները վերաբերում են մետաղակոմպլեքսային կատալիզատորների ներկայությամբ ացետիլենային միացությունների փոխարկումներին և պոլիմերային բաղադրյալ նյութերում պոլիմեր-պոլիմեր, պոլիմեր-լցանյութ փոխազդեցություններին: Հայտնաբերել է բազմազուգորդված համակարգի ազդեցությամբ ֆունկցիոնալ խմբերի արտակարգ ակտիվացման երևույթը:

Եղել է մասնագիտական, գիտական և խմբագրական խորհուրդների անդամ:

Կինը՝ Սվետլանա Գևորգյանը քիմ. գիտ. թեկնածու է:



ՀԱԿՈՐՅԱՆ ՌԱՖԻԿ ԵՂԻՇԻ (08.10.1931, Կրասնոդար – 17.05.2004, Երևան): Քիմիկոս-տեխնոլոգ, հիդրոդինամիկ: Տեխ. գիտ. դոկ. (1985), պրոֆ. (1986):

1954 թ. գերազանցիկությամբ ավարտել է ԵՊԻ քիմիատեխնոլոգիական ֆակուլտետը և աշխատել Կիրովի անվան «Կաուչուկ» գործարանում: Այնուհետև աշխատել է ՀՀ ԳԱ ՕՔԻ քիմիական տեխնոլոգիաների և ապարատների լաբորատորիայում: Նա անմիջապես ընդգրկվել է հետազոտական աշխատանքներին երկֆազ համակարգերի հիդրոդինամիկայի բնագավառում: 1966 թ. դարձել է տեխնիկական գիտությունների թեկնածու և տեղափոխվել ԵՊԻ քիմիական տեխնոլոգիաների գործընթացների և ապարատների ամբիոն որպես դոցենտ, իսկ 1972-1980 թթ. եղել է այդ ամբիոնի վարիչը: Նրա կողմից մշակված փոշենման նյութերի պնևմատեղափոխման նոր եղանակները, որոնք կազմել են նրա դոկտորականի բովանդակությունը, հեղաշրջող դեր են կատարել այդ բնագավառում և ներդրվել են Խորհրդային Միության մոտ 200 ձեռնարկություններում և արտադրության

տարբեր բնագավառներում: Նրա կողմից մշակվել է նաև պինդ, հատիկավոր նյութերի հիդրոտեղափոխման՝ խողովակների մաշումը բացառող արդյունավետ եղանակ:

Նրա գիտատեխնիկական և կազմակերպչական տաղանդը առավել չափով դրսևորվել է 1987-1996 թթ., երբ աշխատել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի տնօրեն, ով կարողանալով երկրաշարժի հետևանքով ավերված, անօգտագործելի դարձած շենքային պայմանները վերականգնել և ապահովել աշխատանքների անընդհատությունը:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 7 ատենախոսություն:



ՀԱՄԱՄՋՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԳՐԻԳՈՐԻ (25.12.1944, Երևան), ճարտարագետ-քիմիկոս: Տեխ. գիտ. դոկ. (2003):

Ավարտել է ԵՊԻ-ն (1967): 1980-1982 թթ. եղել է Երևանի Կերամիկայի, 1982-1995 թթ.՝ Արտաշատի ճենապակե և խեցեղեն իրերի գործարանների տնօրեն, 1995 թ.-ից՝ «Հայճենապակի» ԲԲԸ խորհրդի նախագահ և գլխավոր տնօրեն:

Ճենապակու արտադրության մեջ ներդրել է իր մշակած մի շարք տեխնոլոգիաներ, որպես գունավորող նյութեր օգտագործել հայկական քարերի փոշին, ստեղծել է հայկական նուրբ ճենապակին: Մշակել և կառուցել է եռախցիկ վառարան՝ Հայաստանում հիմնադրելով ոսկրային ճենապակու արտադրություն: Նախագծել և կառուցել է Հադրութի կերամիկայի արտադրամասը. տեղական կարմիր կավի հումքով գործող «Հայճենապակի» կղմինդրի արտադրության գործարանը:

Եղել է մասնագիտական և գիտական խորհուրդների անդամ:



ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՍՈՒՐԵՆԻ (24.02.1960, գ. Ոսկեվան, Տավուշի մարզ): Քիմ. գիտ. դոկ. (2012):

1977 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1982 թ.՝ ՀԱՄ-ի (ԻՐԵԱ, Մոսկվա) Երևանյան մասնաճյուղում որպես կրտսեր և ավագ գիտաշխատող, 1985-1987 թթ.՝

Մոսկվայի Շենյակինի անվան կենսաօրգանական քիմիայի ինստիտուտում որպես գիտաշխատող: 1987-1989 թթ. ծառայել է Խորհրդային բանակում: 1997-2000 թթ. համատեղությամբ աշխատել է հայ-բելգիական ԳՀ ձեռնարկությունում որպես առաջատար մասնագետ, 2005-2014 թթ.՝ ԵՊՀ անալիտիկ քիմիայի ամբիոնի ավագ գիտաշխատող և ասիստենտ, 2006 թ.՝ Մետտագրուպ ՍՊԸ-ում որպես լաբորատորիայի վարիչ, 2006-2012 թթ.՝ ԳՀ և էքսպերտիզայի կենտրոն ՍՊԸ-ի տնօրեն, 2011-2014 թթ.՝ Նորվեգիայի բնական գիտությունների համալսարանում (ղեկավարել է թեկնածուական 2 առենախոսություն), 2014 թ.-ից՝ ԵՊՀ էկոլոգիական անվտանգության կենտրոնի ավագ գիտաշխատող:

Հեղինակ է 113 գիտական աշխատության, 33 գյուտերի արտոնագրերի և «Կիրառական բարձրարդյունավետ քրոմատոգրաֆիա» (Եր., 2016) գրքի:

Ստացել է ՀՀ նախագահի մրցանակ (2005):



ՀԱՅՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՄԱԹԵՎՈՍԻ (25.10.1937, գ. Քարաշեն, Սյունիքի մարզ – 21.05.1988, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1988):

Սովորել է գյուղի և Բաքվի հայկական դպրոցներում, ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը (1963) և Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանի ասպիրանտուրան (1974) և այնտեղ պաշտպանել թեկնածուական առենախոսություն: 1963 թ. աշխատել է ԵԱԱԻ-ում որպես լաբորանտ, ապա «Նաիրիտ» ԳԱՄ-ում՝ ավագ գիտաշխատող:

Աշխատանքները վերաբերում են պոլիքլորոպրենի սինթեզին և ֆիզիկամեխանիկական հատկությունների բարելավմանը, արտադրական գործընթացների կատարելագործմանը:



ՀԱՆԵՍՅԱՆ ԱՏԵՖԵՆ (25.04.1935), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2008):

Կալիֆորնիայի համալսարանի քիմիական, դեղագիտության և դեղաբանության դեպարտամենտների պրոֆեսոր:



ՀԱՍՐԱԹՅԱՆ ԳԱԳԻԿ ՎԱԶԵԻ (01.01.1946,

Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2006), պրոֆ. (2015):

Ավարտել է Երևանի Ա. Պուշկինի անվան դպրոցը, 1964-1969 թթ. սովորել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում: 1969-1970 թթ. աշխատել է ՆՕՔԻ-ում, 1970-1973 թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ էլեմենտօրգանական միացությունների ինստիտուտում որպես ստաժոր-հետազոտող: 1974 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և 1975-2005 թթ. աշխատել ԽՍՀՄ քիմիական արդյունաբերության Համամիութենական քիմիական ռեակտիվների և գերմաքուր նյութերի հայկական մասնաճյուղում որպես լաբորատորիայի վարիչ և տնօրեն, 2004 թ.-ից՝ ՕՔԻ տնօրեն և համատեղությամբ կիրառական քիմիայի պրոբլեմների լաբորատորիայի գիտական ղեկավար:

Գիտական աշխատանքները վերաբերում են N- և C- վինիլազոլների սինթեզի և ստացված նյութերից համա- և հոմոպոլիմերների ստացման արդյունավետ եղանակների մշակմանը: Այդ պոլիմերների հիմքի վրա ստեղծվել են թանկարժեք մետաղների կորզման արդյունավետ ընտրողական կլանիչներ: Առաջարկվել են սինտոններ, որոնք ընդգրկում են կիրառական նշանակություն ունեցող արոմատիկ և տարացիկլային միացությունների, մոնոմերների, ներկանյութերի, վիտամինների և այլ նյութերի համակարգեր: Դիագնոստիկ փոխարկումների արդյունքում ստատվել են 300 նոր ազդանյութեր (ռեագենտներ):

Հեղինակ է հարյուրից ավել գիտական հրատարկումների և տասից ավել հեղինակային իրավունքի արտոնագրերի:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 6 ատենախոսություն:



ՀԱՍՐԱԹՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՆԱՎԱՍԱՐԴԻ (00.00.1910,

գ. Տեղ, Սյունիքի մարզ - 00.00.1973, Երևան), կենսաքիմիկոս: Բժշկ. գիտ. դոկ. (1956), պրոֆ. (1957):

Ավարտել է Գորիսի յոթնամյա դպրոցը, իսկ միջնակարգ կրթությունը ստացել է Բաքվում: Ավարտել է ԵՍԱԻ-ն (1934) և Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգի)

բժշկական ինստիտուտը (1939): Մասնակցել է Ֆիննական և Հայրենական պատերազմներին: 1944-1946 թթ. եղել է գերության մեջ: 1947 թ. բնակություն է հաստատել Լենինգրադում և աշխատել բժշկական ինստիտուտում, ծավալել գիտա-մանկավարժական ակտիվ աշխատանք: 1957 թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱ ՆՕՔԻ-ում, որտեղ կազմակերպել է գիտահետազոտական նոր լաբորատորիա և ղեկավարել մինչև մահը:

Հեղինակ է 80-ից ավելի գիտական հոդվածների, որոնք վերաբերում են նոր դեղամիջոցների և պատրաստուկների ստացման տեխնոլոգիաներին:



ՀԱՐՈՅԱՆ

(10(23).01.1919, ք. Այդն (Տրապիզոնի նահանգ) - 12.04.1974, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1974):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՍԱՏՈՒՐԻ

Միջնակարգ կրթությունը ստացել է Լենինականում (Գյումրի): 1941 թ. ավարտել է ԵՊՀ-ն և դասախոսել Լենինականի մանկավարժական ինստիտուտում, որտեղից էլ 1944 թ. զորակոչվել է Խորհրդային բանակ: Զորացրվելուց հետո աշխատել է ԵՊՀ օրգանական քիմիայի

ամբիոնի ասիստենտ, որտեղ պրոֆ. Ա. Մնջոյանի ղեկավարությամբ կատարել է գիտական աշխատանք և 1951 թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն: 1955 թ.-ից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ ՆՕՔԻ-ում, 1959-1974 թթ.՝ իր նախաձեռնությամբ հիմնադրված տարացիկլային միացությունների լաբորատորիայի վարիչ: Աշխատանքները վերաբերում են քլորմեթիլային ռեակցիայի, արոմատիկ և տարացիկլային միացությունների քիմիայի բնագավառներին: Նրա ղեկավարությամբ սինթեզվել են դիմեկումարոն, դիբոտին, գումետոքս դեղանյութերը: Եղել է ՆՕՔԻ-ի հրատարակած «Հետերոցիկլիկ միացությունների սինթեզներ» ժողովածուի (ռուս.) գլխավոր խմբագիրը:

Հեղինակ է ավելի քան 100 գիտական աշխատության, այդ թվում 29 հեղինակային իրավունքի:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆ) ԱՇԽԵՆ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ

(09(21).03.1894, Թիֆլիս - 26.05.1979, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1950), պրոֆ. (1951): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1967):

Ավարտել է Խարկովի մանրէաբանության ինստիտուտը (1923): 1929-1941 թթ. աշխատել է ԵԱԱԻ-ում, 1939-1967 թթ.՝ ԵԲԻ ընդհանուր քիմիայի ամբիոնի վարիչ: Աշխատանքները վերաբերում են Հայաստանի հանքային պաշարների, կլանիչների (սորբենտների) և ներկանյութերի հատկությունների ուսումնասիրմանը: Զբաղվել է նաև միջնադարյան Հայաստանում ներկերի ու թանաքների պատրաստման ու գործածության պատմության հարցերով:

Հեղինակ է «Ներկերի և թանաքների գործածությունը հին հայկական ձեռագրերում» (Եր., 1941) աշխատության:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ ԱՐՄԵՆԻ

(14.01.1957, Բաքու), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2017):

1974 թ. ավարտել է Երևանի թիվ 20 միջնակարգ դպրոցը, 1980 թ.՝ ԵՊԲԻ բուժական ֆակուլտետը, 1986 թ.՝ ՆՕՔԻ ասպիրանտուրան, 1995 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Բնական հակաբիոտիկ սպարսոմիցինի նոր ածանցյալների սինթեզ» թեմայով, դոկտորականի թեման է՝ «Հետազոտություններ պիրիդինների և պոլիցիկլիկ ազահետերոցիկլերի սինթեզի ոլորտում»:

Աշխատել է՝ 1981 թ. ՀԽՍՀ ԳԱ ՓԿԻ-ում որպես ավագ լաբորանտ, 1982 թ. ՀԽՍՀ ԳԱ ՆՕՔԻ-ում՝ ավագ լաբորանտ, 1988-1995 թթ. ՆՕՔԻ հակաուռուցքային միացությունների լաբորատորիայում՝ կրտսեր գիտաշխատող, 1995-2006 թթ. նույն լաբորատորիայում՝ գիտաշխատող, 2006-2009 թթ. ՆՕՔԻ տեխնոլոգիական լաբորատորիայում՝ քիմիկ-տեխնոլոգ, 2009-2015 թթ. ՆՕՔԻ թիվ 7 լաբորատորիայում՝ գիտաշխատող, 2015 թ.-ից՝ ավագ գիտաշխատող: 2001-2008 թթ. ղեկավարել է իր կողմից հիմնված ԱՐՎԻ ՍՊԸ, որի գործունեության ոլորտը եղել է օրգանական միացությունների նմուշների սինթեզ և արտահանում Արևմտյան Եվրոպայի երկրներ և ԱՄՆ: 2019 թ.-ից ՀՀ ԳԱ ՕԴՔԳՏԿ-ի տնօրենն է:

Աշխատանքները վերաբերում են կոնդեսացված պիրիդինների սինթեզի եղանակների մշակմանը, նոր ածանցյալների ստացմանը և դրանց կենսաբանական ակտիվությունների, մասնավորապես՝ հակաուռուցքային, նեյրոտոպ, հակամանրէային և այլ հատկությունների հետազոտմանը:

Հեղինակ է շուրջ 100 գիտական աշխատության (հոդվածներ, հեղինակային վկայականներ) և համահեղինակ «Various Synthesis Procedures for Quinoline Derivatives» (Lamber, 2020): Անդամ է մասնագիտական, գիտական և խմբագրական խորհուրդների:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՇՈՏ ՍԱՐԳՍԻ (19.07(01.06)

1909, Թիֆլիս - փետրվար 2003, Մոսկվա), ագրոքիմիկոս: Գղտ. գիտ. դոկ. (1961), պրոֆ. (1963):

Ավարտել է ԵՊՀ գյուղատնտեսության ֆակուլտետը (1929): 1949-1950 թթ. աշխատել է ՀԽՍՀ Խաղողագործության գինեգործության և պտղագործության ԳՀԻ (այժմ՝ գիտ. կենտրոն) ագրոքիմիայի և հողագիտության բաժնի վարիչ, 1950-1955 թթ.՝ տնօրենի պաշտոնակատար, 1980 թ.-ից՝ վերջինիս գիտական խորհրդատու:

Աշխատանքները վերաբերում են բազմամյա տնկարկների, հատկապես խաղողի վազի պարարտացման և սնման կարգի կանոնավորման միջոցով բույսերի բերքատվության բարձրացման և որակական ցուցանիշների պահպանման խնդիրներին: ՀՀ այգիներում առաջինն է կիրառել բարդ համակցված պարարտանյութեր և միկրոտարրեր: Մշակել է բազմամյա տնկարկների ագրոքիմիկական քարտի կազմման եղանակ, ինչպես նաև այգիներում պարարտանյութերի կիրառման տարբերակված նոր համակարգ՝ ըստ արտադրվող գինիների տեսակի:

Հեղինակ է «Խաղողի այգիների պարարտացումը» (Եր., 1963); «Удобрение виноградинок» (М., 1983) գրքերի:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ ՌՈՍԻԿԻ

(13.09.1980, ք. Աբովյան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2018): Դոստրն է Ռ. Ս. Հարությունյանի:

Ավարտել է ք. Աբովյանի թիվ 1 դպրոցը (1997), ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի բակալավրիատը (2001), մագիստրատուրան (2003) և ասպիրանտուրան (2006): 2008 թ. պաշտպանել է թեկնածուականատենախոսություն «Մակերևութային ակտիվ նյութերի ջրասուլֆօքսիդային լուծույթների ֆիզիկաքի-

միական առանձնահատկությունները» թեմայով, իսկ դոկտորականի թեման եղել է «Մոլեկուլային փոխազդեցությունները մակերևութային ակտիվ նյութամինաթթու/վիտամին-ջուր համակարգերում և դրանց դերը օքսիդացման ու կոմպլեքսագոյացման ռեակցիաներում»: 2015 թ. ստացել է դոցենտի կոչում:

Աշխատել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնում որպես կրտսեր գիտաշխատող (2005-2008), այնուհետև գիտաշխատող (2008-2010), ԵՊՀ էկոլոգիական քիմիայի ամբիոնի ասիստենտ (2010-2015), ԵՊՀ անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի դոցենտ (2015-2018), միաժամանակ ՀՊՄՀ քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ (2017-2019), իսկ 2019 թ.-ից՝ ՀԱԱՀ ընդհանուր քիմիայի ամբիոնի վարիչ:

Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ մակերևութային ակտիվ նյութերի ջրային լուծույթների ֆիզիկաքիմիական և կոլոիդային հատկությունների ուսումնասիրություն, կոմպլեքս միացությունների քիմիա, բնական կլանիչների վերափոխում և դրանց կիրառում աղտոտիչներից ջրային համակարգերի մաքրման համար:

Հեղինակ կամ համահեղինակ է 91 գիտական աշխատության, այդ թվում՝ 2 ուսումնամեթոդական աշխատանքի, 1 կոլեկտիվ մենագրության, 1 արտոնագրի, 57 հոդվածի և 28 թեզիսի, ինչպես նաև «Ծխախոտածուխը և մենք» գրքի ու ՀՀ դպրոցներում կիրառման երաշխավորված քիմիայի աղյուսակի:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌՈՄԻԿ ՍՈՒՐԵՆԻ (19.12.1945, գ. Տաթև, Սյունիքի մարզ), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1996), պրոֆ. (2007): Լ. Ռ. Հարությունյանի հայրը:

1962 թ. ավարտել է Տաթևի միջնակարգ դպրոցը և 1963 թ. աշխատել Բուխարա-Ուրալ գազամուղի շինարարությունում (Ղազախստան), 1969 թ. ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը և 1969-1971 թթ. ծառայել է խորհրդային բանակում որպես սպա:

1984 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1990 թ. ստացել է ավագ գիտաշխատողի, 2005 թ.՝ դոցենտի կոչումներ:

1972-1973 թթ. եղել է ԵՊՀ ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի ուսումնական լաբորատորիայի վարիչ, 1973-1981 թթ.՝ նույն ամբիոնի լաբո-

րանտ, 1981-1987 թթ.՝ պոլիմերման կինետիկայի պրոբլեմային լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող, 1987-1988 թթ.՝ գիտաշխատող, 1988-2002 թթ.՝ ավագ գիտաշխատող, 2002-2005 թթ.՝ առաջատար գիտաշխատող, 2005-2007 թթ.՝ ԵՊՀ ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի ղոցենտ, 2007-2018 թթ.՝ ԵՊՀ անօրգանական (2013 թ.-ից՝ անօրգանական և անալիտիկ) քիմիայի ամբիոնի վարիչ: 2014 թ.-ից նույն ամբիոնի անօրգանական քիմիայի ԳՀ լաբորատորիայի գիտական ղեկավար: Ակտիվորեն մասնակցել է ԵՊՀ-ի հասարակական աշխատանքներին, եղել է մասնագիտական, գիտական և խմբագրական խորհուրդների անդամ:

Աշխատանքները վերաբերում են էմուլսիաներում ընթացող օքսիդացման և պոլիմերացման գործընթացների կինետիկական օրինաչափությունների ու մեխանիզմների բացահայտման խնդիրներին, մակերևութային ակտիվ նյութերի լուծույթների ֆիզիկաքիմիական հատկությունների և քիմիական ռեակցիաներում դրանց դերի ուսումնասիրությանը, բնական կլանիչների վերափոխմանը և կիրառմանը, ինչպես նաև կոմպլեքս միացությունների քիմիային:

Հեղինակ է 280-ից ավելի գիտական աշխատության, 7 հեղինակային արտոնագրի, համահեղինակ՝ ուսումնամեթոդական 7 աշխատանքի, «Սիլիկատների և ցելոլիտների քիմիա» (Եր., 2017), «Ընդհանուր քիմիական տեխնոլոգիա» (Եր., 2018) ուսումնական ձեռնարկների և «ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի պատմությունը (1919-2019)» (Եր., 2019) գրքի: Նրա հեղինակությամբ հրատարակվել են նաև գիտահանրամատչելի և գեղարվեստական գրքեր: Հանրապետության գիտակրթական, սոցիալական և էկոլոգիական խնդիրների շուրջ բազմաթիվ հոդվածներով հանդես է եկել մամուլում: Անցած դարի 1990-ական թթ. շրջանառության մեջ է աշակերտների համար նրա կողմից կազմած քիմիայի աղյուսակը:

Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 12 և դոկտորական 1 ատենախոսություն: Պարգևատրվել է ԵՊՀ հուշամեդալներով:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԻԼԻԿ ՍԻՐԱԿԻ (05.12.1938, Երևան – 27.03.2015, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1988), պրոֆ. (1991):

1956 թ. ավարտել է Ստեփանավանի միջնակարգ դպրոցը, 1959 թ.՝ Երևանի տեքստիլ տեխնիկումը, 1964 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, 1966 թ.՝ ասպիրանտուրան: 1969 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1974 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1966-1971 թթ. եղել է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնի ասիստենտ, 1971-1974 թթ.՝ ավագ դասախոս, 1974-1989 թթ.՝ դոցենտ, 1989-2000 թթ.՝ պրոֆեսոր, 2000-2015 թթ.՝ նույն ամբիոնի վարիչ:

Գիտական աշխատանքները վերաբերում են տարբեր տեսակի կետոլակտոնների և կետոթթուների քիմիային և կենսաբանորեն ակտիվ տարբեր տեսակի լակտոնային օղակ կամ հարակից կառուցվածքով ազոտ, թթվածին և ծծումբ պարունակող նոր տարացիկլային միացությունների սինթեզին:

Հեղինակ է 240 գիտական աշխատության, այդ թվում՝ 86 հեղինակային արտոնագրի: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 2 ատենախոսություն:

Եղել է ՀՃԱ թղթակից անդամ (2012): Պարգևատրվել է ԵՊՀ հուշամեդալներով:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎ ՎԼԱԴԻՄԻՐ ՍԵՐԳԵՅԻ (06.06.1946, Մոսկվա), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1993), պրոֆ. (2004), ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2011):

Ավարտել է Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտը (1970): 1970 թ.-ից աշխատում է ՌԳԱ Ն. Ն. Սեմյոնովի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտում, 1955 թ.-ից լաբորատորիայի վարիչ, 2004 թ.-ից, միաժամանակ՝ Մոսկվայի նավթի և գազի ինստիտուտի գազաքիմիայի ամբիոնի պրոֆեսոր:

Աշխատանքները վերաբերում են ատոմական ֆտորի եռաֆտորմեթիլ ռադիկալների ռեակցիաներին, “C-H-O-S” համակարգերում գազաֆազային գործընթացների կինետիկային:

Համահեղինակ է «Окислительные превращения метана» (Մ., 1998); «Введение в газохимию» (Մ., 2005); «Социологические основы научной деятельности» (Մ., 2003) գրքերի:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎՅԱՉԵՍԱՎ ՍԱՄՍՈՆԻ

(09.08.1944, գ. Եղվարդ, Սյունիքի մարզ), կենսաքիմիկոս: Գղտ. գիտ. դոկ. (2002), պրոֆ. (2012):

Յոթնամյա կրթությունը ստացել է հայրենի գյուղում: 1961 թ. ավարտել է Քաջարանի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը: 1963 թ. ընդունվել և 1968 թ. ավարտել է ԵՊՀ կենսաբանական ֆակուլտետը «Կենսաքիմիա» մասնագիտությամբ: 1968-1970 թթ. ծառայել է Խորհրդային բանակում: 1972-1974 թթ. սովորել է Հայաստանի կոմկուսի Երևանի քաղկոմին առընթեր Մարքսիզմ-Լենինիստիկայի համալսարանի փիլիսոփայության բաժնում: 1970-1993 թթ. աշխատել է Խաղաղագործության, գինեգործության և պտղաբուծության ԳՀԻ-ում որպես կրտսեր, ապա ավագ գիտաշխատող: Համատեղությամբ դպրոցում դասավանդել է քիմիա (1973-1974): 1984 թ. վերապատրաստվել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանում: Կամավորական ջոկատների կազմում 1992-1994 թթ. մասնակցել է Չանգեզուրի և Ղարաբաղի պաշտպանությանը: 1993-2008 թթ. աշխատել է ՀՀ ԳՆ հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոնում որպես ավագ, այնուհետև առաջատար գիտաշխատող, միաժամանակ 2003-2019 թթ. դասավանդել է ՀԱԱՀ ագրոէկոլոգիայի ամբիոնում: Փորձի փոխանակման նպատակով 2004 թ. եղել է Գերմանիայի, Ավստրիայի և Ֆրանսիայի ագրարային համալսարաններում: 2019 թ.-ից աշխատում է «Երկրագործության գիտական կենտրոն» ՓԲԸ-ում:

1979 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ «Կոմպլեքս պարարտանյութերի արդյունավետությունը Արարատյան գոգահովտի նախալեռնային գոտու խաղողի տնկարկներում» թեմայով: Դոկտորական թեզն է «Հանքային պարարտանյութերի հիմնական սննդատարրերի փոխակերպումը Հայաստանի բազմամյա տնկարկներում»: Հեղինակ է 110 աշխատության և ավելի քան 180 վերլուծական լրագրային հոդվածների, «Շրջակա միջավայրի մոնիտորինգ» դասագրքի, համահեղինակ է «Շրջակա միջավայրի պահպանու-

թյունը և պարարտանյութերի արդյունավետությունը Արարատյան գոգահովտի նախալեռնային գոտու խաղողի տնկարկներում» թեմայով: Դոկտորական թեզն է «Հանքային պարարտանյութերի հիմնական սննդատարրերի փոխակերպումը Հայաստանի բազմամյա տնկարկներում»: Հեղինակ է 110 աշխատության և ավելի քան 180 վերլուծական լրագրային հոդվածների, «Շրջակա միջավայրի մոնիտորինգ» դասագրքի, համահեղինակ է «Շրջակա միջավայրի պահպանու-

թյուն» և «Էկոլոգիական անվտանգություն» դասագրքերի և 3 ուսումնական ձեռնարկի:

Եղել է գիտական և մասնագիտական խորհուրդների անդամ: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 7 ատենախոսություն:

ՀԵՅՔԵԼԵԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԱԶԱՐԻ (12.11.1899, Կ. Պոլիս – 19.02.1989, Նյու Յորք), կենսաքիմիկոս, մանրէաբան:

Ավարտել է Նյու Բրանսուիքի համալսարանը (1925), ստացել է մանրէաբանության, քիմիայի և կենսաքիմիայի դոկտորի գիտական աստիճան: Եղել է նույն համալսարանի դասախոս, Էկոլոգիայի ֆակուլտետի դեկան և պրոֆեսոր:

Աշխատանքները վերաբերում են հոսող կեղտաջրերի ախտազերծման և մաքրման կենսաբանաքիմիական եղանակների մշակման հարցերին:

Եղել է Ամերիկյան մանրէաբանների և քիմիական ընկերությունների անդամ: Արժանացել է Հարիսոն Փրեսքոթ Էդիի և Չարլզ Ագարի մրցանակների:



ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՄԱՌԼԵՆԱ ԺԻՐԱՅՐԻ (02.03.1942, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1990), ՀՀ գիտության վաստակավոր գործիչ (2013):

1958 թ. ավարտել է Երևանի Մայակովսկու անվան դպրոցը, 1963 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը և ընդունվել աշխատանքի ՀՀ ԳԱ ՕՔԻ-ում: 1970 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, որից հետո աշխատել է ՕՔԻ «Էլեմենտորգանական միացությունների լաբորատորիա»-ում որպես կրտսեր, 1976 թ.՝ ավագ, իսկ 2010 թ.-ից՝ առաջատար գիտաշխատող: 2014 թ.-ից ղեկավարում է «Ֆոսֆորոգանական միացություններ» լաբորատորիան:

Միանշանակ է նոր տեսակի ֆոսֆորետաիններ, հայտնաբերել է մի շարք ռեակցիաններ՝ β, β'-պոկուրը և կատիոնատրոպ Օ-Շ ալկիլ տեղաշարժը ֆոսֆորետաիններում, անիոնատրոպ ալկիլ տեղաշարժը ֆոսֆոնիումային հիդրօքսիդներում, α-ալկօքսի- β-բրոմէթիլֆոսֆոնիումային աղերի ջերմային և սպիրտային ճեղքման մեխանիզմները: Հետազոտություններ են տարվել

տարբեր կառուցվածք ունեցող չհագեցած ֆոսֆոր պարունակող աղերի և օքսիդների միացությունների բնագավառում:

Բազմաթիվ անգամ մասնակցել է միջազգային գիտաժողովների աշխատանքներին, եղել գիտական, մասնագիտական և խմբագրական խորհուրդների անդամ:

Հեղինակ է 122 տպագիր աշխատության, որից 5-ը՝ հեղինակային իրավունք:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 9 ատենախոսություն:

Արժանացել է «Изобретатель СССР» կոչման, 2004 թ.-ին նրա անունը ընդգրկվել է Ամերիկյան կենսագրական ինստիտուտի «500 Scientists of the World» և «Woman 2004» տեղեկատուներում:



ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՌՆՈՍ ԱՐՇԱԿԻ (02.11.1940, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1987), պրոֆ. (2010):

1957-1962 թթ. սովորել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում: 1976 թ. եղել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում իր նախաձեռնությամբ ստեղծված քիմիական ֆիզիկայի լաբորատորիայի վարիչ, որտեղ զբաղվել է բյուրեղների անճեցման առանձնահատկություններով: 1982 թ.-ից եղել է ՀՀ ԳԱ ՕՔԻ պոլիմերային դիսպերսիաների լաբորատորիայի վարիչ, 1997 թ.-ից, միաժամանակ՝ Երևանի Ապրանքագիտության տեխնոլոգիայի հայրուսական համալսարանի հիմնադիր-ռեկտոր, 2009 թ.-ից՝ ՀՀ ԳԱԱ ԳԿԿ մագիստրատուրայի պրոֆեսոր:

Աշխատանքները վերաբերում են էմուլսիայում պոլիմերացման կինետիկական օրինաչափություններին և մակրոմոլեկուլների կազմավորման մեխանիզմին, ինչպես նաև բյուրեղների քիմիային: Ղեկավարել է թեկնածուական 7 ատենախոսություն:

Եղել է Ամերիկյան կենսագրական ինստիտուտի «Տարվա մարդ» (1988), ՄԱԿ-ի սոցիալական և տնտեսական խորհրդի կազմի Տեղեկատվական միջազգային ակադեմիայի անդամ (1997), մասնագիտական և գիտական խորհուրդների անդամ:



ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԵՅՁԻ ՆԻԿՈԼԱՅԻ (01.01.1951, ք. Բաքու), քիմիկոս: Տեխ. գիտ. դոկ. (2001), պրոֆ. (2004): Կինն է Գ. Թորոսյանի:

1969-1974 թթ. սովորել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում: 1974-1981 թթ. աշխատել է ՀՀ ԳԱ ՕՔԻ պոլիմերների լաբորատորիայում որպես կրտսեր, ապա ավագ գիտաշխատող: 1984 թ. պաշտպանել է թեկնածուականատենախոսություն: 1973-1974 թթ. անցել է ուսումնագիտական մեկամյա պրակտիկա ԽՍՀՄ ԳԱ Ա. Ն. Նեսմեյանովի անվան էլեմենտօրգանական քիմիայի ինստիտուտում:

Գիտական ուսումնասիրությունները հիմնականում կապված են պոլիմերների բնագավառի հետ, կոմպոզիտների նոր օրգանական կապակցողների մշակմանը և դրանց հիման վրա շինարարական կոմպոզիտների ստացմանը:

1994-2006 թթ. աշխատել է «ՀայԼեռՏեխՀսկողություն» տեսչությունում որպես քիմիական տեխնիկական հսկողության տեսչության պետ, այնուհետև որպես լեռնաքիմիական հսկողության բաժնի պետ (2004-2006): Հանդիսանում է Քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոնյա և երկրորդ դասի խորհրդական: Միաժամանակ աշխատել է ԵՃՇՊՀ-ում որպես ավագ դասախոս (1991-1994), դոցենտ (1994-2004), պրոֆեսոր (2004-2016): 2006-2017 թթ. աշխատել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում որպես գիտության գծով պրոռեկտոր:

Եղել է մասնագիտական խորհուրդների անդամ, ՀՀ գիտատեխնիկական ընկերությունների քիմիական արդյունաբերության վարչության անդամ, «Եվրոպական ակադեմիա» գիտական հոդվածների ժողովածուի գլխավոր խմբագիր, «Քիմիական գիտություն և տեխնոլոգիա» միջազգային ամսագրի խմբագրական խորհրդի անդամ, միջազգային փորձագետ, Ռումինիայի Հանրապետության «Ստեֆան Սել Մարե» (ք. Սուչավա) համալսարանի մասնագիտական խորհրդի անդամ:

Ունի 200 գիտական աշխատություն և 10-ից ավելի հեղինակային իրավունք: Նրա հետազոտական աշխատանքների հիման վրա իրականացվել է երկու գիտատեխնիկական ներդրում սուսինձների արտադրության բնագավառում (Վանաձորում և Սանկտ Պետերբուրգում): Հեղինակ է բազամթիվ

ուսումնական և մեթոդական ձեռնարկների, ունի երեք մենագրություն, համահեղինակ է երկու դասագրքի:

Նրա ղեկավարությամբ պատրաստվել են գիտության թեկնածուներ, եղել է բազմաթիվ միջազգային և հանրապետական գիտաժողովների կազմակերպչական ու գիտական կոմիտեների անդամ:



ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱԿՈՐ ԳԱՐԵԳԻՆԻ

(07(19).12.1875, Շուշի - 22.12.1941), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1903, Հայդելբերգի համալսարանում), պրոֆ. (1925): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1935):

Ավարտել է Բեռլինի համալսարանի քիմիայի բաժինը: Ստրասբուրգի և Բեռլինի համալսարաններում առժամանակ զբաղվել է ֆիզքիմիական և մանրէաբանական հետազոտություններով: Վերադառնալով Շուշի՝ 1904-1907 թթ. քիմիա է դասավանդել տեղի դպրոցներում: 1907-1920 թթ. Բաքվում ղեկավարել է քիմիամանրէաբանական լաբորատորիան: 1918 թ. եղել է Բաքվի կոմունայի փախստականների գործերի կոմիսար: 1920-1921 թթ. աշխատել է Շուշիում և Դիլիջանում, 1921 թ. փոխադրվել է Երևան և աշխատել ժողկոմխորհում: 1924 թ.-ից աշխատել է ԵՊՀ-ում և ստեղծել կենսաքիմիայի ամբիոնը, որը հետագայում նրա ղեկավարությամբ գործել է բժշկական ինստիտուտում: 1922-1930 թթ. եղել է ԵՊՀ, իսկ 1930-1936 թթ. ԵԲԻ ռեկտոր: 1936 թ. սեպտեմբերին նշանակվել է Արմֆանի կենդանաբանական ինստիտուտի տնօրեն:

Գիտական աշխատանքները վերաբերում են C վիտամինի կառուցվածքի ուսումնասիրմանը: Հանդես է եկել բազմաթիվ հրապարակախոսական հոդվածներով: Մեծ ծավալի կառուցողական աշխատանքներ է կատարել ԵՊՀ-ում: ԵԲԻ ամբիոնների ու կլինիկաների կազմակերպման, դրանց ամրապնդման, ինչպես նաև ներկայիս գլխավոր մասնաշենքի կառուցման աշխատանքները սերտորեն կապված են նրա անվան հետ: Մասնակցել է նաև ՀԽՍՀ-ում քիմիական արդյունաբերության զարգացման ուղղությունների մշակմանը:

Անհիմն բռնադատվել է, հետագայում արդարացվել: Մահացել է Ղազախստան արքորի ճանապարհին գնացքում 1941 թ.:



ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՈՖՅԱ ՊԵՏՐՈՍԻ (12.09.1938, Լենինական (Գյումրի) – 21.05.2017, Երևան), կենսաքիմիկոս: Կենս. գիտ. դոկ. (2002), պրոֆ. (2004):

1957 թ. ավարտել է տեղի թիվ 3 միջնակարգ դպրոցը, 1962 թ.՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը, 1965 թ.՝ ասպիրանտուրան: 1970 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1977 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1965 թ.-ից աշխատել է ԵՊՀ կենսաքիմիայի ամբիոնում:

Հետազոտել է խմորասնկերում և բորբոսասնկերում ամինաթթուների յուրացման մեխանիզմները, մասնավորապես ցույց է տվել, որ բորբոսասնկերի պերօքսիտները պարունակում են ամինաթթվային օքսիդազներ: Հետազոտել է պերօքսիտների դերը ամինաթթուների ապամինացման մեխանիզմում: 1987-1988 թթ. գիտահետազոտական աշխատանքներ է իրականացրել Բրատիսլավայի Յան Կոմենսկու անվան համալսարանի դեղաբանության ամբիոնում, 1993 թ.՝ Լեհաստանի ԳԱ կենսաֆիզիկայի-կենսաքիմիայի ինստիտուտում:

Հեղինակ է ավելի քան 70 գիտական հոդվածների և ուսումնամեթոդական գրքերի, այդ թվում՝ «Կենսաքիմիայի լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական ձեռնարկ»-ի (Եր., 2003):



ՀՈՎԱՍԵՓՅԱՆ ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (25.07.1943, Բանավան Թումանյան), քիմիկոս-մետալուրգ-տեխնոլոգ: Տեխ. գիտ. դոկ. (2018):

1960 թ. ավարտել է Լոռու մարզի Բանավան Թումանյանի դպրոցը, 1968 թ.՝ ԵՊԻ լեռնամետալուրգիական ֆակուլտետը, 1998 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 2009 թ. ստացել դոցենտի կոչում:

Աշխատել է Երևանի կոմպրեսորների գործարանում որպես ճարտարագետ-մետալուրգ (1968), կիսահաղորդիչների և մետաղակերամիկայի հատուկ կոնստրուկտորական բյուրոյում որպես ավագ ճարտարագետ (1969-1972), իսկ 1972 թ.-ից՝ ՀՀ ԳԱԱ ԸԱՔԻ-ում՝ ավագ գիտաշխատող, խմբի ղեկավար, լաբորատորիայի վարիչ (1992 թ.-ից): 2002-2012 թթ. դասավանդել է ՀՊՃՀ մետալուրգիայի և նյութագիտության ամբիոնում:

Աշխատանքները վերաբերում են հանքանյութերից և երկրորդային հումքից մետաղների կորզման և կիրառման քիմիայի և տեխնոլոգիաների տեսական ու գործնական հիմունքների մշակմանը, մոլիբդենի քիմիական միացությունների (որպես լիգատուրա) կիրառման տեխնոլոգիական գործընթացներին (հատուկ որակյալ պողպատների արտադրության նպատակով): Մշակել և գիտականորեն հիմնավորել է մոլիբդենի սուլֆիդային խտանյութերի համալիր վերամշակման նոր ուղղություններ: Նրա մշակած տեխնոլոգիաներից ներդրվել են արտադրությունում:

Հեղինակ է ավելի քան 85 աշխատության, այդ թվում հեղինակային վկայագրերի և պատենտների: Անդամ է մասնագիտական, գիտական և խմբագրական խորհուրդների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկանծուական 3 ատենախոսություն: Արժանացել է ՀՀ ԳԱԱ գովեստագրերի (1989, 2013):



ՂԱԶԱՆՉՅԱՆ ՏԻՐԱՆ ՏԻՐԱՆԻ (15.07.1901, Թիֆլիս – 21.02.1967, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1952), պրոֆ. (1953), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1963):

1921 թ. ավարտել է Ներսիսյան դպրոցը և երկար տարիներ աշխատել որպես ուսուցիչ: 1936 թ. ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետը և աշխատանքի անցել ԵՊՀ-ում, որտեղ եղել է ասիստենտ, դոցենտ, 1950-1963 թթ.՝ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ:

Հիմնել է ֆիզիկաքիմիական վերլուծության առաջին լաբորատորիան ՀՀ-ում: Միջնադարյան մատենագրական նյութերի հիման վրա համակարգել, քննարկել ու ներկայացրել է Հայաստանում քիմիայի ծագման և զարգացման պատմությունը, որի առանձին բաժիններ հրատարակվել են պատմաբանափիլիսոփայական և անօրգանական քիմիայի հարցերին նվիրված նրա աշխատություններում:

Հեղինակ է «Էլեմենտների ուսմունքը հայ բնափիլիսոփայության մեջ» (Եր., 1946); «Սահակ Ծաղկարար» (Եր., 1958); «Очерки по истории химии в Армении» (Եր., 1955) մենագրությունների և բազմաթիվ այլ գիտական հոդվածների ու հանրամատչելի գրքերի:

Պարգևատրվել է Պատվո նշան շքանշանով:



ՂԱԶԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ ԶԱՐՄԱՅՐԻ (17(30).07.1908, Ստեփանավան – 10.10.1983, Երևան), քիմիկոս-օրգանիկ, քիմ. գիտ. դոկ. (1953 թ.), պրոֆ. (1953), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1965):

Ավարտել է Թբիլիսիի Ներսիսյան դպրոցը, ապա Լենինականի (Գյումրի) ինդուստրիալ տեխնիկումը (1925): Աշխատել է մեկ տարի ուսուցիչ, ապա 1926-1929 թթ. սովորել ԵՊՀ գյուղատնտեսական ֆակուլտետում: Համալսարանը ավարտելուց հետո ընդունվել է աշխատանքի Երևանի շինարարական ինստիտուտի օրգանական քիմիայի ամբիոնում որպես ասիստենտ: 1929-1936 թթ. միաժամանակ սովորել է ԵՊԻ քիմիատեխնոլոգիական ֆակուլտետում: Ուսումնամանկավարժական գործունեությանը զուգահեռ կատարել է գիտահետազոտական աշխատանքներ պրոֆ. Ս. Ղամբարյանի ղեկավարությամբ: 1936 թ. Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական թեզ և 1938 թ. ստացել դոցենտի, իսկ 1939 թ.՝ ավագ գիտաշխատողի կոչումներ: 1939-1945 թթ. եղել է ԵՊԻ օրգանական քիմիայի և օրգանական քիմիական տեխնոլոգիայի ամբիոնների վարիչ, 1947-1968 թթ.՝ օրգանական քիմիայի ու ֆիզիկական քիմիայի ամբիոնների վարիչ, իսկ 1968-1979 թթ.՝ օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ: 1939-1944 թթ. աշխատել է որպես ԵՊԻ քիմիատեխնոլոգիական ֆակուլտետի դեկան: 1952 թ. Մոսկվայում սինթետիկ ցավամոքիչ նյութերին նվիրված թեմայով պաշտպանել է դոկտորական թեզ: Տեղական հումքից քրոմպիկի ստացման հետ կապված աշխատանքները հիմք են հանդիսացել Երևանում կառուցելու քրոմպիկի գործարանը: Մշակել է պոլիվինիլացետալների, պոլիվինիլամինաացետալների և հեքսաքլորթթանի ստացման եղանակներ: Պարգևատրվել է ՀՀ մեդալներով և պատվոգրերով:



ՂԱԶԱՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ ԱՐՄԵՆԱԿԻ (27.04.1939, գ. Ծաղկավան, Տաուշի մարզ), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1985), պրոֆ. (1986):

Ավարտել է տեղի դպրոցը և 1958 թ. ընդունվել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: Դիպլոմային աշխատանքը կատարել է ԽՍՀՄ ԳԱ Բայկովի անվան մետալուրգիայի ինստիտուտում: 1963 թ. ԵՊՀ ավարտելուց հետո ընդուն-

վել է Մոսկվայի ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան: Թեկնածուական թեզը (1971) նվիրված է իոնական պոլիմերացման կինետիկային, որտեղ առաջին անգամ ցույց է տրվել, որ կատիոնային պոլիմերացման ժամանակ ռեակցիայի սահմանավորող փուլը հանդիսանում է հարուցման փուլը, ինչպես նաև բացահայտվել է պոլիմերացման ակտիվ կենտրոնների բնույթը:

1967-1972 թթ. ղեկավարել է Մոսկվայի նավթավերամշակման գործարանի կենտրոնական լաբորատորիայի անալիտիկ բաժինը: Այնտեղ իր ղեկավարությամբ առաջին անգամ գելբրոմատագրանցման եղանակը կիրառվել է բարձրամոլեկուլային միացությունների մոլեկուլային զանգվածների, ինչպես նաև ըստ ֆունկցային խմբերի տեսակների բաշխվածությունն ուսումնասիրելիս: 1972 թ. գործուղվել է Կիրովականի (Վանաձոր) պոլիմերային սոսինձների պետական ինստիտուտ (ՊՍՊԻ) և ղեկավարել տեսական ու տեխնոլոգիական հետազոտությունների բաժինը: ՊՍՊԻ-ում աշխատած տարիներին իր կողմից կատարված հետազոտությունները նվիրված են դիսպերս համակարգերի ֆիզիկաքիմիական ձևափոխությունների հետազոտմանը: Տեսական և փորձնական հետազոտությունների հիման վրա իր կողմից մշակվել է դիսպերս համակարգերի հատկությունների հետազոտման և կարգավորման նոր գիտական ուղղություն, որը ձևակերպվել է իր դոկտորական թեզում: Կատարած աշխատանքներն ունեն գիտակիրառական նշանակություն և որոշները ներդրվել են տնտեսության տարբեր բնագավառներում:

1983 թ.-ից աշխատել է Վանաձորի մանկավարժական ինստիտուտում որպես քիմիայի ամբիոնի վարիչ, 2020 թ.-ից՝ ամբիոնի պրոֆեսոր: Անդամ է Միջազգային ակադեմիական միության (1998): Ստացել է ՀՀ վարչապետի շնորհակալագիր (2004), ՀՀ ԿԳ նախարարության ոսկե հուշամեդալ (2009), «Պատվավոր Տավուշցի» (2009) և Վանաձորի Պատվավոր քաղաքացի (2019) կոչումներ, Անանիա Շիրակացի մեդալ (2010), Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ոսկե հուշամեդալ (2014):

Հեղինակ է 25 գյուտի և 170 գիտական հոդվածի: Իր ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 4 թեզ:

Դուստրը՝ Արմինե Ղազարյանը քիմ. գիտ. թեկնածու է:



ՂԱԶԱՐՅԱՆ ՊԵՏՐՈՍ ԱՐԱՄԻ (02.01.1946, գ.

Նաոխրերբի (Ախալցխայի շրջան՝ Վրաստան)), կենսաքիմիկոս: Կենսաբ. գիտ. դոկ. (1986), պրոֆ. (2003):

1962 թ. ավարտել է դպրոցը (ք. Վալե), 1964 թ.՝ Երևանի առևտրատնտեսական տեխնիկումը, 1969 թ.՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի բաժինը և 1969-1971 թթ. ծառայել Խորհրդային բանակում

որպես սպա: 1971-1995 թթ. աշխատել է ՀՀ ԳԱ կենսաքիմիայի և Երևանի բժիշկների կատարելագործման (կենսաքիմիական ԳՀ լաբորատորիայի վարիչ) ինստիտուտներում: 1995 թ. նշանակվել է ՀՀ ԱՆ պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոնի գիտության գծով փոխտնօրեն: 1994 թ.-ից, միաժամանակ պրոֆեսորի պաշտոնով, աշխատել է ԵՊՀ օրգանական քիմիայի (մինչև 2002), այնուհետև դեղագործական քիմիայի (2002-2016), իսկ 2019 թ.-ից՝ ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնում: 2017-2019 թթ. եղել է Հայբուսակ համալսարանի քիմիայի և բժշկական կենսաքիմիայի ամբիոնի վարիչ և գիտական գծով փոխտնօրեն:

Աշխատանքները վերաբերում են մի շարք հիվանդությունների ախտաճնային մեխանիզմների բացահայտմանը և առավել արդյունավետ կենսաբանորեն ակտիվ նյութերի հետազոտմանը, դրանց նախակլինիկական և կլինիկական փորձարկումներին: Նրա կողմից ուսումնասիրվող հիմնական բնագավառներն են՝ բժշկական կենսաքիմիան, մոլեկուլային կենսաբանությունը և արյունաբանությունը: Հատկանշանակ է նաև նրա կողմից պատենտավորված «Պետամցին» հակասնկային պատրաստուկի արտադրության տեխնոլոգիայի մշակումը և արտադրության կազմակերպումը:

Հեղինակ է 500 գիտական աշխատության և 7 հեղինակային արտոնագրի (մի մասը ներդրվել է գործնական բժշկության մեջ), 5 ուսումնամեթոդական աշխատանքի, 2 ուսումնական ձեռնարկի (Մոսկվա, 1982-1985) և 2 գրքի (Գերմանիա, 2012): Նրա ակտիվ մասնակցությամբ հիմնադրվել են «Արյուն» (գլխավոր խմբագրի տեղակալ) և «Ֆարմա» (պատասխանատու խմբագիր) գիտագործնական ամսագրերը:

Նրա խորհրդատվությամբ և ղեկավարությամբ պաշտպանվել են դոկտորական 3 և թեկնածուական 26 ատենախոսություն:

Անդամակցում է տեղական և միջազգային շուրջ 15 գիտական և մասնագիտական խորհուրդների: Բազմաթիվ միջազգային վարկանիշային ամսագրերի գրախոս և խմբագրական խորհուրդների անդամ է: Մասնակցել է բժշկությանը և կենսաքիմիային նվիրված շուրջ 80 միջազգային գիտաժողովների:

Ընտրվել է Ամերիկայի կենսագրական ինստիտուտի գիտական խորհուրդի պատվավոր, Ամերիկյան քիմիական ընկերության պատվավոր, Նյուր Յորքի ակադեմիայի (1997), Էկոլոգիական միջազգային ակադեմիայի (2000), Ռուսաստանի բնական (2008) և Բժշկատեխնիկական (2009) գիտությունների ակադեմիաների անդամ: Եղել է Հայաստանի կլինիկական կենսաքիմիկոսների ընկերության գիտքարտուղարը (1975 թ.-ից), 2009 թ. ընտրվել է ՀՀ Հանրային խորհրդի պետաիրավական հարցերով հանձնաժողովի անդամ: Արժանացել է ՀՀ ԱՆ (1990, 2006), ՀՀ ԿԳՆ (2006), Համամիութենական «Գիտելիք» ընկերության (1991) պատվոգրերի, «Տարվա մարդ» կոչման (1998), պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան հուշամեդալի (2008):

ՂԱԶԱՐՅԱՆ ՓԵՓՐՈՆԵ ԻՎԱՆԻ (11.07.1946, Բաթում), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1990):

Ավարտել է ԵՊՀ-ն (1969): 1969-1996 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ օրգանական քիմիայի ինստիտուտի բուրավետ նյութերի լաբորատորիայում: 1996 թ.-ից բնակվում է ԱՄՆ-ում:

Աշխատանքները վերաբերում են ալիլային և հոմոալիլային միացությունների և դրանց օքսիդների ռեակցիաների տեսությանն ու սինթեզի առնչություններին:



ՂԱՄԲԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍԻ (23.06.1879, Կոջոր (Թբիլիսի մերձակայքում) – 07.03.1948, Մոսկվա, աճյունը ամփոփված է Երևանում), քիմիկոս: Քիմական գիտության հայ դպրոցի հիմնադիրը: Քիմ. գիտ. դոկ. (1937), պրոֆ. (1926), ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ (1944), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1935):

1884 թ. ընտանիքը տեղափոխվել է Կիև, երկու տարի անց՝ Վարշավա, ապա՝ Ռիգա, որտեղ նա ստացել է

նախնական կրթություն: 1898 թ. ավարտել է Ռիգայի արական գիմնազիան: 1899-1906 թթ. սովորել է Լայպցիգի, Հայդելբերգի և Մյունխենի համալսարաններում՝ մասնագիտանալով օրգանական քիմիայի բնագավառում: Աշխատել է Ստրասբուրգի համալսարանում որպես ասիստենտ, ապա՝ փոխադրվել Բեռլինի բարձրագույն գյուղատնտեսական դպրոց որպես օրգանական քիմիայի ասիստենտ:

1905 թ.-ից, շուրջ 40 տարի, ուսումնասիրել է օքսիդացման գործընթացում պերօքսիդների ներգործության մեխանիզմները, զբաղվել ամինների ներկայությամբ օրգանական պերօքսիդների ճեղքման հարցով, որը հետագայում դարձավ ֆիզիկական և օրգանական քիմիայի կարևորագույն ուղղություններից մեկը, բացահայտել է երկֆենիլամինի հեշտությամբ օքսիդանալու հատկությունը և առաջինն է ստացել քառաֆենիլիդրազին: Զբաղվել է Հայաստանի տեղական այրվող թերթաքարերի, եթերայուղատու բույսերի ուսումնասիրությամբ և ացետիլենի քիմիայի հարցերով:

1911 թ. վերադարձել է Անդրկովկաս և նշանակվել Ռուսական տեխնիկական ընկերության Բաքվի քիմիական լաբորատորիայի վարիչ: 1914-1920 թթ. դասախոսություններ է կարդացել Թիֆլիսի կանանց բարձրագույն դասընթացներում՝ միաժամանակ աշխատելով հողագործության դեպարտամենտի քիմիամանրէաբանական լաբորատորիայում:

1920 թ. հրավիրվելով ԵՊՀ՝ կազմակերպել և ղեկավարել է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնը և օրգանական քիմիայի լաբորատորիան, ինչպես նաև բժշկական, գյուղատնտեսական, պոլիտեխնիկական և անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտների օրգանական քիմիայի ամբիոնները:

1935-1938 թթ. եղել է ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի նախագահության անդամ, քիմիայի ինստիտուտի կազմակերպիչներից և նրա օրգանական քիմիայի բաժնի առաջին ղեկավարը, գործուն մասնակցություն ունեցել Հայաստանում քիմիական գիտության և արդյունաբերության զարգացման պրոբլեմների մշակմանը: Մեծ է նրա ավանդը Երևանի կաուչուկի գործարանի և Վանաձորի քիմիական կոմբինատի հիմնադրման գործում:

Նա իրավամբ համարվում է քիմիական գիտահետազոտական գործի սկզբնավորողը Հայաստանում:

1938 թ. հուլիսի 17-ին անարդարացի ձերբակալվել է և 1939 թ. սեպտեմբերի 6-ին դատապարտվել 10 տարվա ազատազրկման Սեմիպալատինսկի

ուղղիչ աշխատանքային գաղութում: 1944 թ. ազատվել և վերադարձել է Երևան, անցել գիտահետազոտական աշխատանքի ԳԱ քիմիայի ինստիտուտում (1944-1948): 1955 թ. արդարացվել է:

Մեծ քիմիկոսի բրոնզաձույլ կիսանդրին դրված է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում:



ՂԱՐԱԳՅՈՂՅԱՆ ԿՈՆՍԱՆՏԻՆ ԳՐԻԳՈՐԻ

(29.09.1927, Երևան – 28.04.2013, Երևան), կենսաքիմիկոս: Կենսաբ. գիտ. դոկ. (1968), պրոֆ. (1972), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1996, թղթ. անդամ՝ 1986 թ.-ից):

Ավարտել է ԵԲԻ-ն (1950): 1962-1965 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ կենսաքիմիայի ինստիտուտի գիտքարտուղար, 1962-1986 թթ.՝ լիպիդների կենսաքիմիայի լաբորատորիայի վարիչ և փոխտնօրեն, 1986 թ.-ից՝ ՀՀ մոլեկուլային կենսաբանության ԳՀԻ տնօրեն, միաժամանակ՝ 1991 թ.-ից՝ ԵՊԲՀ կենսաքիմիայի ամբիոնի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են նյարդաքիմիայի, լիպիդների քիմիայի, արյան մակարդելիության համակարգի ֆիզիոլոգիայի և կենսաքիմիայի հարցերին: Առաջինն է հաստատել արյունամակարդման գործընթացի պայմանառեֆլեկտորային կարգավորման երևույթը, բացահայտել լոշտակի արմատների մզվածքի որոշակի բաղադրամասերի և հակաօքսիդիչների արյան շաքարի քանակությունը նվազեցնող հատկությունները:

Եղել է՝ ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ (2004 թ.-ից), ՀՀ նյարդաքիմիկոսների գիտխորհրդի նախագահ (1963 թ.-ից), Տեսական օրգանական քիմիայի միջազգային ընկերակցության (1990 թ.-ից, Կանադա), Նյարդաքիմիկոսների միջազգային, եվրոպական և ամերիկյան ընկերությունների (1990 թ.-ից) անդամ, ՌԳԱ և ՀՀ ԳԱԱ «Նյարդաքիմիա» (ռուս.) ամսագրի գլխավոր խմբագրի տեղակալ (1982 թ.-ից): Մենագրությունը՝ «Фосфолипиды и их роль в жизнедеятельности организма» (Է., 1972):



ՂՈՉԻԿՅԱՆ ՏԱՐԻԵԼ ՎԼԱԴԻՄԻՐԻ (01.12.1949, Մեծ Պարնի, Լոռու մարզ), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2008), պրոֆ. (2008), ՀՀ գիտության վաստակավոր գործիչ (2019):

Մանկության և պատանեկության տարիները անցել են Թբիլիսի քաղաքում, որտեղ էլ ստացել է միջնակարգ կրթությունը: Դպրոցն ավարտելուց հետո աշխատել է արտադրությունում, որտեղից էլ զորակոչվել է Խորհրդային բանակ: 1972 թ. ընդունվել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, որն ավարտելով 1977 թ.՝ անցել է աշխատանքի ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի օրգանական քիմիայի ամբիոնում լաբորանտի պաշտոնով: Հիմնական աշխատանքին զուգահեռ զբաղվել է գիտահետազոտական աշխատանքով և 1985 թ. պաշտպանել թեկնածուական թեզ: 1986 թ. զբաղեցրել է նույն ամբիոնի կրտսեր գիտաշխատողի, իսկ 1987 թ.-ից ավագ գիտաշխատողի պաշտոնները: 1991 թ. նրան շնորհվել է ավագ գիտաշխատողի, իսկ 2004 թ.՝ դոցենտի կոչում: 2010 թ.-ից ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկանն է:

Աշխատանքները վերաբերում են հազեցած հինգանդամանի լակտոնների վարքի ուսումնասիրմանը, տարացիկլիկ միացությունների հենքի վրա նոր, կենսաբանորեն ակտիվ միացությունների սինթեզին: Լակտոնների քիմիայում առաջին անգամ իրականացրել է քրոս-համակցման, քիլ-ռեակցիաներ, որոնք լակտոնների քիմիան նոր հարթություն են տեղափոխել, արդյունքում ստեղծելով մի շարք, նախկինում չնկարագրված, համակարգեր: Տարացիկլիկ միացությունների բնագավառում կատարված ուսումնասիրությունների արդյունքում, մասնավորապես 1,2,4- և 1,2,3-տրիազոլների ածանցյալների շարքում բացահայտվել են կենսաբանական հատկությունների նոր տեսակներ, ինչպես նաև որոշ դեպքերում կառուցվածք-կենսաակտիվություն որոշակի կապ:

Հեղինակ է 275 ուսումնամեթոդական և գիտական հոդվածների, հեղինակային իրավունքների և ՀՀ արտոնագրերի: Հեղինակային իրավունքներով պաշտպանված երկու աշխատանքները արտադրությունում ներդնելու համար նրան շնորհվել է «ԽՍՀՄ գյուտարար» կոչում:

Համահեղինակ է ուսումնական ձեռնարկների՝ «Քիմիական լաբորատոր աշխատանքներ» (Եր., 2011) և «Ընդհանուր քիմիական տեխնոլոգիա» (Եր., 2017):

Եղել է մասնագիտական և գիտական խորհուրդների և ՌԴ բնական ԳԱ անդամ (2016): Պարգևատրվել է ԵՊՀ ոսկե հուշամեդալով և ՀՀ ազգային ժողովի պատվոգրով:

Երա դեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 2 ատենախոսություն:



ՂՈՒԿԱՍՅԱՆ ՊԵՏՐՈՍ ՍԱՐԳՍԻ [08.03.1945, Ղա-մըշլի (Սիրիա)], քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2000):

1947 թ. տեղափոխվել են ՀԽՍՀ: 1963 թ. ավարտել է Վաղարշապատի թիվ 1 դպրոցը, 1968 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը և աշխատանքի անցել ՀՀ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտում որպես գիտաշխատող, ավագ գիտաշխատող: 1973 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ «Բենզոլի ֆոտոքիմիական օքսիդացումը գազ ֆազում» թեմայով, իսկ դոկտորականի թեման է «Ածխաջրածինների օքսիդացման և մի շարք միացությունների հիդրման առանձնահատկությունները երկսեկցիոն ռեակտորում»:

Հիմնական գիտական հետաքրքրություններն են՝ լուսաքիմիան, սառը բոցերը և ջրածնի սպիլովերը: Բացահայտել է, որ բազմաթիվ անդրադարձումներով ռեակտորում մեծ քվանտային ելքերով լուսաքիմիական ռեակցիաներում հնարավոր են օպտիկական ոչ գծային երևույթներ գազ ֆազում: Մշակել է սառը բոցերի կայունացման սկզբունքորեն նոր եղանակ և հնարավորություն է ընձեռել ժամանակի և տարածության մեջ առանձնացնել և ամրագրել ռեակցիայի էքստրեմալ տիրույթը: Ցույց է տվել, որ սառը բոցը սառը շղթայական պայթյուն է, որը ուղեկցվում է պերօքսիդային ռադիկալների գերբարձր կոնցենտրացիաներով: Հաստատել է, որ նպատակային ձևով կոնցենտրացիայի այդ տիրույթի օգտագործումը արժեքավոր է միացությունների սինթեզներ իրականացնելու համար: Ռեակցիաների ակտիվ կենտրոնների մակարդակով հետազոտել է երկֆունկցային կատալիզի ջրածնի սպիլովերի տիրույթը, ստեղծելով այդ գործընթացների հետազոտման եղանակ՝

էլեկտրոնային պարամագնիսական ճառագայթա-սպեկտրաչափի կիրառմամբ: Բացահայտել է, որ ջրածնի ակտիվ ատոմները մակերեսային դիֆուզիայով կարող են տեղաշարժվել 12-14 մմ և առանց իրենց ակտիվությունը կորցնելու իրականացնել քիմիական փոխարկումներ:

Հեղինակ է 100-ից ավելի գիտական աշխատության: Անդամ է մի քանի մասնագիտական և գիտական խորհուրդների:

Տարբեր ժամանակահատվածներում համատեղության կարգով դասավանդել է ԵՊՀ-ում և ԵՊՃՀ-ում:

ՃԳՆԱՎՈՐՅԱՆ ԱՅՋԵՆԲԱՈՒԹԵՐ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՅԿԱԶԻ (ԱՄՆ), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ.: Երգահան, խմբավար Լորիս Ճնգավորյանի քույրը:

Ծնվել է Իրանի Բրուջենդ քաղաքում, արտաշատցի հոր և կարինցի մոր ընտանիքում: Աշխատել է ՄԱԿ-ի արդյունաբերական տեխնոլոգիայի բաժնի տնօրեն: 1989 թ. այցելել է ՀՀ: Ապրում է Վիեննայում:



ՄԱՂԱԿՅԱՆ ՎԱԼԵՐԻ ՆԻԿՈԼԱՅԻ (12.08.1946, Երևան – 11.12.2002, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1999):

1970 թ. ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: 1969-1974 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ ՆՕՔԻ-ում որպես ավագ լաբորանտ: 1977 թ. պաշտպանել է թեկնածուականատենախոսություն: 1978-1982 թթ. աշխատել է ԵՊԲՀ

ֆարմացիայի ամբիոնում պրոֆեսոր Ն. Ս. Ենիկոլոյանի գլխավորած պարամագնային լաբորատորիայում որպես ավագ գիտաշխատող: Իրականացրել է բնական պորֆիրինների ջրալուծ սինթետիկ նմանակների կառուցվածքի, ֆիզիկաքիմիական հատկությունների հետազոտություններ: 1982-1989 թթ. եղել է ասիստենտ, իսկ 1989 թ.-ից՝ ամբիոնի դոցենտ: Դոկտորականատենախոսության թեման է՝ «Նոր մեզոտետրապիրիդիլպորֆիրինների և նրանց մետաղական կոմպլեքսների սինթեզը, վերափոխումները և կենսաբանական ակտիվությունը»: Իրականացված հետազոտությունների արդյունքում առաջարկել է նոր արդյունավետ ֆունգիցիդային ակտիվությամբ

օժտված պատրաստուկ – մեզոտետրա (3-N-բուֆիլալիդի) պորֆինի ցինկային կոմպլեքսը:

Հեղինակ է 105 գիտական աշխատության: Եղել է ՌԴ բնական ԳԱ անդամ (2001):

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (27.09.1926, Երևան – 31.12.1985, Երևան), ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1966), պրոֆ. (1972):

Ավարտել է ԵՊԻ-ն (1949): 1966-1974 թ. եղել է Սվերդլովսկի (այժմ՝ Եկատերինբուրգ) քիմիայի ինստիտուտի իր կազմակերպած կառուցվածքի ու ռեակցիաունակության լաբորատորիայի, 1972 թ.-ից, միաժամանակ՝ տեսական քիմիայի բաժնի վարիչ, 1974-1985 թթ.՝ քիմիական ռեակտիվների և գերմաքուր նյութերի «ԻՌԵԱ» ԳԱՄ հայկական մասնաճյուղի տնօրեն: Ցույց է տվել, որ ռեակցիայի արգասիքի հատկությունները կախված են էլանյութի մակրոմոլեկուլների կազմության առանձնահատկություններից: Այդ երևույթն անվանվել է «նյութի ժառանգականություն», իսկ դրանց փոխանցումը քիմիական տարբեր գործողություններով՝ «հիշողություն»:



ՄԱԼԽԱՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՅՈՒԼԱԿԻ (29.03.1948, ք. Հոկտեմբերյան (Արմավիր)), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1983), պրոֆ. (1985):

1965 թ. ավարտել է Էջմիածնի շրջանի (այժմ՝ ՀՀ Արմավիրի մարզ) Ջրառատ գյուղի միջնակարգ դպրոցը, 1970 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, 1973 թ.՝ ասպիրանտուրան (Մոսկվա): 1973 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1969-1970 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ ՕՔԻ ավագ լաբորանտ, 1974 թ.՝ կրտսեր գիտաշխատող, 1974-1993 թթ.՝ «Նաիրիտ» ԳԱՄ ավագ գիտաշխատող, լաբորատորիայի վարիչ, բաժնի պետ, 1993-2000 թթ.՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Պարեն» գիտաարտադրական և նախագծային պետական ձեռնարկության տնօրեն, 2000-2002 թթ.՝ ՀՀ կառավարությանն առընթեր ստանդարտացման, սերտիֆիկացման և չափագիտության վարչության պետ, 2002-2003 թթ.՝ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության փոխնախարար, 2003-2007 թթ.՝ ՀՀ ԱԺ պատ-

գամավոր: 2001-2010 թթ. դասախոսել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում: 2007-2019 թթ. եղել է ԵՊՀ ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր, 2019 թ.-ից՝ ԵՊՀ ռեկտորի աշխատակազմի ղեկավար:

Աշխատանքները վերաբերում են քլորոպրենային կաուչուկների արտադրության տեխնոլոգիայի բարելավմանը, շրջակա միջավայրի պահպանությանը, սննդամթերքի մշակման և հացաթխման տեխնոլոգիային:

Հեղինակ է ավելի քան 250 գիտական աշխատության, այդ թվում՝ 54 հեղինակային իրավունք և «Ստանդարտացում, չափագիտություն, համապատասխանության հավաստում և որակի կառավարում» (Եր., 2001) բուհական ուսումնական ձեռնարկ: Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 10 և դոկտորական 1 ատենախոսություն:

Անդամ է ՀԳԳԱ (1997), Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի (1999) և Էկոլոգիայի միջազգային ակադեմիայի (1996):



ՄԱՆԹԱՇՅԱՆ ԱՂՈՒՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ (16.08.1932, Երևան – 09.04.2021, Երևան), ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1974), պրոֆ. (1976), ՀՀ ԳԱԱ ակադ. (1994, թղթ. անդամ՝ 1990 թ.-ից), ՀՀ գիտ. վաստ. գործիչ (2003):

Ավարտել է ԵՊԻ-ն (1956) և աշխատել այնտեղ, այնուհետև դարձել է Մոսկվայի ֆիզքիմիայի ինստիտուտի ասպիրանտ (1958-1961 թթ.), թեկնածուականը պաշտպանել է 1962 թ. ու վերադարձել Երևան, աշխատել է Քիմիական ֆիզիկայի (ՔՖ) լաբորատորիայում որպես գիտքարտուղար (1962-1973 թթ.), ապա ՔՖ ինստիտուտի փոխտնօրեն (1974-1977 թթ.), 1973 թ.-ից միաժամանակ՝ ածխաջրածինների օքսիդացման լաբորատորիայի վարիչ, 1989-2014 թթ. ՔՖ ինստիտուտի տնօրեն, 2014 թ.-ից լաբորատորիայի վարիչ: Եղել է ԵՊԻ ընդհանուր և անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1977-1993 թթ.):

Աշխատանքները վերաբերում են շրթայական ռեակցիանների, մասնավորապես ածխաջրածինների օքսիդացման մեխանիզմներին, լուսաքիմիական և լազերաքիմիական գործընթացներին: Մշակել է (Ա. Բ. Նալբանդյանի հետ) ռադիկալների սառեցման կինետիկական եղանակ: Ածխաջրածինների գազաֆազ օքսիդացման գործընթացներում հայտնաբերել է գլխավոր ակտիվ կենտրոնները՝ ալկիլ, գերօքսիդային և ալկօքսի ռադիկալները: Առա-

ջարկել է ածխաջրածինների օքսիդացման նոր մեխանիզմ, ըստ որի՝ կարևոր դեր են խաղում ոչ գծային ռեակցիաները և օքսիդացման գլխավոր արգասիքներն առաջանում են ալկօքսի ռադիկալներից: Առաջարկել է հետազոտությունների նոր ուղղություն՝ կարծրաֆազ անօրգանական նյութերի փոխարկումը գազաֆազ շղթայական ռեակցիաներով, որը կարևոր է հանքային հումքի վերամշակման համար:

Արժանացել է ՀՀ պետական մրցանակի (1976): Երկար տարիներ եղել է ՀՀ ԳԱԱ քիմիայի պրոբլեմային խորհրդի նախագահ և ՀՀ քիմիական ընկերության նախագահ: Եղել է մասնագիտական, գիտական և խմբագրական խորհուրդների անդամ և նախագահ:

Համահեղինակ է «Элементарные процессы в медленных газофазных реакциях» (Է., 1975) և հեղինակ է «Цепные реакции и сопряженные процессы» (Է., 2021) աշխատությունների:

Տղան՝ Կորյուն Մանթաշյանը քիմ. գիտ. թեկնածու է:



ՄԱՆՎԵԼՅԱՆ

(13(26).09.1913, Վան – 14.11.1985, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1949), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1963, թղթ. անդամ՝ 1956 թ.-ից), ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1970):

ՄԱՆՎԵԼ

ԳԱՐԵԳԻՆԻ

Ավարտել է ԵՊԻ-ն (1936): 1933-1940 թթ. աշխատել է ԵՊԻ-ում, 1940-1957 թթ.՝ ԽՍՀՄ Արմֆանի քիմիայի ինստիտուտում, 1957-1968 թթ.՝ ՀԽՍՀ ԺՏԽ քիմիայի (1969 թ.-ից՝ ՀԽՍՀ ԳԱ ընդհանուր և անօրգանական քիմիայի) ինստիտուտում (2002 թ.-ից՝ Մանվելյանի անվամբ), 1968-1970 թթ.՝ փոխտնօրեն, 1970-1975 թ.՝ տնօրեն:

Աշխատանքները վերաբերում են ոչ հանքային հանածոների համալիր օգտագործման խնդիրներին: Առաջարկել է նեֆելինային սիենիտների քիմիական մշակման եղանակ, ստացել կարբոնացված նոր մետասիլիկատներ (երևանիտներ), որոնց օգտագործմամբ պարզեցվում է տարբեր տեխնիկական ապակիների և բյուրեղապակու արտադրությունը: Առաջարկել է առանց քլորի կալիումական պարարտանյութերի (Մանվելյանի պարարտանյութեր) արտադրության տեխնոլոգիա, պղինձ-մոլիբդենային արտադրության թափոնների օգտագործման ուղիներ:

Եղել է ՀԽՍՀ ԳԽ պատգամավոր (1959-1968): Պարգևատրվել է Կարմիր դրոշի շքանշանով:

Համահեղինակ «Обескремнивание щелочных алюминатных растворов» (Է., 1973); «Спектроскопия активированных фторо-бериллатных стекол» (Է., 1974) գրքերի:

ՄԱՏԻՆՅԱՆ ՀՐԱԶԻԿ ՎԱՀԱՆԻ (06(19).1.1912, Դիլիջան – 08.11.1988, Երևան), կենսաքիմիկոս: Կենսաբ. գիտ. դոկ. (1971), պրոֆ. (1973):

Ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը (1939): 1947-1988 թթ. աշխատել է ԵԲԻ կենսաքիմիայի ամբիոնում:

Աշխատանքները վերաբերում են քլորոպրենային թունավորման դեպքում սպիտակուցների փոխանակության ֆերմենտային համակարգերի և որոշ օրգանների ֆունկցիաների փոփոխություններին ու թիոսուլֆատի հակաքլորոպրենային ազդեցությանը:



ՄԱՏԻՇՅԱՆ ՀԱԿՈՔ ԱՀԱՐՈՆԻ (02.02.1941, Երևան – 08.01.2019, ԱՄՆ (Երևան)), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1976), պրոֆ. (1981):

Ավարտել է Մոսկվայի նուրբ քիմիական տեխնոլոգիայի ինստիտուտը (1965), որից հետո աշխատել է Մոսկվայում՝ քիմիայի տարբեր ինստիտուտներում: 1971 թ. տեղափոխվել է ՀՀ և աշխատել Կիրովականի (այժմ Վանաձոր) ՊՍՊԻ-ում որպես լաբորատորիայի վարիչ: 1975-1992 թթ. աշխատել է Քիմիական ռեակտիվների և գերմաքուր քիմիական նյութերի «ԻՌԵԱ» ԳԱՄ-ի հայկական մասնաճյուղում, 1992-1996 թթ.՝ «Էներգիա» (1995 թ.-ից՝ «Արև») ԳՀԻ փոխտնօրեն և օրգանական պոլիմերային կիսահաղորդիչների ստացման խմբի ղեկավար, 1996 թ.-ից՝ Օպտիկաֆիզիկական չափումների ինստիտուտի նոր օրգանական կիսահաղորդչային նյութերի բաժնի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են ջերմակայուն բազմազուգորդված պոլիմերների, օրգանական կիսահաղորդիչների ու ռազմական նպատակների համար հատուկ նյութերի սինթեզի, կառուցվածքի և հատկությունների հետազոտման ու ստացման մեխանիզմների բացահայտման խնդիրներին:

Ացետիլենի հիմքի վրա մշակել է ֆունկցային պոլիմերների ստացման էկոլոգիապես մաքուր և տնտեսապես մատչելի տեխնոլոգիաներ:

Հեղինակ է 400-ից ավելի գիտական աշխատության և 65 պատենտի, որի մի մասը եղել է գախտնագրված:

Եղել է Նյու Յորքի ակադեմիայի, մասնագիտական, գիտական և խմբագրական խորհուրդների անդամ: Նրա խորհրդատվությամբ և ղեկավարությամբ պաշտպանվել է դոկտորական 5 և թեկնածուական 10 ատենախոսություն:



ՄԱՐԳԱՆՅԱՆ ԼԻԱՆԱ ԱՐՄԵՆԻ (21.07.1983, Երևան), քիմիկոս-էկոլոգ: Տեխ. գիտ. դոկ. (2018):

Ավարտել է Երևանի «Նեյրոն» բժշկահիգիենիկ թեքունով վարժարանը (2000), ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը (2005): 2010 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ, իսկ 2014 թ. ստացել դոցենտի կոչում:

2005-2014 թթ. աշխատել է ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն ՊՈԱԿ-ում՝ սկզբում որպես առաջատար մասնագետ, այնուհետև 2008 թ. նշանակվել է տվյալների վերլուծության և պահպանման բաժնի պետ, իսկ 2013 թ.՝ ստանձնել է գիտական հարցերով փոխտնօրենի պաշտոնը:

2014 թ.-ից որպես ջրի որակի և ջրային ռեսուրսների կառավարման փորձագետ աշխատում է USAID, UNIDO, INOPS, GIZ, EU, OECD կողմից ֆինանսավորվող տարբեր միջազգային գիտահետազոտական, նախագծային, խորհրդատվական, ջրային ռեսուրսների կառավարման պլանավորման, ջրի որակի ուսումնասիրման, գնահատման և էկոլոգիայի զարգացման ծրագրերում:

Վերապատրաստվել և որակավորվել է մի շարք միջազգային համալսարաններում, այդ թվում՝ Դելֆտի ջրի կրթության ինստիտուտ (Հոլանդիա, 2012), ՌՌԻՀԲ Բոխումի համալսարան (Գերմանիա, 2013), Տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոն (Իտալիա, 2015), Կենտրոնական եվրոպական համալսարան (Հունգարիա, 2018, 2019), Գերմանիայի Դրեզդենի տեխնիկական համալսարան (2018):

Հեղինակ է 83 գիտական աշխատության, որից 3 մենագրություն, 2 մեթոդական ձեռնարկ, 3 պատենտ, 43 հոդված և 32 թեզիս:

Գիտական հետաքրքրությունների շրջանակն է՝ բնական ջրերի որակի գնահատում, մոդելավորում, կանխատեսում, կլիմայի փոփոխություն, հարմարվողականության նորարական միջոցառումներ, շրջակա միջավայրի մոնիտորինգի կազմակերպում, էկոլոգիայի խթանում:

2014 թ. ԱՊՀ անդամ երկրներում գիտական և գործնական նվաճումների և սոցիալապես նշանակալից գործունեության անվանակարգում արժանացել է «Դեբյուտերի համագործակցություն-2013» միջազգային մրցանակի և դիպլոմի:



ՄԱՐԳԱՐՅԱՆ ԿԱՐԻՆԵ ՍԵՐԳԵՅԻ (14.01.1959, գ.

Օձուն, Լոռու մարզ), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2016), պրոֆ.(2019): Կինն է Ս. Սարգսյանի:

1978 թ. ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը:

1979 թ. աշխատանքի է անցել ՀՀ ԳԱ ՕՔԻ-ում: 1981-1985 թթ. սովորել է նույն ինստիտուտի ապիրանտուրայում, իսկ 1989 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ:

1990 թ. ընտրվել է ՀՀ ԳԱ ՕՔԻ-ում ավագ գիտաշխատողի պաշտոնում: 1994 թ.-ից աշխատանքի է անցել ԵԲՀ-ում: 2002 թ. ստացել է դոցենտի կոչում: Դոկտորական ատենախոսության թեման է՝ «Ազոլային մոնոմերների հիման վրա պոլիմերային ծածկույթների էլեկտրասինթեզ և հատկությունների ուսումնասիրում»: Աշխատել է ԵՊԲՀ ֆարմացիայի ամբիոնում որպես պրոֆեսոր:

Հեղինակ է 115 գիտական աշխատության, որից 9-ը հեղինակային իրավունք, 16-ը ներառված են միջազգային գիտական շտեմարաններում, 15-ից ավելին՝ գիտամեթոդական, ուսումնամեթոդական և թեստային ձեռնարկներ, որոնք ուղղված են օրգանական, դեղագիտական, թունագիտական քիմիաների և մասնավորապես՝ դեղերի թունագիտությանը վերաբերող հիմնահարցերի քիմիական լուսաբանմանը: Գիտական հետազոտությունների թեման հարում է բժշկագիտության ժամանակակից պրոբլեմներին, մասնավորապես, կենսաքայքայվող կենսապոլիմերների, այդ թվում նաև՝ նոր սերնդի կենսասենսորների ստեղծմանը: Նա ԲՈԿ-ի 026 «Տեսական բժշկություն» մասնագիտական խորհրդի անդամ է:

Նրա կողմից կարևոր աշխատանքներ են կատարվել նաև բուհական ծրագրերի մշակման շրջանակներում: Ստեղծել է միջազգային կրթական չափորոշիչներին համապատասխանող նոր ծրագրեր՝ «Թունագիտական քիմիա» և «Դեղերի թունագիտություն» առարկաների համար: Հրատարակել է «Թունաբանական քիմիա» (2008) և «Թունագիտություն» (2015) դասագրքերը:



ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ ԱՐԲԵՍԻ (26.06.1933, Կիրովաբադ (Գյանջա) – 23.06.2011, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1981), պրոֆ. (1984):

Երևանում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, 1952 թ. ընդունվել և 1957 թ. ավարտել է ԵՊԻ քիմիատեխնոլոգիական ֆակուլտետը: 1956 թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱ ՆՕՔԻ տարացիկլիկ միացությունների բաժնում: 1959 թ. ընդունվել է ասպիրատուրա և գործուղվել Մոսկվայի Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ, որտեղ և պաշտպանել է (1962 թ.) իր թեկնածուական աշխատանքը: Շարունակել է աշխատել Երևանի ՆՕՔԻ-ում որպես գիտաշխատող, ավագ գիտաշխատող, ապա 1970 թ.-ից՝ որպես լաբորատորիայի վարիչ: Հետազոտություններ է իրականացրել արիլալիկամինների և մի շարք տարացիկլիկ միացությունների սինթեզի բնագավառում, ստանալով կենսաբանորեն ակտիվ, առավելապես սիրտ-անոթային ազդեցության միացություններ, մշակելով, մասնավորապես իզոքինոլային ածանցյալների ստացման ուղիներ: Այդ աշխատանքներով 1981 թ. Մոսկվայում պաշտպանել է դոկտորական թեզ: Նրա կողմից կատարված հետազոտությունների արդյունքները ներկայացվել են ավելի քան 300 հրապարակումներում, այդ թվում՝ 36 հեղինակային իրավունք, 4 պատենտ, 20 զեկուցման թեզիսներ: Նրա կողմից պատրաստվել են 11 թեկնածուներ: 1964-1976 թթ. համատեղությամբ աշխատել է ԵՊՀ-ում որպես դասախոս, իսկ 1976-1978 թթ. նաև Լենինականի (Գյումրի) մանկավարժական ինստիտուտում: Եղել է «Հայկական քիմիական ամսագիր», «Հետերոցիկլիկ միացությունների սինթեզ» պարբերականների խմբագրական խորհուրդների անդամ: Համահեղինակ է՝ «Նոր ֆիզիոլոգիապես ակտիվ միացությունների սինթեզ» գրքի: Պարգևատրվել է՝ «За доблестный труд» (1970 թ.), «Աշխատանքի վետերան» (1984 թ.) մեդալներով, ՀՀ ԳԱ նախագահի պատվոգրով:



ՄԱՐԳԱՐՅԱՆ ՇԻՐԱԶ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ (14.04.1947, գ. Քարաշեն, Սյունիքի մարզ), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1989), պրոֆ. (2002):

1965 թ. ավարտել է Երևանի թիվ 19 միջնակարգ դպրոցը, 1970 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, 1974 թ.՝ Մոսկվայի քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան: 1975 թ. պաշտպանել է թեկնածուականատենախոսություն, 1989 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1974-1977 թթ. եղել է ԵՊՀ ֆիզիկական քիմիայի ամբիոնի կրտսեր, 1977-1989 թթ.՝ ավագ գիտաշխատող, 2000 թ.-ից ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ: 2005 թ.-ից ղեկավարել է նաև ֆիզիկական քիմիայի ամբիոնին կից բազային ԳՀ լաբորատորիան:

Աշխատանքները վերաբերում են քիմիական և կենսաբանական համակարգերի ֆիզիկաքիմիական հետազոտությանը, մասնավորապես սպեկտրադիտական և տեսական եղանակներով մոլեկուլային փոխազդեցությունների ուսումնասիրմանը:

Հեղինակ է ավելի քան 230 գիտական աշխատության, այդ թվում՝ «Էլեկտրոնային պարամագնիսական ռեզոնանսի և միջուկային մագնիսական ռեզոնանսի հիմունքներ» (Եր., 1989); «Մոլեկուլային սպեկտրոսկոպիա» (Եր., 2003); համահեղինակ «Փորձարական ֆիզիկական քիմիա» (Եր., 2009); «Փորձարարական կոլոիդ քիմիա» (Եր., 2013); «Մոլեկուլային ֆլուորենսցենցիայի հիմունքները» (Եր., 2017); «Ֆիզիկական քիմիայի խնդիրների ժողովածու» (Եր., 2020) ուսումնական ձեռնարկների:

Ղեկավարել է մի շարք միջազգային դրամաշնորհային ծրագրեր, եղել է գիտական հանդեսների խմբագրական խորհուրդների անդամ և հրավիրված գիտնական-դասախոս ԱՄՆ-ի և եվրոպական տարբեր համալսարաններում:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 12 և դոկտորական 1 ատենախոսություն:

Արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի (2002), Անանիա Շիրակացու մեդալի (2017), Բնագիտության բնագավառում ՀՀ լավագույն գիտական աշխատանքի մրցանակի (2010), «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթի հաղթող (2013-2019):



ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍՈԿՐԱՏ ՄԱՆՈՒԿԻ (18.03.1943, Երևան), քիմիկոս-տեխնոլոգ: Տեխ. գիտ. դոկ. (1996), պրոֆ. (2000):

Ավարտել է ԵՊԻ-ն (1966): 1973-1982 թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱԱ ՕՔԻ-ում, 1982-1992 թթ.՝ ՀԽՍՀ թեթև արդյունաբերության նախարարության կաշվի-կոշիկի ԳՀ լաբորատորիայի կաշվի տեխնոլոգիայի, 1992-1994 թթ.՝

հատուկ նախագծային տեխնոլոգիական բյուրոյի կաշվի-կոշիկի բաժինների վարիչ, 1994-1995 թթ.՝ գլխավոր ճարտարագետ, 1995-2003 թթ.՝ ՀԱԱՀ կաշվի և մորթու տեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, այնուհետև ամբիոնի պրոֆեսոր: 1978 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

Աշխատանքները վերաբերում են կաշվի և մորթու քիմիային ու մշակման տեխնոլոգիային: Ստեղծել է նոր դաբաղանյութեր, որոնք հնարավորություն են տալիս ստանալ էկոլոգիապես մաքուր, բարձրորակ կաշվի և մորթու նոր տեսակներ: Հանքային գունանյութերի հիմքի վրա ստացել է կաշվի վերջնամշակման փուլում օգտագործվող նոր գունակայուն մածուկներ:

Հեղինակ է 150 գիտական հոդվածի և 30 հեղինակային իրավունքի: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 7 ատենախոսություն:

Հեղինակ է «Կաշվի և մորթու մշակման տարրական տեխնոլոգիա» (Եր., 1997); «Новые пути улучшения комплекса свойств натуральных кож, обеспечивающих ее гидрофобность» (Ե., 1996) աշխատությունների:



ՄԱՐԴԱՆՅԱՆ ՍՈՆԱ ՍՄԲԱՏԻ (28.06.1939, Երևան), կենսաքիմիկոս: Կենս. գիտ. դոկ. (1994):

1957 թ. ավարտել է Երևանի Ձերժինսկու անվան դպրոցը և ընդունվել ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը: Ուսումը շարունակել է Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) պետհամալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում, որն ավարտել է 1961 թ. և աշխատանքի անցել ՀՀ ԳԱ կենտրոնական ԳՀ ֆիզիկատեխնիկական լաբորատորիայում:

1965 թ. գործուղվել է ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտ որպես ասպիրանտ: 1972 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ և ստացել

Ֆիզ-մաթ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1970 թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱԱ Հ. Բունյաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտում և հասել Ադենիլային միացությունների փոխանակման լաբորատորիայի վարիչի: Գերմաքուր վիճակում ստացած ֆերմենտների հետազոտումը քիմիական ձևափոխման եղանակով թույլ է տվել բացահայտել տրիպտոֆանի կարևորությունը էլեկտրոն փոխանցող սպիտակուցներում և որոշ ֆերմենտներ-լիզանո փոխազդեցություններում: Կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ հյուսվածքային հեղուկներում ադենոզինդեամինազի ակտիվության չափումը կարելի է օգտագործել պալարախտի ախտորոշման համար: ՀՀ-ում աճող որոշ բույսերի էթանոլային թուրմերը և դրանցից անջատված քիմիական միացությունները ընկճում են Ալցհեյմերի հիվանդությունը ու երկրորդ տեսակի շաքարախտի զարգացմանը նպաստող յուրահատուկ պեպտիդների և հորմոնների թունավոր խմբավորումների առաջացումը: Հատկապես հետաքրքիր են ավելուկի սերմերի և տերևների թուրմի բաղադրիչների հակաշաքարախտային ու հակաքաղցկեղային հատկությունները: Նշված բուսական նյութերի ազդեցության պարզաբանումը հնարավոր է դարձնում առաջարկել դրանց որպես ֆերմենտների ակտիվության հետ առնչվող հիվանդությունների կլինիկական բուժման/կանխարգելման մեղմ միջոցներ:

Հեղինակ է 100-ից ավելի աշխատության: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 1 ատենախոսություն:

Անդամ է ՀՀ և Եվրոպայի կենսաքիմիկոսների, Միջազգային Եվրոպական նեյրոքիմիկոսների միությունների:



ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՇՈՏ ԻՇԽԱՆԻ (06.01.1955, գ. Թառաթումբ, Վայքի մարզ), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2010):

1972 թ. ավարտել է Քարազուլիս գյուղի միջնակարգ դպրոցը, իսկ 1977 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը և աշխատանքի անցել ՀՀ ԳԱ Ա. Լ. Մնջոյանի անվան ՆՕՔԻ-ում: 1984 թ. պաշտպանել է «Թիազոլների սինթեզ վեցանդամանի հագեցած հետերոցիկլիկ շարքերի կարբոնիլային միացությունների հիման վրա» թեմայով թեկնածուական ատենախոսություն: Դոկտորա-

կան ատենախոսության թեման է՝ «Բենզոլ[ի]սինազոլինային միացությունների սինթեզը և հատկությունները»: Եղել է ՕԴԲԳԿ-ի սպիրոտարացիկլիկ միացությունների լաբորատորիայի վարիչը:

Առաջարկել է տարբեր կառուցվածքի դիհիդրոնավթալինային շարքի β-ամինոնիտրիլների և β-ամինոէսթերների սինթեզի ընդհանուր եղանակ, ինչը հնարավորություն է տալիս ստանալ արժեքավոր կենսաբանական հատկություններով օժտված նոր դասերի բենզոլ[ի]սինազոլինային միացություններ: Հեղինակ է շուրջ 150 տպագրված աշխատության (գիտական հոդվածներ, պատենտներ և հեղինակային իրավունքների վկայակագրեր): Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 7 ատենախոսություն:

2002 թ. Քեմբրիջի համալսարանի կողմից արժանացել է «Տարվա գիտնական» կոչմանը և պարգևատրվել անվանական ոսկե մեդալով: Ստացել է ՀՀ ԳԱԱ պատվոգիր (2003), «Միջազգային համագործակցություն» միջազգային ֆոնդի ոսկե մեդալ (2015), անդամ է ՌԴ բնական ԳԱ հայկական մասնաճյուղի (2013):



ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԹՈՐԳՈՄԻ

(14.6.1934, Վաղարշապատ -27.8.2001, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1972), պրոֆ. (1976):

Ավարտել է ԵՊՀ-ն (1956): 1971-1976 թթ. եղել է Պոլիմերների ԳՀԻ լաբորատորիայի, 1974-1978 թթ.՝ ԵԲԻ դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչ, 1978-1992 թթ.՝ «Նաիրիտ» ԳԱՄ-ի գլխավոր տնօրենի տեղակալ, 1993-1999 թթ. աշխատել է «Պարեն» գիտաարտադրական նախագծային ընկերությունում:

Հետազոտել է CH և NH թթուները հիմնային միջավայրում չհագեցած միացություններով և ալկիլիալոգենիդներով ալկիլման ռեակցիանները: Բացահայտել է ցածր ջերմաստիճաններում պրոտոնազուրկ երկբևեռ լուծիչներում չհագեցած միացությունների հալոգենացման ռեակցիանների մեխանիզմը, որով կրճատվել են քլորոպրենի արտադրության թափոնները:

Եղել է մասնագիտական, գիտական խորհուրդների և տարբեր հանձնաժողովների անդամ:



ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՎԻԼԵՆԱ ՀԱԿՈՔԻ (05.10.1939, Երևան), քիմիկոս-տեխնոլոգ: Տեխ. գիտ. դոկ. (1998), պրոֆ. (1999):

1956 թ. ավարտել է Նոր-Խարբերդի թիվ 96 դպրոցը, իսկ 1961 թ.՝ ԵՊԻ քիմիատեխնոլոգիական ֆակուլտետը: 1965-1969 թթ. եղել է Ուրալի Պոլիտեխնիկական ինստիտուտի ասպիրանտ, 1969 թ. պաշտպանել է թեկնածուական թեզը: 1961 թ.-ից աշխատել է ԵՊՀ-ում, 1990 թ.-ից՝ տեսական քիմիայի բաժանմունքի անօրգանական քիմիա մասնաճյուղի պատասխանատու, 2001 թ.-ից՝ միաժամանակ ՀՊՃՀ քիմիական տեխնոլոգիաներ և բնապահպանական ճարտարագիտության դեպարտամենտի վարիչի տեղակալ:

Գիտական հետազոտությունները նվիրված են մետաղ պարունակող հանքանյութերի մշակման քիմիամետալուրգիական գործընթացներին՝ մասնավորապես Ուրցի և Սվարանցի երկաթային, Սևանի տարածքի Շորժայի և Տապասարի քրոմիտային, Ալավերդու, Կապանի, Քաջարանի, Թեղուտի պղնձային և պղնձամոլիբդենային հանքանյութերի ու գործարանային թափոնախարամների մշակմանը՝ մաքուր մետաղների՝ Fe, Cr, Cu կամ Fe-Cr, Fe-Cr-Al, Cu-Fe, Cu-Fe-Al, Fe-Si, Fe-Cr-Si, FeTi, FeMo տեսակի համաձուլվածքների ստացումով: Վերջին երկու տասնամյակում զբաղվել է բարձրջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզի և մեխանաքիմիայի հարցերով:

Ուսումնասիրությունների արդյունքները ամփոփված են մոտ 200 հոդվածներում, 30 հեղինակային վկայագրերում, պատենտներում և միջազգային գիտաժողովների բազմաթիվ թեզիսներում: Հեղինակ է նաև ուսումնական ձեռնարկների: Համատեղ գիտական աշխատանքներ է կատարել Բելառուսի ԳԱԱ փոշեմետալուրգիա գիտաարտադրական միավորման հետ:

Նրա ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել 15 ասպիրանտ: Պատրաստել է կադրեր նաև ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի և Արցախի գիտական կենտրոնի համար: Եղել է մասնագիտական և գիտական խորհուրդների անդամ: Ընդգրկված է 2011 թ. լույս տեսած «Հայուհիներ» հանրագիտարանում:

Պարգևատրվել է շնորհակալագրերով, այդ թվում ՀՀ ԿԳ նախարարության, արժանացել է վարչապետի մեդալի:

ՄԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՂԱ ԱՐՇԱԿԻ (21.02.1925, Երևան - 31.10.1991, Երևան), կենսաքիմիկոս-ֆիզիոլոգ: Կենսաբ. գիտ. դոկ. (1976):

Ավարտել է ՀԳԻ-ն (1946): 1963-1991 թթ. եղել է ՀՀ խաղողագործության, գինեգործության և պտղաբուծության ԳՀԻ կենսաքիմիայի լաբորատորիայի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են զարգացման վաղ փուլում խաղողի վազի հիբրիդների ցրտադիմացկունության որոշման և գնահատման եղանակների մշակմանը, կենսաքիմիական գործընթացներում պարարտանյութերի չափաքանակի ազդեցության, խաղողի վազի տարիքային կենսաքիմիայի հարցերին:

Հեղինակ է «Биохимические аспекты формирования и диагностики морозостойчивости виноградного растения» (Է., 1978) աշխատության:



ՄԱՐՈՒԿՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ ՀՈՎՍԵՓԻ (1910, Հին Բայազետ, Արևմտյան Հայաստան - 1950, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1944), պրոֆ. (1944):

1915 թ. եղեռնից մազապուրծ ընտանիքը գաղթել է Արևելյան Հայաստան: 1928 թ. ավարտել է Երևանի թիվ 2 դպրոցը և ընդունվել ԵՊՀ գյուղատնտեսական ֆակուլտետը, որն ավարտելուց հետո նույն տարում ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա (քիմիայի գծով): Որպես ԵՊՀ ասպիրանտ գործուղվել է Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) ԽՍՀՄ ԳԱ քիմիայի ինստիտուտ (1933-1934), այնուհետև ուսումը շարունակել ԽՍՀՄ ԳԱ Մոսկվայի ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտում (1934-1935): 1935 թ. նույն ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական թեզ «Երկարժեք պլատինի պիրիդինային կոմպլեքս միացությունների մասին» թեմայով: 1936 թ. վերադարձել է Երևան և աշխատանքի անցել ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնում որպես դոցենտ և միաժամանակ՝ ԽՍՀՄ ԳԱ քիմիայի ինստիտուտի հայաստանյան մասնաճյուղում ավագ գիտաշխատող: 1937 թ. նշանակվել է այդ մասնաճյուղի տնօրեն և զուգահեռ աշխատել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկան (1937-1950) և անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ (1937-1950): Շարունակելով գիտահետազոտական աշխատանքները կոմպլեքս միացությունների սինթեզի և հետազոտությունների բնագավառում՝ պաշտպանել է

դոկտորական ատենախոսություն «Միարժեք պղնձի կոմպլեքսները» թեմայով:

ՀՀ-ում կոմպլեքս միացությունների քիմիայի հիմնադիրներից և զարգացնողներից է:



ՄԱՅՈՅԱՆ ՍՏԵՓԱՆ ԳՐԻԳՈՐԻ (16.03.1923, Բաթում – 26.11.2010, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1966), պրոֆ. (1967), ՀՀ ԳԱԱ ակադ. (1982, թղթ. անդամ՝ 1974 թ.-ից):

Ավարտել է ԵՊՀ-ն (1948): 1967-1988 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ ՕՔԻ տնօրեն, 1988 թ.-ից՝ բարձրամոլեկուլային միացությունների քիմիայի լաբորատորիայի վարիչ, 1982-1992 թթ., միաժամանակ՝ ՀՀ ԳԱԱ քիմիական գիտությունների բաժանմունքի ակադ. քարտուղար, 1992 թ.-ից՝ քիմիական գիտությունների հիմնախնդիրների խորհրդի ակադ. քարտուղարի տեղակալ:

Աշխատանքները վերաբերում են բարձրամոլեկուլային միացությունների քիմիային և օրգանական սինթեզին, մշակել է «ոչ դասական» մոնոմերների (չգուգորդված դիենային, տրիենային, ենինային, դիենային ևն) ցիկլոպոլիմերման գիտական հիմունքները: Առաջարկել է մի շարք տարացիկլային միացությունների (պիրազոլիններ, պիրազոլներ, ֆտալաններ ևն) ստացման սկզբունքորեն նոր եղանակներ, պարզաբանել մետաղակոմպլեքսային կատալիզատորների ներկայությամբ ացետիլենային միացությունների փոխարկումների առանձնահատկությունները, հայտնաբերել ռադիկալային համաօլիգոմերման ռեակցիան: Նրա որոշ մշակումներ ներդրվել են արտադրության մեջ:

Եղել է մասնագիտական և գիտական խորհուրդների անդամ (կամ նախագահ): Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել են բազմաթիվ թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ: Արժանացել է մի շարք պարգևների:

Համահեղինակ է՝ «Синтез и полимеризация замещенных в ядре стиролов» (Ե., 1983); «Политриазины» (Ե., 1987) աշխատությունների:



ՄԵՆԵԿՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

(26.09(08.10).1891, Մոզդոկ (Ռուսաստան) – 16.02.1974, Երևան), կենսաքիմիկոս: Բժշ. գիտ. դոկ. (1935), պրոֆ. (1935), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ:

Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1917 թ.՝ Տարտուի համալսարանի բժշկական ֆակուլտետի քիմիադեղագործական բաժինը: 1918 թ. մեկնել է Պյատիգորսկ և մասնակցել խորհրդային իշխանության համար մղված պայքարին: 1919-1922 թթ. աշխատել է Թիֆլիսում:

Գործուն մասնակցություն է ունեցել ԵՊՀ բժշկական ֆակուլտետի կազմակերպմանը, որտեղ 1922 թ. հիմնադրել է դեղաբանության ամբիոն և մինչև 1935 թ. ղեկավարել այն: Նրա նախաձեռնությամբ ամբիոնին կից ստեղծվել են քիմիադեղագործական դասընթացներ, ապա՝ տեխնիկում, որը ղեկավարել է երկար ժամանակ: Հիմնադրել է նաև ԵՊՀ ռազմական քիմիայի և թունաբանության, ԵՊԻ ընդհանուր քիմիայի ամբիոնները: Մի քանի տարի համատեղությամբ ղեկավարել է ԵԱԱԻ դեղաբանության ամբիոնը:

1937-1941 թթ. եղել է Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) ռազմաբժշկական ակադեմիայի պրոֆեսոր, 1941-1944 թթ.՝ Սամարղանդի բժշկական և 1944-1955 թթ.՝ Լենինգրադի բժշկական ստամատոլոգիական ինստիտուտների դեղագործության ամբիոնների վարիչ: 1955-1958 թթ. աշխատել է Երևանի արյունաբանական և արյան փոխներարկման ԳՀԻ տնօրեն, 1956-1958 թթ. միաժամանակ ԵԲԻ պրոռեկտոր: 1958-1965 թթ. աշխատել է ՆՕՔԻ-ում, 1965-1969 թթ.՝ Երևանի բժիշկների կատարելագործման ինստիտուտի դեղաբանության և դեղագործության ամբիոնի հիմնադիր վարիչ:

Հեղինակ է շուրջ 50 գիտական աշխատության, որոնք նվիրված են դեղաբույսերի և ԽՍՀՄ-ում սինթեզված դեղանյութերի ուսումնասիրմանը: Հատկապես կարևոր են օրգանիզմի վրա ֆտորի ազդեցության մեխանիզմի բացահայտմանը նվիրված աշխատանքները: Ուսումնասիրել է հանքային ջրերի քիմիական և դեղաբանական հատկությունները, հիմնադիրներից է «Արզնի» և «Ջերմուկ» առողջարանների:

Եղել է Հայաստանի դեղագործների և դեղաբանների գիտական ընկերությունների պատվավոր նախագահ և համամիութենական գիտադեղագործական ընկերության վարչության անդամ:



ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՂԱՄԻ

(01.08.1939, Երևան – 07.11.2014, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1991), պրոֆ. (1991):

Ծնվել է զինվորական բժշկի ընտանիքում: 1966 թ. ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: 1969 թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱ ՆՕՔԻ-ում որպես կրտսեր և ավագ գիտաշխատող, ապա 1974 թ.-ից՝ Հակաուռուցքային միացությունների սինթեզի լաբորատորիայի վարիչ: 1971 թ. պաշտպանել է թեկնածուականատենախոսություն: Հեղինակ է ավելի քան 200 գիտական աշխատանքների, որոնցից 30-ից ավելին հեղինակային վկայագրեր և պատենտներ են: Նրա գիտական հետազոտությունների բնագավառը ընդգրկում է պիրիմիդինի ածանցյալների հենքի վրա նոր հակաուռուցքային պատրաստուկների սինթեզ և բնական հակաբիոտիկների որոնում: Հայտնաբերել է ճառագայթային թերապիայի ուղեկցությամբ ուղեղում ուռուցքների բուժման նոր արդյունավետ ռադիոսենսիբիլիզատոր «Նիտրոֆուր»-ը: Առաջինը ՀՀ-ում լայնորեն կիրառել է մասսա-սպեկտրոսկոպիական եղանակը պիրիմիդինային միացությունների անալիզի և հետազոտման համար: Նրա գիտակազմակերպչական գործունեությունը բարձր է գնահատվել նաև արտերկրներում՝ ընտրվել է պատվավոր պրոֆեսոր և ակադեմիաների անդամ: Նա եղել է ՌԴ բնական ԳԱ և Բնության ու հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի հայկական մասնաճյուղերի (1997) հիմնադիր նախագահը: Ռուսաստանի Հերոսների ընկերության նախագահի խորհրդական (2004), գիտական հայտնագործությունների հեղինակների միջազգային ակադեմիայի (1998) նախագահ, Տոկիոյի (1998) և Եվրոպական կենսագրական կենտրոնի «Տարվա մարդ» (1997, 1998), Կիտասատոյի համալսարանի (1986), Տոկիոյի ուռուցքաբանական գիտական կենտրոնի (1986), ՌԴ Ա. Ս. Պոպովի (1998), Ի. Պ. Պավլովի (1998), Մ. Պ. Տրետյակովի (1998) արձաթե, Պ. Լ. Կապիցայի (2002) մեդալներ: Ստացել է «Գիտության ասպետ» (1998), Պետրոս Մեծի (2004), Ռուսական ուղղափառ եկեղեցու Ս. Սերաֆիմ Սատովսկու (2004), «Ս. Ստանիսլավ» (Լեհաստան, 1998) շքանշաններ, Ռուսաստանի Հերոսների ընկերության մրցանակ (2004):

Եղել է «Գիտության գլոբուս» ամսագրի գլխավոր խմբագիր, «Այլընտրանքային բժշկություն» ամսագրի գլխավոր խմբագրի տեղակալ (Մոսկվա), 2006 թ. հիմնադրել և եղել է ՀՀ-ում մարդկային արժանապատվության և անվտանգության պաշտպանության Ազգային լիգայի նախագահը:



ՄԵԼԻՔՅԱՆ ԳԱԳԻԿ ԳԵՈՐԳԻԻ (03.09.1951, ՀՀ), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2008):

Կալիֆորնիայի պետական համալսարանի քիմիայի և կենսաքիմիայի դեպարտամենտի պրոֆեսոր:

Ամերիկյան քիմիական ընկերության անդամ: Բնակվում է ԱՄՆ-ում:



ՄԵԼԻՔՅԱՆ ԳԱԳԻԿ ՍՈՒՐԵՆԻ (21.10.1945, Երևան), քիմիկոս: Քիմի. գիտ. դոկ. (1993), պրոֆ. (2003):

1962 թ. ավարտել է Երևանի թիվ 20 միջնակարգ դպրոցը, 1967 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, 1971 թ.՝ ասպիրանտուրան: 1972 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1986 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1971 թ.-ից աշխատել է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում: 1972-1973 թթ. գործուղվել է Բրատիսլավայի Յան Կոմենսկու անվան համալսարան, 1985-1990 թթ. (տարեկան 3 ամիս), աշխատել նույն համալսարանում: 1978-1981 թթ. դասավանդել է Կաբիլիայի (Ալժիր) համալսարանում, 1992 թ.-ից միջհամալսարանական համագործակցության շրջանակներում գիտական աշխատանք է կատարել և պարբերաբար դասավանդել Ֆրանսիայի համալսարաններում (Փարիզ, Լյո Ման, Կանն): 2000-2012 թթ. եղել է «Սանոֆի-Ավենտիս», «ԼՕրեալ», «Ջոնսոն-Ջոնսոն» դեղագործական ընկերությունների գիտական խորհրդական, 1992-2013 թթ.՝ թմրանյութերի հարցով ՀՀ ոստիկանության խորհրդական:

Աշխատանքները վերաբերում են թթվածին, ազոտ, ծծումբ պարունակող տարացիկային (այդ թվում՝ կենսաբանորեն ակտիվ) միացությունների սինթեզին և քիմիական հատկություններին:

Հեղինակ է շուրջ 120 գիտական հոդվածի և արտոնագրի (ԽՍՀՄ, ՀՀ, Չեխոսլովակիա, ԱՄՆ, ԵՄ, Սլովակիա), ինչպես նաև ուսումնական ձեռնարկների: Եղել է մասնագիտական և գիտական խորհուրդների անդամ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:



ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ ԳԵՎՈՐԳԻ (20.11.1909, Ղարաքիլիսա (Վանաձոր) – 27.01.1976, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1969), պրոֆ. (1970):

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո գյուղերում զբաղվել է ուսուցչությամբ: 1938 թ. ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը և նշանակվել ֆիզիկական քիմիայի ամբիոնի ասիստենտ, ապա՝ ավագ դասախոս:

1941 թ. կամավոր մեկնել է ռազմաճակատ, մասնակցել Հյուսիսային Կովկասի պաշտպանական մարտերին: Ծանր վիրավորվել է, զորացրվել, վերադարձել է Երևան և շարունակել գիտամանկավարժական գործունեությունը:

1954 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1958-1970 թթ. եղել է «Նաիրիտ» ԳԱՄ Պոլիմերային նյութերի համամիութենական գիտահետազոտական և նախագծային ինստիտուտի պոլիմերների և լատեքսների ֆիզիկաքիմիական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ, համատեղությամբ դասախոսել ԵՊՀ-ում և ԵՊԻ-ում: 1971 թ. հիմնական աշխատանքի է անցել ԵՊՀ ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնում, 1972-1976 թթ. եղել է ամբիոնի վարիչ, միաժամանակ՝ ղեկավարել Պոլիմերային գործընթացների կինետիկայի պրոբլեմային լաբորատորիան:

Աշխատանքները վերաբերում են էմուլսային համակարգերում հոմո- և համապոլիմերման գործընթացների ուսումնասիրությանը: Պարզաբանել է այդ համակարգերում մակրոմոլեկուլների կազմավորման օրինաչափությունները, էմուլգատորի շերտի դերը, ինչպես նաև երկրորդական անցանկալի գործընթացների կանխման հնարավորությունները, առաջարկել էմուլսիայում պոլիմերացման նոր տեսություն և մշակել քլորոպրենային կաուչուկների և լատեքսների արտադրական եղանակներ, որոնք ներդրվել են «Նաիրիտ» ԳԱՄ-ում:

Հեղինակ է շուրջ 90 գիտական հոդվածի, 65 գիտատեխնիկական հաշվետվության և հեղինակային 7 վկայագրի: Եղել է զանազան գիտական կազմակերպությունների, մասնագիտական և խմբագրական խորհուրդների անդամ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 10 ատենախոսություն: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով և մեդալներով:



ՄԵԼՔՈՆՅԱՆ ՄԱԳԴԱԼԻՆԱ ՄՎԵՐԻ (16.09.1947, Սպիտակ), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դոկ. (1989), պրոֆ. (1997):

Ավարտել է Երևանի թիվ 55 դպրոցը (1965), ԵԲԻ-ն (1971), ԵԲԻ ասպիրանտուրան (1974): Բժշկական գիտությունների թեկնածուի (1975) ատենախոսության թեման է՝ «Ազոտային փոխանակության որոշ կողմերը սպիտակ առնետների ուղեղում գերօքսիդացված և չգերօքսիդացված ճարպաթթուների ազդեցության տակ»:

1974-1978 թթ. աշխատել է ԵԲԻ կենսաքիմիայի ամբիոնում կրտսեր գիտաշխատող, 1984-1990 թթ.՝ ասիստենտ, 1991-1993 թթ.՝ դոցենտ, 1993 թ.-ից՝ ԵԲԻ ընդհանուր և կենսաօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, ապա ԵԲԻ բժշկական քիմիայի ամբիոնի վարիչ, 2003-2006 թթ.՝ արտասահմանցի ուսաղնողների ֆակուլտետի դեկան (համատեղություն), 2008-2011 թթ.՝ ԵՊԲՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր (համատեղություն):

Աշխատանքները վերաբերում են աղմկային գերհոյզի զարգացման կենսաքիմիական մեխանիզմներին, բնական ու սինթետիկ հակաօքսիդիչների, տարբեր բնույթի հակագերհոյզային ազդեցություն ունեցող կենսաբանական ակտիվ միացությունների օգնությամբ փոփոխությունների կարգավորման հարցերին:

Հեղինակ և համահեղինակ է 231 գիտական աշխատության և ուսումնամեթոդական ձեռնարկների: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 4 ատենախոսություն: Եղել է ԵՊԲՀ ֆակուլտետային և մասնագիտական խորհուրդների, ինչպես նաև՝ Հայաստանի, Ռուսաստանի, Եվրոպական կենսաքիմիկոսների միության, Գերմանիայի մոլեկուլային կենսա-

բանների և կենսաքիմիկոսների միության, Կենսագործունեության անվտանգության և էկոլոգիայի միջազգային ակադեմիայի (2002 թ.-ից) անդամ:

Ստացել է ԵՊԲՀ ոսկե մեդալ (2002, 2010), ՀՀ վարչապետի հուշամեդալ (2010), ՀՀ ԿԳՆ պատվոգիր (2009):



ՄԵՍՐՈՊՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ ԳՈՒՐԳԵՆԻ (01.04.1931, Երևան – 24.02.2015, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1986), պրոֆ. (1989):

1949 թ. ավարտել է Երևանի թիվ 19 միջնակարգ դպրոցը, 1954 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, 1953 թ.-ից աշխատել է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում: 1964 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1966 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1953-1956 թթ. եղել է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնի ավագ լաբորանտ, 1956-1964 թթ.՝ ասիստենտ, 1964-1966 թթ.՝ ավագ դասախոս, 1966-1986 թթ.՝ դոցենտ, 1988-2007 թթ.՝ պրոֆեսոր, 1998-2002 թթ.՝ գիտական թեմայի ղեկավար, 2002-2015 թթ.՝ առաջատար գիտաշխատող:

Աշխատանքները վերաբերում են հինգանդամանի հագեցած լակտոնների քիմիային, ազոտ, թթվածին և ծծումբ պարունակող տարացիկլիկ կենսաբանորեն ակտիվ միացությունների սինթեզին և հետազոտություններին:

Հեղինակ է 140 գիտական և ուսումնամեթոդական աշխատության:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:



ՄԵՐԺԱՆԻԱՆ ԱՐՏԵՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

(01.(14).04.1915, Օդեսա - 13.07.1996, Կրասնոդար), գիտնու քիմիկոս-տեխնոլոգ: Տեխ. գիտ. դոկ. (1962), պրոֆ. (1963): ՌԻՖՍՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ (1979): Շամպայն գինիների ստեղծման ֆիզիկաքիմիական ուղղության ռուսական դպրոցի հիմնադիրներից:

Ավարտել է Կրասնոդարի գինեգործության և այգեգործության ինստիտուտը (1939): 1975-1981 թթ. եղել է Կրասնոդարի արդյունաբերության ինստիտուտի գինեգործության տեխնոլոգիայի ամբիոնի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են շամպայն գինիների տեխնոլոգիայի և ֆիզիկաքիմիայի, փրփրուն գինիների և դրանց արտադրության կատարելագործմանը: Անընդհատ շամպայնացման եղանակի հեղինակներից է, որը լայնորեն ներդրվել է արտադրության մեջ:

Արժանացել է Լենինյան մրցանակի (1961, Գ. Գ. Աղաբալյանցի և Ա. Ա. Բրոսիլովսկու հետ):

Համահեղինակ է՝ «Физические процессы виноделия», (М., 1976, 1996); «Производство советского шампанского непрерывным способом» (М., 1977, 1997); «Физико-химия игристых вин» (М., 1979, 1999) (միահեղինակ); «Технология вина» (М., 1984):



ՄԵՐԺԱՆՈՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐԻ (27.11.1931, Դոնի Ռոստով – 31.06.2013, Մոսկվա), քիմֆիզիկոս: Ֆիզմաթ.գիտ. դոկ. (1968), պրոֆ. (1970), ՌԳԱ ակադ. (1997), ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2004):

Ավարտել է Դոնի Ռոստովի պետական համալսարանը (1954, 2004 թ.-ից՝ պատվ. դոկ.): 1959-1978 թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի Չեռնոգոլովկայի մասնաճյուղի լաբորատորիայի, 1978-1987 թթ.՝ բաժնի վարիչ, 1987 թ.-ից՝ ՌԳԱ կառուցվածքային մակրոկինետիկայի ինստիտուտի (Չեռնոգոլովկա՝ Մոսկվայի մարզ) տնօրեն:

Հայտնագործել է «պինդ բոցի» երևույթը (ԽՍՀՄ հայտնագործությունների գրանցման մատյան, № 268, 1967)՝ պինդ ֆազում այրման ճակատի առանց հեղուկ և գազային արգասիքների առաջացման ինքնաբերաբար տարածումը, որի հիման վրա ստեղծել է նոր՝ ինքնատարածվող բարձրջերմաստիճանային սինթեզի եղանակ:

Հեղինակ է 800-ից ավելի հոդվածների և մասնագիտական գրքերի, որոնցից են «Процессы горения и синтез материалов» (Черноголовка, 1998); «Твердопламенное горение» (Черноголовка, 2000); «Self-propagating High-temperature Synthesis of Materials» (N. Y., 2002):

Նրա խորհրդատվությամբ և ղեկավարությամբ պաշտպանվել են բազմաթիվ դոկտորական և թեկնածուական թեզեր: Ստեղծել է հզոր դպրոց, որն ընդգրկում է տարբեր երկրներում գործող մոտավորապես 40 դոկտորներ և 150 գիտ. թեկնածուներ:

Ստացել է ՀԽՍՀ (1980) և ՌԴ (1996) Պետական մրցանակներ, «Եվրոպայի Ջերմային թագավոր» մրցանակ (1993, Դուբլին), Սմոլենսկու (1989), Կ. Բ. Ջելդովիչի ոսկե (1990, ԱՄՆ-Ռուսաստան), Ճապոնիայի «Պրոմեթևս» (1990) մեդալներ:

Եղել է Չեռնոգուրովկայի պատվավոր քաղաքացի (2001):



ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԷԼԵՆՈՐԱ ՄԻՔԱՅԵԼԻ
(17.12.1938, Աստրախան), կենսաքիմիկոս: Կենսաբ. գիտ. դոկ. (1989), պրոֆ. (1991):

Ավարտել է ԵԲԻ-ն (1961): 1961-2007 թթ. աշխատել է ԵԲԻ կենսաքիմիայի ամբիոնում, 1973-1991 թթ.՝ բուժֆակի դեկանի տեղակալ:

Աշխատանքները վերաբերում են հիվանդությունների ժամանակ օքսիդացման գերհույզի ախտածին ազդեցության, կանխման և հակաօքսիդիչների միջոցով բուժման հարցերին: Բացահայտել է, որ հակաօքսիդիչների ընդունման քանակը որոշվում է անհատականորեն: Համաեղինակ է ուսումնամեթոդական ձեռնարկների:

Եղել է ՀՀ կենսաքիմիկոսների ընկերության անդամ (1963 թ.-ից), ստացել է ԵՊԲՀ ոսկե մեդալ (2000):



ՄԻԽՅԱՆ ԷՄԻԼ ԵՐԵՄԻ (20.9.1930, Նոր Բայազետ (այժմ՝ ք. Գավառ) -21.11.1981, Երևան), կենսաքիմիկոս: Կենսաբ. գիտ. դոկ. (1965), պրոֆ. (1966):

Ավարտել է ԵԲԻ-ն (1951): 1954 թ.-ից աշխատել է ԵԲԻ կենսաքիմիայի ամբիոնում, 1967-1981 թթ.՝ ընդհանուր և կլինիկական քիմիայի ամբիոնի վարիչ: Զարգացրել է Լ. Ա. Օրբելու տեսակետը՝ գլխուղեղի գործունեության մեջ սիմֆաթիկ նյարդային համակարգի հարմարողական և սնուցողական դերի վերաբերյալ: Ուսումնասիրել է գլխուղեղի գործունեության դերը կենսորո-

ղական մեջ սիմֆաթիկ նյարդային համակարգի հարմարողական և սնուցողական դերի վերաբերյալ: Ուսումնասիրել է գլխուղեղի գործունեության դերը կենսորո-

նական նյարդային համակարգի ֆունկցիայի մեջ, ինչպես նաև ինքնաբեր գերճնշման զարգացման ժամանակ:

Եղել է մասնագիտական և գիտական խորհուրդների անդամ:



ՄԻԽԱԹԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԶԱՍՊԻ
(07.10.1942, Թբիլիսի – 14.12.2012, Երևան), քիմիկոս-տեխնոլոգ: Քիմ. գիտ. դոկ. (2002):

Ավարտել է ԵՊԻ-ն (1964): 1965-1994 թթ. աշխատել է ԵԱԱԻ-ում (1987-1994 թթ.՝ անօրգ. և վերլուծական քիմիայի ամբիոնի վարիչ), 1994 թ.-ից՝ ՀՊԱՀ ընդհանուր քիմիայի ամբիոնում (2002-2011 թթ.՝ վարիչ):

Աշխատանքները վերաբերում են ցածրջերմաստիճանային պինդֆազային պայթյունընթաց ռեակցիաններին: Հայտնաբերել է (Ն. Ս. Ենիկոլոպյանի հետ) առաձգական ալիքներով հարուցվող գերարագ ընթացող կարծրաֆազ ռեակցիաներ:



ՄԻԽԱԹԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ ԳՐԻԳՈՐԻ (16(29).11.1910, Թիֆլիս - 23.12.1992, Երևան), կենսաքիմիկոս: Կենսաբ. գիտ. դոկ. (1964), պրոֆ. (1965), ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1968), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1981):

Ավարտել է ԵԲԻ-ն (1932): 1952-1960 թթ.՝ ԵԲԻ բուժական ֆակուլտետի դեկան, 1960-1987 թթ.՝ կենսաքիմիայի ամբիոնի վարիչ:

Ուսումնասիրել է գերհոյզային վիճակների և շաքարախտի կենսաքիմիան: Պարզել է, որ նշված վիճակներում լիպիդային գերօքսիդացման շարժընթացն ուժեղանում է, ավելանում է ազատ ռադիկալների քանակը, ճնշում որոշ հակառադիկալային ֆերմենտների ակտիվությունը: Բացահայտել է գերօքսիդների, գերօքսիդացած չհագեցած ճարպաթթուների ազդեցությունը որոշ ֆերմենտների ակտիվության, բջջաթաղանթի թափանցելիության վրա:

Եղել է ՀԽՍՀ կենսաքիմիկոսների ընկերության փոխնախագահ (1970-1991), ՀԽՍՀ առողջապահության նախարարության գիտաբժշկական խորհրդի հիմնախնդրային հանձնաժողովի նախագահ (1972-1986):

Ստացել է ՀԽՍՀ ԳԱ նախագահության վաստակագիր (1976):



ՄԿՐՏՉՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

(12.03.1948, Երևան), կենսաքիմիկոս: Տեխ. գիտ. դոկ. (2003):

Ավարտել է ԵՊՀ-ն (1971): 1971-1994 թթ. աշխատել է Խաղողագործության, գինեգործության և պտղաբուծության ԳՀԻ-ում (այժմ՝ գիտական կենտրոն), 1994-2006 թթ.՝ գյուղատնտեսության նախարարության «Պարեն»

ԳԱՄ-ում, 2006-2013 թթ.՝ ՀԱԱՀ գիտաաշխատող:

Աշխատանքները վերաբերում են սննդամթերքի պահպանման և վերամշակման կենսաքիմիայի և տեխնոլոգիայի խնդիրներին: 2013 թ.-ից բնակվում է արտերկրում:



ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԻԼԵՆ ՀԱԿՈՐԻ

(21.09.1933, Լեւինական), քիմիկոս-օրգանիկ: Քիմ. գիտ. դոկ. (1987), պրոֆ. (1989):

Ավարտել է ԵՊԻ քիմիատեխնոլոգիայի ֆակուլտետը (1957): 1956 թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱԱ ՆՕՔԻ-ում որպես կրտսեր (1956-1965), ավագ (1965-1973) գիտական աշխատող, 1973 թ.-ից՝ դեղաբույսերի քիմիայի լաբորատորիայի վարիչ և միաժամանակ՝ գիտական գծով փոխտնօրեն: Թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 1961 թ.:

Աշխատանքները վերաբերում են դեղաբույսերի քիմիական կազմի ուսումնասիրման, կենսաբանական ակտիվ միացությունների անջատման և քիմիական կառուցվածքի որոշման խնդիրներին:

Հեղինակ է ավելի քան 150 գիտական հրատարակումների, այդ թվում՝ 6 հեղինակային իրավունքի, 2 արտոնագրի և «Иридоидные гликозиды» (Եր., 1986) մենագրության, 2 ուսումնական ձեռնարկի: Համատեղությամբ դասավանդել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում:

Եղել է ՌԴ բնական ԳԱ և Բնության ու հասարակության մասին ԳԱ հայկական մասնաճյուղերի ակադեմիկոս քարտուղար (1998 թ.-ից), Բնական գիտությունների եվրոպական ակադեմիայի անդամ (2003 թ.-ից):



ՄՆՋՈՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ ԼԵՎՈՆԻ (23.11.1904, Սարիղամիշ (Կարսի մարզ) – 20.02.1970, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1944), պրոֆ. (1945), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1953), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1961), ԽՍՀՄ Սոց. Աշխատանքի հերոս (1969): Ե. Ի. և Հ. Լ. Մնջոյանների եղբայրը:

Դպրոցական տարիներից աշխատել է Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի) դեղատանը որպես աշակերտ: 1922 թ. տեղափոխվել է Երևան, աշխատել ՀԽՍՀ առողջապահության նախարարության դեղատնային վարչությունում որպես ասիստենտ, հսկիչ:

1928 թ. ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի քիմիադեղագործական, 1933 թ.՝ ԵԲԻ բժշկական ֆակուլտետները: 1928-1938 թթ. կազմակերպել և ղեկավարել է ՀԽՍՀ դեղատների վարչության գիտահետազոտական արտադրական լաբորատորիան: 1953- 1960 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ փոխնախագահ, 1964-1967 թթ.՝ քիմիական բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար: 1937-1946 թթ. եղել է ԵԲԻ օրգանական քիմիայի, 1937-1939 թթ.՝ նաև անօրգանական քիմիայի, միաժամանակ (1937-1941 և 1942-1951 թթ.)՝ ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնների վարիչ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ԵԲԻ-ում կազմակերպել և ղեկավարել է հատուկ քիմիական լաբորատորիա, որտեղ սինթեզվել են կարևոր դեղանյութեր և մարտական թունանյութեր հայտնաբերող բացահայտիչներ (ինդիկատորներ):

1945-1950 թթ. ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ քիմիայի ինստիտուտը: Նրա կազմակերպած դեղագործական քիմիայի լաբորատորիայի հիմքի վրա 1955 թ. ստեղծվել է ՀԽՍՀ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը, որի գիտական ղեկավարը և տնօրենն էր մինչև կյանքի վերջը:

Հեղինակ է ավելի քան 260 գիտական աշխատության, այդ թվում՝ բազմաթիվ մենագրությունների, որոնք վերաբերում են նոր, արդյունավետ դեղանյութերի սինթեզին և օրգանիզմի վրա դրանց ներգործության ուսումնասիրմանը: Մինչև 1937 թ. զբաղվել է Հայաստանի բուսական և հանքային հումքից դեղանյութեր ստանալու հետազոտություններով, 1944 թ.-ից՝ թմրեցնող նյութերի սինթեզով:

ՀՀ-ում ֆիզիոլոգիապես ակտիվ նյութերի սինթեզի և հետազոտման ժամանակակից գիտական դպրոցի հիմնադիրն է: Նրա նախաձեռնությամբ

ՆՕՔԻ-ում ստեղծվել է կենսաբանական բաժին և փորձնական արտադրություն, սինթեզվել և ուսումնասիրվել են նոր, կենսաբանորեն ակտիվ բազմաթիվ նյութեր և դեղամիջոցներ՝ դիթիլին, գանգլերոն, սուբեխոլին, արփենալ, մեսֆենալ և այլն, որոնք կիրառվում են սիրտանոթային, նյարդահոգեկան, վարակիչ և այլ հիվանդությունների, այդ թվում՝ չարորակ ուռուցքների բուժման համար:

ՀՀ-ում ստեղծել է քիմիկոսների ու դեղագետների մեծ դպրոց: Նրա ղեկավարությամբ հրատարակվել են «Հետերոցիկլիկ միացությունների սինթեզ» ժողովածուի պրակները, որոնք թարգմանվել են անգլերեն:

1978 թ. նրան շնորհվել է ՀԽՍՀ Պետական մրցանակ: Պարգևատրվել է Լենինի (3), Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով:

1971 թ.-ից ՀՀ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը կոչվում է նրա անունով:

ՄՆՋՈՅԱՆ ԵՂԻԱ ԼԵՎՈՆԻ (09(22).10.1917, Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի) -23.01.1997, Երևան), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դոկ. (1973): Ա. Լ. և Հ. Լ. Մնջոյանների եղբայրը:

Ավարտել է ԵՊՀ-ն (1945): 1945-1966 թթ. աշխատել է Խաղողագործության, գինեգործության և պտղաբուծության ԳՀԻ-ում, 1966-1970 թթ.՝ Երևանի կոնյակի գործարանի տնօրեն, 1970-1984-ին՝ Նախարարների խորհրդի գիտության և բույսերի բաժնի, 1984-1993 թթ.՝ Երևանի կոնյակի գործարանի հիմնախնդրային լաբորատորիայի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են գինու և կոնյակի քիմիայի ու տեխնոլոգիայի հարցերին: Մշակել է կոնյակի սպիրտի թորման գիտական հիմունքները և կաղնու փայտի օգտագործման նոր տեխնոլոգիական եղանակներ:



ՄՆՋՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԼԵՎՈՆԻ (09(22).8.1920, Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի) - 01.12.1998, Երևան), քիմիկոս: Կենսբ. գիտ. դոկ. (1977), պրոֆ. (1985): Ա. Լ. և Ե. Լ. Մնջոյանների եղբայրը:

Ավարտել է ԵՊՀ-ն (1947): 1946 թ.-ից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ ՆՕՔԻ-ում, 1957 թ.-ից՝ բաժանմունքի, 1987-1992 թթ.՝ ացետիլխոլինի քիմիայի լաբորատորիայի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են ացետիլխոլինի և նիկոտինի ածանցյալների սինթեզի ու քիմիական միացությունների կառուցվածքի և կենսաբանական ակտիվության կապի օրինաչափություններին: Նրա ղեկավարությամբ սինթեզվել են կենսաբանորեն ակտիվ նյութեր (ամինաալկիլ էսթերներ, թիոէսթերներ և ամիդներ), որոնք կիրառվում են բժշկության մեջ՝ շնչարգելության, պարկինսոնյան հիվանդության, ստամոքսի խոցի, էպիլեպսիայի և այլ հիվանդությունների բուժման նպատակով:

Ստացել է ՀԽՍՀ Պետական մրցանակ (1978):



ՄՈՒԼՅԱՆ ՆԱԶԱՐ ՄՆԱՑԱԿԱՆԻ (16.08.1937, Բուխարեստ (Ռումինիա)), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1983):

Սովորել է Բուխարեստի հայկական դպրոցում, սակայն երրորդ դասրանը վերջացնելուց ընտանիքով տեղափոխվել են Լենինական քաղաք (Գյումրի): 1946 թ. շարունակել է ուսումը Վ. Տերյանի անվան թիվ 41 դպրոցում, որն ավարտելուց (1954) ընդունվել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: Այն ավարտել է 1959 թ. և աշխատել ՀՀ ԳԱ ՕՔԻ-ում որպես լաբորանտ, ավագ քիմիկոս և ավագ քիմիկոս և ավագ-ճարտարագետ: 1966 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատանքի անցել Երևանի քիմիական ռեակտիվների գործարանում որպես օրգանական լաբորատորիայի վարիչ, 1970 թ.-ից գործարանի կենտրոնական լաբորատորիայի վարիչ: 1973 թ.-ից աշխատել է գործարանին կից բացված համամիութենական քիմիական ռեակտիվների ինստիտուտի մասնաճյուղի (այժմ Կենցաղային քիմիայի ԳՀԻ) փոխտնօրեն:

Աշխատանքները վերաբերում են օրգանական ռեակտիվների ստացման նոր, մատչելի եղանակների մշակմանն ու արտադրության մեջ ներդրմանը: Իրականացրել է նոր սինթեզներ ալիլհալոգենիդների և α , β -չիագեցած կարբոնիլային միացությունների հիման վրա:

Հեղինակ է ավելի քան 100 գիտական հոդվածի և 55 հեղինակային իրավունքի:

ԽՍՀՄ վաստակավոր գյուտարար է (1970):



ՄՈՎԱՍԻՍՅԱՆ ԵՂԻՇԵ ՄՈՎԱՍԵՍԻ (31.12.1899 (12.01.1900), Վան – 07.01.1973, Երևան), ագրոքիմիկոս: Գղտ. գիտ. դոկ. (1951), պրոֆ. (1961), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1966):

Ավարտել է ԵՊՀ գյուղատնտեսական ֆակուլտետը (1927): 1930 թ.-ից աշխատել է ՀԳԻ-ում, 1937-1973 թթ.՝ ագրոքիմիայի ամբիոնի, 1970-1973 թթ., միաժամանակ՝ բույսերի սննդառության ախտորոշման լաբորատորիայի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են ՀՀ հողերի պարարտացման և ագրոքիմիական հետազոտությունների հարցերին: Մշակել է հողի, բույսի ու պարարտանյութերի ագրոքիմիական բնութագրման և հումուսի որոշման եղանակներ:

Հեղինակ է հետևյալ աշխատությունների՝ «Տեղական պարարտանյութերն ու նրանց օգտագործումը» (Եր., 1942); «Բանջարանոցային կուլտուրաների պարարտացումը» (Եր., 1954); «Դաշտային պարարտացման փորձերի մեթոդիկական և տեխնիկական» (Եր., 1959); «Ագրոքիմիայի հիմունքները» (Եր., 1971); «Պարարտացման փորձերի և կենսաբանական հետազոտությունների մեթոդներն ագրոքիմիայում» (Եր., 1981); «Агрохимические исследования карбонатных почв Араратской равнины» (Ե., 1958); «Методика изучения гумуса и результаты ее применения к почвам Араратской равнины» (Ե., 1959).



ՄՈՎԱՍԻՍՅԱՆ ՍԵՂՐԱԿ ԳԱՐԵԳԻՆԻ (04.10.1932, ք. Սիսիան - 7.12.1979, Երևան), կենսաքիմիկոս: Կենսաբ. գիտ. դոկ. (1967), պրոֆ. (1970): ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1977):

Ավարտել է ԵԲԻ-ն (1956): 1958 թ.-ից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ կենսաքիմիայի ինստիտուտում (1969 թ.-ից՝ ամինաթթուների և նուկլեոտիդների լաբորատորիայի վարիչ, 1971-1979 թթ.՝ փոխտնօրեն):

Աշխատանքները վերաբերում են նյարդային հյուսվածքներում ամինաթթուների փոխանակության հարցերին:

Եղել է Նյարդաքիմիկոսների միջազգային ընկերության անդամ (1974-1979):



ՄՈՒՇԵՂՅԱՆ ԱՇՈՏ ՎԱՐԱԶԴԱՏԻ (11.06.1933, Երևան – 08.11.1994, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1986), պրոֆ. (1988):

Ավարտել է Երևանի թիվ 40 միջնակարգ դպրոցը, 1956 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: 1957-1960 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ ՆՕՔԻ լաբորանտ, ապա՝ կրտսեր գիտաշխատող: 1960 թ. տեղափոխվել է ՀԽՍՀ ԳԱ ՕՔԻ, որտեղ ղեկավարել է քիմիայի բնագավառում ՀՀ-ում առաջին սպեկտրադիտական հետազոտությունների խումբը: 1967 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1967-1987 թթ. աշխատել է ԵՊՀ տեսական քիմիայի ամբիոնում: 1988-1994 թթ. եղել է ԵՊՀ կատալիզի և տեխնիկական քիմիայի ամբիոնի վարիչ: Նրա նախաձեռնությամբ ամբիոնում գիտական հիմքերի վրա են դրվել որդան կարմիրի ստացման և ուսումնասիրման աշխատանքները:

Հեղինակ է շուրջ 120 գիտական աշխատանքների, որոնք վերաբերում են չհագեցած միացությունների և սպիրտների իզոմերացման մեխանիզմին և վերջնանյութերի ստացմանն ու պարզաբանմանը:

Լինելով սպեկտրային վերլուծության առաջատար մասնագետներից և քիմիայում դրա արմատավորողներից մեկը՝ հանրապետությունում լուրջ ներդրում է ունեցել այդ ոլորտի կայացման գործում: Մեծ է նրա ավանդը նաև ՀՀ-ում տարասեռ կատալիզի զարգացման, նոր տեսակի կատալիզատորների մշակման բնագավառում:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 6 ատենախոսություն:

ՅԱՍԿԵՎԻՅԱՆ ՅԱՇԿԵՎԻԶ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (06.07.1749, Լվով - 14.11.1809, Կրակով), բժիշկ, քիմիկոս, բնագետ-մետալուրգ: Բժշկ. գիտ. դոկ. (1775):

Ավարտել է Վիեննայի համալսարանի բժշկական ֆակուլտետը (1775), 1782-1787 թթ. եղել է Կրակովի կայսերական բարձրագույն դպրոցի պրոֆեսոր: 1780 թ. հիմնել է Կրակովի համալսարանի բնագիտության, անատոմիայի և մանկաբարձության ամբիոններ, ինչպես նաև քիմիայի լաբորատորիա, Կրակովում հիմնել է բուսաբանական այգի, կլինիկական հիվանդա-

նոց: Լեհաստանում պատրաստված առաջին օդապարիկի (1784) հեղինակներից է:

Ուսումնասիրել է Կրակովի շրջանի երկրաբանական կառուցվածքը, հիմնել է օգտակար հանածոների թանգարան, 1789-1790 թթ. ղեկավարել է Լեհաստանի ածխի հանքավայրերի հետախուզական աշխատանքները, կազմել է հանքաբանական քարտեզներ: Հեղինակ է «Դրվագներ մետալուրգիայի մասին» աշխատության (1969, հրատարակել է Լեհաստանի ԳԱ), «Կշեշովիցեի ծծմբաջրերի մասին» (1783), «Կրակի նոր թեորեմը» (1784) գրքերի:

Եղել է Կրակովի գիտությունների Կայսերական և Ֆրանսիական Թագավորական ակադեմիաների թղթակից անդամ (1782-1787), Կրակովի համալսարանի բնագիտական խորհրդի նախագահ (1789-1809):

Յանի կիսանդրին դրված է Կրակովի համալսարանի պատմության թանգարանում:



ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԱՐԱՄ ԲԱԳԲԱՏԻ (01(14).01.1908,

Ղարաքիլիսա (այժմ՝ Վանաձոր) - 24.01.1989, Երևան), քիմիկոս: Ֆիզմաթ. գիտ. դոկ. (1943), պրոֆ.(1947), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1963, թղթ. անդամ՝ 1960 թ.-ից), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1971):

Ավարտել է ԵՊՀ ֆիզմաթ ֆակուլտետը (1930): 1931 թ.-ից աշխատել է ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտում, 1957-1971 թթ. եղել է լաբորատորիայի վարիչ, 1959-1975 թթ. միաժամանակ՝ ՀԽՍՀ ԳԱ քիմիական ֆիզիկայի լաբորատորիայի, 1975-1987 թթ.՝ նույնանուն ինստիտուտի (1994 թ.-ից՝ Նալբանդյանի անվան) տնօրեն, 1967-1989 թթ.՝ ԳԱ քիմիայի բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար: ՀՀ-ում հիմնադրել և զարգացրել է քիմիական ֆիզիկական որպես գիտության ինքնուրույն ճյուղ:

Աշխատանքները վերաբերում են գազաֆազ ճյուղավորված շղթայական ռեակցիաների կինետիկայի, մեխանիզմի և միջանկյալ միացությունների ուսումնասիրմանը: Էլեկտրոնային պարամագնիսական ռեզոնանսի եղանակով առաջինն է ջրածնի նոսրացված բոցում հայտնաբերել թթվածնի ատոմներ, OH^\bullet և HO_2^\bullet ռադիկալներ: Ածխաջրածինների ջերմա- և լուսաքիմիական

օքսիդացման հետազոտման շնորհիվ մշակել է մրջնալղեհիդի ուղղակի ստացման արդյունաբերական եղանակ: Առաջարկել է (Ա. Հ. Մանթաշյանի հետ) ռադիկալների ստացման նոր կինետիկական եղանակ, որով ավրեհիդների և ածխաջրածինների օքսիդացման, ջրածնի և ածխածնի մնօքսիդի դանդաղ օքսիդացման ռեակցիաններում հայտնաբերել է գերօքսիդային ռադիկալներ, ինչպես նաև օրգանական և ջրածնի գերօքսիդների տարասեռ ռադիկալային քայքայման երևույթը:

Եղել է մասնագիտական և գիտական խորհուրդների անդամ (նախագահ): Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել են բազմաթիվ թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ:

Հեղինակ է բազմաթիվ գիտական հոդվածների, ինչպես նաև հետևյալ գրքերի՝ «Современное состояние проблемы газофазного окисления органических соединений» (Է., 1986); «Магнитный резонанс в газах» (Է., 1987):

Եղել է Նյու Յորքի ԳԱ անդամ (1979), ստացել է ԽՍՀՄ ԳԱ Դ. Մենդելեևի անվան (1953) և ԽՍՀՄ Պետական (1976) մրցանակներ:



ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ ՀԱՅՐԱՊԵՏԻ

(09.05.1940, գ. Գեղաշեն, Կոտայքի մարզ), կենսաքիմիկոս: Կենս. գիտ. դոկ. (2003), պրոֆ. (2004):

1957 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1963 թ.՝ ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը: 1975 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1964 թ.-ից աշխատում է ԵՊՀ կենսաքիմիայի ամբիոնում որպես ճարտարագետ, ասպիրանտ, գիտաշխատող, գիտական բաժնի վարիչ, դոցենտ, ապա՝ պրոֆեսոր:

Հետազոտել է արտակարգ վիճակներում (ազոտային քաղց, ջերմաստիճանային և ճառագայթային գործոնների ազդեցություն) խմորասնկերի սպիտակուցների փոխանակության և նուկլեինաթթուների կառուցվածքային փոփոխությունները, նշադրված ամինաթթուների օգտագործմամբ ուսումնասիրել ամինաթթուների՝ բջիջ թափանցելու, փոխանակության և սպիտակուցների սինթեզում դրանց մասնակցության հարցերը, ինչպես նաև ռենտգենյան ճառագայթման ազդեցության պայմաններում խմորասնկային բջիջների

կենսունակությունը, խմորասնկային ԴՆԹ-ի կառուցվածքում նկատվող փոփոխությունները և կառուցվածքային վնասվածքների վերացման ուղիները:

Հեղինակ է շուրջ 60 գիտական աշխատության, այդ թվում՝ «Խմորասնկային բջիջների սպիտակուցային փոխանակության մաս-սպեկտրաչափական ուսումնասիրության սկզբունքներ» (Եր., 1985); «Կենսաքիմիայի լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական ձեռնարկ» (Եր., 2003); «Խմորասնկային բջիջներից հիստոնային սպիտակուցների և ԴՆԹ-ի անջատումը և ֆյուրեբացենտային ցուցանիշների համեմատական ուսումնասիրումը» (Եր., 2006) գրքերի:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 2 ատենախոսություն:



ՆՈՐՈՎՅԱՆ ԱԶԱՏ ՍՈՂՈՄՈՆԻ (15.02.1937. գ. Լիվսայան, Իրանի Սպահանի մարզ – 12.04.2015, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1982), պրոֆ. (1984), ՀՀ ԳԱ թղթակից անդամ (2000):

Նրա ընտանիքը 1946 թ. հայրենադարձվել է Խորհրդային Հայաստան: 1962 թ. գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը և ընդունվել աշխատանքի ՕՔԻ ացետիլենային միացությունների լաբորատորիայում: 1968 թ. լաբորատորիան տեղափոխվել է ՆՕՔԻ: 1981 թ.-ից մինչ կյանքի վերջը ղեկավարել է իր իսկ հիմնած Հոգեմետ միացությունների սինթեզի լաբորատորիան:


Ստեղծել է նոր գիտական ուղղություն տարացիկլիկ միացությունների քիմիայի ոլորտում, իրականացրել է այդ նյութերի ուղղորդված սինթեզի գիտական հիմունքների ստեղծումը, նպատակ ունենալով ստանալ կենսաբանական բարձր ակտիվությամբ օժտված միացություններ: Սինթեզվել են հոգեմետ ակտիվությամբ օժտված միացություններ: Սինթեզվել են հոգեմետ ակտիվությամբ օժտված մի շարք նոր տարացիկլիկ միացություններ՝ ազոտ-, ծծումբ- և թթվածին պարունակող վեցանդամանի տարացիկլերի հիման վրա: Նրա ավանդը ժամանակակից գիտության կենսաբանական ակտիվ միացությունների քիմիայի ոլորտում ճանաչված է քիմիական աշխարհում: Աշխատակիցների հետ միասին ստեղծել է պաշտպանական նշանակության պատրաստուկներ, որոնք հանդիսանում են մարտական թունավոր

նյութերի անտիպոդ, իսկ Տոֆլունարիզին (ուղեղի արյան շրջանառության կարգավորիչ) և Պիրատիդին (նոր սերնդի հանգստացուցիչ) պատրաստուկները անցել են նախակլինիկական փորձարկումներ:

Զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ՝ Հայկական բժշկական ինստիտուտում, իր կողմից հիմնած քիմիայի ամբիոնում: Նա միջազգային Բնապահպանական ակադեմիայի (1998) և ՌԴ բնական ԳԱ (1998) անդամ էր:

Հեղինակ է 350-ից ավելի գիտական աշխատության, 117 գյուտի և արտոնագրի: Նա պատրաստել է քսանից ավելի գիտությունների թեկնածուներ և դոկտորներ:

Պարգևատրվել է մեդալներով և պատվոգրերով:



ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐԱՄ ԱՐՏԱՇԵՍԻ (26.06.1938, Երևան – 03.02.2020, Երևան), քիմիկոս, ֆիզիկոս: Քիմ. գիտ. (1982) և ֆիզմաթ. գիտ. դոկ. (1992), պրոֆ. (1990), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (2010), ՀՀ գիտության վաստակավոր գործիչ (2008):

1955 թ. ավարտել է Երևանի թիվ 2 միջնակարգ դպրոցը, 1961 թ.՝ ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը, 1965 թ.՝ ասպիրանտուրան: 1967 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1965-1967 թթ. եղել է ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի (Մոսկվա) ստաժոր-հետազոտող, 1967-1968 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ ՕՔԻ կրտսեր գիտաշխատող, 1968-1972 թթ.՝ ԵՊԻ ավագ գիտաշխատող, 1972-1985 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ փորձարարական կենսաբանության ինստիտուտի, 1985-1992 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ ՖԿՊԻ լաբորատորիայի վարիչ, 1992-1999 թթ.՝ ՀՀ ԿԳՆ փոխնախարար, ապա՝ առաջին փոխնախարար, 1999-2002 թթ.՝ ՀՀ ԳԱԱ նախագահի տեղակալ, 2002-2008 թթ.՝ ՀՀ ԳԱԱ փոխնախագահի տեղակալ, ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների, ապա՝ Քիմիական և Երկրի մասին գիտությունների բաժանմունքների ակադեմիկոս քարտուղար, 2008-2011 թթ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղարի պաշտոնակատար: 2011 թ.-ից ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի գիտական գծով ղեկավար:

1983-1988 թթ. և 2002-2015 թթ. դասավանդել է ԵՊՀ ֆիզիկայի և կենսաբանության ֆակուլտետներում:

1976 թ.-ից զբաղվել է լիոտրոպ հեղուկ բյուրեղների ուսումնասիրությամբ, 2000 թ.-ից ՀՀ-ում առաջիններից մեկն է զբաղվել կենսաինֆորմատիկայի հարցերով: Հիմնարար հետազոտություններ է կատարել պոլիմերման գործընթացների կինետիկայի, կենսաբանական թաղանթների, էնուլսիաներում պոլիմերման, միցելային և կոլոիդային համակարգերի ուսումնասիրման բնագավառներում:

Հետինակ է ավելի քան 200 գիտական աշխատության, այդ թվում՝ «Роль структурной организации ионных мицелл в механизме формирования макромолекул в эмульсиях» (Եր., 1985) մենագրության, ինչպես նաև՝ «Համակարգչային կենսաբանություն և կենսաինֆորմատիկա» (Եր., 2011); «Ակադեմիկոս Արտաշես Շահինյան. հայրենասերը, ուսուցչապետը, գիտնականը» (Եր., 2006) գրքերի:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 16 և դոկտորական 3 ատենախոսություն:

2007 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի:



ՀԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ԺՈՐԱ) ՄԵԽԱԿԻ

(23.08.1927, գ. Սոիգեղ (այժմ՝ Սարիգյուղ Տավուշի մարզ) - 17.11.1987, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1981), պրոֆեսոր (1982):

Ավարտել է ԵՊՀ-ն (1957): 1957-1983 թթ. աշխատել է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնում, 1983-1987 թթ.՝ Քիմիական ռեակտիվների և գերմաքուր քիմիական նյութերի «ԻՌԵԱ» ԳԱՄ-ի հայկական մասնաճյուղի լաբորատորիայի վարիչ: Եղել է ՀՀ հանրագիտարանի օրգանական քիմիայի գծով գիտաճյուղային խորհրդի անդամ:

Աշխատանքները վերաբերում են երկհալոիդ վինիլային միացությունների գերթթուներով օքսիդացման և եռհալոիդ մեթիլկարբինոլների դեհիդրման ժամանակ տեղի ունեցող իր հայտնաբերած մոլեկուլային վերախմբավորումների օրինաչափություններին: Սինթեզել է յուցիֆերին և ամի-

նոպակիլիզոյումինոզներ, որոնք օգտակար են կենսաօրգանական քիմիայում իմունասանալիզի համար:

ՇԱՀՊԱՐՈՆՈՎ (ՇԱՀՊԱՐՈՆՅԱՆ) ՄԻՔԱՅԵԼ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

(15.02.1918, գ. Շչերբակովկա (այժմ՝ ՌԴ Կուրսկի մարզում) – 18.12.2001, Մոսկվա), ֆիզքիմիկոս, փիլիսոփա: Քիմ. գիտ. դոկ. (1953), պրոֆ. (1959): ՌԽՖՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1980):

Ավարտել է Կ. Ա. Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիան (1939): 1959 թ.-ից՝ ՄԴՀ ֆիզքիմիայի և դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի ամբիոնների պրոֆեսոր:

Աշխատանքները վերաբերում են անհավասարակշիռ ջերմադինամիկայի, քիմիական կինետիկայի, լույսի ցրման տեսության, նյութի հետ ձայնի և ռադիոալիքների փոխազդեցության ու բնագիտության փիլիսոփայական հարցերին:

Հեղինակ է՝ «Диалектический материализм и некоторые проблемы физики и химии» (Մ., 1958); «Межмолекулярные взаимодействия» (Մ., 1983):



ՈՍՎԱՆՅԱՆ ԷՄԻԼ ՍԵՐՈՐԻ (02.10.1941, գ. Ոսկեվազ (Արագածոտնի մարզ) – 06.05.2014, Երևան), քիմիկոս: Տեխ. գիտ. դոկ. (1990), պրոֆ. (2003), ՀՃԱ թղթ. անդամ (1996):

Ավարտել է ԵՊՀ-ն (1964): 1961 թ.-ից աշխատել է «Նաիրիտ» ԳԱՄ-ում. 1972 թ.-ից՝ լաբորատորիայի վարիչ, 1994-2003 թթ.՝ ԳՀ կենտրոնի ղեկավար, 2003 թ.-ից՝ Ալեքսանդրով քաղաքի (ՌԴ Մոսկվայի մարզ) «Դալքս» գիտաարտարական համալիրի գլխավոր տնօրենի առաջին տեղակալ, 2004-2008 թթ. «Նաիրիտ» ԳԱՄ ԳՀԻ տնօրենի տեղակալ: Եղել է «Հայաստանի կիրառական քիմիա» հանդեսի գլխավոր խմբագիր (1998 թ.-ից):

Ուսումնասիրել է չհագեցած միացությունների հալոգեն ածանցյալների և մի շարք դիենային պոլիմերների (պոլիբլորոպրեն, պոլիերկքլորբութադիեն, պոլիիզոպրեն ևն) քիմիական փոխարկումները: Մշակել և արդունաբերության մեջ ներդրել է քլոր- և բրոմնաիրիտների, քլորկաուչուկների ստացման

եղանակներ, որոնց հիման վրա արտադրվել են մի շարք բաղադրանյութեր (լաքեր, ներկեր, սոսինձներ, մածուկներ, ջրա-և ջերմամեկուսիչ ծածկույթներ):

Եղել է ՌԴ բնական ԳԱ (1998) և ՀՃԱ (1996) անդամ:



ՈՍԿԱՆՅԱՆ ՄԱՐԻՆԱ (1961, Թեհրան), քիմիկոս-ճարտարագետ, նավթագետ: 1974 թ.-ից բնակվում է ԱՄՆ-ում:

Աշխատել է ԱՄՆ-ի «Յու Էս Էյ Էքսսան», «Կալիֆոռնիա Գեզ Քեմիքալս», 1984 թ.-ից՝ Կալիֆոռնիայի «Ֆիլիպս Փրոթոլիում» նավթային ընկերություններում: Դասավանդում է տարբեր համալսարաններում: Մշակել է նավթահետախուզման նոր եղանակներ, որոնք կիրառում են ԱՄՆ-ում: 1990 թ. ՀՀ-ում կատարել է նավթահետախուզական աշխատանքներ:

Կալիֆոռնիայի երկրաբանական հարցերի վերակացու, Նավթագետների համաշխարհային ընկերակցության Կալիֆոռնիայի մասնաճյուղի նախագահ, Նավթագործության բնագավառում նշանակումների և մրցանակների խորհրդի տնօրեն:



ՈՍԿԱՆՅԱՆ ՄԱՐՏՈՒՆԻ ԳՐԻԳՈՐԻ (29.01.1933, գ. Երասխահուն, ՀՀ Արմավիրի մարզ – 15.06.2005, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1982):

1958 թ. ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: 1959 թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱԱ ՕՔԻ-ում, 1965 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1984 թ.-ից աշխատել է օրգանական միացությունների միկրովերլուծության լաբորատորիայի վարիչ: Մշակել է պոլիմիսիլացետալների ստացման նոր եղանակ: Ենինային, պրոպարգիլային և ալենային հալոգենիդների նուկլեոֆիլ տեղակալման գործընթացներում հայտնաբերել է ապահալոդիմերման, տեղակալման-ցիկլման, պարա-ալկիլման ռեակցիաններ: Առաջարկել է C-ի և H-ի քանակական որոշման կիսաավտոմատ սարք:

Հեղինակ է 170-ից ավելի գիտական հոդվածի և 11 հեղինակային իրավունքի:



ԶԱԽԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐԻ (11.10.1955, Երևան), կենսաքիմիկոս: Կենս. գիտ. դոկ. (2005):

Երևանում ավարտել է դպրոցը, իսկ Կիևում՝ սննդի արդյունաբերության տեխնոլոգիական ինստիտուտը (1979): Աշխատել է ՀՀ ԳԱԱ անօրգանական նյութերի ինստիտուտի ավագ գիտաշխատող (1980-1986), 1986 թ.-ից՝ ՀՀ ԳԱ կենսաքիմիայի ինստիտուտում վերլուծական քրոմատագրության և մասսպեկտրաչափության լաբորատորիայի վարիչ, 2013-2017 թթ.՝ ինստիտուտի տնօրեն, 2017-2020 թթ.՝ տնօրենի պաշտոնակատար: 1992 թ. պաշտպանել է թեկնածուականատենախոսություն:

Աշխատանքները վերաբերում են նեյրոքիմիական հետազոտություններին, պեպտիդների և սպիտակուցների կառուցվածքային առանձնահատկությունների պարզաբանմանը քրոմատագրության և մասսպեկտրաչափության վերլուծական եղանակներով:

Հեղինակ է ուսումնամեթոդական ձեռնարկների և հոդվածների:

ՀՀ կենսաքիմիկոսների (1986 թ.-ից), նյարդաքիմիկոսների (1986 թ.-ից) և Կենսաքիմիկոսների միջազգային (2001) ընկերությունների անդամ:



ԶԱԼԹԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱԿՈՐԻ (22.11.1902, Ղարս – 08.03.1972, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1946), պրոֆ. (1948), ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ (1961), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1961): Ռ. Հ. Չալթիկյանի հայրը:

Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի) ավարտել է միջնակարգ դպրոցը, իսկ 1927 թ.՝ ԵՊՀ գյուղատնտեսական ֆակուլտետի քիմիայի բաժինը: Միաժամանակ սովորել է նաև համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետում և 1927 թ. համալսարանը ավարտել է քիմիկոսի և ֆիզիկամաթեմատիկոսի որակաորումներով և աշխատանքի անցել ԵՊՀ ֆիզիկական քիմիայի ամբիոնում: 1930 թ. գործուղվել է Լենինգրադ և Մոսկվա՝ ստաժավորման: 1931 թ. մեկնել է Գերմանիա և մեկ տարի Մյունխենում զբաղվել ուժեղ էլեկտրոլիտների լուծույթների ջերմադինամիկայի ուսումնա-

սիրությամբ: 1932-1934 թթ. եղել է ԵՊԻ քիմիայի ֆակուլտետի դեկան, պրո-
նեկտոր, ռեկտորի տեղակալ:

1937 թ.-ից աշխատել է միայն ԵՊՀ-ում և 1939 թ.-ից մինչև կյանքի վեր-
ջը ղեկավարել ֆիզիկական քիմիայի ամբիոնը: 1935-ական թթ. գործուն
մասնակցություն է ունեցել Երևանի կաուչուկի գործարանում ԳՀ լաբորատորի-
այի ստեղծման աշխատանքներին:

Գիտական առաջին լուրջ ձեռքբերումը կինետիկական եղանակով բեն-
զոլի պերօքսիդ-երկրորդային ամին ռեակցիաների ուսումնասիրությունն է:
Մոսկվայում զբաղվելով (Կարպովի ինստիտուտում, 1933 թ.) գիտական եր-
կարատես բանավեճի նյութ դարձած մետաղ-վակուում սահմանին պոտեն-
ցիալի թռիչքի գոյության հարցով՝ կարճ ժամանակում լուծել է այն, որի հա-
մար 1934 թ., առանց ատենախոսության ներկայացման, նրան շնորհվել է
քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Գիտական ձեռքբերումներից առանձնապես նշանակալից է ազատ ռա-
դիկալների նոր աղբյուրներ գտնելու, ինչպես նաև այլ մոնոմերների, մասնա-
վորապես վինիլացետատի պոլիմերացման նպատակով ամին-պերօքսիդ
ռեակցիաների մեխանիզմի ուսումնասիրությունը, որի արդյունքների հիման
վրա ԽՍՀՄ կառավարության որոշմամբ 1959 թ. ԵՊՀ-ում ստեղծվեց Պոլի-
մերացման պրոցեսների կինետիկայի պրոբլեմային լաբորատորիա, որի գի-
տական ղեկավարն էր մինչև կյանքի վերջը:

Նրա ստեղծած գիտական դպրոցը լայն ճանաչում է ստացել ՀՀ-ում և
նրա սահմաններից դուրս, որի վկայությունն է 1968 թ. պերօքսիդների քի-
միային նվիրված 4-րդ հերթական համամիութենական գիտաժողովի կազ-
մակերպումը Երևանում:

Հեղինակ է ավելի քան 200 գիտական հոդվածի, «Купрокатализ» (Եր.,
1963, Նյու Յորք, անգլ., 1966) մենագրության, «Ֆիզիկական քիմիա» (Եր.,
1975), «Ֆիզիկական քիմիայի պրակտիկում» (Եր., 1969) ուսումնական ձեռ-
նարկների:

Եղել է Դ. Մենդելեևի անվան համամիութենական քիմիական ընկերու-
թյան ՀՀ բաժանմունքի նախագահ, 1967 թ.-ից մինչև կյանքի վերջը՝ ԵՊՀ
գիտական տեղեկագրի գլխավոր խմբագիր:

1962 թ. պարգևատրվել է Լենինի շքանշանով:



ԶԱԼԹԻԿՅԱՆ ԱՌԻԲԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

(25.03.1949, Երևան – 15.04.2019, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1988), պրոֆ. (2008): Հ. Հ. Չալտիկյանի որդին:

1966 թ. ավարտել է Երևանի թիվ 71 միջնակարգ դպրոցը, 1971 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: 1973 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1971 թ.-ից աշխատել է ԵՊՀ ֆիզիկական քիմիայի ամբիոնում, որտեղ 1975 թ. հիմնել է կոնդենսացված միջավայրերում ընթացող լազերաքիմիական գործընթացների ուսումնասիրման առաջին ԳՀ լաբորատորիան ՀՀ-ում: 1980 թ.-ից կատարել է ԽՍՀՄ գիտության և տեխնիկայի պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող աշխատանքներ: 1990-2008 թթ. եղել է ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար, 2008-2019 թթ.՝ նույն ամբիոնի պրոֆեսոր:

Աշխատանքները վերաբերում են ամին-պերօքսիդ համակարգերի քիմ-լուսարձակման կինետիկայի, լազերային աղբյուրներով խթանված ռադիկալային պոլիմերման գործընթացների և պինդ մակերևույթների ձևափոխման ուսումնասիրմանը, ինչպես նաև նոր համապոլիմերների, պոլիմերային լցոնված և չլցոնված նոր սոսինձների ստացման հարցերին:

Հեղինակ է շուրջ 100 գիտական հոդվածի, արտոնագրի և ուսումնամեթոդական աշխատանքի:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:



ԶԱՄԻՉՅԱՆ (ԶԱՄՉՅԱՆ) ԼՈՒԻՋԻ ՀԱԿՈԲ (ԶԱԿՈՍՈ)

(27.08.1857, Տրիեստ, Իտալիա - 02.01.1922, Բոլոնիա, Իտալիա), քիմիկոս-օրգանիկ: 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի եվրոպական և համաշխարհային քիմիայի զարգացման բնագավառում իր ծանրակշիռ ավանդն ունեցող, աշխարհում լուսաքիմիայի (ֆոտոքիմիայի) հիմնադիր, պիրոլի քիմիայի սկզբնավորող, էմի-

սին սպեկտրոսկոպիայի հիմնադիրներից հայ մեծագույն գիտնական: Փիլ. գիտ. դոկ. (1880): Հայտնի պատմաբան, լեզվաբան Միքայել Չամչյանի (1738-1823) ազգականը:

Չամիչյանի ընտանիքը 1850 թ. Կոնստանտինոպոլսից տեղափոխվել է Տրիեստ: Սովորել է Տրիեստի դպրոցում, ապա 1874 թ. տեղափոխվել Վիեննայի պոլիտեխնիկական ինստիտուտ, սովորել է նաև Վիեննայի համալսարանում, իսկ 1880 թ. ավարտել է Հեսսենի համալսարանը:

24 տարեկանում պարզել է, որ պիրոլները քլորոֆիլի բաղադրիչ են՝ երկրորդային ամին պարունակող օղակավոր կառույցներ: Ստացել է պիրոլի մի շարք ածանցյալներ: 1885 թ. գործընկեր Չիլբերի հետ ստացել է քառայող-պիրոլ, որն ունի ուժեղ վարակամերժ հատկություն, այն անվանել են «յողոլ» և ցայսօր օգտագործվում է որպես յոդոֆորմի փոխարինիչ:

Առաջինն է բացատրել պիրոլի արոմատիկությունը, երկհալոգենկարբենների ներգործությամբ պիրոլային օղակի մեծացումը, որի հետևանքով առաջանում են եռտեղակալված պիրիդիններ և քինոլիններ (Չամիչյանի ռեակցիա): Հետազոտել է (1888-1898) բուսական ծագում ունեցող բազմաթիվ նյութեր, պարզել դրանց կառուցվածքը: Զբաղվել է կենսաքիմիայի հարցերով (լուսասինթեզ, գլիկոզիդների և ալկալոիդների առաջացման մեխանիզմ):

Եղել է Պադուայի (1887 թ.-ից) և Բոլոնիայի (1889 թ.-ից) համալսարանների պրոֆեսոր: Առաջարկել է արևի էներգիայի օգտագործումն արդյունաբերության մեջ, ներդրել սինթեզի լուսաքիմիական եղանակները: Օրգանական նյութերի վրա լույսի քիմիական ներգործության ուսումնասիրությունները (1886-1915) դարձել են լուսաքիմիայի հիմքը: Հայտնաբերել և հետազոտել է բազմաթիվ լուսաքիմիական ռեակցիաներ (չհագեցած միացությունների իզոմերում, պոլիմերում, սպիրտների հետ կետոնների ու ալդեհիդների կոնդեսամբ պինակոնների ստացում ևն): օ-նիտրոբենզալդեհիդի լուսաքիմիական փոխարկումը օ-նիտրոբենզոյական թթվի և նման վերախմբավորումները գիտության մեջ հայտնի են որպես «Չամիչյանի վերախմբավորում»:

1887 թ. շահել է Լինչեի թագավորական ակադեմիայի (աշխարհում հնագույն գիտական ընկերություններից է, գործում է 1603 թ.-ից) մրցանակը: Դարձել է այդ և Իտալիայի ազգային ու մյուս ակադեմիաների անդամ,

Ֆրանսիայի, Պրուսիայի, Բավարիայի, Շվեդիայի, Սանկտ Պետերբուրգի և այլ ակադեմիաների, եվրոպական մի շարք երկրների ու ԱՄՆ-ի քիմիական ընկերությունների անդամ և պատավոր անդամ: Ընտրվել է Իտալիայի կիրառական և ընդհանուր քիմիայի ընկերության նախագահ, 1910 թ.՝ նաև երկրի սենատի անդամ: Ստացել է Սավոյայի պատվո և Ֆրանսիայի պատվո Լեգեոնի շքանշաններ:

Չամիչյանի կիսանդրին կանգնեցված է Բոլոնիայի համալսարանի առջև, նրա անունով է կոչվել Տրիեստի հայկական փողոցը (1922 թ.) և Բոլոնիայի քիմիական ինստիտուտը, որը կառուցվել է նրա մտահղացմամբ: 1979 թ. Իտալիայի քիմիական ընկերության օրգանական քիմիայի բաժանմունքը սահմանել է Չամիչյանի անվան ամենամյա մրցանակ երիտասարդ գիտնականների համար:

Չամիչյանին դասել են ժամանակի հանրահայտ և հզոր գիտնականների շարքը: Նա 9 անգամ ներկայացվել է Նոբելյան մրցանակի, 2 անգամ ժամանակի ամենախոշոր քիմիկոս, Նոբելյան մրցանակի կրկնակի դափնեկիր Էմիլ Ֆիշերի կողմից, սակայն Նոբելյան մրցանակ այդպես էլ չեն տվել:

ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ ՄԿՐՏԻԶԻ (16.11.1924, Վաղարշապատ - ԱՄՆ), նյարդաձևաբան, հյուսվածքաբան-քիմիկոս: Կենսբ. գիտ. դոկ. (1969), պրոֆ. (1988):

Ավարտել է ԵԱԱԻ-ն (1948): 1964-1980 թթ. և 1984-1994 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ Ֆիզիոլոգիայի ԳՀԻ նյարդաձևաբանության և հյուսվածքաքիմիայի լաբորատորիայի վարիչ, 1980-1984 թթ.՝ Հայկական անասնաբուծության ԳՀԻ տնօրեն:

Աշխատանքները վերաբերում են կենդանիների և մարդու անոթային ու նյարդային համակարգերի ձևաբանական և բջջաքիմիական առանձնահատկություններին, հետազոտման նոր եղանակների մշակմանը:

Եղել է ուղեղի ուսումնասիրության միջազգային կազմակերպության (1983-ից) և Նյու Յորքի ԳԱ անդամ (1994): 1996 թ.-ից ապրել է ԱՄՆ-ում:



ՉՈՐԱՆՅԱՆ ԺՈՐԱ ԱՐՄԵՆԱԿԻ (15.02.1944, գ.

Զարդախաչ, Արցախի Մարտակերտի շրջան - 03.12.2018, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2006):

Ավարտել է տեղի դպրոցը: Ծառայել է Խորհրդային բանակում, գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը (1970), իսկ 1974 թ.՝ ՀՀ ԳԱ ՕՔԻ ասպիրանտուրան: 1970-2018 թթ. աշխատել է ՀՀ ԳԱ ՕՔԻ-ում, նախ որպես կրտսեր գիտաշխատող, ապա՝ ավագ գիտաշխատող և լաբորատորիայի վարիչ:

1979թ. պաշտպանել է «Ենինային հալոգենիդների վերականգնիչ դեհալոգիմերման և օքսիդիչ ամինոլիզի ռեակցիաները» թեմայով թեկնածուական թեզ, իսկ դոկտորական թեզի թեման է՝ «Դիենային և ացետիլենային համակարգերի փոխարկումները մանգան- և սնդիկօրգանական միացությունների կիրառմամբ»: Աշխատել է չհագեցած համակարգերի կատալիտիկ փոխարկումների պարզաբանման և բնական կենսակարգավորիչների, այդ թվում ֆերոմոնների սինթեզի ոլորտում:

120-ից ավելի գիտական աշխատության և արտոնագրերի հեղինակ է, նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:



ՉՈՒԽԱՋՅԱՆ ԳԱՌՆԻԿ ԱԼԵՔՍԱՆԻ (28.02.1935,

Լենինական (Գյումրի)), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1972), պրոֆ. (1979), ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1990 թ.-ից):

Ավարտել է ԵՊՀ-ն (1957): 1964-1982 թթ. եղել է Պոլիմերների համամիութենական ԳՀ և նախագծային ինստիտուտի մոնոմերների քիմիայի լաբորատորիայի, 1982-1993 թթ.՝ ԵԲԻ ընդհանուր և կենսաօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են համասեռ և միջֆազային կատալիզի պայմաններում չհագեցած միացությունների ստացման ու փոխակերպման ռեակցիաներին: Մշակել և բժշկության մեջ ներդրել է երկշերտ, ինքնա-

կաչող կենսահամատեղելի թաղանթներ, սպունգներ, սոսինձներ, հակաայր-վաճքային քսուքներ և այլ միջոցներ:

1994 թ.-ից ապրում է Մոսկվայում:



ՉՈՒԽԱԶՅԱՆ ԷՄՄԱ ՀՈՎՍԵՓԻ (06.01.1938, Լե- նինական (Գյումրի)), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1985), պրոֆ. (1992):

Ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը (1962) և աշ-խատանքի անցել ՀՀ ԳԱԱ ՕՔԻ ամինաթթուների լաբո-րատորիայում, 1986 թ.-ից՝ առաջատար գիտաշխատող, 2008 թ.-ից՝ լաբորատորիայի վարիչ: 1971 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

Աշխատանքները վերաբերում են հիմքով կատալիզվող չհագեցած ամո-նիումային աղերի դիենային սինթեզի տեսակ ներմուլեկուլային ցիկլմանը, որն ունի կենսակտիվ իզոմերոլիսիումային, երկհիդրոդիզոնդիլիսումային աղերի և դրանց կոնդենսված համակարգերի սինթեզի մեծ հնարավորու-թյուններ, ինչը նոր ուղղություն է միջմուլեկուլային դիենային սինթեզի բնա-գավառում: Մշակվել է արդյունաբերության և բժշկության մեջ լայն կիրառում ունեցող պ-տերֆենիլի և իր ածանցյալների սինթեզի մատչելի եղանակ:

Հեղինակ է 150-ից ավելի գիտական աշխատության: Նրա ղեկավարու-թյամբ պաշտպանվել է թեկնածուական 9 ատենախոսություն:

Եղել է գիտական և մասնագիտական խորհուրդների անդամ:

Ստացել է ՀՀ ԳԱ մրցանակ (1988), ՀՀ ԳԱԱ գովեստագիր (2003): Ընդգրկվել է «Ով ով է աշխարհում» համաշխարհային կենսագրական հան-րագիտարանի (ԱՄՆ), ինչպես նաև Քեմբրիջում (Մեծ Բրիտանիա) հրա-տարակվող միջազգային կենսագրական հանրագիտարանի մեջ:



ՊԱՐՈՆԻԿՅԱՆ ԵՐՎԱՆԴ ԳԱՌՆԻԿԻ (14.10.1951, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1997), պրոֆ. (2003):

1973 թ. ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: 1973-1975 թթ. ծառայել է Խորհրդային բանակում: 1975 թ. ընդունվել է ՀՀ ԳԱԱ ՆՕՔԻ ասպիրանտուրան և

1980 թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն:

1978 թ.-ից աշխատում է ՆՕՔԻ-ում, 2015թ.-ից՝ լաբորատորիայի վարիչ: 1991 թ.-ից դասավանդում է Հայկական բժշկական ինստիտուտում, 2014 թ.-ից՝ ամբիոնի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են տարացիկիկ միացությունների, մասնավորապես, համակցված պիրոլի և պիրիդինի ածանցյալների սինթեզի, քիմիական հատկությունների և կենսաբանական ակտիվության հարցերին: Հայտնաբերել է նոր վերախմբավորումներ, մշակել նոր տարացիկիկ համակարգերի ստացման եղանակներ, իրականացրել է բարձր արդյունավետությամբ օժտված կենսաբանորեն ակտիվ միացությունների նպատակային սինթեզ:

Հեղինակ է 200-ից ավելի գիտական աշխատանքների, որոնցից 35-ը հեղինակային իրավունքներ են և արտոնագրեր: Միջազգային գիտաժողովներում լավագույն զեկուցումների համար նա արժանացել է ոսկե մեդալի և դիպլոմների: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն: Եղել է մի շարք դրամաշնորհային ծրագրերի ղեկավար: Տարացիկիկ քիմիայի զարգացման ասպարեզում ունեցած ավանդի համար՝ «Գիտական համագործակցություն» միջազգային ֆոնդի, Մոսկվայի պետական համալսարանի և Ռուսաստանի քիմիական ընկերության կողմից 2008 և 2015 թթ. պարգևատրվել է դիպլոմով և ոսկե մեդալով:

Եղել է գիտական և մասնագիտական խորհուրդների, Նյու Յորքի ԳԱ (1995) և Ռուսաստանի բնական ԳԱ (2011) անդամ:



ՊԵՏՐՈՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ ԼԵՎՈՆԻ (05.08.1925, Երևան – 12.04.2014, Երևան), քիմիկոս-տեխնոլոգ: Տեխ. գիտ. դոկ. (1980):

Ավարտել է ԵՊԻ-ն (1947): 1982 թ.-ից աշխատել է Խաղողագործության, գինեգործության և պտղաբուծության ԳՀԻ կոնյակի տեխնոլոգիայի լաբորատորիայի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են կոնյակի և մադերայի տեսակի գինու և գինենյութի արտադրության զարգացման, քիմիայի և տեխնոլոգիայի հարցերին: Բացահայտել է կոնյակի սպիրտների և մադերացվող գինենյութի

հասունացման ընթացքում օքսիդացման որոշ գործընթացների մեխանիզմները, կոնյակի սպիրտի, մադերացվող գինու և գինեչյութի հասունացման, այդ գործընթացների արագացման, կայուն քիմիական բաղադրությամբ բարձրորակ արտադրանքի ստացման նոր տեխնոլոգիաներ:

Եղել է Խաղողագործության և գինեգործության միջազգային ակադեմիայի անդամ (1998): Արժանացել է Ֆրանսիայի «Պատվո Տիկին» տիտղոսի (1972):

Հեղինակ է «Азот в коньяке» (Е., 1975) մենագրության:



ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՀԳԵՆ ԱԶԱՏԻ (17.10.1942,

Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1995):

1949-1959 թթ. սովորել է Երևանի Մ. Գորկու անվան դպրոցում, 1959-1965 թթ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում, 1967-1970 թթ.՝ Մոսկվայի տեքստիլ ինստիտուտի ասպիրանտուրայում: 1972 թ. պաշտպանել է թեկնածուականատենախոսություն «Ակրիլոնիտրիլը իզոպրենի հետ համապոլիմերների և պոլիակրիլոնիտրիլը բուսադիենիտրիլային կաուչուկի հետ խառնուրդների հիման վրա մանրաթելերի ստացումը և դրանց հատկությունների ուսումնասիրությունը» թեմայով (տեխ. գիտ. թեկնածու), իսկ դոկտորականի թեման է՝ «Մի շարք չհագեցած պոլիմերների ձևափոխությունը հալոգենացմամբ ամիդային լուծիչների ներկայությամբ և ամիդհալոգեն կոմպլեքսներով»:

Աշխատել է «Նաիրիտ» ԳԱՄ-ի կազմում պոլիմերների ՀԳՀ-ում կրտսեր (1965-1967) և ավագ (1970-1973) գիտաշխատող, Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) պոլիմերային սոսինձների համամիութենական ԳՀ ինստիտուտում (1973-1981) լաբորատորիայի վարիչ և բաժնի վարիչ, Երևանի կաշվի արտադրական միավորմանը կից ճյուղային ԳՀ կենտրոնի ղեկավար (1982-1989), ՀԽՍՀ թեթև արդյունաբերության նախարարության նախագծակոնստրուկտորական բաժնի պետ (1989-1992), Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ (1993-1996), «Կանաչ Երևան» համազգային բարեգործական հիմնադրամի հիմնադիր նախագահ (1993-2008), ՀՀ գյուղատնտեսական ակադեմիայի ռեկտորի գիտության գծով խորհրդական (2001-2003):

Ակտիվորեն մասնակցել է ՀՀ հասարակական աշխատանքներին (2008 թ.-ից «Նոյի զավակներ» ԲՀԿ նախագահ, 1990-1993 թթ. Երևանի քաղաքային խորհրդի պատգամավոր, «Մայրաքաղաք» պատգամավորական խմբի նախագահ, ՀՅԴ խմբակցության նախագահ):

Աշխատանքները վերաբերում են ամիդային լուծիչների ներկայությամբ պոլիմեր-նմանակ փոխարկումներով նոր բարձրամոլեկուլային միացությունների սինթեզին, որի հիման վրա ստեղծվել են պոլիմերային սոսինձներ և ներդրվել արդյունաբերության մեջ: Մշակել է Երևանի աղբավայրերում առաջացող կենսազագի նպատակային օգտագործման ծրագիր:

Հեղինակ է 130 գիտական աշխատության, այդ թվում 40 պատենտների, որոնք ներդրվել են նախկին ԽՍՀՄ արդյունաբերական ձեռնարկություններում: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 2 ատենախոսություն: Էկոլոգիայի միազգային (1996), ՌԴ բնական (1998) ԳԱ-ների անդամ:



ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱԼԵՐԻ ՍԱՄՍՈՆԻ (07.03.1942, Բաքու), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1979), պրոֆ. (1981), ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2008):

1959-1964 թթ. սովորել է ՄՊՀ քիմիայի բաժնում, առաջին կուրսում ծանոթացել է հանրահայտ գիտնական Օ. Ռեուտովի հետ և սովորելուն զուգընթաց աշխատել նրա ղեկավարած ԳՀ լաբորատորիայում: Այնուհետև սովորել է ասպիրանտուրայում և 1967 թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն և աշխատել Օ. Ռեուտովի լաբորատորիայում: Միաժամանակ դասավանդել է ՄՊՀ-ում: 1971 թ. դարձել է ավագ գիտաշխատող, 1974 թ.՝ դոցենտ: 1976 թ. գիտահետազոտական աշխատանք է կատարել Փասադենայի Կալիֆոռնիայի համալսարանում: 1988 թ.-ից ղեկավարել է ՄՊՀ քիմիական ֆակուլտետի ֆիզիկական օրգանական քիմիայի լաբորատորիան: 1975 թ.-ից մեծ ծավալի աշխատանք է կատարել էկոլոգիայի ոլորտում, հատկապես ջրի էկոլոգիայի բնագավառում: Մեծ ջանքեր է ներդրել քիմիայի և էկոլոգիայի ոլորտի զարգացման գործում, սերտորեն համագործակցել է ՀՀ գիտական շրջանակների համապատասխան մասնագետների հետ:



ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ ՊՈՂՈՍԻ (17.04.1886, Թիֆլիս – 28.02.1937, Երևան, անհատի պաշտամունքի գոհ), Ճարտարագետ-տեխնոլոգ, քիմիկոս:

1906 թ. ավարտել է Թիֆլիսի 2-րդ արական գիմնազիան: Բարձրագույն կրթություն ստացել է Լայպցիգի համալսարանում՝ ավարտելով փիլիսոփայական ֆակուլտետի քիմիայի բաժինը: 1912 թ. պաշտպանել է ատենախոսություն: 1912-1914 թթ. աշխատել է Դարմշտադտի փորձնական գործարաններում որպես կաշվի տեխնոլոգիայի գծով հրահանգիչ, 1914-1917 թթ.՝ Մոսկվայում որպես քիմիական լաբորատորիայի վարիչ, 1918-1921 թթ.՝ Կրասնոդարում և Ռոստովում որպես կաշվի արտադրության գլխավոր մասնագետ և տեխնիկական ղեկավար: 1920-1921 թթ. Ռոստովում կազմակերպել է կաշեգործների նահանգային վերապատրաստման դասընթացներ:

1921 թ.-ից տեղափոխվել է Երևան և դարձել կաշվի առաջին գործարանի տեխնիկական աշխատանքների գծով տնօրեն: 1924 թ.-ից քիմիական տեխնոլոգիայի դասընթաց է վարել ԵՊՀ-ում, ապա՝ ԵՊԻ-ում: 1934-1937 թթ. եղել է ԵՊԻ քիմիական ֆակուլտետի ղեկան, միաժամանակ ԵՊՀ քիմիական ֆակուլտետում վարել տեխնոլոգիայի դասընթաց:

Գիտահետազոտական աշխատանքները, հիմնականում ունենալով կիրառական բնույթ, նվիրված էին հատկապես օրգանական նյութերի տեխնոլոգիային և սերտորեն կապված էին ՀՀ քիմիական արդյունաբերության հետ:

1937 թ. նոյեմբերի 3-ին ձերբակալվել է հակահեղափոխական, տրոցկիստական-ֆաշիստական ագիտացիա անելու մեղադրանքով: 1938 թ. փետրվարի 28-ին դատապարտվել է մահապատժի:

1956 թ. արդարացվել է. գործը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով:

ՊՏՈՒԿՅԱՆ ԶԱՐԵՀ (09.08.1911, ք. Սեբաստիա - 29.06.2001, Նյու Յորք), դրամագետ, քիմիկոս:

Սովորել է Սոֆիայի Մեթրոպոլիտան ճեմարանում: 1926 թ. տեղափոխվել է Կանադա: Ավարտել է Մոնրեալի համալսարանը (1936): Եղել է Կոլումբիայի (ԱՄՆ) համալսարանի աղյունկոտ-պրոֆեսոր:

Զբաղվել է հայկական և Հայաստանին առնչվող օտար դրամների հավաքմամբ ու ուսումնասիրությամբ: 1962 թ.՝ անգլերեն, 1963 թ.՝ հայերեն լույս է տեսել նրա՝ կիլիկյան դրամների վերաբերյալ աշխատությունը, որտեղ առաջին անգամ քննության է առել 10500 ոսկե, արծաթե և պղնձե դրամներ (լրացումներով վերահրատարակել՝ 1979): Կազմել է Արտաշեսյան արքայատոհմի ցանկը, ներկայացրել նրանց թողարկած դրամները:

Առանձին աշխատություն է նվիրել հռոմեական դրամների ու շքադրամների այն խմբին, որոնք առնչվում են Հայաստանին:

Հեղինակ է՝ «Կիլիկեան Հայաստանի դրամները» (Վեն., 1963); «Արտաշեսեան հարստութեան դրամները» (Վեն., 1969); «Հայաստանի վերաբերեալ հռոմէական դրամներ եւ մեդալիոններ» (Վեն., 1971):

ԶԱՎՈՒԿՑՅԱՆ ՍԵՅՐԱՆ ԳԵՎՈՐԳԻ (05.06.1934, գ. Շահնազար, (Մեծավան, Լոռու մարզ) - 21.08.2005, Երևան), քիմիկոս: Տեխ. գիտ. դոկ. (1987):

Ավարտել է ԵՊՀ-ն (1959): 1960-1964 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ ՕՔԻ-ում, 1964-1966 թթ.՝ Կալինինոյի (Տաշիր) էմալապատման գործարանում: Սովորել է Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) տեխնոլոգիական ինստիտուտի ասպիրանտուրայում և պաշտպանել թեկնածուական թեզ (1970): 1970-1975 թթ. աշխատել է Երևանի էլեկտրավակուումային ապարատների ինստիտուտում, 1975-1989 թթ.՝ Լենինգրադի տեխնոլոգիական ինստիտուտում, 1989-1993 թթ.՝ Երևանի Նյութաբանության ինստիտուտի ձեռնարկության լաբորատորիայի վարիչ, 1992-1998 թթ.՝ տնօրեն: ԽՍՀՄ բյուրեղանման նյութերի կոորդինացման խորհրդի (1991), ԵՊՀ քիմիայի գծով մասնագիտական խորհրդի (1994-1999) անդամ, ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր (1990-1995 թթ.): Հատուկ մասնագիտական առարկաներ է վարել ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնում (1992-2004 թթ.):

Աշխատանքները վերաբերում են գծային ընդարձակման ջերմային բարձրարժեք գործակից ունեցող մետաղների համար ապակենման և սիտալային (ապակեբյուրեղային նյութերի) զոդերի և ծածկերի ստացմանը:

ԶՐԱՂԱՏՊԱՆՅԱՆ ՄԻՍԱԿ ԱՌԱՔԵԼԻ (13.01.1947, Երևան), քիմիկոս-տեխնոլոգ: Տեխ. գիտ. դոկ. (1987):

Ավարտել է ԵՊԻ-ն (1971): 1977-1991 թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ ՕՔԻ օրգանական սինթեզի տեխնոլոգիայի լաբորատորիայի վարիչ: 1991 թ.-ից ապրում է ԱՄՆ-ում: 1992-2000 թթ. աշխատել է Լոս Անջելեսի «Էքսոն» ֆիրմային կից Սպինթեկ արդյունաբերական գտման ընկերության հետազոտող գիտնական:

Աշխատանքները վերաբերում են նուրբ օրգանական սինթեզի տեխնոլոգիայի բնագավառին, առանձին նյութերի ստացման տեխնոլոգիական խնդիրներին: Զբաղվել է նաև թափոնաջրերը տարատեսակ յուղերից մաքրման հարցերով, առաջարկել է դրանց բաժանման արդյունավետ եղանակներ և տեխնոլոգիական լուծումներ:

Ամերիկյան քիմիական ընկերության անդամ է (1994 թ.-ից):



ՌՈՏԻՆՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԼԵՎՈՆԻ (13.08.1913, Ս. Պետերբուրգ – 30.03.1991, Լենինգրադ), քիմիկոս: Տեխ. գիտ. դոկ. (1952), պրոֆ. (1961): Լ. Ա. Ռոտինյանի որդին:

Ավարտել է Նովոչերկասկի (Ռուսաստան) ճարտարագիտական ինստիտուտը (1936): 1936-1941 թթ. աշխատել է նույն ինստիտուտում, 1945-1961 թթ.՝ «Գիպրոնիկել» նախագծային ՀամԳՀԻ-ում (1954 թ.-ից՝ փոխտնօրեն): 1961-1991 թթ.՝ Լենինգրադի տեխնոլոգիական ինստիտուտի էլեկտրաքիմիական արտադրությունների տեխնոլոգիայի ամբիոնում, 1971 թ.-ից՝ վարիչ:

Աշխատանքները վերաբերվում են տեսական և կիրառական էլեկտրաքիմիայի հարցերին, մասնավորապես էլեկտրոդային երևույթների կինետիկայի, իոնների համատեղ լիցքաթափման տեսությանը, ոչ ջրային լուծույթներում ընթացող էլեկտրաքիմիական գործընթացներին և էլեկտրաքիմիական տեխնոլոգիական գործընթացների տեսության հիմնավորմանը:

Ստացել է ԽՍՀՄ Պետական մրցանակ (1949):

Համահեղինակ է՝ «Оптимизация производства хлора» (Մ., 1980); «Теоретическая электрохимия» (Պ., 1981):



ՌՈՏԻՆՅԱՆ ԼԵՎՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ (22.05.1879, Թիֆլիս – 30.12.1964, Երևան), ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1948), պրոֆ. (1925), ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ: Հայաստանում քիմիկական բարձրագույն կրթության հիմնադիրներից: Ա. Լ. Ռոտինյանի հայրը:

1898 թ. ավարտել է տեղի 3-րդ գիմնազիան, 1903 թ.՝ Սանկտ Պետերբուրգի համալսարանի բնագիտական ֆակուլտետի ֆիզիկամաթեմատիկական բաժինը, ստացել անօրգանական և ֆիզիկական քիմիայի մասնագետի որակավորում և դարձել տեղի Պոլիտեխնիկական ինստիտուտի ֆիզիկական քիմիայի և տեսական էլեկտրաքիմիայի ամբիոնի ասիստենտ (1903-1917): Այդտեղ էլ կազմել է ֆիզիկական քիմիայի գործնական աշխատանքների առաջին ձեռնարկը Ռուսաստանում: 1904-1907 թթ. եղել է Գերմանիայում՝ գիտական գործուղման:

1918-1920 թթ. եղել է Թիֆլիսի համալսարանի անօրգանական քիմիայի ամբիոնի դոցենտ, 1921 թ.՝ Ալավերդու պղնձածուլական գործարանի կենտրոնական լաբորատորիայի վարիչ, 1922-1927 թթ.՝ ՀԽՍՀ հողժողովման և ժողտնտխորհի կենտրոնական լաբորատորիայի անօրգանական քիմիայի բաժնի վարիչ: 1923 թ. հրավիրվել է ԵՊՀ որպես անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ, ապա՝ մինչև 1938 թ. եղել ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչ: Նա փաստորեն ԵՊՀ-ում հիմնել է անօրգանական, անալիտիկ և ֆիզիկական քիմիաների ամբիոնները և եղել է դրանց վարիչը, ինչպես նաև ԵՊՀ-ում կազմակերպել է ֆիզիկական ու կոլոիդ քիմիայի, տեսական էլեկտրաքիմիայի և տեխնոլոգիայի ամբիոնները միաժամանակ լինելով նաև դրանց վարիչը (1930-1938):

Հայաստանում ֆիզիկական քիմիայի դպրոցի հիմնադիրն է, գործուն մասնակցություն է ունեցել ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի քիմիայի ինստիտուտի կազմակերպմանը և մինչև 1938 թ. ղեկավարել ֆիզիկական քիմիայի բաժինը: 1943-1946 թթ. եղել է Վանաձորի (Կիրովականի) քիմիական կոմբինատի գործարանային կենտրոնական լաբորատորիայի հետազոտական բաժնի վարիչ:

1948 թ. ԽՍՀՄ ԳԱ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի գիտական խորհուրդը, առանց ատենախոսության պաշտպանության, նրան

շնորհել է քիմիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Եղել է Գանձակի (Կիրովաբադ) գյուղատնտեսական ինստիտուտի անօրգանական քիմիայի ամբիոնի հիմնադիրը և վարիչը (1946-1948), իսկ անարդարացի աքսորի ժամանակ՝ Չաուշական գյուղատնտեսական ինստիտուտի անօրգանական քիմիայի ամբիոնի հիմնադիրը և առաջին վարիչը (1948-1953): Աքսորից վերադառնալուց հետո գլխավորել է ՀԽՍՀ ժողտնտխորհի քիմիայի ԳՀԻ ֆիզիկական քիմիայի բաժինը (1953-1960):

Աշխատանքները վերաբերում են քիմիական ջերմադինամիկայի, անիզոտրոպ հեղուկների, քիմիական միացությունների և դրանց ելանյութերի կրիտիկական ջերմաստիճանների փոխադարձ կապի, մաքուր նյութերի մակերևութների ուսումնասիրմանը: Հեղուկ ծծմբի մածուցիկության վերաբերյալ նրա ստացած տվյալները 1920 թ. ստուգել և հաստատել են անգլիացի գիտնականներ Ֆերալը և Մակլեոդը, որոնք օգտագործվում են տեղեկատվական գրականության մեջ և ֆիզիկական քիմիայի դասագրքերում: Առաջինը մեծ ճշտությամբ որոշել է (Վ. Սուխովսկու հետ) սնդիկի, ծարիրի և ալյումինի հալոգենիդների կրիտիկական ջերմաստիճանները: Հեղուկ և դրան հարակից գազային ու բյուրեղային վիճակների մակերևութների նրա հետազոտություններն իրավամբ դասվում են համաշխարհային գիտական գրականության մեջ հայտնի նմանատեսակ լավագույն ուսումնասիրությունների շարքը: Նրա աշխատանքներից վեցը նվիրված են հալված բազալտների բյուրեղացման և թրծման պայմանների ուսումնասիրմանը: ՀԽՍՀ հանքային և ոչ հանքային ապարների ուսումնասիրությունները (1922-1927) հնարավոր դարձրին ցեմենտի և կարբիդի արտադրության կազմակերպումը: Հիմնարար աշխատանքներ է կատարել ճահճային հողերի հողաբարելավման ուղղությամբ:

1938 թ. հունիսի 17-ին ձերբակալվել է արտասահմանյան պետություններից մեկի հետախուզական գործակալ լինելու մեղադրանքով: 1939 թ. սեպտեմբերի 6-ին դատապարտվել է 10 տարվա ազատազրկման ուղղիչ աշխատանքային գաղութում: 1941 թ. սեպտեմբերի 3-ին գործը վերանայվել է, պատիժը փոխարինվել 5 տարի Ղազախստան աքսորով: Աքսորավայրում գտնվելու ժամանակ՝ «Մետաղների արդյունաբերական ստացման տեխնոլոգիական պրոցեսների մշակում և յուրացում» աշխատանքի ղեկավարման համար 1950 թ. ստացել է ԽՍՀՄ պետական մրցանակ:



ՍԱՀԱԿՅԱՆ ԼԻՂԱ ԱՐՇԱԿԻ (08.04.1941, գ. Թթուջուր, Գեղարքունիքի մարզ), քիմիկոս: Մանկավարժական գիտ. դոկ. (2004), պրոֆ. (1997), ՀՀ մանկավարժական ԳԱ անդամ (2007), ՀՀ վաստակավոր մանկավարժ (2014):

1959-1965 թթ. սովորել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում, 1965-1968 թթ. ԵՊՀ ասպիրանտուրայում, 1969 թ. պաշտպանել է քիմիայի գծով թեկնածուական թեզ: 1968 թ.-ից աշխատում է ԵՊԲՀ-ում, 1996 թ.-ից՝ ԵՊԲՀ դեղագիտության ֆակուլտետի քիմիայի ամբիոնի վարիչ:

Գիտական ուղղություններն են՝ կենսաբանորեն ակտիվ նյութերի սինթեզ և ակտիվության ուսումնասիրում, նոր ջրալուծ կատիոնային և ամֆիֆիլ մետաղապորֆիրինների սինթեզ և հակաքաղցկեղային ակտիվության *in vitro* ուսումնասիրում, քիմիայի դասավանդման մեթոդաբանություն:

Հեղինակ (համահեղինակ) է ավելի քան 270 գիտակրթական հրատարակումների, այդ թվում՝ 20-ից ավել դասագրքի, 12 հեղինակային իրավունքի և 6 գյուտի: «Քիմիայի շտեմարաններ»-ի գլխավոր խմբագիր և համահեղինակ: ԲՈՀ-ի 02 մասնագիտական խորհրդի, ԵՊԲՀ և ԵՊԲՀ դեղագիտության ֆակուլտետի խորհուրդների անդամ, «Բնագետ» ամսագրի քիմիայի բաժնի պատասխանատու խմբագիր, «Բժշկություն, գիտություն և կրթություն» գիտատեղեկատվական հանդեսի և «Մանկավարժական միտք» ամսագրի խմբագրական խորհուրդների անդամ, 1997, 2006, 2015 թթ. քիմիայի միջազգային Մենդելևյան օլիմպիադայի ժյուրիի և 1995-2018 թթ. քիմիայի առարկայական հանրապետական օլիմպիադայի ժյուրիի նախագահ, 2005-2018 թթ. միջազգային օլիմպիադայի ՀՀ թիմի ղեկավար:

Պարգևատրվել է՝ 2010 թ.՝ ԵՊԲՀ հոբեյանական Ոսկե կրծքանշան և Ոսկե մեդալ, 2000 թ.՝ ՀՀ ԿԳՆ, 2006 թ.՝ ՌԴ քիմիական կրթության ընկերության և 2006 թ.՝ ԼՂՀ Լաչինի անկախության 15-ամյակի Ոսկե մեդալներ: Диплом Ассоциации по химическому образованию РФ за большой вклад в проведении 31 Менделеевской олимпиады по химии (председатель жюри):

Հնորհակալագրեր և պատվոգրեր. 2010 թ.՝ ՀՀ վարչապետի., 2003 թ.՝ ՀՀ ԳԱԱ նախագահի, 2002, 2003, 2009 թթ.՝ Երևանի քաղաքապետի,

2002, 2004, 2008 թթ.՝ ՀՀ ԿԳՆ, 2004 թ.՝ Մոսկվայի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետի:



ՍԱՀՐԱԴՅԱՆ ՍԻԼՎԱ ԻՍՐԱՅԵԼԻ (17.07.1947, գ. Լավի, Իջևանի շրջան), քիմիկոս-տեխնոլոգ: Տեխ. գիտ. դոկ. (2006), պրոֆ. (2010):

Ավարտել է Երևանի սննդարդյունաբերության տեխնիկումը (1964), ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը (1969) և նշանակվել ֆակուլտետի օրգանական քիմիայի ամբիոնի լաբորանտ: 1970-1972 թթ. աշխատել է Երևանի Կուրորտոլոգիայի և ֆիզիոթերապիայի ինստիտուտի հանքային ջրերի հետազոտման լաբորատորիայում որպես կրտսեր գիտաշխատող: 1972 թ. ընդունվել է ՄՊՀ անալիտիկ քիմիայի ամբիոնի ասպիրանտուրան և 1975 թ. պաշտպանել թեկնածուականատենախոսություն և աշխատել այդ ամբիոնում որպես կրտսեր գիտաշխատող: 1973-1975 թթ. սովորել է Մոսկվայի մարքսիզմ-լենինիզմի համալսարանում: 1975 թ.-ից աշխատել է ԵԺՏ-ի պարենային ապրանքների ապրանքագիտության ամբիոնում ավագ դասախոս, 1979 թ.-ից՝ դոցենտ, 2010-2017 թթ.՝ պրոֆեսոր, 2012-2016 թթ.՝ ԵԺՏԻ ապրանքագիտության և տեխնոլոգիայի ամբիոնի վարիչ: Որպես պրոֆեսոր 2016-2019 թթ. աշխատել է ԵԺՏԻ կոմերցիայի և բիզնեսի ամբիոնում, իսկ 2019 թ.-ից՝ ՀԱԱՀ-ում:

Աշխատանքները վերաբերում են սննդամթերքի որակի, պահունակության և անվտանգության ապահովման և դրանց վրա տարբեր գործոնների ազդեցության ուսումնասիրմանը: Սննդամթերքի պահպանման մշակված ռադիուրացման եղանակները ներդրվել են ՀՀ սննդարդյունաբերության տարբեր ձեռնարկություններում: Գամմա ճառագայթների ազդեցությամբ էապես բարելավել է կոնյակի պահունակությունը և բնական կլանիչների ու գամմա ճառագայթների միջոցով նպաստել հիվանդ գինիների և գինեյութերի բուժմանը, ինչպես նաև պղտոր գինիների ու գարեջրատեսակների պարզեցմանը և կորուստների նվազմանը:

Անդամ է մասնագիտական և գիտական խորհուրդների, մասնակցել է տասնյակ միջազգային գիտաժողովների: Հեղինակ է 120-ից ավելի գիտա-

կան և ուսումնամեթոդական աշխատության, այդ թվում 9 ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 1 ատենախոսություն:



ՍԱՅԱԴՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԳԵՐԱՍԻՄԻ

(23.07.1909, Նախիջևան – 08.02.1991, Երևան), քիմիկոս, տեխնոլոգ, ճարտարագետ: Տեխ. գիտ. թեկնածու (1944), դոցենտ (1945), ՀՍՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ (1970):

Ծնվել է Նախիջևանում գինեգործի ընտանիքում, 1918 թ. գաղթի ճանապարհին կորցրել է ծնողներին և մինչև հասուն տարիքը ապրել հորաքրոջ խնամքի տակ Երևանում: 1927 թ. ավարտել է Էջմիածնի միջնակարգ դպրոցը և 1927-1930 թթ. իր ծննդավայր Նախիջևանում աշխատել է որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ: 1930 թ. ընդունվել է Երևանի Շինարարական ինստիտուտ, այնուհետև ուսանել է ԵՊԻ քիմիատեխնոլոգիական ֆակուլտետում: 1934-1935 թթ. ուսումը շարունակել է Լենինգրադի քիմիատեխնոլոգիական ինստիտուտում, ապա վերադարձել է Երևան և 1936 թ. ավարտել ինստիտուտը՝ ճարտարագետ-տեխնոլոգի որակավորումով (կաուչուլի և օրգանական սինթեզի գծով): Դեռևս ուսանողական տարիներին աշխատել է պրոֆ. Ս. Ղամբարյանի լաբորատորիայում՝ միաժամանակ դասավանդելով բուհում: 1936-1939 թթ. աշխատել է Երևանի «Կաուչուլի» գործարանում որպես նախագծային բաժնի գլխավոր տեխնոլոգ: 1939 թ. մինչև կյանքի վերջը՝ 1991 թ., աշխատել է ԵՊԻ-ում: 1939-1941 թթ. եղել է ԵՊԻ սինթետիկ կաուչուլի և օրգանական նյութերի սինթեզի տեխնոլոգիայի ամբիոնի ավագ դասախոս, 1941-1944 թթ.՝ ընդհանուր քիմիական տեխնոլոգիայի ամբիոնի վարիչ: 1945-1976 թթ. ղեկավարել է ԵՊԻ հիմնական օրգանական նյութերի սինթեզի տեխնոլոգիայի ամբիոնը: 1961-1985 թթ. եղել է նշված ամբիոնին կից պրոբլեմային լաբորատորիայի հիմնադիր-վարիչը:

Հեղինակ է ավելի քան 80 գիտական աշխատության, 22 գյուտի, որոնց մի մասը ներդրվել է Երևանի կաուչուլի գործարանի արտադրության մեջ՝ 1940-1972 թթ.: Դրանցից են՝ քլորբենզոլի ստացման անընդհատ եղանակը,

հեքսաքլորէթանի, քլորոպրենային կաուչուկի թափոններից սինթետիկ լաքի և օլիֆի, մեթիլացետատ-մեթանոլ-ջուր խառնուրդներից նատրիումի ացետատի, պոլիվինիլացետալների (կատարելագործված եղանակ) և երկալիլցիանամիդի ստացման տեխնոլոգիաները: Նրա ղեկավարությամբ պատրաստվել են գիտությունների 10 թեկնածու և 2 դոկտոր:



ՍԱՂՅԱՆ ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ (07.04.1957, գ. Չափար,

Մարտակերտի շրջան, Արցախի Հանրապետություն), քիմիկոս/կենսատեխնոլոգ: Քիմ. գիտ. դոկ. (1997), պրոֆ. (2003), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (2010), ՀՀ գիտության վաստակավոր գործիչ (2014):

1973 թ. ավարտել է Չափարի միջնակարգ դպրոցը, 1978 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, 1984 թ.՝ ԽՍՀՄ ԳԱ Ա. Նեսմեյանովի անվան էլեմենտորգանական միացությունների ինստիտուտի ասպիրանտուրան (ք. Մոսկվա): 1985 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1978 թ. աշխատանքի է անցել ԽՍՀՄ մանրէաբանական արդյունաբերության նախարարության գենետիկայի համամիութենական ԳՀԻ Չարենցավանի մասնաճյուղում, որը 1981 թ. վերանվանվել է Ամինաթթուների տեխնոլոգիական ԳՀԻ (ք. Երևան): Վերջինիս հենքի վրա 1992 թ. ստեղծվել է «Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կազմում, որտեղ նա աշխատել է մինչև 2010 թ. որպես կրտսեր և ավագ գիտաշխատող (1985-1988 թթ.), այնուհետև Ասիմետրիկ սինթեզի լաբորատորիայի վարիչ (1988-2000 թթ.), 2000 թ.-ից՝ ինստիտուտի տնօրեն: 2010 թ. «Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ և ՀՀ ԳԱԱ Միկրոբիոլոգիայի ինստիտուտի միավորման ՀՀ ԳԱԱ կազմում կազմավորվել է «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ-ը, որի տնօրեն է ընտրվել Ա. Սաղյանը:

1996 թ.-ից աշխատել է նաև ԵՊՀ-ում որպես անօրգանական քիմիայի ամբիոնի ավագ գիտաշխատող (1996-1998), դեղագործական քիմիայի ամբիոնի պրոֆեսոր (1998-2003) և ամբիոնի վարիչ (2003-2016), իսկ 2016 թ.-ից՝ դեղագործական քիմիայի ամբիոնի հենքի վրա ստեղծված ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն:

Հեղինակ է 400-ից ավելի գիտական աշխատության, նվիրված ոչ սպիտակուցային ամինաթթուների ասիմետրիկ սինթեզի, պեպտիդային սինթեզի և կենսաբանորեն ակտիվ միացությունների անջատման ու մաքրման հիմնախնդիրներին: Մշակել է ամինաթթուների ասիմետրիկ սինթեզի համապիտանի տեխնոլոգիա, սինթեզվել են 200-ից ավել նոր օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուներ և դրանցից կազմված պեպտիդներ՝ կողային ռադիկալներում տարաբնույթ ալիֆատիկ, արոմատիկ, տարացիկլիկ և չհագեցած խմբերի պարունակությամբ: Մշակել է նաև մանրէաբանական սինթեզի կուլտուրալ հեղուկներից պրոլինի անջատման արդյունավետ տեխնոլոգիա, որը ներկայումս ներդրված է արդյունաբերական գործընթացներում:

Հեղինակ է՝ «Ամինաթթուների, պեպտիդների և սպիտակուցների քիմիա» (Եր. 2010 թ., 2015 թ.); «Կենսատեխնոլոգիա» (Եր., 2013 թ.) դասագրքերի, «Энантиомерно чистые небелковые аминокислоты: способы получения» (Москва, 2010 г.); Ashot Saghyan, Peter Langer//Asymmetric synthesis of non-proteinogenic amino acids (Wiley-VCH, 2016) մենագրությունների:

Շահել է մի շարք միջազգային և հանրապետական դրամաշնորհային ծրագրեր, միշտ ընդգրկված է եղել հանրապետության արդյունավետ 100 գիտնականների ցանկում:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 16 և դոկտորական 3 ատենախոսություն:

Արժանացել է գիտության ոլորտում եվրոպական բարձրագույն՝ Դեկարտի անվան մրցանակի (2001), ՉԺՀ կառավարական «Բարեկամություն» շքանշանի (2002), ՀՀ նախագահի մրցանակների (2004 և 2012), ՀՀ պետական մրցանակի (2015), տարբեր հուշամեդալների: Հայաստանի քիմիական հանդեսի գլխավոր խմբագիրն է, 018 մասնագիտական խորհրդի նախագահը, անդամ է միջազգային և հանրապետական մի քանի խորհուրդների և ընկերությունների:



ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ ՍԻՐՈՒՆԻ (02.01.1948, գ. Սառնաղբյուր (ՀՀ Գեղարքունիքի մարզ)), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1990):

Սովորել է Երևանի 196-րդ դպրոցում, 1971 թ. ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը և նույն թ.-ից աշխատել ՀՀ ԳԱԱ ՕՔԻ-ում: 1978 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ: Նա հեղինակ է ավելի քան հարյուր գիտական հոդվածների, հեղինակային վկայագրերի, պատենտների և թեզիսների: Աշխատանքները վերաբերում են վինիլպրոպարգիլային համակարգերում տեղակալման ռեակցիաների, եթերների օքսիդացման և հիդրօքսիմիններում օղակագծային տաուտոմերիայի խնդիրներին: Հայտնաբերել է բուֆատրիեն-ենինային հալոտրոպիայի երևույթը և քողարկված α-էֆեկտը: Բացահայտել է ազոտական թթվով եթերների օքսիդացման ռեակցիաների օրինաչափությունները: Մշակել է կիտրոնաթթվի ստացման մատչելի եղանակ իզոպրենի արտադրության թափոնների հիման վրա: ՕԴՔԳՏԿ օրգանական քիմիայի ինստիտուտի նրա ղեկավարած լաբորատորիայում կատարվում են հետազոտություններ բազմաֆունկցային տեղակալված երկ- և քառահիդրոպիրիդինների սինթեզի բնագավառում:

Անդամ է մասնագիտական և գիտական խորհուրդների: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 6 ատենախոսություն:



ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՃԻԿ ՀԱԿՈՒԻ (01.07.1953, գ. Մեծշեն (այժմ՝ Արցախի Մարտակերտի շրջանում)), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1996), պրոֆ. (2008): Ամուսինն է Կ. Ս. Մարգարյանի:

1970-1975 թթ. սովորել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում: 1976-1978 թթ. աշխատել է ՀԽՍՀ ՆՕՔԻ-ում: 1978-1981 թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱԱ. Ն. Ֆրումկինի անվան էլեկտրաքիմիայի ինստիտուտի ասպիրանտուրայում և պաշտպանել թեկնածուական ատենախոսություն «Էլեկտրաքիմիա» մասնագիտությամբ:

1982 թ.-ից աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ ՕՔԻ, 1984 թ. նշանակվել «Օրգանական էլեկտրասինթեզ» խմբի ղեկավար: 1997-2002 թթ. համատեղությամբ աշխատել է նաև ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնում: 1993-

2004 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ ՕՔԻ որպես թեմատիկ խմբի ղեկավար: 2004 թ.-ից աշխատել է ՀՊՃՀ «ՋԷ և ՇՄՊ» ամբիոնում: 2012 թ. նշանակվել է «ՋԷ և ՇՄՊ» ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ապա ընտրվել «Բն և ԿՏ» ամբիոնի վարիչ:

Զբաղվել է ազոտ պարունակող տարազիկլիկ մոնոմերների էլեկտրաքիմիական պոլիմերման գործընթացների ուսումնասիրությամբ: Մշակել է կոորդինացված պոլիմերների սինթեզի յուրատեսակ էլեկտրաքիմիական եղանակ: Առաջինը նրան հաջողվել է ցույց տալ, որ ազոլները փոխանցիկ մետաղների վրա՝ բացարձակ օրգանական լուծիչներում, չորրորդային ամոնիումային աղերի ներկայությամբ ենթարկվում են էլեկտրաքիմիական վերականգնման: Մշակել է նաև նույն մոնոմերների հիման վրա տարածական կառուցվածքի պոլիմերային ծածկույթների ստացման նոր եղանակ: Նրա կողմից պարզաբանվել է թաղանթագոյացման գործընթացի մեխանիզմը: Այդ ուսումնասիրություններով պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: Զբաղվել է պոլիմերային նանոկոմպոզիտների սինթեզով և հատկությունների ուսումնասիրությամբ:

Եղել է մի քանի նախագծերի գիտական ղեկավար, տարբեր մասնագիտական (010, 055) և գիտական խորհուրդների անդամ: Հեղինակ է 150 գիտական աշխատության, այդ թվում՝ 12 հեղինակային իրավունք և 12 գիտամեթոդական ձեռնարկ, որոնց թվում՝ 2 դասագիրք:

Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 և դոկտորական 1 ատենախոսություն:



ՍԱՐԿԻՍՈՎ ՊԱՎԵԼ ԶԻՔՐԱԵԼԻ (19.09.1932, Թիֆլիս – 25.04.2012, Մոսկվա), քիմիկոս-տեխնոլոգ: Քիմ. գիտ. դոկ. (1978), պրոֆ., ՌԳԱ ակադեմիկոս (1997, թղթ. անդամ՝ 1990 թ.-ից):

Ավարտել է Մոսկվայի Դ. Ի. Մենդելեևի անվան քիմիատեխնոլոգիական ինստիտուտը (1956 թ.-ից՝ Ռուսաստանի Դ. Ի. Մենդելեևի անվան քիմիատեխնոլոգիական համալսարան): 1980-1984 թթ. եղել է Ապակու քիմիայի տեխնոլոգիայի ֆակուլտետի ղեկան, 1984-1985 թթ.՝ պրոռեկտոր, 1985 թ.-ից՝ ղեկավար:

Աշխատանքները վերաբերում են սիլիկատային և դժվարահալ նյութերի ֆիզքիմիային և քիմիական տեխնոլոգիային: Մշակել է շինարարական, գեղազարդային և հատուկ նշանակության ապակեբյուրեղային նյութերի ստացման, ինչպես նաև թերթավոր խորամասիտալի, տեխնիկական սիտալների, սինթետիկ գրանիտի (սիգրան) ստացման արդյունաբերական տեխնոլոգիաներ:

Եղել է Բարձրագույն դպրոցի գիտությունների միջազգային ակադեմիայի, Նյու Յորքի ԳԱ անդամ, Ռուսաստանի Դ. Ի. Մենդելեևի անվան քիմիական ընկերության նախագահ, ՌԴ արդյունաբերության, գիտության և տեխնոլոգիաների նախարարության քիմիայի համակարգող խորհրդի նախագահ, Միջազգային կենսաքաղաքական շարժման փոխնախագահ (ԱՄՆ), ՌԳԱ քիմիայի և նյութագիտության բաժանմունքի բյուրոյի անդամ, Դիկենսոն քոլեջի և Ս. Պետերբուրգի պետական տեխնոլոգիական համալսարանի պատվավոր դոկտոր:

Ստացել է Ուկրանիայի Պետական (2001) և ՌԴ նախագահի (2001) մրցանակներ:

Հեղինակ է՝ «Химическая технология стекла и ситаллов» (Մ., 1983); «Рекомендации по применению сиграна в гражданском строительстве» (Մ., 1986); «Новые облицовочные материалы на основе стекла» (Մ., 1987) (համահեղինակ); «Производство строительного и технического стекла» (Մ., 1991) (համահեղինակ); «Химия в современном обществе» (Մ., 1992); «Направленная кристаллизация стекла – основа получения многофункциональных стеклокристаллических материалов» (Մ., 1997):



ՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ ԱՐԱՄԻ (18.07.1948), կենսաքիմիկոս, էկոլոգ: Կենս. գիտ. դոկ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2008):

Վիսկոնսինի բժշկագիտության դպրոցի կլինիկական պաթոլոգիայի պրոֆեսոր և տեխնիկական տնօրեն:

ACS, AIHA, CISI, AESA բնապահպանական, թունաբանական կոմիտեների անդամ:

ACI, Աստղ, պետական բնապահպան, Ռազարոն Պարինի անվան «Փայլուն միտք» մրցանակների դափնեկիր, Վտանգության հսկողության առաջավոր (50 մրցանակ):



ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ ՄԱՐՏԻՐՈՍԻ

(10.05.1954, Երևան), ճարտարագետ-քիմիկոս: Տեխ. գիտ. դոկ. (1992), պրոֆ. (2009):

Ավարտել է ԵՊԻ-ն (1976): 1975-1978 թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտում (ԸԱՔԻ) լաբորանտ, ճարտարագետ, կրտսեր գիտաշխատող, 1978-1982 թթ. Եղել է Լենինգրադի Լենսովետի անվան տեխնոլոգիական ինստիտուտի (ԼՏԻ) ասպիրանտ, 1982 թ. պաշտպանել է թեկնածուականատենախոսություն: 1982-1988 թթ. ՀԽՍՀ ԳԱ ԸԱՔԻ ավագ գիտաշխատող, 1988-1992 թթ. ԼՏԻ-ի դոկտորանտ, 1993-1995 թթ.՝ Սանկտ Պետերբուրգի «Նևաստիտ» միավորման փորձագետ, 1995-1997 թթ.՝ ՌԴ Կինգիսեսայ քաղաքի թիվ 7 դպրոց-գիմնազիայի փոխտնօրեն, 1997-2003 թթ.՝ «Կրուիզ 99» կոոպերատիվի փոխտնօրեն, 2003-2008 թթ.՝ «Բեյզ մեթալուրգ» ՍՊԸ-ի գործադիր տնօրենի խորհրդական, 2000-2009 թթ.՝ ԵՃՇՊՀ քիմիայի և կապակցող նյութերի ամբիոնի դոցենտ, 2009-2013 թթ.՝ նույն ամբիոնի պրոֆեսոր, 2013 թ.-ից՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի քիմիա, կապակցող նյութեր և սիլիկատներ ամբիոնի պրոֆեսոր: 1983-1985 թթ. սովորել է ՀԿԿ-ին կից Մարքսիզմ-Լենինիզմի համալսարանում:

Աշխատանքները վերաբերում են ՀՀ ընդերքի քիմիական հետազոտություններին և դրանց հիման վրա քիմիական ու շինարարական տեխնոլոգիաների մշակման հարցերին: Հեղինակ է 160 գիտական աշխատության, 2 մեթոդական ձեռնարկի, 29 հեղինակային վկայականի, 7 գյուտի արտոնագրի և «Силикатные материалы при переработке высококремнеземнистого алюмосиликатного сырья» (Է., 1992) մենագրության:

ՍԵՐՈՐՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ (ՏԵՐ-ՍԵՐՈՐՅԱՆ ՔՐԻՍՏԱՓՈՐ) (1825, Կ. Պոլիս - 1874, Կ. Պոլիս), քիմիկոս: Հայտնի է նաև Քրիստոփոր Տեր-Սերոբյան անվամբ: 1842 թ. ամերիկացի միսիոներների կողմից ուղարկվել է

ԱՄՆ: Յեյլի համալսարանում ուսանել է քիմիա, բժշկություն և աստվածաբանություն: Յեյլի համալսարանում ներմուծել է դասամատյանների գործածությունը: 1840-ական թթ. ստեղծել է դոլարի կանաչ և սև ներկերը (ամերիկյան կառավարության ջրանշան), որոնց օգտագործմամբ կանխվել են թղթադրամների կեղծումները: 1860 թ. վերադարձել է Կ. Պոլիս, եղել արքունի բժիշկ, պաշտոնավարել օսմանյան դրամահատարանում, պարզևատրվել «Մեջիդիե» ջրանշանով:



ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ (15.10.1932, գ. Հացառատ, ՀՀ Գավառ քաղաքի շրջագծում), կենսաքիմիկոս: Կենսաք. գիտ. դոկ. (1973), պրոֆ. (1974): Մ. Ա. Սիմոնյանի եղբայրը:

Ավարտել է ԵՊՀ-ն (1958): 1960 թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱԱ կենսաքիմիայի ինստիտուտում (1975 թ.-ից՝ սաղմնաքիմիայի լաբորատորիայի վարիչ), 1991 թ.-ից, միաժամանակ՝ Գավառի պետական համալսարանում, 1996 թ.-ից՝ բնագիտության ամբիոնի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են սաղմնային զարգացման ընթացքում նյարդային հյուսվածքում կենսաէներգետիկ մեխանիզմների օնտոգենետիկ և ֆիլոգենետիկ փոփոխություններին: Համահեղինակ է Ռուս-հայերեն կենսաքիմիական (1997) և Ռուս-անգլերեն-հայերեն կենսաբանական (1998) բացատրական բառարանների:

Եղել է ուղեղի ուսումնասիրության միազգային կազմակերպության (1995 թ.-ից), Կենսաքիմիկոսների եվրոպական ընկերության (1970 թ.-ից), ՌԴ էկոլոգիական (1996 թ.-ից) ակադեմիաների անդամ: Ստացել է ՀամԼԿԵՄ մրցանակ (1967):

Եղել է մի քանի գիտական և խմբագրական խորհուրդների անդամ: Նրա անունը մտել է ԱՄՆ-ում հրատարակվող «Ով ով է աշխարհում» համաաշխարհային կենսագրական հանրագիտարանի, ինչպես նաև Քեմբրիջում (Մեծ Բրիտանիա) հրատարակվող Միջազգային կենսագրական հանրագիտարանի մեջ:



ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՔՍԻՄ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ (05.07.1940, գ. Հացառատ, ՀՀ Գավառ քաղաքի շրջագծում), կենսաքիմիկոս: Կենս. գիտ. դոկ. (1996): Ա. Ա. Սիմոնյանի եղբայրը:

Ավարտել է Հացառատի միջնակարգ դպրոցը և 1959-1961 թթ. ծառայել Խորհրդային բանակում: 1967 թ. ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը և 1968 թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱԱ կենսաքիմիայի ինստիտուտում՝ ավագ լաբորատորանտից հասնելով Ակտիվ թթվածնի նյութափոխանակության լաբորատորիայի վարիչի պաշտոնին: 1974 թ.-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Սուպերօքսիդ դիսմուտազի ստացումը և դրա ակտիվ խմբի կառուցի ուսումնասիրումը» թեմայով:

Աշխատանքի բնագավառը՝ կենսաքիմիան, կենսաբժշկությունը, մասնավորապես թթվածնի ակտիվ միացությունների նյութափոխանակությունը կարգավորող հայտնի՝ հակաօքսիդիչային և իր կողմից անջատած նոր տեսակի՝ պրոօքսիդիչային մետաղապրոտեինների (NADPH օքսիդազներ՝ ստացված էրիթրոցիտների թաղանթներից, բջիջների թաղանթներից, միտոքոնդրիումներից, միջուկներից, ինչպես նաև արյան շիճուկից-արտաբջջային օքսիդազ) ուսումնասիրությունը նորմայում և օքսիդատիվ սթրեսի տարբեր դրսևորումների ժամանակ (չարորակ նորագոյացություններ, տարբեր տեսակի ճառագայթային հիվանդություններ, սիրտանոթային հիվանդություններ, շաքարախտ, ծանր մետաղային թունավորումներ և այլն): Առանձնակի ուշադրության է արժանի իր կողմից արյան շիճուկից անջատած և սուպերօքսիդ գոյացնող լիպոպրոտեինը՝ սիպրոլը, որը, ի տարբերություն այլ համակարգերի գոյացնում է սուպերօքսիդներ ինքնուրույն և անընդհատ կերպով: Այս մեխանիզմով սիպրոլը ցուցաբերում է հակաուռուցքային ազդեցություն:

Հեղինակ է 240 աշխատության և 4 մենագրության: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 8 ատենախոսություն:

Անդամ է կենսաքիմիկոսների ընկերության, պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ գովեստագրով:



ՍԻՐԱԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՆԱՊՈԼԵՈՆԻ

(19.07.1961, գ. Գանձա (Նինոծմինդայի շրջան, Վրաստան)), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2015):

1978 թ. ավարտել է Գանձայի թիվ 2 դպրոցը, 1984 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, 1990 թ.՝ ՀՀ ԳԱԱ ասպիրանտուրան, իսկ 1991 թ.՝ պաշտպանել թեկնածուական թեզ: 1985 թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱԱ ՆՕՔԻ-ում որպես առաջատար գիտաշխատող: Աշխատել է համակցված

ալիցիկլո և տարացիկլո[ց]ալիթիդինների բնագավառում: Նրա կողմից հայտնաբերվել են երկու նոր վերախմբավորումներ, կենսաբանորեն ակտիվ միացությունների սինթեզի երեք նոր եղանակներ, 70-ից ավել նոր տարացիկլիկ համակարգերի մոտ 5000 ածանցյալներ: Սինթեզված միացություններից մի քանիսը ցուցաբերել են արտահայտված հակառուռոցքային, հակավիրուսային, կարդիոտոնիկ, հակացնցումային և այլ ակտիվություններ: Հեղինակ է ավելի քան 130 գիտական աշխատության: 2017 թ. Վրաստանում լույս է տեսել նրա հեղինակած “Исследования в области аннелированных пиридинов с целью изыскания биологически активных веществ” մենագրությունը:

2015 թ. Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի և «Գիտական համագործակցություն» միջազգային հիմնադրամի կողմից պարգևատրվել է Ա.Ն. Կոստի անվան Ոսկե մեդալով և դիպլոմով, իսկ 2018 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի: 2011 թ.-ից Վրաստանի քիմիկոսների ընկերության պատվավոր անդամ է:



ՍԻՍԱԿՅԱՆ ՆՈՐԱՅՐ ՄԱՐՏԻՐՈՍԻ (15.01.1907,

Աշտարակ – 02.03.1966, Մոսկվա), կենսաքիմիկոս, տիեզերական կենսաբանության հիմնադիրներից: Կենս. գիտ. դոկ. (1940), պրոֆ. (1944), ԽՍՀՄ ԳԱ (1960) և ՀԽՍՀ ԳԱ (1965) ակադեմիկոս:

1928 թ. ընդունվել է ԵՊՀ և գործուղվել Մոսկվայի Կ. Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիա,

որը 1932 թ. ավարտելուց հետո ընդունվել է ասպիրանտուրա: 1936 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1935 թ.-ից աշխատել է ԽՍՀՄ ԳԱ Ա. Բախի անվան կենսաքիմիայի ինստիտուտում, 1946-1959 թթ. եղել նույն ինստիտուտի փոխտնօրեն, 1959-

1963 թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ կենսաբանական բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, 1963-1966 թթ.՝ նախագահության անդամ և գլխավոր գիտքարտուղար: 1945-1950 թթ. ԵՊՀ-ում կարդացել է էնզիմոլոգիայի հատուկ դասընթաց:

Աշխատանքները վերաբերում են մշակաբույսերի չորադիմացկուն տեսակների ստացման և ագրոտեխնիկական միջոցառումների մշակման, բույսերի ենթաբջջային գոյացությունների քլորոպլաստների կենսաքիմիայի հարցերին: Հայտնաբերել է քլորոպլաստներում պարունակվող ֆերմենտներից 7-ը: Ուսումնասիրել է ճառագայթաակտիվության ազդեցությունը կենդանի բջիջների, ենթաբջջային կառուցվածքների և ֆերմենտային համակարգի վրա: Նրա ղեկավարությամբ տիեզերական կենսաբանության և բժշկության բնագավառներում ուսումնասիրվել են ճառագայթման, անկշռության, երկրի ձգողության և այլ գործոնների հետ կապված հարցեր: Իրավամբ համարվում է տիեզերական կենսաբանության հիմնադիրներից:

Եղել է իր նախաձեռնությամբ Երևանում կազմակերպված գինու և խաղողի կենսաքիմիայի լաբորատորիայի գիտական ղեկավարն ու գիտական խորհրդատուն:

Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական և դոկտորական շուրջ 40 ատենախոսություն:

Զեկուցումներով բազմիցս հանդես է եկել միջազգային գիտաժողովներում ու համաժողովներում, դասախոսություններ կարդացել Բելգիայի, Փարիզի, Ճապոնիայի և այլ երկրների համալսարաններում:

1959-1964 թթ. եղել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործադիր խորհրդի անդամ, 1964-1966 թթ.՝ 13-րդ նստաշրջանի նախագահ, 1965-1966 թթ.՝ Միջազգային աստղագիտության ակադեմիայի իսկական անդամ և փոխնախագահ, Միջազգային աստղագնացության ֆեդերացիայի կենսաստղագնացության կոմիտեի նախագահ, Խորհրդային և արտասահմանյան մի շարք գիտական ընկերությունների ու խորհուրդների անդամ:

Նրա խմբագրությամբ հրատարակվել են «Проблемы космической биологии» (Մ., 1962) և «Первые космические полеты человека» (Մ., 1963) ժողովածուները: Եղել է նաև ԽՍՀՄ ԳԱ տեղեկագիր «Կենսաքիմիա» հանդեսի գլխավոր խմբագիր, «Տիեզերական հետազոտություններ» ամսագրի գլխավոր խմբագրի տեղակալ, «Համեմատական ֆիզիոլոգիա և կենսաքիմիա»

(Լոնդոն) և «Ագրոքիմիա» (Իտալիա) ամսագրերի խմբագրական խորհուրդների անդամ:

Եղել է ԽՍՀՄ Պետական (1952), ԽՍՀՄ ԳԱ Ա. Բախի (1950, 1966) և Ի. Մեչնիկովի (1951) անվան մրցանակների դափնեկիր, պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի (3) և Պատվո նշան շքանշաններով, արժանացել Լ. Պաստյորի ինստիտուտի (Ֆրանսիա), Լիեժի համալսարանի (Բելգիա) ոսկե մեդալների, Խաղաղության համաշխարհային խորհրդի պատվոգրի ու արծաթե մեդալի (1959) և այլ պարգևների:

Նրա բրոնզաձույլ կիսանդրին դրված է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում, Մոսկվայի Ա. Բախի անվան կենսաքիմիայի ինստիտուտի շենքի պատին փակցված է հուշատախտակ, անունը ոսկե տառերով գրված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի շենքի պատին, կիսանդրին կանգնեցված է ծննդավայրում: Նրա անունով են կոչվում՝ Լուսնի խառնարաններից մեկը, ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի թիվ 307 լսարանը, Աշտարակի միջնակարգ դպրոցներից մեկը, փողոց Երևանում և Աշտարակում: Աշտարակում գործում է Ն. Սիսակյանի տուն-թանգարանը:



ՄՐԱՊԻՈՆՅԱՆ ՌԻՄԱ ՄԿՐՏԻՉԻ (26.04.1936, Երևան – 07.09.2020, Երևան), կենսաքիմիկոս: Կենս. գիտ. դոկ. (1988), պրոֆ. (1992):

Ավարտել է Երևանի Ա. Պուշկինի անվան դպրոցը, ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը (1959) և աշխատել ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտում (1959 թ.-ից): 1968 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ «Հիպոթալամուսի կորոնարոակտիվ սպիտակուցների անջատումը և ֆունկցիոնալ կենսաքիմիական բնութագիրը» թեմայով, 1972 թ. ստացել է ավագ գիտաշխատողի կոչում:

Գիտական աշխատանքների բնագավառն են՝ ներքիմիան, նեյրոէնդոկրինոլոգիան, նեյրոֆիզիոլոգիան: Նեյրոսպեցիկ սպիտակուցների կենսաքիմիայի լաբորատորիայիում, որի ղեկավարն էր 1980 թ.-ից, կատարվել են ուսումնասիրություններ նեյրոսպեցիֆիկ սպիտակուց-հորմոնային կարգիակտիվ կարգավորիչների ֆունկցային, իմունալոգիական, տրանսմիտերային, նեյրոհորմոնային հատկությունների ուղղությամբ, ինչը թույլ է տվել

հիմնավորել այն մտահղացումը (կոնցեպցիան), որ այդ կոմպլեքսները կարևոր կենսաքիմիական համակարգեր են, որոնք ընդունակ են իրագործել ուղեղի և մի շարք վիսցերալ օրգանների, հատկապես սրտի, ինչպես նաև արյան մակարդեղիության կասկադային մեխանիզմի մետաբոլիզմի և ֆունկցիայի կարգավորումը:

Հեղինակ է 134 աշխատության, ուսումնասիրությունները զեկուցվել են միջազգային գիտաժողովներում:

Պատրաստել է կենս. գիտ. 7 թեկնածու:

Եղել է ISN, ESN, IBRO, FEBS միջազգային նեյրոքիմիական միությունների, ինչպես նաև գիտական խորհուրդների և «Նեյրոքիմիա» ամսագրի խմբագրության անդամ: Արժանացել է ԱՄՆ կենսագրությունների միջազգային ինստիտուտի «Տարվա մարդ – 2012» կոչմանը, պարգևատրվել ՀՀ ԳԱԱ և ՀՀ ԿԳՆ պատվոգրերով:

ՍՈՒՋՅԱՆ ՅԵԼԵՍՏԻՆԱ ՄԻՔԱՅԵԼԻ (16.10.1937, Երևան), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դոկ. (1983), պրոֆ. (1995):

Ավարտել է ԵԲԻ-ն (1960): 1964 թ.-ից աշխատել է ԵԲՀ-ում, 1985-2004 թթ.՝ ԳՀ կենտրոնի կենսաքիմիայի լաբորատորիայի վարիչ, 2004 թ.-ից՝ կենսաքիմիայի խմբի ղեկավար:

Աշխատանքները վերաբերում են գլխուղեղի ածխաջրածնային նյութափոխանակության կարգավորման հարցերին, նյարդահակ միջոցների (հետագայում կլինիկական բժշկության մեջ կիրառելու նպատակով) և ներգատական ու սիրտանոթային համակարգերի վրա լիմֆոցիտային միջնորդանյութերի ազդեցության մեխանիզմներին:

Ստացել է ԵՊԲՀ ոսկե մեդալ (2000):

ՍԵՎԱԿ ՄԱՆԱՍԵ (1897, Սիս – 1967, Ֆիլադելֆիա), կենսաքիմիկոս, մանրէաբան: Պրոֆեսոր, ՀՀ ԳԱ արտասահմանյան անդամ:

Ծնվել է Սսում, Ղարազյոզյան ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է Տարսնում, ապա Գերմանիայում, ԱՄՆ-ի Յեյլի և Քոլամբիա համալսարաններում: 1936-1966 թթ. եղել է Փենսիլվանիայի համալսարանի մանրէաբանության բաժանմունքի պրոֆեսոր: Կապված է եղել հայ կյանքին, հայ-ամերիկյան գիտական միության կազմակերպիչ:



ՎԱՀՐԱԴՅԱՆ ՀԱՍՄԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ (01.04.1954, Երևան), կենսաքիմիկոս: Կենս. գիտ. դոկ. (2004), պրոֆ. (2009):

1971 թ. ավարտել Երևանի թիվ 114 անգլերեն թեքունով միջնակարգ դպրոցը և ընդունվել ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը: Ուսումնառության տարիներին ակտիվորեն մասնակցելով ուսանողական գիտական համաժողովներին բազմիցս արժանացել է համալսարանի ուսանողական գիտական ընկերության բարձր պարգևների:

1978 թ. աշխատանքի է անցել ԵՊԲԻ կենսաքիմիայի ամբիոնի ուղեղի կենսասինթետիկ ռեակցիաների ԳՀ լաբորատորիայում որպես ավագ լաբորանտ, կրտսեր գիտաշխատող (1987): 1982 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ «Դի- և պոլիամինների ազդեցությունը գլխուղեղի կորիզային ռիբոնուկլեինաթթուների տարբեր ձևերի քանակական տեղաշարժերի վրա» թեմայով, իսկ դոկտորական ատենախոսության թեման է՝ «Նեյրոհորմոնային կարգավորման նոր մեխանիզմները նեյրոդեգեներացիայի պայմաններում»:

Նրան հաջողվել է որակապես հավելել գոյություն ունեցող պատկերացումները հիպոթալամուսից արտազատված նոր պրոլինով հարուստ պոլիպեպտիդների բարձր կենսաբանական ակտիվության մասին: Բացահայտվել է, որ հետազոտվող նեյրոպեպտիդն ի թիվս ֆիզիոլոգիական և իմունոմոդուլյատոր բարձր ակտիվության այլ բազմապիսի դոսևորումների, ունի նաև Ալցհեյմերի հիվանդության դեպքում ուղեղի նեյրոհորմոնալ, իմունոմոդուլյատոր և մորֆո-ֆունկցիային խաթարումների զարգացման համար պատասխանատու մի շարք հանգուցային մետաբոլիկ օղակների վրա պաշտպանիչ ազդեցություն ունենալու և էապես դրանք կարգավորելու ունակություն:

2006 թ. աշխատել է ԵՊԲՀ կենսաքիմիայի ամբիոնում որպես պրոֆեսոր, 2008-2011թ.՝ կենսաքիմիայի ամբիոնի վարիչ, 2018 թ. աշխատել է ԵՊՀ կենսաքիմիայի ամբիոնում որպես պրոֆեսոր և Հայկական բժշկական ինստիտուտում որպես գիտական գծով պրոռեկտոր: 2019 թ.-ից աշխատել է Հայբուսակ համալսարանում քիմիայի և կենսաքիմիայի ամբիոնի վարիչ:

2002 թ. ընտրվել է Ալցհեյմերի հիվանդության հայկական ընկերության փոխնախագահ, 2002 թ.՝ Կենսաքիմիկոսների հայկական ընկերության ան-

դամ, Հայաստանի սպառողների Ազգային ակադեմիայի պատվավոր անդամ (2016):

Հեղինակ է ավելի քան 70 գիտական և ուսումնամեթոդական աշխատության:



ՎԱՀՐԱՄՅԱՆ ԱՇՈՏ ՏԻԳՐԱՆԻ (23.03.1908, ք. Կաղզվան (Կարսի մարզ) - 08.10.1973, Մոսկվա), ճարտարագետ-քիմիկոս: Տեխ. գիտ. դոկ. (1944), պրոֆ. (1945): ՌԻՖՍՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ (1969): Մետաղների էլեկտրանստեցման գիտության հիմնադիրներից:

Ավարտել է ԵՊՀ-ն (1931): 1932 թ.-ից աշխատել է ԽՍՀՄ ԳԱ Մոսկվայի ֆիզիկական քիմիայի ինստիտուտում, 1949-1973 թթ.՝ մետաղների էլեկտրանստեցման լաբորատորիայի հիմնադիր-վարիչ:

Աշխատանքները վերաբերում են մետաղների էլեկտրանստեցման կինետիկայի և մեխանիզմի ուսումնասիրությանը: Առաջարկել է մետաղների և համաձուլվածքների ստացման էլեկտրաքիմիական եղանակներ: Հայտնաբերել է մակերևույթի պասսիվացման և իոնի վերականգնման արագությունների փոխադարձ կապը: Մշակել է ջրային լուծույթներից երկաթի ենթախմբի մետաղների նստեցման բարձրջերմաստիճանային եղանակը:

Ստացել է ԽՍՀՄ պետական մրցանակ (1950):

Համահեղինակ է՝ «Физико-механические свойства электролитических осадков» (Մ., 1960); «Электросажение металлов и ингибирующая адсорбция» (Մ., 1969); «Technology of Electrodeposition» (Tedington, 1961):



ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ ՍԱՐԳՍԻ (14.03.1954, Երևան), կենսաքիմիկոս: Կենս. գիտ. դոկ. (1997), պրոֆ. (2005): Ա. Հ. Վարդանյանի դուստրը, Ռ. Ս. Վարդանյանի քույրը:

1971 թ. ընդունվել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը, որն ավարտելով 1976-1988 թթ., աշխատել է ՀՀ ԳԱԱ կենսաքիմիայի ինստիտուտում: 1988 թ. աշխատանքի է անցել ԵՊԲՀ կենսաքիմիայի ամբիոնում որպես ավագ գիտաշխատող, այնուհետև՝ ամբիոնի պրոֆեսոր:

Գիտական հետաքրքրությունների ոլորտը ներառում է օփիոիդ ազդանիստների և անտազոնիստների ազդեցության կենսաքիմիական մեխանիզմների ուսումնասիրությունը ցավի ժամանակ: Առանձնահատուկ ուշադրության են արժանացել օփիոիդերգիկ նեյրոտրանսմիսիայի գործընթացների խանգարումները շաքարախտի դեպքերում:

2007 թ. զբաղեցրել է ԵՊԲՀ խորհրդի գիտական քարտուղարի պաշտոնը:

Հեղինակ է 117 գիտական աշխատության և մեթոդական ձեռնարկի: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 2 թեզ:

Ստացել է ԵՊԲՀ ոսկե մեդալ (2005):



ՎԱՐԴԱՆՅԱՆ ԻՐՄԱ ԱՐՄԵՆԱԿԻ (24.11.1939,

Երևան), ֆիզքիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1982), պրոֆ. (1984), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1996 թ., թղթակից անդամ՝ 1986 թ.-ից):

Ավարտել է Երևանի Չկալովի անվան դպրոցը (1956) և ընդունվել ԵՊՀ ֆիզմաթ ֆակուլտետը (1956), որն ավարտել է 1961 թ. և ընդունվել աշխատանքի Երևանի ֆիզիկայի ինստիտուտում, որտեղ մինչև 1967 թ. աշխատել է ավագ լաբորանտ և կրտսեր գիտաշխատող: 1967 թ. ընդունվել է ՀԽՍՀ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրա և 1971 թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն: 1967 թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտում: 1975-1979 թթ. որպես ավագ գիտաշխատող ղեկավարել է գիտահետազոտական խումբ, իսկ 1979-2010 թթ. եղել է շղթայական և ռադիկալային ռեակցիաների լաբորատորիայի վարիչ, այնուհետև առաջատար գիտաշխատող, 1972-1977 թթ.՝ ինստիտուտի գիտական քարտուղար: 2001-2009 թթ. դասախոսել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում: Որպես հրավիրված մասնագետ 1977 թ. աշխատել է Բեռլինի ֆիզիկական քիմիայի ինստիտուտում, իսկ 1994-1997 թթ. պարբերաբար աշխատել է Մաքս Պլանկի անվան գիտական հետազոտությունների միության հոսքերի հետազոտությունների ինստիտուտում (Գյոթինգեն, Գերմանիա):

Գիտական գործունեության սկզբնական շրջանում աշխատանքները վերաբերվել են օրգանական միացությունների գազաֆազ օքսիդացման գործընթացներում շղթաների տարասեռ (հետերոգեն) ճյուղավորման հիմ-

նահարցերին: Նրա ղեկավարությամբ զարգացվել են շղթայական այլասերված ճյուղավորված ռեակցիաների մեխանիզմում և կինետիկայում տարասեռ գործոնների դերի մասին պատկերացումները, բացահայտվել են պինդ մակերևույթների վրա օրգանական խառնուրդների գոլորշիների տարասեռ ռադիկալային քայքայման ռեակցիաների մեխանիզմներ, մշակվել են նոր հետազոտական եղանակներ օրգանական միացությունների օքսիդացման բարդ գործընթացներում առաջնային ակտիվ կենտրոնների՝ բազմատոմ ռադիկալների նույնականացման համար: Կարևոր գիտական ներդրումներից է մակակլանված քացախաթթվով հարուցված ացետալդեհիդ-թթվածին խառնուրդների բոցավառման ընթացքում կրիտիկական երևույթների բացահայտումը: Նրա ղեկավարությամբ հետազոտություններ են տարվել բացահայտելու մթնոլորտում տեղի ունեցող քիմիական փոխարկումների բնույթը, այդ թվում նաև մթնոլորտում պինդ մասնիկների կամ աէրոզոլների ձևով առկա օքսիդային և աղային միացությունների մակերևույթին պերօքսիդային ռադիկալների և օրգանական ծագման տարբեր միացությունների տարասեռ փոխազդեցությունների առանձնահատկությունները:

Եղել է խմբագրական, գիտական և մասնագիտական խորհրդների անդամ, բազմաթիվ անգամ զեկուցումներով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում:

Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել է 12 թեկնածուական և 1 դոկտորական ատենախոսություն:

Հեղինակ է 170 գիտական աշխատության և 3 մենագրության՝ «Արամ Բագրատի Նալբանդյան» (Եր., 1988), «Современное состояние проблемы газофазного окисления органических соединений» (Ե., 1986) համահեղինակ; «Մթնոլորտի քիմիա» (Եր., 2009):



ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒԻԶԱ ՈԱԶՄԻԿԻ (22.10.1975, ք. Գորիս), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2017): Դուստրն է Ռ. Լ. Վարդանյանի:

1992 թ. ավարտել է Գորիսի Սերո Խանզադյանի անվան թիվ 6 միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, 1997 թ. այն ավարտել է և աշխատանքի անցել ՀՊՀՀ Գորիսի կրթա-

համալիրում: 2004 թ. պաշտպանել է թեկնածուական թեզը, 2007 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում: 2007-2008 թթ. զբաղեցրել է Գորիսի պետական համալսարանի գիտական քարտուղարի պաշտոնը: 2008-2014 թթ. եղել է Գորիսի պետական համալսարանի քիմիայի ամբիոնի վարիչ: 2018 թ.-ից ղեկավարել է Կենսաբանության և քիմիայի ամբիոնը: Դոկտորական թեզի թեման է՝ «Դեղաբույսերի կենսահակաօքսիդիչների հակաօքսիդիչ հատկությունները: Կինետիկա և մեխանիզմ»: 2007 թ.-ից աշխատել է նաև Գորիսի պետական համալսարանի հենակետային վարժարանում (Գորիսի թիվ 4 ավագ դպրոց): Ունի 70-ից ավելի տպագրված գիտական հոդվածներ: Կատարած աշխատանքները ուղղված են դեղաբույսերի լուծանավածքների ստացմանը և դրանց հակաօքսիդիչ հատկությունների բացահայտմանը:

Ստացել է ՀՀ Սյունիքի մարզպետի և ՀՀ ԿԳՆ շնորհակալագրեր:

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԱՐՏԻՆ ՍԻՄՈՆԻ (06.10.1900, Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի) - 23.10.1991, Մոսկվա, թաղված է Երևանում), քիմիկոս, ԽՍՀՄ-ում պլաստմասաների արդյունաբերության կազմակերպիչներից: ԽՍՀՄ պատվավոր քիմիկոս (1980):

Ավարտել է Լենինգրադի պոլիտեխնիկական ինստիտուտը (1929): 1932-1940 թթ. աշխատել է Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) պլաստմասաների ինստիտուտում: 1938-1939 թթ.՝ ԵՊԻ քիմիայի ֆակուլտետի դեկան, 1945-1973 թթ.՝ Կուսկովյի քիմիական գործարանի տնօրեն: Նրա մասնակցությամբ Երևանում կազմակերպվել է վինիլացետատի արտադրությունը:

Հեղինակ է՝ «Մարդիկ և պոլիմերներ» (Եր., 1982) գրքի:



ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ ԼԵՎՈՆԻ (14.04.1941, գ. Տաթև Սյունիքի մարզ - 16.08.2020, Գորիս (հողին է հանձնվել Տաթևում)), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1989), պրոֆ. (2002): Հայրն է Լ. Ռ. Վարդանյանի:

Ավարտել է Տաթևի միջնակարգ դպրոցը (1959) և ծառայել Խորհրդային բանակում (1960-1962): 1962 թ. ընդունվել էՊՀ քիմիայի ֆակուլտետը: 1967 թ. ավարտական դիպլոմային աշխատանքը կատարել է ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի Չեռնոգոլովկայի մասնաճյուղում: 1968-1971 թթ. սովորել է այդ ինստիտուտի ասպիրանտուրայում, որտեղ էլ

1971 թ. պաշտպանել է թեկնածուական թեզը՝ «Շղթաների հատման փուլերում ինհիբիտորների ռեգեներացիան» թեմայով և աշխատել այդ ինստիտուտի Չեռնոգոլովկայի մասնաճյուղում որպես կրտսեր գիտաշխատող: Դոկտորական թեզի թեման է՝ «Խոլեստերինային հեղուկ բյուրեղների ծերացումը և կայունացումը»:

1971 թ. տեղափոխվել է ՀԽՍՀ և որպես լաբորատորիայի վարիչ աշխատել Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) Է. Տեր-Ղազարյանի անվան պոլիմերային սոսինձների պետական գիտահետազոտական ինստիտուտում: Սոսինձների հետ կապված նրա տասնյակ մշակումներ կիրառվել են ժամանակին, ինչպես նաև հետագայում:


1975 թ. աշխատանքի է հրավիրվել ՀՀ ԳԱ Գորիսի ֆիզիկատեխնիկական բաժանմունք, որտեղ զբաղվել է խոլեստերինային հեղուկ բյուրեղների կայունացման խնդիրներով, իսկ 1984-1990 թթ.՝ ղեկավարել կենտրոնի աշխատանքները: Այդ տարիներին նա մշակել է քիմիական ռեակտիվների և մաքուր նյութերի պահպանման ժամկետների որոշման նոր եղանակ, որն էլ հիմք հանդիսացավ Գորիսի ֆիզիկատեխնիկական կենտրոնի վերանվանմանը՝ «Քիմիական ռեակտիվների կյանքի տևողության և պահպանման ժամկետների որոշման համամիութենական կենտրոն»:

1990 թ.-ից դասախոսել է ՀՊՃՀ Գորիսի մասնաճյուղում, որտեղ 1990-2001 թթ. ղեկավարել է ընդհանուր տեխնիկական առարկաների, այնուհետև կենսաքիմիայի ամբիոնը: 1997-2006 թթ. ստանձնել է նաև ՀՊՃՀ Գորիսի մասնաճյուղի, այնուհետ 2006-2012 թթ. Գորիսի պետական համալսարանի ուսումնական և գիտական գծով փոխտնօրենի պաշտոնները: 2012 թ.-ից աշխատել է ամբիոնի պրոֆեսոր: Նա ԳՊՀ քիմիայի գիտական լաբորատորիայի հիմնադիրն է: Հետազոտությունների հիմքը հանդիսացել են տարբեր տարածաշրջաններում աճող դեղաբույսերում առկա հակաօքսիդիչների քանակության և ակտիվության որոշումը:

Հեղինակ է շուրջ 250 գիտական հոդվածի, հեղինակային իրավունքի և պատենտի:

Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 6 և դոկտորական 1ատենախոսություն:

Եղել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի քիմիական կինետիկայի ընկերության (1981) և ՌԴ բնական ԳԱ հայաստանյան մասնաճյուղի անդամ (2002): Ստացել է ՀՀ նախագահի և ՀՀ ԿԳՆ պատվոգրեր:



ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԱՐԳՍԻ (20.03.1949, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1985), պրոֆ. (1988), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1996, թղթակից անդամ՝ 1990 թ.-ից): Ս. Հ. Վարդանյանի որդին և Գ. Ս. Վարդանյանի եղբայրը:

1966թ. ոսկե մեդալով ավարտել է դպրոցը և ընդունվել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, որը գերազանցությամբ ավարտել է 1971 թ.: Սովորել է ԽՍՀՄ ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտի (Մոսկվա) ասպիրանտուրայում և 1974 թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն: Վերադառնալով Երևան՝ աշխատել է ՆՕՔԻ-ում և կենտրոնացել ցավազրկման հիմնախնդիրների վրա: Արդյունքում ստեղծվել է նոր, հզոր ցավազրկող դեղամիջոց Ֆենարիդինը և օփիոիդային բոլոր դասերի միացությունների անտագոնիստ Ֆենէտամը: Այդ նկատառումով ԽՍՀՄ ԲԳԱ դեղագիտության ԳՀՀ-ի տնօրեն, ԽՍՀՄ ԲԳԱ ակադեմիկոս Ա. Վ. Վալդմանի նախաձեռնությամբ 1984թ. ՀԽՍՀ ԳԱ ՆՕՔԻ-ում Ռ. Վարդանյանի ղեկավարությամբ ստեղծվել է լաբորատորիա: Նրա կողմից մշակվել են հեքսահիդրոպիրիդազինների սինթեզի և փոխարկումների մի շարք յուրահատուկ եղանակներ, հայտնաբերվել են երկու նոր վերախմբավորումներ: Այդ հետազոտությունների շրջանակներում պաշտպանվել են թեկնածուական 8 ատենախոսություն:

1992թ. մասնակցել է ՀՀ ԱՆ դեղամիջոցների և բժշկական տեխնոլոգիաների գործակալության (ԴԲՏԳ) ստեղծմանը՝ որպես տնօրենի առաջին տեղակալ, որտեղ համատեղությամբ աշխատել է մինչև 1998թ.: 1998-2002 թթ. եղել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչը:

Ռ. Վարդանյանի հետազոտական ներուժը իրացվել է աշխարհի մի շարք համալսարաններում՝ Իսպանիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի: 2002թ. Ռ.Ս. Վարդանյանը տեղափոխվել է ԱՄՆ-ի Արիզոնայի համալսարան, որտեղ 2004թ. ստացել է Արիզոնայի համալսարանի պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է 130-ից ավելի գիտական աշխատության, այդ թվում՝ 5 հոդված-ակնարկ, 20 ԽՍՀՄ և 6 ԱՄՆ հեղինակային իրավունքի արտոնագիր:

Բացի այդ հեղինակ է 20-ից ավելի հրապարակախոսական հոդվածների՝ նվիրված ՀՀ-ում գիտության և կրթության հիմնախնդիրներին:

Հեղինակ և համահեղինակ է հետևյալ աշխատությունների՝ «Синтез основных лекарственных средств» (Москва 2005), «Synthesis of Essential Drugs» (Amsterdam, Tokyo, 2006), «Synthesis of Best-Seller Drugs» (Elseiver, 2016), «Piperidine-Based Drugs Discovery» (Elseiver, 2017).



ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ

(20.09.1917, գ. Շահումյան (այժմ՝ Վրաստանի Մառնեուլի շրջանում) - 04.04.1997, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1956), պրոֆ. (1964), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1977, թղթ. անդամ՝ 1971 թ.-ից), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1974): Ռ. Ս. և Գ. Ս. Վարդանյանների

հայրը:

Դպրոցը ավարտել և ընդունվել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: Վերջին կուրսից (1941) մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին և հասել Բեռլին: Պարգևատրվել է Հայրենական պատերազմի I և II աստիճանի և Կարմիր Աստղ շքանշաններով ու բազմաթիվ մեդալներով: Մայրը Վարդանյանը զորացրվել է և վերադառնալով Երևան՝ հանձնել է քիմիայի ֆակուլտետի ավարտական քննությունները և ընդունվել ասպիրանտուրա: 1949 թ. Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1951-1955 թթ. որպես դոկտորանտ սովորել և աշխատել է Մոսկվայում: 1946 թ.-ից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ ՕՔԻ-ում, 1955-1967 թթ.՝ ացետիլենի քիմիայի, 1968-1970 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ ՆՕՔԻ ֆիզիոլոգիայես ակտիվ նյութերի լաբորատորիանների վարիչ, 1971-1987 թթ.՝ ՆՕՔԻ տնօրեն, 1987-1994 թթ.՝ ՀՀ ԳԱԱ քիմիական և երկրաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, 1994-1997 թթ.՝ ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդական:

Աշխատանքները վերաբերում են ացետիլենի և տարացիկլային միացությունների քիմիային, օրգանիզմների վրա նոր դեղանյութերի ազդեցության հարցերին: Հայտնաբերել է չհագեցած միացությունների ոչ բնականոն տեղակալման ռեակցիա, որն ընթանում է ացետիլեն-ալենկումոլային վերախմբավորմամբ: Մշակել է ծծումբ, ազոտ և թթվածին պարունակող տարացիկլային համակարգերի սինթեզի նոր եղանակներ:

Հեղինակ է ավելի քան 400 աշխատության և 100 հեղինակային իրավունքի: Նրա խորհրդատվությամբ և ղեկավարությամբ պաշտպանվել է 10 դոկտորական և 50 թեկնածուական ատենախոսություն: Եղել է մասնագիտական, գիտական և խմբագրական խորհուրդների անդամ: Պարգևատրվել է Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով:

Հեղինակ է՝ «Химия винилацетилена и его производных» (Է., 1966); «Ացետիլենը և նրա օգտագործման ուղիները» (Եր., 1969):



ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՀԱԿ, ՍԱՀԱԿ ԾԱՂԿԱՐԱՐ,
ԻՍԱՀԱԿ ԾԱՂԿԱՐԱՐ (1780, Երևան – 1858, Երևան),
բնագետ, գրիչ և մանրանկարիչ:

Սովորել է Վաղարշապատի Ժառանգավորաց վարժարանում, դարձել էջմիածնի միաբանության անդամ, վարդապետ (1812), եպիսկոպոս (1832): Զուգահեռ զբաղվել է գործնական (կիրառական) քիմիայով: Նրա դիմանկարը իր «Այրարատ» բանբերում զետեղել է Ղևոնդ Ալիշանը, անվանելով նրան «հռչակավոր Ծաղկարար», իսկ 1956 թ. «Բանբեր Մատենադարանում» տպագրվել է ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Տիրան Ղազանչյանի ընդարձակ հոդվածը, որտեղից տեղեկանում ենք, որ Ծաղկարարին է պատկանում Մատենադարանում պահվող N6247 և 9023 ձեռագրերը, որոնցում ներկայացված են իր մասին տվյալները և քիմիական հայտնագործությունները:

Սահակ Ծաղկարարը եղել է ինքնուս-քիմիկոս, ում արած փորձերը 19-րդ դարի առաջին կեսի համար գիտագործնական մեծ հետաքրքրություն են ներկայացրել: Նա բոլոր փորձնական աշխատանքները կատարել է իր աղքատիկ անձնական միջոցներով: 1836 թ. էջմիածնի կազմատնից դեն նետվող թղթի մնացորդները կրկին թղթի վերածելու համար նրա փորձերը պսակվել էին հաջողությամբ, սակայն էջմիածնի Սինոդը երկու անգամ (1836 թ. և 1837 թ.) նրան մերժել է թղթի վերամշակման նոր գործարանի կառուցումը: Ծաղկարարի հաջորդ քիմիական գործունեությունը հաջողվեց իրականացնել Ռուսական կառավարության աջակցությամբ: Դա Արարատյան դաշտի որդան կարմիրից ներկ ստանալու գործն էր (1815 թ.-ից): Զբաղվել է որդան կարմիրի ստացման և մշակման եղանակների վերա-

կանգնման և դրա հավաքման կազմակերպչական հարցերով: Այդ աշխատանքների համար Ռուսաստանի ցարը 1833 թ. նրան նշանակել է 200 ռ. ցմահ թոշակ, իսկ 1834 թ. նվիրել է ամեթիստե ադամանդակուռ մատանի: Ինչպես նշել են Ղևոնդ Ալիշանը և Լ. Մելիքսեթյանը, որդան կարմիրը Հայաստանում հայտնի է եղել շատ վաղուց (IV դարում), բայց Սահակ Ծաղկարարի ժամանակներում որդան կարմիրից ներկերի ստացում չէր կատարվում: Բացի որդան կարմիրից՝ Ծաղկարարը գրել է նաև մի ամբողջ տետր՝ նվիրված տարբեր ներկերի ստացման եղանակներին, ինչպես նաև անդրադարձել է պոտաշի ստացմանը, մետաղների ոսկեզօծմանը և արծաթազօծմանը, սոսինձի պատրաստմանը, երկաթ հալելու ու մխելու, կաշվի դաբաղման խնդիրներին և հարցերին: Նրա գրչին են պատկանում «Խրատ ծաղկարարութեան» (1815-1840, Մատենադարան, ձեռագիր N9029), «Գաղափար օրինակի մանրանկարաց Սահակաց Ծաղկարարի (1819-1837, ձեռագիր N6248) և «Բազմավեպ» (1843, ձեռագիր N0247) ձեռագրերը, որոնցից առաջինում ներկայացրել է ներկերի պատրաստման իր եղանակները, երկրորդում՝ ամփոփել այդ ներկերով կատարված նկար-օրինակներ, երրորդը իր ինքնակենսագրությունն է, որտեղ տեղեկացնում է նաև որդան կարմիրի մասին:



ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԿՐՏԻՉ ԱՐՏԱՇԵՍԻ

(22.10.1910, Զմյուռնիա (Իզմիր) – 04.03.1982, Փարիզ), կենսաքիմիկոս: Բժշկ. (1944) և կենս. (1959) գիտ. դոկ., պրոֆ. (1945), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1956, թղթակից անդամ՝ 1947 թ.-ից):

1933 թ. ավարտել է Բեյրութի ֆրանսիական պետական բժշկական համալսարանը: 1944 թ. ուսումը շարունակել է Սորբոնի համալսարանում և պաշտպանել ատենախոսություն: 1945 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Այդ աշխատությունը հետագայում՝ Խորհրդային Հայաստան ներգաղթելուց հետո, ընդունվել է որպես դոկտորական ատենախոսություն, և 1959 թ. նրան շնորհվել է կենս. գիտ. դոկ. գիտական աստիճան: 1951թ.-ից դասավանդել է ԵՊՀ-ում, 1960-1970 թթ. եղել է ԵՊՀ կենսաքիմիայի ամբիոնի վարիչ:

Մինչև ՀԽՍՀ ներգաղթելը հետազոտել է ծծումբ պարունակող ամինաթթուների փոխանակության որոշ առանձնահատկություններ, ինչպես նաև այդ ամինաթթուներից սուլֆատի և երկսուլֆատի առաջացման հարցերը: Առաջիններից մեկն է, որ ՀՀ-ում զբաղվել է կենսատեխնոլոգիական հետազոտություններով: 1955 թ. ԵԱԱ ԳՀԻ-ում ստեղծել է կենսաբանական թափոնների քիմիական և կենսաքիմիական վերամշակման լաբորատորիա: 1956-1971 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ անասնաբուծության-անասնաբուժության ԳՀԻ կերերի վերամշակման լաբորատորիայի վարիչ:

Նրա ղեկավարությամբ ԵՊՀ-ում ուսումնասիրվել են Candida ցեղի խմորասնկերի՝ ամինաթթուների յուրացման և խմորասնկային զանգվածի կուտակման կենսաքիմիային և կենսաօրգանական միացությունների ազդեցության փոխանակության քիմիական ու կենսաքիմիական մեխանիզմներին վերաբերող հարցեր:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 12 առենախոսություն:

1971 թ. տեղափոխվել է Ֆրանսիա, 1972-1981 թթ. եղել Պիեռ և Մարի Կյուրիների անվան պետական համալսարանի կենսաքիմիայի բաժանմունքի պրոֆեսոր և ղեկավար:



ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆ ԷՂԳԱՐ ՂԱԶԱՐԻ
 (27.04(10.5).1912, Բաքու – 19.03.1961, Երևան), քիմիկոս, ճարտարագետ-տեխնոլոգ: Տեխ. գիտ. թեկնածու (1957), ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1960): Ղ. Գ. Տեր-Ղազարյանի որդին:

Միջնակարգ դպրոցը ավարտել է Թբիլիսիում, իսկ 1929 թ.՝ տեղի քիմիական տեխնիկումը: 1930-1931 թթ. աշխատել է Բերեզնիկի քիմիական գործարանում, իսկ այնուհետև տեղափոխվել է Վանաձորի (Կիրովականի) ազոտային պարարտանյութերի գործարան և աշխատել որպես տեխնիկ (1931-1934): Լիենելով ԵՊԻ-ի ուսանող՝ միաժամանակ 1936 թ. ղեկավարել է Երևանի սինթետիկ կաուչուկի գործարանի նախագծային աշխատանքները: 1934-1936 թթ. մասնակցել է Լեւնինգրադում քլորոպրենային կաուչուկի փորձնական նմուշի՝ «Սևանիտի», ստացման աշխատանքներին: 1937 թ. ընդհատել է բուհում ուսանելը (5-րդ

կուրսից) և 1938-1939 թթ. աշխատել է Նիկոտինի (Բաբուշկինի) գործարանում որպես գլխավոր ճարտարագետ: 1939 թ. վերադարձել է Երևան և ղեկավարել Երևանի կաուչուկի գործարանի նախագծային կոնստրուկտորային բաժինը: 1953-1957 թթ. որպես գլխավոր ճարտարագետ նախագծել և կառուցել է Սումգայիթի կաուչուկի գործարանը: 1944-1946 թթ. գործուղմամբ աշխատել է «Դյուպոն» ֆիրմայի (ԱՄՆ) ձեռնարկություններում և ուսումնասիրել սինթետիկ կաուչուկի արտադրության առանձնահատկությունները, 1943-1953 թթ. նշանակվել է Երևանի սինթետիկ կաուչուկի գործարանի գլխավոր ճարտարագետ: Նրա ղեկավարությամբ կաուչուկի գործարանում ներդրվել են էմուլսային պոլիմերման, քլորոպրենի արտադրության երկփուլ մասնաթորման, քլորբենզոլի անընդհատ ստացման եղանակները: 1957-1960 թթ.՝ եղել է Կիրովականի «Ավտոմատիկա» ԳՀԻ տնօրեն: 1959-1961 թթ.՝ ՀԽՍՀ ԺՏԽ նախագահի առաջին տեղակալ: Նրա ղեկավարությամբ 1958 թ. հիմնադրվել է Հայքիմգիտնախագիծ (1967 թ.-ից՝ Կիրովականի Է. Տեր-Ղազարյանի անվան պոլիմերային սոսինձների) ինստիտուտը:

Եղել է ՀԽՍՀ ԳԽ պատգմ. (1959-1961):



ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆ ՂԱԶԱՐ ԳՐԻԳՈՐԻ (1874, Շուշի – 12.08.1958, Երևան), քիմիկոս-մանկավարժ: Ֆիզիկական գիտ. դոկ. (1906), պրոֆ. (1935): Է. Ղ. Տեր-Ղազարյանի հայրը:

Միջնակարգ կրթությունը ստացել է տեղի ռեալական սեմինարիայում: 1899 թ. մեկնել է Ժնև և սովորել Ժնևի համալսարանի բնագիտական ֆակուլտետում ու ստացել բնական գիտությունների բակալավրի աստիճան, 1904 թ.՝ քիմիկոսի որակավորում, 1906 թ.՝ ատենախոսության պաշտպանությամբ՝ ֆիզիկական գիտությունների դոկտորի աստիճան: Նույն թ. նշանակվել է Ժնևի համալսարանի ֆիզիկական քիմիայի ամբիոնի ասիստենտ, ապա՝ ֆիզիկական քիմիայի լաբորատորիայի վարիչ:

1909 թ. տեղափոխվել է Սանկտ Պետերբուրգ և Ռուսաստանի ֆիզիկաքիմիական ընկերությունում զբաղվել ԳՀ աշխատանքով: 1911 թ.-ից աշխատել է Բաքվում և արդյունաբերողների պատվերով կառուցել գինեթթվի գործարան: 1913-1915 թթ. վարել է Շուշիի թեմական դպրոցի տեսուչի և ֆիզի-

կայի ուսուցչի պաշտոնները, ապա մինչև 1917 թ. վերջերը եղել է Բաքվի «Բեկենդորֆ ընկերություն» նավթարդյունաբերական ֆիրմայի ԳՀ լաբորատորիայի գիտաշխատող: 1917-1934 թթ. աշխատել է Թբիլիսիի անդրկովկասյան համալսարանի ընդհանուր քիմիայի ամբիոնի պրոֆեսոր և քիմիական լաբորատորիայի ղեկավար:

1930-1931 թթ. գլխավորել է նաև հաղորդակցության ճանապարհների Թիֆլիսի ճարտարագիտական ինստիտուտի քիմիայի ամբիոնը: 1924-1932 թթ. եղել է Անդրկովկասի պետականի արդյունաբերական սեկցիայի նախագահ, 1932-1933 թթ.՝ Թիֆլիսի կիրառական քիմիայի ինստիտուտի բաժնի վարիչ:

1934 թ. աշխատանքի է հրավիրվել ԵՊՀ որպես անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ և քիմիայի ֆակուլտետի դեկան (1934-1937): Համատեղությամբ մինչև 1937 թ. ղեկավարել է նաև ԵՊԻ ընդհանուր և անօրգանական քիմիայի ամբիոնը, ինչպես նաև ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (Արմֆան) ընդհանուր քիմիայի բաժինը: Աշխատել է նաև քիմիայի պրոֆեսոր ԵԱԱԻ-ում (1943-1944), իսկ 1938-1955 թթ. եղել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄԻ քիմիայի ամբիոնի վարիչ:

Աշխատանքները վերաբում են օրթոբար խտությունների որոշման նոր եղանակների մշակմանը (Ժնև, Փարիզ), քլորաջրածնի խտությանը և քլորի ու արծաթի ատոմային զանգվածների որոշմանը (1906-1911, Փարիզ): Մշակել է նավթից ստացվող բազմաթիվ քիմիական և դեղագործական պատրաստուկների, բուսայուղերից տարբեր արտադրանքների ստացման կարևոր եղանակներ:

1939 թ. լույս է տեսել նրա կազմած «Անալիտիկ քիմիայի համառոտ դասընթաց» գիրքը:

ՏԻԳՐԱՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ (06.09.1938, Երևան), նյարդաքիմիկոս: Բժշկ. գիտ. դոկ. (1968), պրոֆ. (1975):

Ավարտել է ԵԲԻ (1961): 1971-1981 թթ.՝ ԽՍՀՄ առողջապահության նախարարության բժշկա-կենսաբանական հիմնախնդիրների, 1981 թ.-ից՝ Բժշկական կիրառելիության միջոցների փորձաքննության գիտական կենտրոնի դաշնային պետական վերահսկողության ինստիտուտների կենսաքիմիայի բաժնի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են տարբեր գերհույզային և ծայրահեղ ներգործությունների ժամանակ մարդու և կենդանիների օրգանիզմներում տեղի ունեցող նյութափոխանակային գործընթացների փոփոխությունների առանձնահատկություններին և նյութափոխանակության բացահայտված խախտումների շտկմանը՝ դեղամիջոցների կիրառմամբ:

Հեղինակ է՝ «Стресс и его значение для организма» (М., 1988):



ՏՈՆՈՅԱՆ ԱՆԱՀԻՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (16.07.1942, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1996), պրոֆ. (2009):
Ս. Պ. Դավթյանի կինը:

Ավարտել է Երևանում դպրոցը (1960), ապա ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը (1965), այնուհետև ԽՍՀՄ ԳԱ Չեռնոգոլովկայի քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան և 1974 թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն «Адиабатическая полимеризация стирола и метилметакрилата» թեմայով, դոկտորական ատենախոսության թեման եղել է «Кинетические закономерности неизотермической полимериазции» (ՀՀ ԳԱԱ Քիմիական ֆիզիկայի ինստիտուտ):

Աշխատել է ՌԴ ԳԱ Չեռնոգոլովկայի քիմիական ֆիզիկայի ինստիտուտում, իսկ 1991 թ.-ից (Երևան տեղափոխվելուց հետո)՝ ՀԱՊՀ պոլիմերացման պրոցեսների մակրոկինետիկայի, այնուհետև Պոլիմերային նանոտեխնոլոգիաների ԳՀ լաբորատորիայի գիտական ղեկավար:

Աշխատանքները վերաբերում են ստիրոլի և մեթիլմետակրիլատի ադիաբատ պոլիմերման առանձնահատկությունների և ոչ իզոթերմիկ պոլիմերման կինետիկական օրինաչափությունների ուսումնասիրմանը: Համահիմնադիր է «Պոլիմերացում ոչ իզոթերմ՝ ադիաբատ և ճակատային (ֆրոնտալ) պայմաններում» նոր գիտական ուղղության:

Հեղինակ է ավելի քան 350 աշխատության, 3 մենագրության (Ս. Դավթյանի համահեղինակությամբ) և 20-ից ավելի արտոնագրի: Ղեկավարել է միջազգային մի քանի դրամաշնորհային ծրագրեր: Եղել է ՀՀ նախագահի մրցանակի դափնեկիր (Ս. Դավթյանի հետ) (2015), ՀԱՊՀ ոսկե հուշամեդալակիր (2018), ՀՀ ԿԳՆ ԳՊԿ «Արդյունավետ գիտաշխատող» (2016, 2017),

Վրաստանի Քիմիկոսների միության պատվավոր անդամ, գիտական, մասնագիտական և խմբագրական խորհուրդների անդամ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 14 ատենախոսություն:

ՓԱՆՈՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳԵՎՈՐԳԻ (31.01.1949, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1986), պրոֆ. (1994):

Ավարտել է ԵՊՀ-ն (1971): 1975-1985 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ ՆՕՔԻ-ում, 1985-1994 թթ.՝ Բժշկական ճառագայթաբանության ինստիտուտի բժշկական քիմիայի և կենսաքիմիայի դեղաբանության լաբորատորիայի վարիչ, 1994-2000 թթ.՝ Դեղերի և բժշկական տեխնիկայի հայկական գործակալության փոխտնօրեն, 2001-2004 թթ.՝ «Էքսլաբ» փորձաքննական վերլուծական լաբորատորիայի տնօրեն, 2002-2003 թթ.՝ ԱԱԻ դեղերի և դեղորայքային քաղաքականության կարգավորման ամբիոնի պրոֆ., 2003 թ.-ից՝ Շվեդիայի դեղաբույսերի ինստիտուտի գիտական նախագծերի տնօրեն:

Աշխատանքները վերաբերում են բնական և ֆիզիոլոգիապես ակտիվ միացությունների, նաև կենդանական և բուսական ծագման դեղանյութերի ուսումնասիրության հիմնախնդիրներին:

Եղել է ՀՀ դեղաբանների ընկերության խորհրդի նախագահության (1995), Զ. Սորոսի միջազգային գիտական հիմնադրամի (1995), Նյու Յորքի ԳԱ (1996) անդամ:



ՓԱՇԱՅԱՆ ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ (05.02.1951, գ. Նալբանդ (Շիրակամուտ), Լոռու մարզ), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1999 Երևան, 2000 Մոսկվա), պրոֆ. (2003):

Ծնվել է Սիրիայից գաղթած (1946) ծագումով Մուսալեոցի Ալեքսանդր Փաշայանի ընտանիքում: 1972 թ. ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: 1973-1976 թթ. սովորել է Մոսկվայի Կարպովի անվան ֆիզիկաքիմիական ինստիտուտի ասպիրանտուրայում և պաշտանել թեկնածուական թեզ (1977):

Աշխատել է ԻՌԵԱ-ի հայկական մասնաճյուղում և Երևանի քիմիական ռեակտիվների գործարանում (1978-1994): 1994 թ.-ից մշտական բնակու-

թյան է տեղափոխվել ՌԴ Բրյանսկ քաղաք: Աշխատել է Բրյանսկի ֆոսֆորիտային գործարանում որպես գլխավոր ճարտարագետ: 2000-2017 թթ. եղել է Բրյանսկի ճարտարագիտատեխնոլոգիական համալսարանի քիմիայի ամբիոնի վարիչը, այնուհետև՝ պրոֆեսոր:

Հեղինակ է 300-ից ավելի գիտական աշխատանքների, այդ թվում 3 մենագրության, 35 ՀՀ-ի, ՌԴ-ի, Եվրագիայի արտոնագրերի և հեղինակային իրավունքների:

Գիտական հետազոտությունները նվիրված են՝ լուսաքիմիական գործընթացների մեխանիզմների հետազոտմանը և դրանց տեխնոլոգիաների մշակմանը, օրգանական ռեակտիվների սինթեզ՝ քիմիական արդյունաբերության թափոնների վերամշակմամբ, լուսա- և ջերմաքիմիական գործընթացների համատեղությամբ արդյունաբերական թափոնների, երկրորդային հումքի և հոսքաջրերի վերաօգտագործման տեխնոլոգիաների մշակում, նավթով աղտոտված հողերի վերականգնման տեխնոլոգիաների մշակում քիմիական պատիճավորման եղանակով:

Ա. Փաշայանը վարում է ակտիվ հասարակական և գրական գործունեություն, Բրյանսկի հայկական համայնքի հիմնադիրներից է և նախագահը (2000):

Ղեկավարել է 10 թեկնածուական ատենախոսություն:

Անդամ է Էկոլոգիայի և կենսապահպանման միջազգային գիտությունների ակադեմիայի (МАНЭБ, 2003 г., Санкт-Петербург):



ՓԻՐՈՒՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՊԵՏՐՈՍԻ (29.06.1951,

Երևան – 23.06.2020, Երևան), քիմիկոս: Տեխ. գիտ. դոկ. (1997), պրոֆ. (2002), ՀՀ գիտության վաստակավոր գործիչ (2011): ՀՀ-ում էկոլոգիական քիմիայի և ջրաքիմիայի գիտական դպրոցների հիմնադիրն է:

1968 թ. ավարտել է թիվ 19 միջնակարգ դպրոցը, 1973 թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը և ընդունվել ասպիրանտուրա ֆիզքիմիայի գծով: 1979 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1996 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1979-1984 թթ. եղել է ԵՊՀ ֆիզքիմիայի ամբիոնի ասպիրանտ և կրտսեր գիտաշխատող, 1984-1991 թթ.՝ ավագ, 1992-1996 թթ.՝ առաջատար գիտաշխատող և գիտա-

կան թեմայի ղեկավար, 1996-2002 թթ.՝ դոցենտ, 2002-2007 թթ.՝ պրոֆեսոր, 2007-2015 թթ.՝ ԵՊՀ էկոլոգիական քիմիայի ամբիոնի վարիչ, 2009-2020 թթ. ԵՊՀ էկոլոգիական անվտանգության կենտրոնի ղեկավար:

Գիտական հետազոտությունները վերաբերում են շրջակա միջավայրում աղտոտիչների փոխարկումների և վարքի ուսումնասիրությանը, բնական ջրի էկոքիմիական առանձնահատկությունների և դրանցում հատակային նստվածքագոյացումների դերի պարզաբանմանը: Զբաղվել է նաև մակերևութային ջրերի ջրաքիմիական ուսումնասիրությամբ և թափոնաջրերի մաքրման ժամանակակից եղանակների մշակման ու կիրառության հարցերով:

Հեղինակ է 340 աշխատության, 11 կոլեկտիվ մենագրությունների, 21 արտոնագրի, որոնց համար արժանացել է ՌԲԱ Ա. Նոբելի անվան ոսկե մեդալի, «Բնական ջրերի էկոլոգաջրաքիմիական գնահատման մեթոդաբանություն» (Եր., 2008) մենագրության, «էկոլոգիական քիմիա» (Եր., 2008) գիտամեթոդական ձեռնարկի, «էկոլոգիական տերմինների և բառակապակցությունների բառարան»-ի (Եր., 2005), «Geoecological evaluational integrating index of natural waters and other systems» գիտական մենագրության, համահեղինակ է 3 դպրոցական դասագրքի և ձեռնարկի, 1 բուհական դասագրքի:

Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 22 և դոկտորական 3 ատենախոսություն:

Եղել է էկոլոգիայի միջազգային ակադեմիայի (1996), Նյու Յորքի (1996), ՌԴ բնական (2002) ԳԱ-ների, Ամերիկյան աշխարհագրական ընկերության (1997) անդամ, «Ջուր-էկոլոգիա-բժշկություն» միջազգային ընկերության ազգային փորձագետ (1997-ից), ինչպես նաև միջազգային և հանրապետական մի շարք գիտական և հրատարակչական խորհուրդների անդամ: ՀԽՍՀ ԼԿԵՄ մրցանակակիր (1980):

Արժանացել է «Սուրբ Անդրեյ Առաջնականի» ռուսական կայսերական բարձրագույն, Վատիկանի «Սուրբ Գաբրիել», Մալթիական միաբանության «Մալթիական Խաչ» ջրանշանների, բազմաթիվ տիտղոսների, մեդալների և պաշտոնական հուշամեդալների:



ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ ՊԱՊԱ ԲԵՋԱՆԻ (10.07.1887, գ. Արդվի, Լոռու մարզ – 21.02.1942, անհատի պաշտամունքի գոհ), ագրոքիմիկոս, մանրէաբան: Գյուղ. գիտ. դոկ. (1934), պրոֆ. (1934), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1935):

Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1905), Լայպցիգի համալսարանի բնագիտության ֆակուլտետը (1911) և ստացել դոկտորի աստիճան:

Աշխատել է Պոլտավայում որպես մանրէաբան, ապա անցել գիտական աշխատանքի Մոսկվայի գյուղատնտեսական մանրէաբանության կայանում: 1914-1918 թթ. եղել է Թիֆլիսի գյուղատնտեսության դեպարտամենտի լաբորատորիայի մանրէաբան: 1919 թ. տեղափոխվել է Հայաստան և 1920 թ. նշանակվել հողժողկոմիսարի տեղակալ: 1922-1932 թթ. եղել է ԵՊՀ գյուղատնտեսական ֆակուլտետի առաջին դեկանը, 1930-1937 թթ.՝ ՀԳԻ-ի պրոռեկտոր:

1923 թ. նշանակվել է հողժողկոմի և Ժողտնտխորհի կենտրոնական միացյալ լաբորատորիայի ղեկավար և ագրոհողագիտության ԳՀ կայանի տնօրեն:

ԵՊՀ-ում դասավանդել է «Մանրէաբանություն», «Հողագիտություն», «Ագրոքիմիա» և «Երկրագործություն» առարկաները: Մեծ աշխատանք է կատարել որակյալ մասնագետների պատրաստման ուղղությամբ: Եղել է նաև ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի հիմնադիրներից և նախագահության առաջին անդամներից:

1934 թ., առանց ատենախոսության պաշտպանության, նրան շնորհվել է գյուղ. գիտ. դոկ. գիտական աստիճան և պրոֆեսորի կոչում:

Աշխատանքները վերաբերում են ՀԽՍՀ հողերի ֆիզիկաքիմիական հատկությունների, ագրոքիմիական և մանրէաբանական առանձնահատկությունների, Սևանա լճի ջրի միկրոֆլորայի, բամբակենու փտախտի հարուցիչների հայտնաբերման, պալարամանրէների տարածվածության հարցերին:

Հեղինակ է՝ «Տեղական պարարտանյութեր» (Եր., 1936); «Эффективность удобрения и условия их применения в Вагаршапатском районе» (Ե., 1935):

1937 թ. սեպտեմբերի 23-ին ձերբակալվել է, 1939 թ. սեպտեմբերի 6-ին դատապարտվել 6 տարվա ազատազրկման ուղղիչ աշխատանքային գաղութում: 1940 թ. մարտի 17-ին վճիռը բեկանվել է, գործն ուղարկվել վերանայման: 1941 թ. սեպտեմբերի 3-ի դատավճռով արքայազնի և Ռազմաօդային 5 տարի ժամկետով: 1942 թ. փետրվարի 20-ին մահացել է բանտի հիվանդանոցում:

1955 թ. արդարացվել է:



ՔԱՆՔԱՆՅԱՆ ԱՂԱՍԻ ԳԱՐԵԳԻՆԻ (17.09.1904, Վան – 15.01.1999, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. թեկն. (1939), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1970):

1915 թ. նրանց ընտանիքը գաղթել է Երևան: 1924 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը, 1928 թ.՝ ԵՊՀ գյուղատնտեսական ֆակուլտետը, 1933-1935 թթ. սովորել է Լենինգրադի համալսարանի ասպիրանտուրայում: 1939 թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն, 1941 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1928 թ.-ից աշխատել է ԵՊՀ անալիտիկ քիմիայի ամբիոնում որպես լաբորանտ, ապա՝ ասիստենտ, 1941-1985 թթ.՝ դոցենտ: 13 տարի համատեղությամբ դասավանդել է նաև ՀԳԻ-ում, շուրջ 10 տարի աշխատել ՀԽՍՀ ԳԱ քիմիայի ինստիտուտում:

Գիտական հետազոտությունները սկսելով միջմետաղական միացությունների ստացման հարցերից՝ հետագայում գերազանցապես հետաքրքրվել է անօրգանական իոնների բաժանման և որոշման, տարրերի համակարգաբաժանման և այլ խնդիրներով, որպես նրբաշերտ քրոմատոգրության կրիչներ, օգտագործելով ՀԽՍՀ բնական կլանիչները:

Հեղինակ է շուրջ 150 գիտական հոդվածի, «Անալիտիկ քիմիայի խնդիրներ և վարժություններ» (Եր., 1974); «Որակական քիմիական անալիզի գործնական աշխատանքներ» (Եր., 1977); «Որակական քիմիական անալիզի տեսական հիմունքներ» (Եր., 1979) ձեռնարկների և համահեղինակ՝ «Վերլուծական քիմիայի ծրագրավորված խնդիրների ժողովածու» (Եր., 1984); «Քիմիական անալիզի հիմունքներ» (Եր., 1985) գրքերի:

Ակտիվորեն մասնակցել է ԵՊՀ հասարակական աշխատանքներին:

Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով ու մեդալներով:



ՔԱՄԱԼՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՈՍԿԱՆԻ (10(23).03.1909, Շուշի – 09.05.1973, Երևան), կենսաքիմիկոս: Կենսբ. գիտ. դոկ. (1953), պրոֆ. (1954), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1960): Գյուղատնտեսական կենսաքիմիայի հիմնադիրը ՀԽՍՀ-ում: Ռ. Գ. Քամալյանի հայրը:

Սկզբնական կրթությունը ստացել է Արցախի Մարտունու շրջանի Գիշի գյուղում, 1925 թ. ընդունվել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումը, 1936 թ. ավարտել է ԵԱԱԻ անասնաբուժական ֆակուլտետը և ընդունվել ասպիրանտուրա կենսաքիմիա մասնագիտությամբ: 1939 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ և աշխատանքի անցել Հայաստանի Կոմկուսի կենտրոնում որպես գյուղբաժնի վարիչի տեղակալ: Հայրենական մեծ պատերազմի սկզբից մեկնել է ռազմաճակատ և մասնակցել Տազանրոզի, Ռոստովի, Նովորոսիյսկի թեժ մարտերին: Ծանր վիրավորվել է և ապաքինվելուց հետո 1943 թ. նոյեմբերին նշանակվել է Սոչիի «Պրավդա» զինվորական հոսպիտալի պետի տեղակալ, իսկ 1944 թ. նոյեմբերից՝ հոսպիտալի պետ, որտեղ ծառայել է մինչև զորացրվելը: Պարգևատրվել է Կարմիր աստղ շքանշանով և մեդալներով:

1946-1973 թթ. եղել է ԵԱԱԻ կենսաքիմիայի և օրգանական քիմիայի ամբիոնի վարիչը, իսկ 1955-1972 թթ.՝ ԵԱԱԻ-ի ռեկտոր:

Գիտական հետազոտությունները նվիրված են ամինասպիրտների, մասնավորապես, էթանոլամինի կենսաբանական ակտիվության ուսումնասիրությանը, ստացված արդյունքները առաջարկվել և կիրառվել են գյուղատնտեսական կենդանիների աճի խթանման, մարդկանց և կենդանիների աղեստամոքսային ուղու հիվանդությունների բուժման համար:

Հեղինակ է ավելի քան 125 աշխատության, հինգ հեղինակային վկայականի և 3 մենագրության: Մասնակցել է միջազգային և համամիութենական բազմաթիվ գիտաժողովների և կոնգրեսների:

Համահեղինակ է «Բիոքիմիա» (1964) ուսումնական ձեռնարկի և հեղինակ «Կոլամինը որպես կենդանիների և բույսերի աճի խթանիչ» (Եր., 1965); «Коламин и его биологическое значение» (Է., 1960) գրքերի:

Նրա խորհրդատվությամբ և ղեկավարությամբ պաշտպանվել են դոկտորական 7 և թեկնածուական 25 ատենախոսություն:

Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի և Հոկտեմբերյան հեղափոխության ջրանշաններով, համամիութենական և հանրապետական պատվոգրերով, եղել է ՀՀ ԿԿ-ի անդամության թեկնածու, Երևանի քաղաքային խորհրդի պատգամավոր:



ՔԱՄԱԼՅԱՆ ՌՈՍԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ (07.11.1937, Երևան – 08.07.2020, Երևան), կենսաքիմիկոս: Կենսագիտ. դոկ. (1985), պրոֆ. (1990): Գ. Ո. Քամալյանի որդին:

Ավարտել է Երևանի թիվ 20 դպրոցը, իսկ 1962 թ.՝ ԵՊԲԻ: Արզնիի առողջարանում աշխատել է բժիշկ, 1964-1967 թթ. սովորել է Կենսաքիմիայի ինստիտուտի ասպիրանտուրայում, 1968 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

Աշխատել է ԵԱԱԻ բաժնի վարիչ (1970-1995), ՀՀ ԳԱԱ կենսաքիմիայի ինստիտուտի ֆերմենտների ակտիվության կարգավորման լաբորատորիայի վարիչ (1995 -2000), միաժամանակ ԵՊՀ կենսաքիմիայի ամբիոնի (1996-2004) և Սլավոնական համալսարանի դասախոս (2008-2011), ՀԱԱՀ կենսաքիմիայի և ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ (2000-2019):

Ուսումնասիրել է նյարդաակտիվ ամինաթթուների մետաբոլիզմի յուրահատկությունները ուղեղի միտոքոնդրիումներում և բացահայտել դրանց կարգավորման մեխանիզմները: Ցույց է տվել, որ ուղեղի և լյարդի միտոքոնդրիումներում դեամինո-ՆԱԴ-ը նպաստում է ասպարագինա և գլյուտամինաթթվի յուրացմանը, որը զուգորդվում է ամոնիակի առաջացմամբ: Հայտնաբերել է էթանոլամինի ագետիլացման դարձելի ռեակցիան, ցույց է տվել N-ացետիլէթանոլամինի խթանիչ ազդեցությունը հավի սաղմի զարգացման և ճտերի աճի վրա, պարզաբանել է էթանոլամինի և ագետիլ-էթանոլամինի հակաալերգիկ և O-սուլֆոէթանոլամինի հակասթրեսային ազդեցությունները, առաջարկել այն որպես հորթերի փոխադրական սթրեսի կանխման գործոն: Քամալյանի կողմից պարզաբանվել են էթանոլամինի և դրա ածանցյալների ֆիզիոլոգիական ակտիվության հիմքում ընկած նյար-

դահորմոնալ մեխանիզմները: Հայտնաբերել է գլյուտամինից ԳԱԿԹ-ի սինթեզի այլընտրանքային ուղին և վերջին տարիներին ուսումնասիրել է պատվաստված ուռուցքի (սարկոմա-45) աճի վրա ցուլի սպերմայի ազդեցությունը և ցույց տվել ուռուցքի աճի կանխումը: Տվյալ ազդեցությունը բացատրել է սպերմատոզոիդների թաղանթում, համեմատ ուռուցքային բջիջների, ավելի բարձր իմունահենությանը օժտված ուռուցքային հակաճինների առկայությամբ:

Հեղինակ է 135 գիտական աշխատության, 3 հեղինակային վկայականի, 1 դասագրքի և 2 ուսումնական ձեռնարկի: Հեղինակ է նաև «Մտորումներ ճանապարհին» (ռուս., 1990) և «Նաիրի երկրում» (ռուս., 1999) բանաստեղծությունների ժողովածուների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկանածուական 10 ատենախոսություն:

Եղել է ԵԱԱԻ-ի կուսկոմիտեի քարտուղար, Երևանի Մյասնիկյանի շրջխորհրդի պատգամավոր, մասնագիտական, գիտական և խմբագրական խորհուրդների, Միջազգային (1997) և Եվրոպական (1997) նյարդաքիմիկոսների, Հայաստանի կենսաքիմիկոսների և նյարդաքիմիկոսների (1966) ընկերությունների անդամ:



ՔԱՄԱԼՅԱՆ ՕԼԵԳ ԱՐՄԱՆԻ (29.12.1951, ք. Ճարտար, Արցախի Հանրապետություն), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (2009), պրոֆ. (2011):

1969 թ. Ճարտարում ավարտել է դպրոցը և նույն թվականին ընդունվել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: 1970 թ. կամավոր մեկնել է ծառայության ԽՍՀՄ բանակում: Ծառայությունն ավարտելուց հետո ուսումը շարունակել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում, որն ավարտել է 1977 թ.:

Դիպլոմային աշխատանքը կատարել է ԽՍՀՄ ԳԱ էլեմետօրգանական քիմիայի ինստիտուտում: 1977 թ. աշխատանքի է անցել ԵՊՀ տեսական քիմիայի ամբիոնում որպես լաբորանտ, այնուհետև ուսումնական լաբորատորիայի վարիչ և դոցենտ:

1989 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1993 թ. ՀՀ հատուկ ծրագրերի պետական վարչության կողմից գործուղվել է Արցախի

պետական համալսարան որպես դասախոս, իսկ 1993-1994 թթ.՝ քիմիայի ամբիոնի հիմնադիր-վարիչը: Բացի դասախոսական և ուսումնակազմակերպչական աշխատանքներից՝ որոշակի աշխատանքներ է իրականացրել ԼՂՀ ՊԲ մարտունակության ամրապնդման բնագավառում, որի համար պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով: 2006-2007 թթ. եղել է ԼՂՀ գնահատման և թեստավորման կենտրոնի հիմնադիր-տնօրեն, 2007-2012 թթ.՝ ԵՊՀ ֆիզիկական և կոլոիդների քիմիայի ամբիոնի դոցենտ և պրոֆեսոր, 2012-2019 թթ.՝ ՀԱԱՀ ընդհանուր քիմիայի ամբիոնի վարիչ, այնուհետև՝ նույն ամբիոնի պրոֆեսոր:

Հեղինակ է 100-ից ավելի գիտական աշխատության, մի քանի ուսումնամեթոդական աշխատանքների և ձեռնարկների: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 առենախոսություն:



ՔԱՄԱԼՈՎ ՀԵՐԲԵՐՏ ԼԵՈՆԻ (08.06.1940), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ., Ուկրաինայի ԳԱԱ և ՀՀ ԳԱԱ (2011) անդամ:

Ուկրաինայի ԳԱԱ Ա. Վ. Բոգատսկու անվան ֆիզիկաքիմիական ինստիտուտի բաժնի վարիչ:

Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ (1992), Ուկրաինայի պետական մրցանակ գիտության և տեխնիկայի բնագավառում (2003):

ՔՅՈՒՐՔՉՅԱՆ ԱՆԱՀԻՏ (Քըրք Ջին) (ԱՄՆ, Նյու Յորք), քիմիկոս:

Սովորել է Նյու Յորքի, Փարիզի և Գրասի համալսարաններում: 1930-ական թթ. ամերիկյան մի քանի քաղաքներում դասախոսություններ է կարդացել օժանելիքի պատրաստման վերաբերյալ՝ գտնելով, որ օժանելիքի արտադրությունը ոչ միայն քիմիա է, այլ նաև արվեստ: Նրա այդ տեսակետը մեծ հետաքրքրություն է առաջացրել ԱՄՆ-ում, նրա մասին բազմիցս գրվել է մամուլում:



ՔՈՉԱՐՅԱՆ ՍԱՍՈՒՆ ՏԻԳՐԱՆԻ (04.07.1935, գ. Ոսկեհասկ, ՀՀ Շիրակի մարզ – 19.4.2006, Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1986), պրոֆ. (1992):

Ավարտել է ԵՊՀ-ն (1962): 1986 թ.-ից աշխատել է ՀՀ ԳԱԱ ՕՔԻ-ում, 1991 թ.-ից՝ Ամինամիացությունների լաբորատորիայի վարիչ:

Աշխատանքները վերաբերում են ամինների և չորրորդային ամոնիումային միացությունների քիմիական փոխարկումներին, ամոնիումային աղերի ներմոլեկուլային և միջմոլեկուլային C- և N-ալկիլմանր (Սթիվենսի և Սոմլեի վերախմբավորումներ, վերախմբավորում-ճեղքում), հալոգենացման և ապահիդրոհալոգենացման ռեակցիաների ուսումնասիրմանը:

Եղել է մասնագիտական և գիտական խորհուրդների և ՌԴ բնական ԳԱ անդամ (1998):



ՔՐԻՍՏՈՍԴՈՒՐՅԱՆ ԵՐՎԱՆԴ ԹԱԴԵՎՈՍԻ (1912, Ռոստովի մարզ, Մյասնիկյանի շրջան, Չալդր գյուղ – 1995, Երևան), քիմիկոս-տեխնոլոգ, ճարտարագետ: Քիմ. գիտ. թեկնածու (1955), դոցենտ (1959), ՀՍՍՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործիչ:

Միջնակարգ կրթությունը ստացել է Ռոստովում (1930): 1930-1932 թթ. աշխատել է Արմավիրում որպես դպրոցի ուսուցիչ: 1932 թ. ընդունվել և 1938 թ. գերազանցությամբ ավարտել է ԵՊԻ քիմիատեխնոլոգիական ֆակուլտետը: Դեռևս ուսանողական տարիներին զբաղվել է մանկավարժական գործունեությամբ. 1936 թ. եղել է լաբորանտ, 1937 թ.՝ ասիստենտ: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1946 թ. զորացրվելով՝ շարունակել է գիտամանկավարժական գործունեությունը ԵՊԻ-ում, որտեղ նշանակվել է ավագ դասախոս անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնում և երկար տարիներ դասավանդել «Ընդհանուր և անալիտիկ քիմիա» դասընթացը:

1966 թ. ընտրվել է ԵՊԻ նորաստեղծ քիմիայի ամբիոնի վարիչ, աշխատել մինչև 1975 թվականը, որից հետո նշանակվել է ընդհանուր և անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ:

Գիտահետազոտական աշխատանքները նվիրված են քիմիական կատալիզի բնագավառին: Հեղինակ է հոդվածների և ուսումնամեթոդական ձեռնարկների:



ՕՐԴԱՆՅԱՆ ՍՈՒՔԻԱՍ ՍԵՄՅՈՆԻ (11.12.1934), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2008):

Սանկտ Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտի նուրբ տեխնոլոգիական կերամիկայի քիմիական տեխնոլոգիայի ամբիոնի վարիչ:



ՕՐԴՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԲԱԽՇԻ (27.09.1928, Գորիս – Երևան), քիմիկոս: Քիմ. գիտ. դոկ. (1968), պրոֆ. (1970):

Ավարտել է ԵՊՀ-ն (1953): 1969-1994 թթ. եղել է ԵՊԲՀ օրգանական, ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոնի վարիչ, 1996 թ.-ից՝ Դեղագիտական քիմիայի ամբիոնի պրոֆեսոր:

Աշխատանքները վերաբերում են պենտենների հիդրոկոնդենսման, ածխաջրածինների կարբալկոքսիդացման ռեակցիաների հետազոտմանը: Մշակել է թափոն մեթիլացետատից պոլիվինիլսպիրտի ստացման, քացախաթթվի և մեթանոլի ստացման անընդհատ եղանակ, որը ներդրվել է Սևերոդոնեցկի (Ուկրաինա) քիմիական կոմբինատում (1971): Սինթեզել է կենսաբանորեն ակտիվ պորֆիրիններ, արյան ճնշումը և պսակաձև անոթների դիմադրողականությունն իջեցնող և հակաջղաձգային հատկություններով օժտված նյութեր:

Եղել է ՌԴ բնական ԳԱ, գիտական և մասնագիտական խորհուրդների անդամ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արծվի Բախչինյան, Ծագումով հայ են, Ապարոն, Եր., 1993:
2. Գ. Մարտիրոսյան, Ս. Հարությունյան, Հ. Աղազուլյան, Լ. Մարկոսյան, Թ. Մոսինյան, Հայ գլխավոր կոնստրուկտորները, Զանգակ-97, Եր., 1999:
3. Երևանի պետական համալսարանը վավերագրերում, կազմող՝ Վ. Ս. Մաղալյան, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 2009:
4. Է. Զոհրաբյան, Հ. Միրզոյան, Գորիսի հանրագիտարան, «ՎՄՎ-Պրինտ» հրատ., Եր., 2008:
5. Լ. Պ. Ղարիբջանյան, Մեր անվանի դասախոսները, ԵՊՀ հրատարակչություն, I մաս՝ 1970 թ., II մաս՝ 2006 թ., III մաս՝ 2009 թ.:
6. Լևոն Սողոմոնյան (Նովել), Արծվանիստ Զեյթուն, ՀՀ «Տոնուս» ընկերություն (նախագահ՝ Աշոտ Տոնոյան) հրատարակչություն, Եր., 2007:
7. Խորհրդային Հայաստան: Հայկական խորհրդային հանրագիտարան, Երևան, 1987:
8. Կենսագրական հանրագիտարան, ԵՊՀ հրատ., Եր., 2019:
9. Հ. Այվազյան, Օրերի անձանձիր հոլովոյթում, Եր., 2015:
10. Հայկական համառոտ հանրագիտարան, Եր., 1990:
11. Հայկական սովետական հանրագիտարան, Եր., 1974-1986:
12. Հայկական քիմիական ամսագիր, ՀԳԱ հրատարակչություն, Եր., 1960-2019 թթ.:
13. Ով ով է, հայեր (կենսագրական հանրագիտարան), Հայկական հանրագիտարան. հրատ., Եր., հատոր 1, 2015, հատոր 2, 2007:
14. Ռ. Եղ. Գևորգյան, Մեծ քիմիայի «առեղծվածը», Եր., 2010:
15. Ս. Կ. Գրիգորյան, Ռ. Ս. Հարությունյան, ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի պատմությունը (1919-2019), ԵՊՀ հրատ., Եր., 2019:
16. Տ. Տ. Ղազանջյան, Սահակ Ծաղկարար, Եր., 1958; Очерки по истории химии в Армении, Е., 1955:
17. Некоторые успехи органической и фармацевтической химии. Сборник трудов, вып. 2, Е., 2015.
18. Персональный Состав АН за 1943-1983 гг., Академия Наук Арм. ССР, Изд. АН Арм. ССР, Е., 1984.
19. Развитие химической промышленности в СССР (1917-1980), под ред. Л. А. Костандова, Н. М. Жаворникова, изд. «Наука», т. 1-2, М., 1984.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ՀԳԻ - Հայաստանի գյուղատնտեսական ինստիտուտ
- ԵԲԻ - Երևանի բժշկական ինստիտուտ
- ԺՏԽ - Ժողովրդական տնտեսության խորհուրդ
- ԵՊԲԻ - Երևանի պետական բժշկական ինստիտուտ
- ԵԱԱԻ - Երևանի անասնաբուժական անասնաբուծական ինստիտուտ
- ՀՊՄԻ(Հ) - Հայաստանի պետական մանկավարժական ինստիտուտ (համալսարան)
- ՈՒԳՀԸ - Ուսանողական գիտական հանրապետական ընկերություն
- ԳՀ - Գիտահետազոտական
- ԳՀԻ - Գիտահետազոտական ինստիտուտ
- ԵՊՀ - Երևանի պետական համալսարան
- ՀՀՃԱ - Հայաստանի Հանրապետության ճարտարագիտական ակադեմիա
- ԷՄԱ - Էկոլոգիական միջազգային ակադեմիա
- Ռ-Դ բնական ԳԱ - Ռուսաստանի դաշնության բնական գիտությունների ակադեմիա
- ԵԲԳԱ - Եվրոպայի բնական գիտությունների ակադեմիա
- ՀԳԳԱ - Հայաստանի գյուղատնտեսական գիտությունների ակադեմիա
- ՖԿՊԻ - Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ
- ՀԱԱՀ - Հայաստանի ազգային ագրարային համալսարան
- ԵԱԱ ԳՀԻ - Երևանի անասնաբուժական-անասնաբուծական գիտահետազոտական ինստիտուտ
- ՀԲԻ - Հայկական բժշկական ինստիտուտ
- ԺՏՆՑ - Ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդես
- ԿԳՆ ԳՊՀ - Կրության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե
- ԳՏՊԿ - Գիտության և տեխնիկայի պետական կոմիտե
- ՀՀ ԱՆ - ՀՀ առողջապահության նախարարություն
- ԳՄԻ - Գյումրիի մանկավարժական ինստիտուտ
- ՄՊՀ - Մոսկվայի պետական համալսարան
- ՌԳԱ - Ռուսաստանի գիտությունների ակադեմիա
- ԵԺՏԻ - Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտ
- ԱԱԻ - Ազգային առողջապահության ինստիտուտ

- ԵՊՏՀ - Երևանի պետական տնտեսագիտական համալսարան
 ՄՔՏՈՒ - Մոսկվայի Բաումանի անվան տեխնիկական ուսումնարան
 ԸԱՔԻ - Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ
 ԼՏԻ - Լենսովետի անվան տեխնոլոգիական ինստիտուտ
 ՀԿԿԿ - Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոն
 ԵՃՇՊՀ - Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան
 ՊՍՊԻ - Պոլիմերային սուսինձների պետական ինստիտուտ
 Արմֆան - ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղ (ԱրմՓԱԿ)
 ՌԴ ԲԳԱ - Ռուսաստանի դաշնության բժշկական գիտությունների ակադեմիա
 ՕՔԻ - Օրգանական քիմիայի ինստիտուտ
 ՆՕՔԻ - Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ
 ԲՖԻ - Քիմիական ֆիզիկայի ինստիտուտ
 ՕԴՔԳՏԿ - Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնիկական կենտրոն
 ԳԱ - Գիտությունների ակադեմիա
 ԳԱԱ - Գիտությունների ազգային ակադեմիա
 ԵՊԻ - Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ
 ԳԱՄ - Գիտաարտադրական միավորում
 ԽՍՀՄ - Խորհրդային Սոտիալիստական Հանրապետությունների Միություն
 ՀԱՊՀ - Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան
 ՀԽՍՀ - Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն
 ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
 ՀՊՃՀ - Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան
 ՀՍՀ - Հայկական սովետական հանրագիտարան
 Բանֆակ - Բանվորական ֆակուլտետ
 ԶԷ և ՇՄՊ - ջերմաէներգետիկա և շրջակա միջավայրի պահպանություն
 ԲՆ և ԿՏ - բնապահպանություն և կենսատեխնոլոգիա
 ՀՕՆՍՏ -
 ՓԿԻ - Փորձարարական կենսաբանության ինստիտուտ
 գիտ. - գիտությունների
 դոկ. - դոկտոր
 թեկն. - թեկնածու

- ԳԿԿ – գիտակրթական կենտրոն
 քիմ. – քիմիական
 բժշկ. – բժշկական
 կենս. – կենսաբանական
 պրոֆ. – պրոֆեսոր
 գյուղ. – գյուղատնտեսական
 գիտ. – գիտությունների
 դոկ. – դոկտոր
 АПИ – Адрбежанский педагогический институт
 БАВ – Биологически активные вещества
 գեղ – գեղարվեստական
 ԱՆ – Առողջապահության նախարարություն
 ԲԿԳ – Բարձրագույն կրթության և գիտության
 ԴԲՏԳ – Դեղամիջոցների և բժշկական տեխնոլոգիաների գործակալություն
 ՄԱՆ – Մակերևութային ակտիվ նյութեր
 ՀԳՀԻ – Համամիութենական գիտահետազոտական ինստիտուտ
 Համ ԳՀԻ – Համամիութենական ԳՀԻ
 ԻԲՍ – Ինքնատարաձևող բարձրաջերմաստիճանային սինթեզ
 ՆԱԴ – Նիկոտինամիդ ադենին դինուկլեոտիդ
 ԳԱԿԹ – Գամմա-ամինակարգաթթու
 ԳԽ – Գերագույն խորհուրդ
 ԲԳԱ – Բժշկական գիտությունների ակադեմիա
 ՀՌՀ – Հայ-Ռուսական համալսարան
 ՔՏ – Քիմիատեխնոլոգիական
 ՔՃ – Քիմիաճարտարագիտական
 ՀԱՊՀ – Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան
 ԲԿԳՆ – Բարձրագույն կրթության և գիտության նախարարություն
 ՄԿՈՒԿ – Մոլեկուլի կառույցի ուսումնասիրման կենտրոն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 3

ՆԱԽԱԲԱՆ 4

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

ԱԲԵԼՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԻԳՐԱՆԻ 45

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ ԱԲՐԱՀԱՄԻ 45

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍԻԼՎԱ ՍԱՄՍՈՆԻ 46

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍԻՆԱՐԱ ԱՐԱՄԻ 46

ԱԴԻԲԵԿ-ՄԵԼԻՔՅԱՆ (ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ) ԱՐՏԱՇԵՍ ԻՍԱՀԱԿԻ 47

ԱԴՈՒՆՑ ԳԱԼՈՒՍՏ ԹԵՎՈՍԻ 47

ԱԶԱՏՅԱՆ ՎԱՂԱՐՇ ԴԱՎԹԻ 47

ԱԶԱՏՅԱՆ ՎԻԼԵՆ ՎԱՂԱՐՇԻ 48

ԱԹԹԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍԻ 49

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ ԼԵՎՈՆԻ 50

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ ԳԱՌՆԻԿԻ 51

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՍԵՐԳԵՅԻ 51

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԻԼԵՆ ՏԱՃԱՏԻ 52

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՔՆԱՐԻԿ ԱՆԱՆԻԿԻ 52

ԱԼԻԽԱՆՈՎ ՎԼԱԴԻՄԻՐ ԱՆՏԻՊԻ 53

ԱԼՁՈՒՋՅԱՆ ԱԶԱՏ ՀԱԿՈԲԻ 53

ԱԿՈՒՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ 54

ԱՂԱԲԱԼՅԱՆՑ ԳԵՈՐԳԻ ԳԵՐԱՍԻՄԻ 55

ԱՂԱԲԵԿՈՎ ՎԼԱԴԻՄԻՐ ԵՆՈՔԻ 56

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ ԽԱՉԱՏՈՒՐԻ 57

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ ԵՂԻՇԵԻ 57

ԱՂԱՋԱՆՈՎ ՄԻՔԱՅԵԼ ԻՈՍԻՖԻ 58

ԱՂԱՆՈՎ ԱԼԲԵՐՏ ՎԱՐԴԱՆԻ 59

ԱՂԱՋԱՆՅԱՆ ՅՈԼԱԿ ԵՓՐԵՄԻ 60

ԱՂԱՍՅԱՆ ՊԵՐՃ ԿԱՐԱՊԵՏԻ 60

ԱՂԲԱԼՅԱՆ ՍԵԴԱ ԳԱՐԵԳԻՆԻ 61

ԱՅՎԱԶՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄՆԱՑԱԿԱՆԻ 61

ԱՅՎԱԶՅԱՆ ՌԱՖԻԿ ՀՐԱՆՏԻ 63

ԱՆՏՈՆՅԱՆ ԱԻԴԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ	63
ԱՊԿԱՐՅԱՆ ՎԱՐՏԿԵՍ ԱՐԱՅԻ	64
ԱՊՐԻԿՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՎԱՐԴԵՎԱՆԻ	64
ԱՊՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՍԵՐԳԵՅԻ	65
ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱԼՎԱՐԴ ՍԱՀԱԿԻ	66
ԱՌՍՏԱՄՅԱՆ ԺԵՆՅԱ ՄԵԼԻՔԻ	66
ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ԱՐՄԵՆ ՄԱՄԻԿՈՆԻ	67
ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆԺԵԼԱ ԲՈՐԻՍԻ	68
ԱՍԼԱՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՇԱՔԱՐԻ	68
ԱՍԼԱՆՅԱՆ ՆՈՒՔԱՐ ԼԵՎՈՆԻ	69
ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ ԲՈԳԴԱՆ ՆԵՐՍԵՍԻ	69
ԱՎԱԳՅԱՆ ԲՈՐԻՍ ՊԵՏՐՈՍԻ	70
ԱՎԱԳՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՍԵՓԻ	70
ԱՎԱԳՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՆԱԶԱՐԻ	71
ԱՎԱԳՅԱՆՑ ՍԵՐԳԵՅ ՊԵՏՐՈՍԻ	72
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԻԴԱ ԱՎԵՏԻՍԻ	72
ԱՏՈՎՄՅԱՆ ԼԵՎՈՆ ՕՀԱՆԻ	73
ԱՐԾՐՈՒՆԻ ԱՆԴՐԵԱՍ (ԱՆԴՐԵՅ) ԵՐԵՄԻԱՅԻ	74
ԲԱԲԱԽԱՆՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԱՇՈՏԻ	75
ԲԱԲԱՅԱՆ ԱՐԱՔՍԻ ԹՈՎՄԱՍԻ	75
ԲԱԲԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ ՀՐԱՆՏԻ	77
ԲԱԲԱՅԱՆ ՀՐԱՆՏ ԳՐԻԳՈՐԻ	77
ԲԱԲԱՅԱՆ ՍՏԵՓԱՆ ԳՐԻԳՈՐԻ	78
ԲԱԲԱՅԱՆ ՎՈՎԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ	79
ԲԱԴԱՆՅԱՆ ՇԱԼԻԿՈ (ՇԱՎԱՐՇ) ՀՈՎԱԿԻՄԻ	80
ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ ԵՐՎԱՆԴ ԳՐԻԳՈՐԻ	81
ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԱՓՈՐ ՍՏԵՓԱՆԻ	82
ԲԱԴԴԱՍԱՐՈՎ (ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ) ԽԱԶԻԿ ՍԱՀԱԿԻ	83
ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ ՆԻՆԱ ՀԱՅԿԱԶԻ	83
ԲԵՅԼԵՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ ՄԱՆԿԵԼԻ	84
ԲՈՍՏԱՆՋԻՅԱՆ ՍԵՅՐԱՆ ԱՐՏԱՇԵՍԻ	85
ԲՈՒՆԻԱԹՅԱՆ ՀՐԱԶՅԱ ԽԱԶԱՏՈՒՐԻ	86
ԳԱԼՈՅԱՆ ԱՐՄԵՆ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ	87
ԳԱԼՍՅԱՆ ԱԼԵՔՍԵՅ ՇՄԱՎՈՆԻ	88

ԳԱԼՍՏՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ ՀԱՅԿԱՐԱՄԻ..... 89

ԳԱՅՔԱԿՅԱՆ (ՁԵՅԹՈՒՆՑ) ԴԱՆԻԵԼ ՍԵՂՐԱԿԻ 90

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ՄԱՐՏԻՐՈՍԻ 90

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ ՊԱՐՈՒՅՐԻ 91

ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ ՎԱՂԱՐՇԱԿԻ 92

ԳՅՈՒԼՁԱԴՅԱՆ ԱԶԱՏ ԱՐԱՄԱՅԻՍԻ..... 93

ԳՅՈՒԼՄԻՍԱՐՅԱՆ ԹԵՆԳԻՉ ԳՐԻԳՈՐԻ 93

ԳՅՈՒԼՅԱՆ ՄԻՀՐԱՆ..... 94

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԱ ԽԱԺԱԿԻ 94

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ ԼԵՎՈՆԻ..... 95

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ (ՀՐԱՆՏ) ՀԱՄԱԶԱՍՊԻ 95

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԻՆԵ ՌԱՖԱՅԵԼԻ..... 96

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՎԱՂԱՐՇԱԿԻ 97

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԿՈՍՏԱՆԴԻ..... 97

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ ԳՐԻԳՈՐԻ..... 99

ԳՈՒԼՈՅԱՆ ՅՈՒՐԱ ԱՐԱՀԱՄԻ 99

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱԼԲԵՐՏ ՎԱԶԻԿԻ.....100

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ 101

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՅՈՒԼՆԱՐԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ 102

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԱՐՏԱՇԵՍԻ..... 102

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԴՈԼՖ ԳՐԻԳՈՐԻ 103

ԴԱԴԱՅԱՆ ՍԼԱՎԻԿ ԱՐՇԱԿԻ..... 104

ԴԱՄԱԴՅԱՆ (ՏԱՄԱՏՅԱՆ) ՌԵՅՄՈՆ..... 105

ԴԱՆԱԳՈՒԼՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՀՐԱԶԻ..... 105

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ ՀԱԿՈՔԻ 107

ԴԱՆՂՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ ՏԻԳՐԱՆԻ..... 108

ԴԱՎԹՅԱՆ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆԻ..... 108

ԴԱՎԹՅԱՆ ԼԱՌԻՐԱ ՎԱՀՐԱՄԻ 110

ԴԱՎԹՅԱՆ (ԽԱՆՈՅԱՆ) ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՊԵՏԻ 110

ԴԱՎԹՅԱՆ ՄԻՍԱԿ ԱՐՇԱՄԻ..... 111

ԴԱՎԹՅԱՆ ՍԵՎԱՆ ՊԱՐՈՒՅՐԻ..... 112

ԴԱՐԲԻՆՅԱՆ ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐԻ 114

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ ՎԱՐԴԱՆԻ..... 114

ԴԵՄԻՐՉՕՂԼՅԱՆ ՎԱՀԱԳՆ ՍՏԵՓԱՆԻ..... 115

ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ ՍԵՂԱ ԿԱՐԵՆԻ	116
ԴՈՎԼԱԹՅԱՆ ՎՌԱՄ ՎԱՂԻՆԱԿԻ.....	117
ԴՈՒՐԳԱՐՅԱՆ ԱՆԺԵԼՈ ՀԱԿՈՐԻ	117
ԴՈՒՐԳԱՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ ԱՆԺԵԼՈՅԻ	118
ԵԴԻԳԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ ԱՄՐԱՍՏԱՆԻ	119
ԵՂՈՅԱՆ ՌԱՅԱ ՎԱՀԱՆԻ.....	120
ԵՂԻԿՅԱՆ ՍԵՐՈՐԵ	121
ԵՆԳՈՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՓԱՅԼԱԿԻ	121
ԵՆԻԿՈԼՈՊՅԱՆ (ԵՆԻԿՈԼՈՊՈՎ) ՆԻԿՈԼԱՅ ՍԵՐԳԵՅԻ.....	122
ԵՐԻՑՅԱՆ ՄԵԺԼՈՒՄ ԼԵՎՈՆԻ	124
ԶԱԼԻՆՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ (ՄԻՇԱ) ԳԱՐԵԳԻՆԻ	125
ԶԱԽԱՐՈՎ ԼԵՎ (ԱՍԼԱՆ) ԱՎԱԳԻ.....	126
ԶՈՒԼՈՒՄՅԱՆ ՆՇԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ	127
ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ՎԱՀԱՆԻ	127
ԹԱՀՄԱԶՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԾԵՐՈՒՆԻ	128
ԹԱՌԱՅԱՆ ՎԵՐԳԻՆԵ ՄԱԿԱՐԻ.....	129
ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՏԻԳՐԱՆԻ.....	131
ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՅՈՒՐԻ ՎԻԿՏՈՐԻ	132
ԹԱՎԱԴՅԱՆ ԼԵՎՈՆ ԱՂԱՍՈՒ	133
ԹՈՐՈՍԵՎԻՉ ԹԵՈԴՈՐ ԲՈԳԴԱՆԻ	134
ԹՈՐՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ	134
ԹՈՔՄԱԶՅԱՆ ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳԻ	136
ԹՈՓՈՒՋՅԱՆ ՎԻԳԵՆ ՕՆԻԿԻ.....	137
ԹՈՉՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ ԱՐՄԵՆԻ	138
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԲՈՐԻՍ ՊԵՏՐՈՍԻ	139
ԹՈՒՏԵԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ	139
ԻՆՃԻԿՅԱՆ ՄԱՅԱ ՀՐԱՆՏԻ.....	140
ԻՍԱԳՈՒԼՅԱՆՑ ՎԱՉԵ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ	141
ԻՐԱԴՅԱՆ ՄԵԼՔՈՆ ԱՐՓԻԱՐԻ	142
ԼՈՐՅԱՆ ՎԱՋԳԵՆ ԷԴՎԱՐԴԻ.....	142
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐՐԻԵԼ ՍԱՄՍՈՆԻ	143
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԼԱՎՐԵՆՏ ԱՐՏԱՎԱԶԴԻ	144
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԳՈՒՐԳԵՆԻ	144
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՌՈԼԱՆԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ	145

ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ԿԱՐՈ ԷՐԱՆԻ	145
ԽԱՉԻԿՅԱՆ ԼԵՎՈՆ ՄԻՔԱՅԵԼԻ	146
ԽԱՉԻԿՅԱՆ ՌԱՅԱ ԶԱՀԱՆԻ	147
ԽԱՌԱՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԼԵՎՈՆԻ	147
ԽԻՏԱՐՈՎ (ԽԻԹԱՐՅԱՆ) ՆԻԿՈԼԱՅ ԻՎԱՆԻ	149
ԽՐԻՄԱՅՆ ԱՇՈՏ	150
ԿԱՔԱԼՅԱՆ ՅՈՒՐԻ ԿՈՌՆԵՅԻ	150
ԿԱՋԱՐՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԳՈՒՐԳԵՆԻ	150
ԿԱՋՈՒՄՈՎ ՆՈՐԻԿ ԲԱԳՐԱՏԻ	151
ԿԱՏՎԱԼՅԱՆ ՀԱՄԼԵՏ	151
ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՍՄԲԱՏԻ	152
ԿԱՐԱԽԱՆՈՎ ԷԴՈՒԱՐԴ ԱՎԵՏԻՍԻ	152
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՆՈՐԱՅՐ ԳԱՐԵԳԻՆԻ	153
ԿԱՐԱՊԵՏՅԱՆՑ ՄԻՔԱՅԵԼ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ	153
ԿՆՅԱՋՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ ԲԱԲԿԵՆԻ	154
ԿՆՈՒՆՅԱՆՑ ՀՈՎՀԱՆՆԵՍ (ԻՎԱՆ) ԼՅՈՒԴՎԻԳԻ	154
ԿՈՍՏԱՆԴՈՎ ԼԵՆԻՆԴ ԱՐԿԱԴԻԻ	156
ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ ԵՐԱՆՈՍԻ	157
ԿՈՍՏԱՆՅԱՆ ԿՈՍՏԱՆ ԱՐՏԱՎԱՋԴԻ	157
ԿՐԻԿՈՐՅԱՆ (ԳՐԻԳՈՐՅԱՆ) ՆԵՐՍԵՍ ՀԱՋԻՔԻ	158
ԿՐԿԵԱՇԱՐՅԱՆ (ՔՐՔԱՇԱՐՅԱՆ) ՍԵՐԺ-ՊԵՐՃ ՄԻՍԱԿԻ	159
ԿՈՒՌՈՅԱՆ ՌԱԶՄԻԿ ՀԱԿՈՔԻ	160
ԿՈՒՐԴԻՆՅԱՆ ԿԻՄ ԱՄՔԻՈՍԻ	160
ԿՈՒՐՏԻԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՍՏԵՓԱՆԻ	161
ՀԱԼԵԲՅԱՆ ՂՈՒԿԱՍ ՊԵՏՐՈՍԻ	162
ՀԱԿՈՔՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐՇԱԿԻ	162
ՀԱԿՈՔՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԿՐՏԻՉԻ	163
ՀԱԿՈՔՅԱՆ ԹԱԹՈՍ ՆԻԿՈԼԱՅԻ	164
ՀԱԿՈՔՅԱՆ ԺԱՆ ԻՇԽԱՆԻ	164
ՀԱԿՈՔՅԱՆ ՀԱԿՈՔ ԵՐՎԱՆԴԻ	165
ՀԱԿՈՔՅԱՆ ԼԵՎՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ	166
ՀԱԿՈՔՅԱՆ ՌԱՖԻԿ ԵՂԻՇԻ	166
ՀԱՄԱՄՋՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԳՐԻԳՈՐԻ	167
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՍՈՒՐԵՆԻ	167

ՀԱՅՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՄԱԹԵՎՈՍԻ	168
ՀԱՆԵՍՅԱՆ ՍՏԵՖԵՆ	168
ՀԱՍՐԱԹՅԱՆ ԳԱԳԻԿ ՎԱՋԵԻ	169
ՀԱՍՐԱԹՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՆԱՎԱՍԱՐԴԻ	169
ՀԱՐՈՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՍԱՏՈՒՐԻ	170
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆ) ԱՇԽԵՆ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ	170
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ ԱՐՄԵՆԻ	171
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՇՈՏ ՍԱՐԳՍԻ	172
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ ՌՈՄԻԿԻ	172
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌՈՄԻԿ ՍՈՒՐԵՆԻ	173
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԻԼԻԿ ՍԻՐԱԿԻ	175
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎ ՎԼԱԴԻՄԻՐ ՍԵՐԳԵՅԻ	175
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎՅԱԶԵՍԼԱՎ ՍԱՄՍՈՆԻ	176
ՀԵՅՔԵԼԵԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԱԶԱՐԻ	177
ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՄԱՌԼԵՆԱ ԺԻՐԱՅՐԻ	177
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՌՆՈՍ ԱՐՇԱԿԻ	178
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԵՅՉԻ ՆԻԿՈԼԱՅԻ	179
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱԿՈԲ ԳԱՐԵԳԻՆԻ	180
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՈՖՅԱ ՊԵՏՐՈՍԻ	181
ՀՈՎԱԵՓՅԱՆ ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ	181
ՂԱԶԱՆՉՅԱՆ ՏԻՐԱՆ ՏԻՐԱՆԻ	182
ՂԱԶԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ ԶԱՐՄԱՅՐԻ	183
ՂԱԶԱՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ ԱՐՄԵՆԱԿԻ	183
ՂԱԶԱՐՅԱՆ ՊԵՏՐՈՍ ԱՐԱՄԻ	185
ՂԱԶԱՐՅԱՆ ՓԵՓՐՈՆԵ ԻՎԱՆԻ	186
ՂԱՄԲԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍԻ	186
ՂԱՐԱԳՅՈՂՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԳՐԻԳՈՐԻ	188
ՂՈՉԻԿՅԱՆ ՏԱՐԻԵԼ ՎԼԱԴԻՄԻՐԻ	189
ՂՈՒԿԱՍՅԱՆ ՊԵՏՐՈՍ ՍԱՐԳՍԻ	190
ՃԳՆԱՎՈՐՅԱՆ ԱՅՁԵՆԲԱՌԻԵՐ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՅԿԱԶԻ	191
ՄԱԴԱԿՅԱՆ ՎԱԼԵՐԻ ՆԻԿՈԼԱՅԻ	191
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ	192
ՄԱԼԽԱՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՅՈԼԱԿԻ	192
ՄԱՆԹԱՇՅԱՆ ԱԴՈԼՖ ՀԱՅՐԱՊԵՏԻ	193

ՄԱՆՎԵԼՅԱՆ ՄԱՆՎԵԼ ԳԱՐԵԳԻՆԻ	194
ՄԱՏԻՆՅԱՆ ՀՐԱՉԻԿ ՎԱՀԱՆԻ	195
ՄԱՏՆԻՇՅԱՆ ՀԱԿՈՔ ԱՀԱՐՈՆԻ	195
ՄԱՐԳԱՆՅԱՆ ԼԻԱՆԱ ԱՐՄԵՆԻ.....	196
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԿԱՐԻՆԵ ՍԵՐԳԵՅԻ.....	197
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ ԱՐԵՍԻ	198
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՇԻՐԱԶ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ	199
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍՈԿՐԱՏ ՄԱՆՈՒԿԻ	200
ՄԱՐԴԱՆՅԱՆ ՍՈՆԱ ՍՄԲԱՏԻ	200
ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՇՈՏ ԻՇԽԱՆԻ.....	201
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԹՈՐԳՈՄԻ	202
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՎԻԼԵՆԱ ՀԱԿՈՔԻ	203
ՄԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՂԱ ԱՐՇԱԿԻ	204
ՄԱՐՈՒԽՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ ՀՈՎՍԵՓԻ	204
ՄԱՅՈՅԱՆ ՍՏԵՓԱՆ ԳՐԻԳՈՐԻ	205
ՄԵԴՆԻԿՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ.....	206
ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՂԱՄԻ	207
ՄԵԼԻՔՅԱՆ ԳԱԳԻԿ ԳԵՈՐԳԻԻ.....	208
ՄԵԼԻՔՅԱՆ ԳԱԳԻԿ ՍՈՒՐԵՆԻ	208
ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ ԳԵՎՈՐԳԻ	209
ՄԵԼՔՈՆՅԱՆ ՄԱԳԴԱԼԻՆԱ ՄՀԵՐԻ	210
ՄԵՍՐՈՊՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ ԳՈՒՐԳԵՆԻ	211
ՄԵՐԺԱՆԻԱՆ ԱՐՏԵՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ	211
ՄԵՐԺԱՆՈՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐԻ.....	212
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԷԼԵՆՆՈՐԱ ՄԻՔԱՅԵԼԻ	213
ՄԽԵՅԱՆ ԷՄԻԼ ԵՐԵՄԻ	213
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԶԱՍՊԻ.....	214
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ ԳՐԻԳՈՐԻ.....	214
ՄԿՐՏՉՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ.....	215
ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ ՎԻԼԵՆ ՀԱԿՈՔԻ	215
ՄՆՋՈՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ ԼԵՎՈՆԻ	216
ՄՆՋՈՅԱՆ ԵՂԻԱ ԼԵՎՈՆԻ	217
ՄՆՋՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԼԵՎՈՆԻ	217
ՄՈՌԷՅԱՆ ՆԱԶԱՐ ՄՆԱՅԱԿԱՆԻ	218

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԵՂԻՇԵ ՄՈՎՍԵՍԻ 219

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՍԵՂՐԱԿ ԳԱՐԵԳԻՆԻ 219

ՄՈՒՇԵՂՅԱՆ ԱՇՈՏ ՎԱՐԱԶԴԿԱՏԻ 220

ՅԱՍԿԵՎԻԶՅԱՆ ՅԱՇԿԵՎԻԶ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ 220

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԱՐԱՄ ԲԱԳՐԱՏԻ 221

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ ՀԱՅՐԱՊԵՏԻ 222

ՆՈՐՈՎՅԱՆ ԱԶԱՏ ՍՈՂՈՄՈՆԻ 223

ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐԱՄ ԱՐՏԱՇԵՍԻ 224

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ԺՈՐԱ) ՄԵՆԱԿԻ 225

ՇԱՀՊԱՐՈՆՈՎ (ՇԱՀՊԱՐՈՆՅԱՆ) ՄԻՔԱՅԵԼ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ 226

ՈՍԿԱՆՅԱՆ ԷՄԻԼ ՍԵՐՈԲԻ 226

ՈՍԿԱՆՅԱՆ ՄԱՐԻՆԱ 227

ՈՍԿԱՆՅԱՆ ՄԱՐՏՈՒՆԻ ԳՐԻԳՈՐԻ 227

ՉԱԻԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐԻ 228

ՉԱԼԹԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱԿՈԲԻ 228

ՉԱԼԹԻԿՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ 230

ՉԱՄԻԶՅԱՆ (ՉԱՄՉՅԱՆ) ԼՈՒԻՋԻ ՀԱԿՈԲ (ՋԱԿՈՄՈ) 230

ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ ՄԿՐՏԻՉԻ 232

ՉՈԲԱՆՅԱՆ ԺՈՐԱ ԱՐՄԵՆԱԿԻ 233

ՉՈՒԽԱԶՅԱՆ ԳԱՌՆԻԿ ԱԼԵՔՍԱՆԻ 233

ՉՈՒԽԱԶՅԱՆ ԷՄՄԱ ՀՈՎՍԵՓԻ 234

ՊԱՐՈՆԻԿՅԱՆ ԵՐՎԱՆԴ ԳԱՌՆԻԿԻ 234

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ ԼԵՎՈՆԻ 235

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱԶԳԵՆ ԱԶԱՏԻ 236

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱԼԵՐԻ ՍԱՄՍՈՆԻ 237

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ ՄՆԱՑԱԿԱՆԻ 238

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ ՊՈՂՈՍԻ 239

ՊՏՈՒԿՅԱՆ ԶԱՐԵՀ 239

ՋԱՎՈՒԿՅՅԱՆ ՍԵՅՐԱՆ ԳԵՎՈՐԳԻ 240

ՋՐԱՂԱՑՊԱՆՅԱՆ ՄԻՍԱԿ ԱՌԱՔԵԼԻ 241

ՌՈՏԻՆՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԼԵՎՈՆԻ 241

ՌՈՏԻՆՅԱՆ ԼԵՎՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ 242

ՍԱՀԱԿՅԱՆ ԼԻԴԱ ԱՐՇԱԿԻ 244

ՍԱՀՐԱԴՅԱՆ ՍԻԼՎԱ ԻՍՐԱՅԵԼԻ 245

ՍԱՅԱԴՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԳԵՐԱՍԻՄԻ	246
ՍԱԴՅԱՆ ԱՇՈՏ ՍԵՐՈՔԻ.....	247
ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ ՍԻՐՈՒՆԻ.....	249
ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐԺԻԿ ՀԱԿՈՔԻ	249
ՍԱՐԿԻՍՈՎ ՊԱՎԵԼ ԶԻԲՐԱԵԼԻ	250
ՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ ԱՐԱՄԻ.....	251
ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ ՄԱՐՏԻՐՈՍԻ	252
ՍԵՐՈՔՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ (ՏԵՐ-ՍԵՐՈՔՅԱՆ ՔՐԻՍՏԱՓՈՐ)	252
ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ.....	253
ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՔՍԻՄ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ	254
ՍԻՐԱԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՆԱՊՈԼԵՈՆԻ	255
ՍԻՍԱԿՅԱՆ ՆՈՐԱՅՐ ՄԱՐՏԻՐՈՍԻ	255
ՍՐԱՊԻՈՆՅԱՆ ՌԻՄԱ ՄԿՐՏԻՉԻ.....	257
ՍՈՒՋՅԱՆ ՑԵԼԵՍՏԻՆԱ ՄԻՔԱՅԵԼԻ	258
ՍԵՎԱԿ ՄԱՆԱՍԵ	258
ՎԱՀՐԱԴՅԱՆ ՀԱՍՄԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ	259
ՎԱՀՐԱՄՅԱՆ ԱՇՈՏ ՏԻԳՐԱՆԻ	260
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ ՍԱՐԳՍԻ	260
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԻՐՄԱ ԱՐՄԵՆԱԿԻ	261
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒԻՉԱ ՌԱԶՄԻԿԻ.....	262
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԱՐՏԻՆ ՍԻՄՈՆԻ	263
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ ԼԵՎՈՆԻ	263
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԱՐԳՍԻ.....	265
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ	266
ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՀԱԿ, ՍԱՀԱԿ ԾԱՂԿԱՐԱՐ, ԻՍԱՀԱԿ ԾԱՂԿԱՐԱՐ	267
ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԿՐՏԻՉ ԱՐՏԱՇԵՍԻ	268
ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆ ԷԴԳԱՐ ՂԱԶԱՐԻ	269
ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆ ՂԱԶԱՐ ԳՐԻԳՈՐԻ.....	270
ՏԻԳՐԱՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ.....	271
ՏՈՆՈՅԱՆ ԱՆԱՀԻՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ	272
ՓԱՆՈՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳԵՎՈՐԳԻ	273
ՓԱՇԱՅԱՆ ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ	273
ՓԻՐՈՒՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՊԵՏՐՈՍԻ	274

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ ՊԱՊԱ ԲԵՋԱՆԻ276

ՔԱՆՔԱՆՅԱՆ ԱՂԱՍԻ ԳԱՐԵԳԻՆԻ277

ՔԱՄԱԼՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՈՍԿԱՆԻ278

ՔԱՄԱԼՅԱՆ ՌՈՄԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ279

ՔԱՄԱԼՅԱՆ ՕԼԵԳ ԱՐՄԱՆԻ 280

ՔԱՄԱԼՈՎ ՀԵՐԲԵՐՏ ԼԵՈՆԻ 281

ՔՅՈՒՐՔՉՅԱՆ ԱՆԱՀԻՏ 281

ՔՈՉԱՐՅԱՆ ՍԱՍՈՒՆ ՏԻԳՐԱՆԻ.....282

ՔՐԻՍՏՈՍՊՈՒՐՅԱՆ ԵՐՎԱՆԴ ԹԱԴԵՎՈՍԻ.....282

ՕՐԴԱՆՅԱՆ ՍՈՒՔԻԱՍ ՍԵՄՅՈՆԻ..... 283

ՕՐԴՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԲԱԽՇԻԻ 283

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ284

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ..... 285

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ռոմիկ Հարությունյան, Սերգեյ Գրիգորյան

ՀԱՅ ՔԻՄԻԿՈՍՆԵՐ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Տպագրված է «ՎԱՌՄ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Տիգրան Մեծի 48, բն. 43

Ստորագրված է տպագրության՝ 13.05.2021:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 18.875:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am